

ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆՏԱՆԵԿԱՆ
ԲՈՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության
Հարավային Կովկասում» ծրագիր/Հայաստան

Երևան 2011

Հետազոտությունը իրականացվել է ՄԱԲՀ/Հայաստան «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» (ՄԱԲՀ ԸԳԲ) ծրագրի շրջանակում:

Ջեկույցում արտահայտված կարծիքները հեղինակային են և կարող են չհամընկնել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և Նորվեգիայի կառավարության տեսակետին:

*Ջեկույց՝ «Համապերական հարցում Հայաստանում կանանց նկատմամբ ընդհանրական բռնության վերաբերյալ, 2008-2010»
© 2011 ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, Հայաստան*

ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիր

Պետրոս Ադամյան 14, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 10 54 17 92
Էլ փոստ՝ sargizova@unfpa.org

Ընտրանքը և վերջնական տվյալների բազան ձևավորել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, որը նաև իրականացրել է դաշտային աշխատանքները:

Վերլուծական զեկույցի հեղինակներ՝

Վլադիմիր Օսիպով, գ.թ., գենդերային փորձագետների խմբի ղեկավար/համակարգող

- Հետազոտության հիմքը
- Ուսումնասիրության նախադրյալները. ընդհանուր պատկերացում
- Գլուխներ 2 և 8

Արմենուհի Թանաշյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

- Գլուխներ 3 և 4

Նելլի Դուրյան, ՀՀ ոստիկանություն

- Գլուխներ 3 և 4

Կարինե Սարիբեկյան, ՀՀ առողջապահության նախարարություն

- Գլուխներ 5,6 և 8

Սուսաննա Վարդանյան, «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ

- Գլուխ 7

Երախտագիտություն ենք հայտնում

դոկտոր Տորգայ Ուլանանին (միջազգային փորձագետ),

դոկտոր Սելեն Օրսին (ՄԱԲՀ ԸԳԲ տարածաշրջանային ծրագրի համակարգող),

Աստղիկ Գյուլբենկյանին, Դիանա Մարտիրոսովային և

Արմենուհի Առուշանյանին (ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն) աջակցության համար:

ԱՌԱՋԱԲԱՆ

Կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների խախտման ամենատարածված տեսակներից է աշխարհում: Այն տեղի է ունենում ամենատարբեր իրավիճակներում՝ աշխատավայրում, կրթական հաստատություններում, գյուղական և քաղաքային վայրերում՝ անկախ կնոջ ազգային կամ կրոնական պատկանելությունից, հասարակական դիրքից, տնտեսական կարգավիճակից, տարիքից կամ այլ պայմաններից: Բռնության դեպքերը հատկապես զարհուրելի են, երբ տեղի են ունենում տանը՝ այնտեղ, որտեղ կինը պետք է որ ապահով լիներ անվտանգ ընտանեկան մթնոլորտում:

Բազմաթիվ հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ սեռական զուգընկերների կողմից կանանց նկատմամբ կիրառված բռնությունը ծանր հետևանքներ է թողնում: Առողջության վրա այդ հետևանքները բազմատեսակ են՝ ֆիզիկական վնասվածքներից և հոգեկան տրավմաններից մինչև տարբեր տեսակի հաշմանդամություն՝ շատ դեպքերում անգամ ունենալով ճակատագրական ելքեր: Պետք է նշել, որ բացի պատճառած ֆիզիկական, սեռական և հոգեբանական տառապանքներից և դրանց հետևանքով առաջացած տնտեսական կորուստներից, բռնությունը վնաս է հասցնում բոլոր ընտանիքներին և հասարակություններին՝ մեծապես նվազեցնելով մարդկային կապիտալը և լրջորեն խարխլելով տնտեսական աճը: Այդուհանդերձ, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից իրականացված՝ «Կանանց առողջությունը և կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը» թեմայով (2005) բազմակերկիր հետազոտությունը բացահայտեց, որ տարբեր տարածաշրջաններում սեռական զուգընկերոջ կողմից կիրառվող բռնության տարածվածությունն էապես տարբեր է, ինչն էլ փաստում է, որ բռնության դեպքերն անխուսափելի չեն՝ դրանց կարելի է և պետք է արձագանքել:

Գենդերային հավասարությունը և կանանց իրավունքների ընդլայնումը խթանելու ՄԱԲՀ-ի հանձնառությունը՝ Հազարամյակի զարգացման նպատակների հասանելիության ապահովման, ինչպես նաև Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի և Պեկինի գործողությունների ծրագրի նպատակների իրականացման հետ համատեղ, մշտապես եղել է ՄԱԲՀ-ի գործունեության առանցքային կետերից: ՄԱԲՀ-ն ՄԱԿ-ի գործակալությունների շարքում որպես առաջապահ մշտապես արել է առավելագույնը, որպեսզի կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը ճանաչվի որպես մարդու իրավունքների խախտում և հանրային առողջապահության առաջնահերթ խնդիր:

Հաշվի առնելով, որ կանանց նկատմամբ բռնության տարածվածության, մասնավորապես, սեռական զուգընկերոջ կողմից կիրառվող բռնության վերաբերյալ վստահելի և ներկայացուցչական տվյալների պակասն այդ երևույթի դեմ պայքարի հասցեական քաղաքականություններ և ծրագրեր մշակելու հիմնական խոչընդոտն է հանդիսանում, ՄԱԲՀ-ն մեծ կարևորություն է տալիս բնակչության վերաբերյալ համապատասխան տվյալներ ունենալու հարցում երկրներին ցուցաբերվող աջակցությանը:

Այս առումով, «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում պատրաստված Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ համապետական հարցմանն անդրադարձող զեկույցն առանձնակի կարևորություն ունի: Չնայած Հայաստանում կանանց նկատմամբ բռնության խնդիրը հետագա ուսումնասիրության կարիք ունի, այս զեկույցի արդյունքները կարող են լավ միջոց ծառայել՝ գենդերային զգայուն մոտեցումները առկա պետական քաղաքականության մեջ ներառելու առումով: Զեկույցն արժեքավոր է նաև ՄԱԲՀ-ի և ՀՀ կառավարության՝ երկրում կանանց նկատմամբ բռնությունը նվազեցնելուն ուղղված համատեղ դիսամբլ և հաստատուն համագործակցության համար:



պրն. Զահիդուլ Հյուք

ՄԱԲՀ Թուրքիայի ներկայացուցիչ, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի տարածաշրջանային տնօրեն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1.	Ներածություն	8
	Հետազոտության հիմքը	8
	Հետազոտության կազմակերպումը եվ մեթոդաբանությունը.....	10
	Ոստումնասիրության նախադրյալները, ընդհանուր պատկերացում (De jure եվ de facto գենդերային հավասարություն, գենդերային բռնությունը Հայաստանում, վիճակագրական հակիրճ պատկեր).....	17
Գլուխ 2.	Սեռական գուգրնկերների կողմից բռնության դեպքերի տարածվածությունը եվ հաճախականությունը	32
Գլուխ 3.	Ոչ գուգրնկերների կողմից բռնությունների տարածվածությունը 15 տարեկանից սկսած	95
Գլուխ 4.	Մանկական տարիքում սեռական ոտնձգությունների եվ ստիպողաբար առաջին սեռական հարաբերության ենթարկվելու տարածվածություն	98
Գլուխ 5.	Սեռական գուգրնկերոջ կողմից բռնությունը եվ կնոջ ֆիզիկական եվ մտավոր առողջությունը.....	104
Գլուխ 6.	Սեռական գուգրնկերոջ կողմից բռնությունը եվ կնոջ սեռական առողջությունը եվ վերարտադրողական վարքագիծը	115
Գլուխ 7.	Կանանց դիմակայման ռազմավարությունը և արձագանքն ի պատասխան սեռական գուգրնկերոջ ֆիզիկական բռնության.....	134
Գլուխ 8.	Եզրակացություններ և առաջարկություններ	154
	Հարցման հիմնական եզրակացությունները	154
	Հետագա հետազոտություններ	165
	Առաջարկություններ	165
Հավելված	Հարցաշար	170
Աղյուսակներ		
Աղյուսակ 1.1.	Ընտրանքի կիրառումը.....	12
Աղյուսակ 1.2.	Արձագանքման տեսակարար կշիռը	15
Աղյուսակ 1.3.	Հարցվողների բնութագրիչները.....	17
Աղյուսակ 2.1.	Հարցվողների ընկալումը գենդերային բռնության վերաբերյալ.....	37
Աղյուսակ 2.2.	Սեռական գուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ հոգեբանական բռնության տարածվածությունը.....	42
Աղյուսակ 2.3.	Սեռական գուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ հոգեբանական բռնության տարածվածությունը անցած 12 ամիսներին (ըստ առանձին տեսակների)	44
Աղյուսակ 2.4.	Սեռական գուգրնկերոջ կողմից ներկայումս գուգրնկեր ունեցող կանանց նկատմամբ հոգեբանական բռնության տարածվածությունն անցած 12 ամիսներին	44
Աղյուսակ 2.5.	Սեռական գուգրնկերոջ կողմից կանանց նկատմամբ հոգեբանական բռնության հաճախականությունը անցած 12 ամիսներից առաջ.....	45
Աղյուսակ 2.6.	Սեռական գուգրնկերոջ կողմից կանանց նկատմամբ հոգեբանական բռնության հաճախականությունը անցած 12 ամիսներին	45
Աղյուսակ 2.7.	Սեռական գուգրնկերոջ կողմից վերահսկողական վարքագծի տարածվածությունը	48

Աղյուսակ 2.8.	Սեռական գուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնության տարածվածությունը կյանքի ընթացքում.....	52
Աղյուսակ 2.9.	Սեռական գուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնության տարածվածությունը կյանքի ընթացքում	53
Աղյուսակ 2.10.	Սեռական գուգրնկերոջ կողմից կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության որոշ ձևերի հաճախականությունն անցած 12 ամիսներից առաջ.....	56
Աղյուսակ 2.11.	Սեռական գուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ սեռական բռնության տարածվածությունը.....	59
Աղյուսակ 2.12.	Սեռական գուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ սեռական բռնության տարածվածությունը	60
Աղյուսակ 2.13.	Սեռական գուգրնկերոջ կողմից սեռական բռնության ենթարկվելու հաճախականությունն անցած 12 ամիսներից առաջ.....	62
Աղյուսակ 2.14.	Սեռական գուգրնկերոջ կողմից ֆիզիկական բռնության պատճառները	66
Աղյուսակ 2.15.	Հարցվողների մանկության ընթացքում հարցվողների մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնությունները վերջիններիս գուգրնկերների կողմից	68
Աղյուսակ 2.16-ա.	Հարցվողների նկատմամբ ֆիզիկական բռնությունը՝ կապված հարցվողների բռնի և ոչ բռնի գուգրնկերների մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնության հետ	71
Աղյուսակ 2.16-բ.	Հարցվողների բռնի և ոչ բռնի գուգրնկերների մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնությունը.....	71
Աղյուսակ 2.16-գ.	Բռնի և ոչ բռնի սեռական գուգրնկերներ ունեցող հարցվողների մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնությունը.....	71
Աղյուսակ 2.17-ա.	Հարցվողների կողմից սեռական գուգրնկերոջ նկատմամբ ֆիզիկական բռնությունը.....	73
Աղյուսակ 2.17-բ.	Հարցվողների կողմից գուգրնկերոջ նկատմամբ ֆիզիկական բռնությունը	73
Աղյուսակ 2.18.	Ամուսնու կողմից կնոջ նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքում ընտանիքից դուրս այլ մարդկանց միջամտության նկատմամբ վերաբերմունքը	75
Աղյուսակ 2.19.	Ընտանիքի անդամներից բացի այլ մարդկանց հետ ընտանեկան խնդիրները քննարկելու նկատմամբ վերաբերմունքը.....	76
Աղյուսակ 2.20.	Ընտանեկան բռնության դեպքում օրենքի միջամտության նկատմամբ վերաբերմունքը.....	77
Աղյուսակ 2.21.	Կանանց տեսակետներն այն պատճառների վերաբերյալ, որոնք կարող են արդարացնել տղամարդու կողմից կնոջը ծեծի ենթարկելը.....	80
Աղյուսակ 2.22.	Հարցվողների կարծիքները ցանկությանը հակառակ ամուսնու հետ սեռական հարաբերություն ունենալու կնոջ «պարտականության» վերաբերյալ.....	86
Աղյուսակ 2.23.	Հարցվողների կողմից մի շարք պատճառների ընկալումը, որոնց դեպքում ամուսնացած կինը կարող է հրաժարվել սեռական հարաբերություն ունենալ իր ամուսնու հետ	87
Աղյուսակ 2.24.	Հողատարածքի, կենդանիների, արտադրանքի և բերքի սեփականությունը գյուղական բնակավայրերում	90
Աղյուսակ 2.25.	Ձեռնարկատիրական սեփականություն	90
Աղյուսակ 2.26.	Սեփականության և հնարավոր տնտեսական եկամուտների տնօրինումը	91
Աղյուսակ 2.27.	Ինքնուրույն գումար վաստակող կանայք.....	91
Աղյուսակ 2.28.	Ընտանեկան բյուջեում կնոջ ներդրումը գուգրնկերոջ ներդրման համեմատությամբ.....	92
Աղյուսակ 2.29.	Կնոջ վաստակած գումարը ծախսելու հետ կապված որոշումների կայացումը.....	92

Աղյուսակ 2.30.	Սեռական զուգընկերոջ կողմից կանանց վաստակած գումարը կամ խնայողությունները վերցնելը կնոջ կամքին հակառակ.....	93
Աղյուսակ 2.31.	Կանայք թողնում/հրաժարվում են աշխատանքից, որովհետև սեռական զուգընկերը չի ցանկանում, որ նրանք աշխատեն	93
Աղյուսակ 3.1.	Ոչ զուգընկերների կողմից ֆիզիկական բռնության տարածվածությունը 15 տարեկանից հետո	95
Աղյուսակ 3.2.	Ոչ զուգընկերների կողմից սեռական բռնության տարածվածությունը 15 տարեկանից հետո	96
Աղյուսակ 4.1.	Մինչև 15 տարեկան դառնալը ոչ զուգընկերոջ կողմից սեռական ոտնձգությունների տարածվածությունը.....	99
Աղյուսակ 4.2.	Մինչև 15 տարեկան դառնալը ոչ զուգընկերոջ կողմից սեռական ոտնձգությունների տարածվածությունն ըստ տխուր կամ ուրախ դեմքով կատարված նշումների.....	100
Աղյուսակ 4.3.	Առաջին սեռական հարաբերության պատկերը.....	102
Աղյուսակ 5.1.	Ընդհանուր առողջական վիճակը	105
Աղյուսակ 6.1.	Երեխաների կենսաբանական հայրերը.....	117
Աղյուսակ 6.2.	Ֆինանսական աջակցություն հորից (հայրերից)	118
Աղյուսակ 6.3.	Վիժմաներ, մեղեդածություն և հղիության արհեստական ընդհատումներ	120
Աղյուսակ 6.4.	Ջուգընկերոջ նախընտրությունը երեխայի սեռի հարցում	128
Աղյուսակ 6.5.	Հղիության հարկադրված ընդհատում	131
Աղյուսակ 7.1.	Առողջության վրա սեռական զուգընկերոջ կողմից բռնության հետևանքներն ըստ հարցվողների գնահատականի	135
Աղյուսակ 7.2.	Սեռական զուգընկերոջ բռնի վարքագծի պատճառով կանանց աշխատանքի կամ եկամուտ բերող այլ գործունեության խաթարումը (ըստ հարցվողների գնահատման)	136
Աղյուսակ 7.3.	Հարցվողների հակադարձումը սեռական զուգընկերոջ խփելու դեպքում	137
Աղյուսակ 7.4.	Ջուգընկերոջ բռնի վարքի մասին այլ մարդկանց պատմելը	141
Աղյուսակ 7.5.	Ովքեր են փորձել օգնել	144
Աղյուսակ 7.6.	Կնոջ՝ օգնության չդիմելու պատճառները.....	147
Աղյուսակ 7.7.	Կանայք, ովքեր հեռացել են կամ չեն հեռացել բռնացող զուգընկերոջից.....	149
Աղյուսակ 7.8.	Կնոջ՝ վերջին անգամ տանից հեռանալու պատճառները.....	150
Աղյուսակ 7.9.	Ներընտանեկան բռնության զոհերն ինչքան ժամանակով են հեռացել զուգընկերոջից վերջին անգամ	151
Աղյուսակ 7.10.	Կնոջ վերադարձի պատճառները.....	152
Աղյուսակ 7.11.	Բռնացող զուգընկերոջ հետ կանանց մնալու պատճառները	152
Աղյուսակ 7.12.	Անհատներ կամ հաստատություններ, որոնք ավելի շատ օգնություն կարող էին ցուցաբերել	153
Աղյուսակ 8.1.	Ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության գերակշռություն	160

Գծապատկերներ

Գծապատկեր 2.1.	Երբևէ զուգընկեր ունեցած կանանց շրջանում զուգընկերոջ կողմից սեռական և ֆիզիկական բռնության տարածվածությունը կյանքի ընթացքում.....	63
Գծապատկեր 2.2.	Երբևէ սեռական և/կամ ֆիզիկական բռնության ենթարկված կանանց շրջանում միայն սեռական, միայն ֆիզիկական և սեռական ու ֆիզիկական բռնության տարածվածությունը կյանքի ընթացքում.....	64
Գծապատկեր 2.3	Սեռական զուգընկերոջ կողմից ստիպողական սեռական հարաբերության տարածվածությունը բռնության դեպքի ժամանակ կամ դեպքից հետո.....	65
Գծապատկեր 2.4.	Հարցվողների կողմից մանկության ընթացքում հարցվողների մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնությանն ականատես լինելը	70
Գծապատկեր 2.5.	Հարցվողների նկատմամբ ֆիզիկական բռնությունը, որին ականատես են եղել երեխաները	72
Գծապատկեր 5.1.	Կանանց շրջանում ծխելու վերաբերյալ տվյալներն ըստ կենսագրական բնութագրիչների	109
Գծապատկեր 5.2.	Ինքնազգացողության գնահատականը սեռական զուգընկերոջ կողմից բռնության ենթարկված կանանց կողմից	111
Գծապատկեր 5.3.	Դեղորայքի գործածությունը (%).....	112
Գծապատկեր 5.4.	Հոգեկան և ֆիզիկական առողջությունը (%)	112
Գծապատկեր 5.5.	Ինքնասպանության և բռնության կապը (%)	113
Գծապատկեր 6.1.	Հակաբեղմնավորիչ միջոցներ	122
Գծապատկեր 6.2.	Հակաբեղմնավորիչների օգտագործումը և հղիության արհեստական ընդհատումները (%)	125
Գծապատկեր 6.3.	Պահպանակի գործածությունը և սեռավարակները (%).....	126
Գծապատկեր 6.4.	Երեխաների առողջության և մայրերի նկատմամբ հոգեբանական բռնության կապը (%).....	132
Գծապատկեր 7.1.	Հարցվողների հակադարձման ազդեցությունը	139
Գծապատկեր 7.2.	Ուր են գնացել ներընտանեկան բռնության զոհերը, երբ վերջին անգամ հեռացել են տանից	151

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

ԶԵԿՈՒՅՑ

Այս զեկույցը հիմնված է Հայաստանում կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ համապետական հետազոտության վրա, որն իրականացվել է 2008թ. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» (ՄԱԲՀ ԸԳԲ) ծրագրի¹ և Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից: Սա ազգային մակարդակով առաջին ներկայացուցչական ընտրանքային հետազոտությունն է կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ և միակն է իր տեսակի մեջ՝ շրջանակների, մասշտաբի, մեթոդաբանության և ձեռք բերված տվյալների առումով:

Զեկույցում ամփոփված են հարցման հիմնական արդյունքները, հատուկ ուշադրություն է քննարկվում համապատասխան ցուցիչներին և առանձնահատուկ թեմաներին: Հետազոտության արդյունքներն արժեքավոր տեղեկատվություն են տրամադրում *կանանց նկատմամբ բռնության հիմնական ձևերի տարածվածության և հաճախականության* վերաբերյալ, ներառյալ՝ սեռական զուգընկերոջ կողմից և ոչ զուգընկերոջ կողմից գործադրվող բռնությունը, կնոջ ֆիզիկական, հոգեկան և վերարտադրողական առողջության վրա *գենդերային բռնության ազդեցության, դրա դեմ կանանց պայքարի ռազմավարությունների և մեխանիզմների*, կանանց նկատմամբ բռնության հանդեպ *վերաբերմունքի, մանուկ հասակում սեռական բռնության ենթարկվելու*, ինչպես նաև կնոջ *սոցիալ-տնտեսական կարգավիճակի, ֆինանսական ինքնուրույնության և գենդերային բռնության* միջև կապի *վերաբերյալ*:

Եզրափակիչ զեկույցի հիմնական նպատակն է հարցման տվյալները և վերլուծության արդյունքները *ներկայացնել* քաղաքականություն մշակողներին, համապատասխան պետական գործակալություններին, միջազգային կազմակերպություններին և դոնորներին, ոչ կառավարական կազմակերպություններին, փորձագետների համայնքին, լրատվամիջոցներին և լայն հասարակությանը, *բարձրացնել նրանց իրազեկությունը* երկրում կանանց նկատմամբ բռնության տարածվածության վերաբերյալ և դրանով *նրանց հնարավորություն տալ* կայացնել առավել տեղեկացված քաղաքական որոշումներ և կատարել առավել ճիշտ ընտրություններ ու ավելի արդյունավետ արձագանքներ մշակել, այդ թվում՝ իրականացնել գենդերային բռնության դեմ պայքարի ավելի թիրախային քարոզարշավներ:

Սույն զեկույցում ներառված է հարցման արդյունքների թե՛ նկարագրական մակարդակը և թե՛ ավելի խորն ու մանրամասն վերլուծությունը, որտեղ հարցման տվյալները ներկայացված են ավելի լայն սոցիալ-տնտեսական և մշակութային համատեքստում և ուսումնասիրված գենդերային ներկա իրավիճակի տեսանկյունից:

¹ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիրը մեկնարկել է 2008թ. ապրիլին: Այս եռամյա ծրագրի հիմնական նպատակն է ձևավորել նպաստավոր միջավայր Հայաստանում, Ադրբեյջանում և Վրաստանում գենդերային բռնության կրճատման համար և աջակցել վերջիններիս այս ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման հարցում: Ծրագրի գլխավոր բաղադրիչներից է «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության համազգային հետազոտություն»-ը: Հետազոտության արդյունքները կօգտագործվեն իրազեկման բարձրացմանն ուղղված գործունեության մեջ և հիմք կհանդիսանան գենդերային բռնության դեմ պայքարի համապատասխան ազգային քաղաքականության և ռազմավարության ձևավորման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԱՐՑԵՐԸ

Հետազոտության նպատակներն էին՝

- Տրամադրել ճշգրիտ և հավաստի պաշտոնական և միջազգայնորեն համադրելի բազային տվյալներ սեռական գույքընկերոջ կողմից և ոչ գույքընկերոջ կողմից կանանց նկատմամբ բռնության ձևերի տարածվածության և հաճախականության վերաբերյալ՝ երկրում տվյալ երևույթի մասշտաբների և շրջանակների վերաբերյալ հիմնավորված պատկերացում ստանալու համար:
- Սահմանել սեռական գույքընկերոջ կողմից բռնության ենթարկվելու պատճառները:
- Ստանալ 15 տարեկանից ցածր աղջիկների նկատմամբ կիրառվող սեռական բռնության մասին տվյալներ:
- Սահմանել և գնահատել սեռական գույքընկերոջ կողմից բռնության վտանգներն ու պաշտպանական գործոնները:
- Հետազոտել սեռական գույքընկերոջ կողմից բռնության և կնոջ ֆիզիկական, հոգեբանական և վերարտադրողական առողջության վրա դրա ունեցած ազդեցության միջև եղած կապը:
- Սահմանել և գնահատել բռնության դեմ պայքարի ռազմավարությունների, մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը, որոնց կարող են դիմել կանայք՝ բռնության ենթարկվելու դեպքում:
- Հետազոտել, թե արդյոք կանայք դիմում են բռնության ի պատասխան տղամարդ գույքընկերոջ գործադրած բռնության, թե՛ ոչ:
- Ստուգել կանանց նկատմամբ բռնության հանդեպ վերաբերմունքը:
- Իրականացնել տվյալների մանրագնին և խորը վերլուծություն և կատարել եզրահանգումներ:
- Նպաստել շահագրգիռ կողմերի՝ սեռական գույքընկերների և ոչ գույքընկերների կողմից բռնության ենթարկվելուց կանանց պաշտպանելու համար անհրաժեշտ կարողությունների հզորացմանը:
- Առաջարկություններ ներկայացնել՝ օգնելու կառավարության համապատասխան գործակալություններին մշակել կանանց նկատմամբ բռնությանն արձագանքող ավելի արդյունավետ և թիրախային քաղաքականություն և միջամտող միջոցառումներ:
- Ընդգծել հասարակության մեջ կանանց ենթակա կարգավիճակի (որը գենդերային մշտական անհավասարության արդյունք է) և բռնության նկատմամբ նրանց մեծ խոցելիության միջև կապը:
- Նպաստել կանանց նկատմամբ բռնության խնդրի մասին ավելի մեծ հանրային իրազեկությանը հայ հասարակության մեջ, քանի որ այդ իրազեկությունը *sine qua non* է գենդերային բռնության արդյունավետ կանխարգելման և դրա դեմ պայքարի համար:
- Ցույց տալ, որ կանանց նկատմամբ բռնությունը հնարավոր է կանխելի :
- Խթանել հանրային քննարկումներ՝ այս երևույթի և Հայաստանում նրա գերակշռության հետագա ուսումնասիրության նպատակով:

Ուսումնասիրության հետազոտական հարցերն էին՝

- Արդյո՞ք կանանց նկատմամբ բռնությունը լայն տարածված երևույթ է Հայաստանում:
- Կանանց նկատմամբ բռնության դժբախտ դեպքերն են ավելի տարածված:
- Ընտանեկան բռնության/սեռական գույքընկերոջ կողմից բռնության դեպքերն են ավելի տարածված, թե՛ այլ բռնարարների:
- Սեռական գույքընկերոջ կողմից բռնության դեպքում որո՞նք են վտանգներն ու պաշտպանական

գործոնները:

- Որո՞նք են սեռական զուգընկերոջ կողմից բռնության ենթադրելի պատճառները և ի՞նչ հարաբերական կշիռ ունեն:
- Արդյո՞ք սեռական զուգընկերոջ կողմից բռնությունն ունի էական բացասական հետևանքներ կանանց առողջության վրա: Եթե այո, ապա ի՞նչ չափով:
- Ֆիզիկական և/կամ սեռական բռնության ենթարկված կանանց ո՞ր տոկոսն է վսասվածքներ/ֆիզիկական վնաս կրել, և այդ վնասների ո՞ր տեսակներն են տարածված:
- Արդյո՞ք 15 տարեկանից ցածր երեխաների նկատմամբ սեռական բռնություն իսկապես գործադրվում է:
- Արդյո՞ք կանայք արդարացնում են կանանց նկատմամբ բռնությունը: Եթե այո, ապա բռնության ո՞ր ձևերը և ո՞ր դեպքերը: Որքանո՞վ խորն են գենդերային որոշ կարծրատիպեր:
- Բռնության դեմ պայքարի ի՞նչ ռազմավարությունների են հետամուտ կանանց նկատմամբ բռնության գոհերը:
- Ի՞նչ գործողություններ են իրականացնում կանայք սեռական զուգընկերոջ կողմից բռնությունը նվազեցնելու նպատակով: Արդյո՞ք բռնությամբ հակազդումը հազվադեպ բնույթ ունի:
- Ի՞նչ կապ կա սեռական զուգընկերոջ կողմից բռնության և կնոջ տնտեսական հնարավորությունների կամ դրանց բացակայության միջև: Որքանո՞վ են տարածված կանանց տնտեսական ինքնուրույնությունից զրկելու եղանակները:
- Վերոնշյալ բոլոր իրավիճակներում հարցվածների ընտրված կենսագրական բնութագրիչներից յուրաքանչյուրը որքանո՞վ է նշանակալի ըստ սեռագատված տվյալների:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նպատակ ունենալով պաշտոնական հենք ապահովել գենդերային բռնության (ԳԲ) վերաբերյալ քաղաքականություն մշակողների համար և նրանց օգնել ԳԲ-ի կրճատմանն ուղղված թիրախային քաղաքականության և ծրագրերի մշակման հարցում, ինչպես նաև նպաստել բնակչության շրջանում իրազեկության բարձրացմանը՝ ծրագիրը գենդերային բռնության վերաբերյալ համապետական հետազոտություն է ձեռնարկել գենդերային բռնության և, մասնավորապես, կանանց դեմ ուղղված ներընտանեկան բռնության վերաբերյալ ճշգրիտ տվյալների բազմակողմանի վերլուծություն անցկացնելու նպատակով:

Հայաստանում իրականացված հետազոտությունը ԳԲ տվյալների հավաքման ոլորտում առավել լայնածավալ՝ տարածաշրջանային նախաձեռնության մի մասն էր: Հայաստանում այն իրականացվել է ՄԱԲՀ ԸԳԲ-ի կողմից՝ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ/ՆՏՏ) հետ համագործակցությամբ: Նախաձեռնությունը մեծապես հենվել է այս ոլորտում տեղական և միջազգային փորձագետների գիտելիքների և փորձառության վրա:

ԸՆՏՐԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ. ԸՆՏՐԱՆՔԻ ԵՎ ՔԼԱՍՏԵՐԻ ՉԱՓԵՐԸ

Հետազոտությունը կազմված է քանակական հարցման բաղադրիչից, որը ներկայացուցչական տեղեկատվություն է ապահովում 1) Երևանի, 2) այլ քաղաքային և 3) գյուղական մակարդակների վերաբերյալ: Քանակական բաղադրիչը փոխհատվածային բնակչության հիմքով տնային տնտեսությունների ուսումնասիրությունն է: Ընտրանքի ձևավորման համար հիմք է ծառայել 2001թ. մարդահամարի ընթացքում ստեղծված հասցեների տվյալների բազան: Բոլոր մարզերը, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերը, ներառվել են ընտրանքում ըստ այդ բնակավայրերում ապրող տնային

տնտեսությունների համամասնության:

Հետազոտության ընտրանքի համար ընտրվել է 4720 տնային տնտեսությունների ներկայացուցչական հավանական ընտրանք, որն անցկացվել է երկու փուլով: Առաջին փուլում ընդգրկված շրջանների ցանկից ընտրվել են 236 քլաստերներ (20-ական տնային տնտեսություններով մեկ քլաստերից): Երկրորդ փուլում իրականացվել է տնային տնտեսությունների պատահական ընտրանք:

Երևանի դեպքում տնային տնտեսությունների ընտրանքային չափը հաշվարկվել է որպես 1440, այլ քաղաքային բնակավայրերի դեպքում՝ 1280, իսկ գյուղական բնակավայրերի դեպքում՝ 2000: Գլխավոր համակցության չափն ըստ հաշվարկների կազմել է 4720 տնային տնտեսություն:

Միջառնակալի հավանականությունը կազմում է $\pm 0,032$, ինչը ապահովում է վստահելիության 95.0% միջակայք|0.268; 0.332: Ընտրանքի քայլը 1.5 է և չափը վավերական է յուրաքանչյուր բնակության վայրի համար (Երևան, այլ քաղաքային և գյուղական բնակավայրեր):

Հարցման թիրախը 15-59 տարեկան կանայք էին: Այսպիսով, հարցազրույցի համար ընդունելի են համարվել 15-59 տարեկան բոլոր կանայք, ուստի 3478 տնային տնտեսություններում 15-59 տարեկան կանանց ընդհանուր թիվը կազմել է 4552: Հարցազրույց են անցել 2763 կին:

ՄՏԲԱՏԻՖԻԿԱՑԻԱ (ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄ)

Բոլոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան բաժանվել է 48 ստրատի/շերտի: Այն ներառել է Երևան քաղաքի 12 համայնքները (12 շերտ), 15000 և ավելի բնակչությամբ խոշոր քաղաքները (16 շերտ), այլ քաղաքային բնակավայրեր (10 շերտ) և գյուղեր (10 շերտ):

Համաձայն այդ բաշխման, ձևավորվել է պատահական՝ ըստ մարզերի ստրատիֆիկացված/շերտավորված երկաստիճան ընտրանք: Բոլոր մարզերը, ինչպես նաև բոլոր գյուղական և քաղաքային բնակավայրերն ընտրանքային համակցության մեջ են ներառվել ըստ երկրի տնային տնտեսությունների ընդհանուր կազմում տվյալ բնակավայրերում ապրող տնային տնտեսությունների ունեցած համամասնության: Նախ ընտրվել են բնակավայրերը, ապա՝ հարցվող տնային տնտեսությունները:

Աղյուսակ 1.1. Ընտրանքի կիրառումը

Արդյունք	Բնակավայր			
	Երևան	Այլ քաղաքային	Գյուղական	Ընդամենը
Լրացված (L) %	78.0	70.2	73.3	73.9
SS տանը գտնվող անդամների թիվն այցելության պահին. ամբողջ SS-ը խոսում է միայն օտար լեզվով, SS-ի հարցվողների (SSՀ) %	3.8	2.0	0.7	2.0
Հրաժարումներ (Հ) %	3.8	2.9	1.7	2.7
Բնակարանը գտնված չէ (ԲԳՉ) %	0.8	2.3	0.8	1.2
SS-ն բացակայում է (SSԲ) %	8.6	20.3	21.2	17.1
Բնակարանը դատարկ է/հասցեով բնակարան չկա (ԲԴ) %	4.4	2.1	2.3	2.9
Բնակարանը քանդված է (ԲՔ) %	0.6	0.2	-	0.2
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Ընտրանքի տնային տնտեսությունների թիվը	1,440	1,280	2,000	4,720
Տնային տնտեսությունների արձագանքման տեսակարար կշիռը (SSUSԿ) ² %	90.3	90.7	95.8	92.6
Հարցման ենթակա կանայք				
Լրացված (ՀԵԿԼ) %	98.2	97.3	98.8	98.2
Տանը չէ (ՀԵԿՏՉ) %	0.2	0.3	0.3	0.3
Հետաձգված (ՀԵԿՀ)	-	-	-	-
Մերժում/հրաժարում (ՀԵԿՄ) %	0.9	1.1	0.4	0.8
Մասնակի լրացված (ՀԵԿՄԼ) %	0.6	0.7	0.4	0.5
Անգործունակ (ՀԵԿԱ) %	0.1	0.6	0.1	0.2
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թիվը	903	699	1,196	2,798
Հարցման ենթակա հարցված կանայք (ներառյալ մասնակի լրացված հարցաթերթիկները)	892	685	1,186	2,763
Հարցման ենթակա կանանց արձագանքման տեսակարար կշիռը (բացառությամբ մասնակի լրացվածների) %	98.2	97.3	98.8	98.2

ՀԱՐՑԱՇԱՐ

ԱՀԿ/WHO օրինակելի հարցաշարը³ որոշ չափով հարմարեցվել է ազգային առանձնահատկություններին և գերակայություններին (ապահովելու համար տվյալների համեմատելիությունը նշված Հարցաշարի հիման վրա իրականացված բազմաթիվ այլ հետազոտություններից ստացված տվյալների և արդյունքների հետ) ԱՎԾ-ի և ՄԱԲՀ-ի փորձագետների կողմից, քանի որ երկու գործակալություններն էլ պատասխանատու էին հարցումը մշակելու և իրականացնելու համար: Բոլոր փոփոխությունները քննարկվել են ՄԱԿ-ի գործակալությունների և ծրագրերի (օրինակ՝ Թմրամոլության դեմ ուղղված, Վերարտադրողական առողջության և Մարդու իրավունքների պաշտպանության ծրագրերի) հետ և հաստատվել են միջազգային խորհրդատուների և փորձագետների կողմից:

Հարցաշարի և «Հետազոտության հարցաշարի հարց առ հարց նկարագրություն» ձեռնարկի և հարցազրուցավարների ուղենիշների անգլերեն տարբերակները վերանայվել են, այնուհետև թարգմանվել հայերեն:

² (L)*100/(L)+(SSՀ)+(Հ)+(SSUSԿ)

³ http://www.who.int/gender/violence/who_multicountry_study/Annex3-Annex4.pdf

Հարցաշարը նախնական փորձարկում է անցել 2008թ. հոկտեմբերի սկզբին:

Հարցաշարը կազմվել է 15-59 տարեկան կանանցից հետևյալ հարցերի շուրջ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով՝

- Հարցվողը և նրա համայնքը.
- Ընդհանուր առողջություն.
- Վերարտադրողական առողջություն.
- Երեխաներ.
- Ներկա կամ վերջին գուգընկեր.
- Դիրքորոշումներ գենդերային դերերի և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ.
- Սեռական գուգընկերոջ կողմից բռնության փորձառություն.
- Բռնության արդյունքում վնասվածքներ.
- Բռնության ենթարկված կանանց կողմից կիրառվող ներգործման և դիմակայման մեխանիզմներ.
- Ոչ գուգընկերոջ կողմից բռնություն և այլ փորձառություններ.
- Ֆինանսական ինքնուրույնություն.
- Մանուկ հասակում սեռական բռնության մասին անանուն հաղորդում. հարցվողի արձագանքը:

ՎԻՃԱԿԱԳԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Հետազոտությունն իրականացնելու նպատակով ստեղծվեց 95 հարցազրուցավարներից, որակի վերահսկման 30 աշխատողներից, 8 կողավորող և 8 մուտքագրող աշխատողներից կազմված աշխատախումբ: Նախքան հետազոտությունը, դաշտային աշխատանքում ընդգրկված անձնակազմի, այդ թվում նաև ղեկավարների և տեղամասային տվյալները մշակողների համար կազմակերպվեց հնգօրյա սեմինար ԳԲ-ի և նրա տեսակների ելակետային սահմանումների, ընտանեկան բռնությանը (ԸԲ) առնչվող վերջին շրջանի հետազոտությունների, ընտանեկան բռնությանն առնչվող օրենսդրական դաշտի, հարցաշարի և օգտագործված մեթոդաբանության, ինչպես նաև հարցման ընտրանքի և հարցաթերթիկների լրացման ընթացակարգի վերաբերյալ:

ԷԹԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Ըստ ԱՀԿ-ի ուղենիշների, գիտակցված ջանքեր են գործադրվել տվյալներն այնպես հավաքագրելու ուղղությամբ, որպեսզի հարցվողները ենթարկվեն նվազագույն վտանգի, այսինքն՝ երաշխավորվի գաղտնիությունն ու անանունությունը՝ հարցվողների և հարցազրուցավարների *անվտանգությունը ապահովելու* և հետազոտության տվյալների *որակը բարելավելու* երկակի նպատակով: Ուստի ԱՎԾ աշխատակիցներն անցել են հատուկ վերապատրաստում:

Հետազոտական աշխատախումբը ելնում էր այն ենթադրությունից, որ եթե հանգամանալի ուշադրություն չդարձվի ապահովության և անվտանգության խնդիրներին և դրանք նախապես հաշվի չառնվեն, ապա որոշ դեպքերում հարցազրույցները կարող են վտանգ ներկայացնել հարցվողների համար և, թեկուզ ավելի քիչ չափով, նաև հարցազրուցավարների համար: Հետևողական ջանքեր գործադրվեցին համոզվելու, որ բոլոր դաշտային աշխատողներն ունեն համապատասխան հաղորդակցական և հարցազրուցավարման հմտություններ, կարեկցանքի, նրբազգացություն ցուցաբերելու, հարցվողների փորձառությանը ցավակցաբար վերաբերվելու և հարցազրույցները չդատապարտող ձևով վարելու ու հարցվողների հետ լավ փոխհարաբերություններ հաստատելու ունակություն, և որ նրանք պահպանելով հարցազրուցավարման կարգը և ստանդարտ ընթացակարգերը՝ այնուամենայնիվ բռնության գոհերին պատահաբար չեն ստիպի վերապրել իրենց ցա-

վոտ փորձառությունը՝ դրանով իսկ մեծացնելով վերջինների ամոթի, տագնապի, անհանգստության և հոգեբանական ցավի և գուցե նաև ինքնախարագանման և ինքնանվաստացման զգացումները, և որ ամենակարևորն է՝ նոր վնաս չպատճառեն հարցվողի բարեկեցությանը: Որևէ երրորդ կողմի ներկայությամբ որոշակի նուրբ անձնական տեղեկությունների բացահայտումը, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության տարբեր տեսակները, վերահսկողական վարքը և տնտեսական բռնությունները ուսումնասիրող հետազոտությանը մասնակցելու փաստն ինքնին կարող է ունենալ լուրջ սոցիալական, նյութական, հոգեբանական, առողջական և այլ հետևանքներ և արձագանքներ հարցվողների համար, ներառյալ հավանական՝ պատժի բռնության ենթարկվելը:

Հետևաբար պարտադիր պայման էր, որպեսզի հարցազրուցավարները.

- (ա) գիտակցված ջանքեր գործադրեին երաշխավորելու, որ հարցման ընթացքին որևէ այլ մարդ ներկա չէ, հատկապես երբ տրվում են նուրբ բնույթի հարցեր,
- (բ) նախքան հարցազրույցն սկսելը ձեռք բերեին հարցվողների իրազեկված համաձայնությունը (նախնական համաձայնության ձեռք բերման ընթացակարգով),
- (գ) հարցազրույցից առաջ հստակ և աներկբա նշեին, որ մասնակցությունը լրիվ կամավոր սկզբունքով է և որ գաղտնիությունը երաշխավորված է և հարցվողի ինքնությունը պաշտպանված է,
- (դ) հարցվողներին տեղեկացնեին գաղտնիության ընթացակարգերին,
- (ե) հարցման ընթացքում (և իհարկե բռնության փորձառությանը վերաբերող յուրաքանչյուր առանձին հատվածի անցնելուց առաջ) հարցվողներին հիշեցնեին, որ վերջինները կարող են ցանկացած պահի դադարեցնել հարցազրույցը և ձեռնպահ մնալ որոշ հարցերի պատասխանելուց և/կամ բաց թողնել որոշ հատվածներ:

Ընդհանուր առմամբ հետազոտական աշխատախումբը երաշխավորել էր, որ, ի վերջո, բոլոր տվյալները կարող են ապանույնականացվել, այսինքն՝ հնարավոր չէ դրանցով հետևել կամ դրանք կապել կոնկրետ հարցվողին:

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայաստանում հետազոտության տվյալների հավաքագրման նպատակով կիրառվել է անհատական հարցազրույցների մեթոդը: Դաշտային աշխատանքը սկսվել է 2008թ. հոկտեմբերի սկզբին և ավարտվել նույն տարվա դեկտեմբերի վերջին: Լրացված հարցաթերթիկները հանձնելիս հարցազրուցավարներից յուրաքանչյուրը նաև զեկույց է ներկայացրել այցելած տնտեսությունների թվի վերաբերյալ՝ ըստ քլաստերի հատվածից պատահականորեն ընտրված հասցեների կամ անցկացված հարցումների, և այն հասցեների, որտեղ հարցումներ չեն կատարվել: Ավագ տեխնիկական անձնակազմը պարբերաբար այցելել է աշխատախմբերին՝ կատարված աշխատանքները և տվյալների որակը վերահսկելու նպատակով: Հարցազրուցավարների աշխատախմբերը, տեղամասային տվյալները խմբագրողներն ու խմբավարը հավաքագրել են հետազոտության տվյալները:

2008թ. հետազոտության արդյունքների մշակումը սկսվեց դաշտային աշխատանքների մեկնարկից անմիջապես հետո: Լրացված հարցաթերթիկները պարբերաբար վերադարձվում էին ԱՎԾ Երևանի գլխամասային գրասենյակ, որտեղ դրանք մուտքագրվում և խմբագրվում էին հատուկ մասնագիտացված անձնակազմի կողմից: Տվյալների մշակման համար պատասխանատու անձնակազմն ապահովում էր, որ բոլոր քլաստերներից ստացվեն հարցաթերթիկների ակնկալվող քանակները:

Տվյալների համաժամանակյա մշակումն ուներ առավելություն, քանի որ ավագ տեխնիկական անձնակազմը հնարավորություն ուներ դաշտային աշխատախմբերին ժամանակին հաղորդել տվյալների մուտքագրման ընթացքում հայտնաբերված թերացումների մասին: Մասնավորապես, աշխատանքի որակի բարելավման նկատառումով աշխատախմբերին տրվում էին կոնկրետ խորհուրդներ:

ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ

- Ընտրանքում ներառված էին 4720 տնային տնտեսություններ, որոնցից 3613-ը դաշտային աշխատանքների իրականացման ժամանակ բնակեցված էին:
- Այս տարրերության հիմնական պատճառն այն է, որ բնակարանների մի մասը, որոնք բնակեցված էին տնային տնտեսությունների հետազոտության փուլում, հարցազրույցի անցկացման ընթացքում կամ դատարկ էին, կամ տնային տնտեսության անդամները երկար ժամանակով մեկնել էին իրենց բնակավայրերից:
- Բնակեցված տնային տնտեսությունների 97 տոկոսի հետ անց են կացվել լիարժեք հարցազրույցներ: Յուրաքանչյուր տնային տնտեսությունից (3613 բնակեցված տնային տնտեսությունների ընդհանուր թվից) ընտրվել էր 15-59 տարեկան մեկական կին՝ Քիշի մեթոդով անհատական հարցազրույց անցկացնելու համար:
- Այս տնային տնտեսություններում 2798 կանայք առանձնացվել են որպես անհատական հարցման ենթակա, և հարցազրույցներ են անցկացվել թվով 2763 կանանց հետ (ներառյալ մասնակի լրացված հարցաշարերով), ինչը կազմում է հարցման ենթակա կանանց 99%-ը:

Աղյուսակ 1.2 Արձագանքման տեսակարար կշիռը

Հարցազրույցներ տնային տնտեսություններում	Բնակավայր			
	Երևան	Այլ քաղաքային	Գյուղական	Ընդամենը
Ընտրված տնային տնտեսություններ	1,440	1,280	2,000	4,720
Բնակեցված տնային տնտեսություններ	1,177	935	1,501	3,613
Հարցված տնային տնտեսություններ	1,122	898	1,467	3,487
<i>Տնային տնտեսությունների արձագանքման տեսակարար կշիռ³, %</i>	90.3	90.7	95.8	92.6
Անհատական հարցազրույցներ. կանայք				
Կանանց թիվը, չկշռված	903	699	1,196	2,798
Հարցման ենթակա հարցված կանանց թիվը (ներառյալ մասնակի լրացված հարցաթերթիկները)	892	685	1,186	2,763
Հարցման ենթակա կանանց թիվը (բացառությամբ մասնակի լրացված հարցաթերթիկների), չկշռված	887	680	1,182	2,749
<i>Հարցման ենթակա կանանց արձագանքման տեսակարար կշիռ⁴ (բացառությամբ մասնակի լրացված հարցաթերթիկների), %</i>	98.2	97.3	98.8	98.2
<i>Համընդհանուր արձագանքման տեսակարար կշիռ⁵, %</i>	88.7	88.2	94.7	90.9

⁴ Հարցված ՏՏ/բնակեցված ՏՏ-ներ (ՏՏԱՏԿ)

⁵ Հարցազրույցի մասնակցած հարցվողներ/հարցման ենթակա հարցվողներ (ՀԵԿԱՏԿ)

⁶ Արձագանքման համընդհանուր տեսակարար կշիռն ըստ հաշվարկի՝ (ՀԱՏԿ=ՏՏԱՏԿ*ՀԵԿԱՏԿ/100)

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄ, ՄԱՔՐԱԳՐՈՒՄ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄ

Տվյալների մուտքագրման նպատակն է հարցաթերթիկներում ամփոփված տեղեկությունները վերածել միջանկյալ նյութերի (մեքենայական ընթերցման ֆայլերի), որոնք պետք է այնուհետև լրամշակվեն ծրագրային խմբագրման և գրասենյակային գործընթացների միջոցով և, որպես վերջնական արդյունք, վերածվեն «մաքուր» տվյալների բազայի:

Տվյալների մուտքագրումը սկսվեց դաշտային աշխատանքի ավարտից հետո: Լրացված հարցաթերթիկները ներկայացվում էին Երևանում գտնվող ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գրասենյակ, որտեղ մուտքագրվում և լրամշակվում էին հատուկ աշխատողների կողմից, ովքեր մասնակցել էին վերապատրաստման դասընթացին: Տվյալների մուտքագրման և մշակման փուլն ավարտվեց 2009թ. փետրվարին:

Տվյալների մուտքագրման համար օգտագործվել է *Microsoft Access* ծրագիրը: Այդ առնչությամբ կային որոշակի կարևոր պահանջներ. *տվյալների մուտքագրման էկրանը մեծապես նման էր հարցաշարի համապատասխան էջերին, ուստի օպերատորը հնարավորություն ուներ հարցաշարում շարք արագ գրնել էկրանին պարկերված դաշտը: Տվյալների մուտքագրման մոդուլն ուներ փոփոխական վավերականության կառավարման գործառույթ, այսինքն՝ օպերատորն անմիջապես հաղորդագրություն էր ստանում սխալանքի կամ անվավեր արժեքի մուտքագրման մասին: Հավաքագրված բոլոր տվյալներն այնուհետև վերածվում էին SPSS ձևաչափի և ստեղծվում էր տվյալների բազա: Տրամաբանական վերահսկման նպատակով բազմիցս իրականացվել են ընթացքի հետևողական ներքին ստուգումներ:*

Կշիռները հաշվի էին առնվում, երբ տվյալները հաշվարկվում էին աղյուսակների համար:

Տվյալները ընտրանքի ձևավորմանը համապատասխանեցնելու նպատակով կիրառվել է կշռման գործընթաց: Շատ դեպքերում ընտրանքի մասերը տարբերվում են ըստ ստրատաների և գլխավոր համակցությունը ճիշտ ներկայացնելու համար տվյալները պետք է կշռվեն: Ընդհանուր առմամբ, տվյալները պետք է կշռված լինեն, եթե ընտրանքի ձևավորումը յուրաքանչյուր անհատի ընտրված լինելու հավասար հնարավորություն չի տալիս:

Տնային տնտեսության ընտրանքային կշիռը հակադարձ համեմատական է տնային տնտեսության ընտրության հավանականությանը: Տնային տնտեսություններն ընտրվել են երկաստիճան փուլով: Ընտրության հավանականությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$p_1 = \frac{n_h * S_h}{S_h} \quad p_2 = \frac{m_{hi}}{M_h} \quad p = p_1 * p_2$$

որտեղ h ստրատայում $S_{hi} = \sqrt{M_{hi}}$ PPS մեթոդով ընտրանքի չափման միավորն է, M_{hi} -ը տնային տնտեսությունների թիվն է EA-ում, i , և $S_h = \sum S_{hi}$ -ը չափման միավորներ գումարն է ստրատայում, n_h -ը EAs է հանած EAs-ի ընդհանուր թվից: Յուրաքանչյուր ընտրված EA-ում, հասցեների ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր տնային տնտեսություն ընտրվելու հավասար հնարավորություն կունենա, որը կախված կլինի EA-ում ընտրվելիք տնային տնտեսությունների (m_{hi}) թվից և EA-ում ընդգրկված տնային տնտեսությունների ընդհանուր թվից: Այսինքն, h ստրատայի շրջանակներում j^h տնային տնտեսությունը i^h EA-ում ունի m_{hi}/M_{hi} ընտրվելու հավանականություն: p_1 և p_2 կշիռները համապատասխանեցվել են ըստ տնտեսության և կանաց չպատասխանելու մասնաբաժնի:

ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Ընտրանքի բաշխումն ըստ «տարիքի», «բնակության վայրի», «ամուսնական կարգավիճակի», «երեխաների թվի», «կրթական մակարդակի» և «գրադվածության» գործոնների հետևյալն է՝

Աղյուսակ 1.3. Հարցվողների բնութագրիչները

Գործոն/Կենսագրական տվյալներ		%	Կանանց թիվը (բոլորը)
Տարիք	15-24	10.8	297
	15-19	4.7	128
	20-24	6.1	169
	25-34	18.8	518
	35-44	25.6	705
	45-59	44.7	1,229
Բնակության թյուն	Քաղաքային	73.2	2,011
	Երևան	28.8	792
	Այլ քաղաքային	44.3	1,219
	Գյուղական	26.8	738
Ամուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած	13.9	382
	Ներկայում ամուսնացած	75.7	2,082
	Նախկինում ամուսնացած	10.4	285
Երեխաների թիվը	0	17.1	470
	1-2	54.4	1,495
	3+	28.5	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	0.3	8
	Ընդհանուր տարրական	4.3	118
	Ընդհանուր միջնակարգ	40.2	1,104
	Միջին մասնագիտական	32.0	881
	Բարձրագույն	23.2	638
Զբաղվածություն	Գործազուրկ	62.3	1,712
	Աշխատում է	31.8	873
	Սեզոնային աշխատանք	5.4	149
	Այլ	0.5	15
Ընդամենը		100.0	2,749

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Դաշտային աշխատանքի և տվյալների մուտքագրման ավարտից հետո ՄԱԲՀ ԸԳԲ-ն ձևավորեց ազգային փորձագետների խումբ՝ վերլուծելու ստացված տվյալները: Խմբի անդամները համալրված էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև ՀԿ-ների և գիտական համայնքի փորձագետ-ներկայացուցիչներով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ (DE JURE ԵՎ DE FACTO ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎԻՃԱԿԱԳԻՐԱԿԱՆ ՀԱԿԻՐՃ ՊԱՏԿԵՐ)

Կանանց նկատմամբ բռնության (ԿՆԲ/VAW) խնդիրը գրավել է միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, կանանց և ֆեմինիստների խմբերի և դաշինքների, ինչպես նաև ակադեմիական և գիտահետազոտական համայնքի ու լայն հասարակության ուշադրությունը բոլորովին

վերջերս: Այսպես, *Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում* (ԿԽՎԿ/CEDAW), որն ընդունվել է ՄԱԿ-ի կողմից 1979թ. դեկտեմբերին, կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ որևէ նշում չի արվում: Միայն հետագայում, աստիճանաբար, կանանց նկատմամբ բռնությունը սկսեց ճանաչվել որպես հանրային առողջապահության խնդիր (քանի որ այն անբարենպաստ ազդեցություն ունի կնոջ հոգեկան և ֆիզիկական առողջության վրա) և մարդու իրավունքների կոպիտ խախտում⁷: 1992թ., իր 11-րդ նստաշրջանի ժամանակ ԿԽՎԿ կոմիտեն գենդերային բռնությունը սահմանել է որպես «բռնություն, որն ուղղված է կնոջ նկատմամբ, որովհետև նա կին է, կամ բռնություն, որը նրա վրա ազդում է անհամաչափորեն: Այն ներառում է գործողություններ, որոնք պատճառում են ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական վնաս կամ տառապանք, նման գործողությունների սպառնալիքներ, բռնի ուժի կիրառում կամ այլ ազատություններից զրկում» և կանանց նկատմամբ բռնությունը որակում է որպես խտրականության մի ձև, որը լրջորեն խոչընդոտում է իրենց իրավունքներից և ազատություններից տղամարդկանց հետ իրավահավասար հիմքով օգտվելու կանանց կարողությունը⁸:

Այս դիրքորոշումն այնուհետև վերահաստատվել է 1993թ. ընդունված՝ *Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման ՄԱԿ-ի հռչակագրով*, ըստ որի կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների և կանանց հիմնարար ազատությունների խախտում է, ինչը խոչընդոտում կամ թույլ չի տալիս նրանց օգտվելու այդ իրավունքներից և ազատություններից⁹, ուստի այդ ժամանակվանից ընդունվել է որպես հիմնական մոտեցում:

Այսպիսով, կանանց նկատմամբ շարունակվող բռնությունը գլոբալ, տարածաշրջանային և ավելի հաճախ ներպետական մակարդակում դիտարկվում է ոչ թե զուտ որպես համընդհանուր խնդիր, որին անհրաժեշտ է վերաբերվել համապարփակ ձևով, բայց և որպես կանանց նկատմամբ հարատև խտրականության, հետևաբար՝ գենդերային անհավասարության դրսևորում¹⁰: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը շեշտել է, որ «բռնությունը և խտրականությունը [կանանց նկատմամբ] շարունակում է հավանաբար մնալ հավասարության, հնարավորությունների և առաջընթացի ձեռք բերման ամենամեծ խոչընդոտը»¹¹:

Նվազ կարևոր չէ, որ ավելի ու ավելի է ընդունվում, որ կանանց նկատմամբ բռնության թաքնված պատճառը կառուցվածքային է, օրինակ՝ անհավասարությունն ու անհամաչափությունը իշխանական հարաբերություններում և որոշ հասարակական գործելակերպերի, փոխազդեցությունների և նորմերի՝ հայրիշխանական սկզբունքների և ավանդույթների խոր արմատները¹²: Թեև այս ճշմարտությունը դեռ շատ դեպքերում ներպետական մակարդակում ընդունվելու կարիք ունի, այն արդեն ճանաչվել է միջազգայնորեն: *Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման հռչակագ-*

⁷ Ինչպես նշել է Մարգո Վոլստրոմը՝ զինված հակամարտությունների գոտիներում սեռական բռնության հիմնահարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ դեսպանորդ՝ նշանակված 27 հունվարի 2010թ. (երբ նա Եվրոպական հանձնաժողովի առաջին փոխնախագահն էր և Ինստիտուցիոնալ հարաբերությունների և հաղորդակցությունների ուսումնասիրության եվրոպական գծով հանձնակատարը), խոսելով Բրյուսելում կայացած «Կանանց, խաղաղության և անվտանգության հարցերով. կանանց սարսափելի խաղաղության և հակամարտությունների ժամանակ» խորհրդաժողովում, «կանանց նկատմամբ բռնությունը ոչ թե կանանց, այլ մարդու իրավունքների հիմնահարց է»: <http://europa.eu/rapid/pressReleasesAction.do?reference=SPEECH/10/14&format=HTML&aged=0&language=EN&guiLanguage=en>

⁸ *Գլխավոր հանձնարարական No. 19*: ԿԽՎԿ կոմիտե: 11-րդ նստաշրջան, 1992թ. (պարբերություններ 6 և 1):

⁹ *Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման հռչակագիր*: Նախաբան: Բանաձև՝ ընդունված Գլխավոր ասամբլեայի կողմից 48/104, 20 դեկտեմբերի 1993թ.:

¹⁰ Այս մոտեցումն արտացոլված է առաջին և (դեռևս) միակ կոնվենցիայում, *viz.* *Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, պայքարի և արմատական վերացման մասին միջամերիկյան կոնվենցիայում* (այսպես կոչված «Բելեմ դո Պարայի կոնվենցիա», ընդունված 9 հունիսի 1994թ.), որը բացառապես և ուղղակիորեն վերաբերում է կանանց նկատմամբ բռնության արմատական վերացմանը:

¹¹ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-Մունի մեկնաբանությունները Պեկինյան հռչակագրի տասնհինգամյակի տոնակատարության կապակցությամբ ՄԻԳՏԳ/OHCHR/Հավասարություն այսօր իրադարձության ժամանակ, Նյու Յորք, 5 մարտի, 2010թ.: SG/SM12777 WOM/1785

¹² Այդ իսկ պատճառով Եվրոպայի խորհուրդը ստեղծեց Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմուղղված պայքարի հարցերով ժամանակավոր հանձնաժողով (CAHVIO)՝ նշակելու կոնվենցիա, որը կլինի կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը կանխարգելող և դրա դեմ պայքարող մարդու իրավունքների առաջին եվրոպական պայմանագիրը, և քաջալերում է ընդունել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հատուկ արձանագրություն, որն ուղղված կլինի գենդերային բռնության դեմ:

ըի ներածության մեջ նշված է, որ կանանց նկատմամբ բռնությունը «պատմականորեն անհավասար իշխանական փոխհարաբերությունների դրսևորումն է, որը հանգեցրել է կանանց նկատմամբ տղամարդկանց գերիշխանությանը և նրանց խտրական վերաբերմունքին ու կանանց առաջխաղացման լրիվ կանխարգելմանը»¹³: Թեև ԿԽՎԿ կոմիտեի գլխավոր հանձնարարականները և *Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման ՄԱԿ-ի հռչակագիրը* իրավաբանորեն պարտադիր փաստաթղթեր չեն, դրանք նշում են այն կարևոր հանգամանքը, որի նպատակն է փոխել գերիշխող մտածողությունը և դրանով ճանապարհ հարթել, որպեսզի համապատասխան դրույթները և դրանց հիմքում ընկած փիլիսոփայությունն ի վերջո արտացոլվեն միջազգային իրավական փաստաթղթերում և ներպետական օրենսդրության մեջ: Այս նպատակով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն իր 2006թ. զեկույցում շարունակել է հետազոտել այս հարցը և եզրակացրել, որ կանանց նկատմամբ բռնությունը «պատահական, անհատական իրավախախտման արդյունք չէ, այլ խոր արմատներ ունի կանանց և տղամարդկանց միջև անհավասարության կառուցվածքային փոխհարաբերություններում...», և որ փաստերը տանում են «դեպի ճանաչում, որ կանանց նկատմամբ բռնությունը համաշխարհային, պարբերական բնույթ է կրում, և արմատները թաքնված են իշխանության անհավասարակշռության և կանանց ու տղամարդկանց միջև կառուցվածքային անհավասարության մեջ»¹⁴:

Նշված հետազոտությունը, ինչպես և շատ այլ հետազոտություններ, ցույց են տալիս, որ կանանց նկատմամբ բռնությունն աշխարհում ամենատարածված և ամենաքիչ պատժելի հանցագործությունն է¹⁵:

Շեշտելու համար այն փաստը, որ կանանց ստորակա կարգավիճակը, կառուցվածքային անհավասարությունը և գենդերային խտրականությունը հասարակությունում կանանց նկատմամբ բռնության հիմքում ընկած հիմնական պատճառներն են, ստեղծվեց և շրջանառության մեջ դրվեց «գենդերային բռնություն» (ԳԲ/GBV) տերմինը:

Ուստիս պարզ է, որ կանանց նկատմամբ բռնության արդյունավետ վերացումը ենթադրում է գենդերային հավասարության և կանանց շարունակաբար լիազորությունների ձեռք բերում՝ հիմնարար քաղաքական, տնտեսական և մշակութային իրավունքների, քաղաքացիական ազատությունների և սոցիալական իրավունքների առումով, որպեսզի նրանք ազատ լինեն իրենց նկատմամբ բռնի ուժի գործադրումից, խտրականությունից և բռնությունից՝ կատարելով գիտակցված ընտրություններ և ընդունելով կարևոր որոշումներ՝ կապված իրենց կրթության և աշխատանքի, ընտանեկան կյանքի և կարիերայի, սեռական և վերարտադրողական առողջության և այլնի հետ:

Հայաստանի գործող ներպետական օրենսդրությունը լավագույն դեպքում գենդերային առումով չեզոք է եղել, թեկուզև արգելում է գենդերային խտրականությունը: Իրականում՝ Հայաստանի Սահմանադրության 14.1 հոդվածը հստակ արգելում է խտրականությունը: Ներպետական օրենսդրությունը ներառում է համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերի և իրավական առումով ոչ պարտադիր փաստաթղթերի (որոնց կողմ է Հայաստանը) շատ դրույթներ և արտացոլում դրանց տառն ու ոգին: Հայաստանը ստորագրել է ԿԽՎԿ-ն (9-ը հունիսի 1993թ.) և դրա Կամրնտիր արձանագրությունը (23-ը մայիսի 2006թ.) և մյուս երկրների հետ համատեղ ստորագրել է Պեկինյան գործողությունների ծրագիրը (1995թ.) և ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիրը (2000թ.):

Սակայն *de jure* գենդերային հավասարությունը չի համապատասխանեցվել *de facto* գենդերային հավասարությանը: Մի շարք կարևոր նախաձեռնություններ են իրականացվել ներկա իրավիճակը բարելավելու և գենդերային հավասարությանն ավելի ու ավելի մոտենալու նպատակով: Դրանցից են՝ *Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման գործողությունների ազգային երկու ծրագրերը (1998-2000թթ. և 2004-2010թթ.)*, ազգային մակարդակով Հազարա-

¹³ Նույն տեղում:

¹⁴ Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերաբերյալ մանրամասն հետազոտություն: Գլխավոր քարտուղարի զեկույց: UN doc. A/61/122/Add.1. Նյու Յորք, 2006թ., էջ 13 և 14:

¹⁵ 2007թ. կանանց միջազգային օր, կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների ամփոփագիր: Կանանց միջազգային օր, 2007թ.: «Վերջ դնել կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը»: <http://www.un.org/events/women/iwd/2007/factsfigures.shtml>

մյակի զարգացման նպատակները (որոնք սահմանում են շատ որոշակի ելակետեր), փոփոխված օրենսդրությունը (մասնավորապես՝ խորհրդարանական ընտրություններում գենդերային քվոտաների սահմանում), վերջերս ընդունված *Պեղական գենդերային հավասարության քաղաքականության հայեցակարգը* (որը ներառում է ռազմավարությունը և ունի կանանց նկատմամբ բռնությանը վերաբերող բաժին՝ դրանով խթանելով գենդերային բռնության դեմ պայքարը), *Գենդերային հավասարության օրենքի* և *Ընտրանական բռնության մասին օրենքի* նախագծերը: Այս նախաձեռնություններն ընդգրկում են ՄԱԿ-ի և տարածաշրջանային փաստաթղթերի փիլիսոփայությունը, սկզբունքները, արժեքներն ու հիմնական նպատակները: Դրանք, մասնավորապես, հիմնվում են Եվրոպայի խորհրդի (ԵԽ/CoE) փաստաթղթերի (հատկապես Նախարարների կոմիտեի Հանձնարարականների և *Եվրոպայի կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերի համար պարասխանաբար նախարարների խորհրդաժողովների* փաստաթղթերի) վրա, որպես Եվրոպային առավել ինտեգրվելու Հայաստանի ջանքերի մի մաս: Աստիճանաբար մեծանում է իրագելությունն առ այն, որ իսկական քաղաքական և տնտեսական ինտեգրումը Եվրոպային անհնար է առանց գենդերային հավասարության ապահովման հետևողական ջանքերի, քանի որ այս հավասարությունը Եվրոպայի համար ժողովրդավարական գերակա արժեք ունի, մարդու հիմնարար իրավունքներից մեկն է և հանդիսանում է սոցիալական արդարության և հավասարության հաստատման նախապայման: Աստիճանաբար նաև մեծանում է այն ընկալումը, որ ժողովրդավարությունը և կայուն զարգացումը խթանող ջանքերը վտանգվում են ընդհանուր առմամբ գենդերային հավասարության բացակայության և, մասնավորապես, կանանց նկատմամբ բռնության պատճառով: Ջարմանալի չէ, որ գենդերային հարցերի ողջ խումբն աստիճանաբար շարժվում է դեպի հանրային քննարկումների, քաղաքականության և կյանքի առաջնային գիծ: Հայաստանի կառավարության 2009-2012թթ. ծրագիրը, որը հավանության արժանացել խորհրդարանում, որպես առաջնահերթ ուղղություն սահմանում է, որ «Կառավարության քաղաքականությունն ուղղված կլինի գենդերային հավասարության ձեռք բերմանը՝ հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը»:

Ներառելով Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ/MDGs) հիմքում ընկած փիլիսոփայությունը և արժեքային համակարգը՝ Հայաստանի կառավարությունը ազգայնացված ՀԶՆ-ում սահմանեց խորհրդարանում, կառավարությունում և տարածքային կառավարման մարմիններում նվազագույնը 25% և տեղական կառավարման մարմիններում նվազագույնը 10% կանանց մասնակցության շեմ մինչև 2015թ.: Այն նաև նախաձեռնեց օրենսդրական փոփոխություններ՝ խորհրդարանական ընտրություններում քաղաքական կուսակցությունների համամասնական ցուցակներում կանանց քվոտան 5%-ից բարձրացնելով մինչև 15%: Լինելով ինքնին դրական՝ այս զարգացումները, սակայն, հեռու են գենդերային հավասարության հասնելու միտված արդյունավետ ռազմավարությունից:

Եթե չձեռնարկվեն հատուկ ժամանակավոր միջոցներ, ապա սահմանված նպատակները, որ հաստատվել են ՀՀ կառավարության կողմից, չեն իրագործվի, չխոսելով արդեն «կրիտիկական զանգվածի» մասին (առնվազն 30%) և նվազագույն 40% շեմի մասին, որը համաձայն կանանց և տղամարդկանց հավասարակշռության սկզբունքի պահանջվում է քաղաքական և պետական որոշումների կայացման ժամանակ (ինչպես նշված է ԵԽ-ի Նախարարների կոմիտեի թիվ (2003)3 հանձնարարականում): Նշված նպատակներին հասնելու առաջադրանքն իսկապես որ ահռելի է դաժան իրականության համապատկերին: Կանանց ներկայացվածության մակարդակը խորհրդարանում դեռ ցածր է (9.2%), հատկապես համաշխարհային և եվրոպական միջին մակարդակի հետ համեմատելիս (համապատասխանաբար՝ 19.0% և 21.8%): Խորհրդարանի 12 մշտական հանձնաժողովներից 7-ում ոչ մի կին ներգրավված չէ: Իրավիճակն ավելի լավ չէ կառավարության գործադիր ճյուղում: Միայն երկու կին են զբաղեցնում նախարարական պաշտոններ և չկա ոչ մի կին մարզպետ: Ընդամենը հինգ կին զբաղեցնում են փոխնախարարի պաշտոն (56-ից), 21 փոխմարզպետներից միայն մեկն է կին: Տարիներ շարունակ կանայք չեն նշանակվել որոշում կայացնող պաշտոններում այնպե՛ս նախարարություններում, որոնք պատասխանատու են այնպիսի ոլորտների համար, ինչպիսիք են՝ կրթությունը,

ատողջապահությունը և սոցիալական հարցերը, որտեղ կանայք կազմում են աշխատողների ավելի քան 70%-ը: Կանայք զբաղեցնում են քաղաքացիական ծառայության բարձր պաշտոնների ընդամենը 8.3%-ը: Կարող է թվալ, թե տեղական կառավարման մակարդակում իրավիճակը պետք է լինի հիմնական պետական վարչական համակարգի պատկերի հայելային արտացոլումը: Սակայն դա այդպես չէ, քանի որ գենդերային անհավասարության մակարդակն ավելի բարձր է տեղական կառավարման մարմիններում: Անկախությունից ի վեր ոչ մի կին չի նշանակվել կամ ընտրվել քաղաքապետի պաշտոնում (միայն վերջերս առաջին անգամ մի կին ընտրվել է փոխքաղաքապետի պաշտոնում) Հայաստանի որևէ քաղաքում: Քաղաքային համայնքներում կանայք կազմում են ավագանու անդամների ընդամենը 4.2%-ը: Ինչ վերաբերում է գյուղական համայնքներին, դրանց միայն 2.6%-ն ունի կին ղեկավար:

Այսպիսով, չնայած գենդերային հավասարության ապահովման հանձնառությանը և վերոնշյալ նախաձեռնություններին, իրավիճակը խոսում է այն մասին, որ դեռ շատ գործ կա անելու, հատկապես հիմնավոր հավասարության հաստատման տեսանկյունից, որը ներառում է ոչ միայն հավասար իրավունքներ, այլև հնարավորությունների և արդյունքների հավասարություն: Ճարտասանության և իրականության միջև այս անդուրձ շատ ակնառու դրսևորում ունի ամենասուր խնդիրներում, ինչպես օրինակ՝ կանանց լիազորություններից, մասնավորապես՝ քաղաքական և տնտեսական ոլորտում որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորությունից զրկվել է, աղքատությանմակարդակում կանանց ավելացումը և ցածր աշխատավարձով աշխատող և գործազուրկ կանանց բարձր տոկոսը, ինչը վտանգում է նրանց կարգավիճակը և ներգործությունը աշխատանքի և զբաղվածության շուկայում:

Գենդերային անհավասարությունը և խտրականությունն ընդհանրապես և գենդերային անհամաչափությունը մասնավորապես, և կանանց աննպաստ դիրքը քաղաքական և տնտեսական կյանքում ամրապնդվում են խիստ հայրիշխանական կարծրատիպերով և վերաբերմունքով, որոնք հեռու են գենդերային հավասարության իդեալներից և որոնք կարող են վերագրվել ավանդական մտածելակերպին և վերացվել միայն հետևողական և համապարփակ քաղաքական միջոցներով, այդ թվում՝ կրթության, լրատվամիջոցների և հանրային իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված այլ քարոզարշավների և միջամտությունների միջոցով: Մինչև այժմ լավագույն դեպքում միայն առաջին քայլերն են արվել այս ուղղությամբ: Դեռ հարց է, թե արդյոք բավարար արդյունավետ քաղաքական մոտեցումներ են ձևավորվել և իսկապես եռանդով իրականացվել գերիշխող ավանդապաշտ մտածելակերպը փոխելու համար, որն ամրացած է մի շարք հետամնաց միտումներով, որոնք այսօրվա հայ հասարակության շրջանում շարունակում են մնալ մակերևույթին:

Գենդերային այս կարծրատիպերն իսկապես խոչընդոտում են կանանց առաջխաղացումը հանրային կյանքում, չնայած շատ կանայք ավելի լավ կրթություն ունեն, քան տղամարդիկ, և չնայած որոշ առաջընթաց կա պետական վարչարարության ոլորտում, խորհրդարանում և դատաիրավական համակարգում կանանց ներկայության առումով:

Իրավիճակն ավելի է վատթարանում *գենդերային հավասարության ազգային իրական համակարգի փաստացի բացակայության պատճառով*, որը կառավարության քաղաքականությունը համակարգող կենտրոնական բաժինն է, որի հիմնական ուղղությունը պետք է լինի գենդերային հավասարության հեռանկարը քաղաքականության բոլոր ոլորտներում և որը արդյունավետ միջոցներ կձեռնարկի կանանց առաջխաղացմանը նպաստելու համար:

Ընդհանուր հասարակական համատեքստը չի կարող ազդեցություն չունենալ գենդերային բռնության շրջանակների և մասշտաբների վրա տվյալ հասարակությունում: Թեկուզև կազմված լինելով առանձին գործողություններից՝ կանանց նկատմամբ բռնությունը սոցիալական երևույթ է: Այս երևույթի չափը և դաժանությունը մեծապես կախված են սոցիալական միջավայրից և էապես կապված են դրա հետ, որը կարող է լինել չեզոք կամ նպաստավոր կանանց նկատմամբ բռնության առումով, կամ հակառակը՝ հնարավոր դարձնել դրա դեմ պայքարելու և այն վերացնելու ջանքերի գործադրումը: Քանի որ հասարակությունը կազմված է բազմատարր խմբերից և ենթամշակույթներից,

էական նշանակություն ունի, որ առանցքային հաստատություններն ու կառույցները համապատասխան ազդանշաններ ուղարկեն լայն հասարակությանը՝ մատնանշելով, որ կանանց նկատմամբ բռնությունը չի խրախուսվում և չպետք է խրախուսվի, կոծկվի կամ հանդուրժվի: Ինչպես նշվում է նախկին ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթի հաճախ վկայակոչվող կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ պաշտոնական հայտարարության մեջ, կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերը մշակույթի առանձնահատուկ երևույթ չեն, այլ հանցագործություն: «Ոմանք ասում են այս ամենը մշակութային է, և մենք չենք կարող ոչինչ անել դրա հետ: Ես ասում եմ՝ սա հանցագործություն է, և մենք յուրաքանչյուրս դրան վերջ դնելու պարտականություն ունենք»¹⁶:

Կանանց նկատմամբ բռնությունն իրավամբ համարվում է այն լուրջ սոցիալական խնդիրներից մեկը, որ ներկայում ունեն եվրոպական երկրները¹⁷: Հայաստանը բացառություն չէ: Ուստի, նման հաստատություններն ու գործակալություններն առանցքային դեր ունեն: Սակայն, ինչպես նշված է ԿԽՎԿ կոմիտեի եզրափակիչ դիտողություններում Հայաստանի երրորդ և չորրորդ միավորված պարբերական գեկույցների առնչությամբ, Կոմիտեն «մտահոգ է, որ չկա հատուկ նպատակով ստեղծված կառավարական մարմին կամ համակարգող հաստատություն, որին հանձնարարված լինի կանանց նկատմամբ գենդերային բռնության բոլոր ձևերի դեմ պայքարի միջոցառումների իրականացումը»¹⁸: Հիրավի, չկա մեկ առանձին մարմին, որն ունենա գենդերային բռնության կանխարգելման, գոհերին սոցիալական օգնության, օժանդակության տրամադրման և վերականգնման և նմանաբնույթ այլ գործունեության համակարգման հանձնագիր (մանդատ): Բացի այդ, ինչպիսի գործառնություններ էլ որ ունեն գոյություն ունեցող հաստատությունները (ինչպես՝ Առողջապահության նախարարությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, օրենքի կիրառումն ապահովող գործակալությունները և այլն) կապված բռնության հետ, հիմնականում չկան գենդերային բռնության հստակ մատնանշված դեպքեր և դրանց բնորոշումներն անպայման չէ, որ հաշվի են առնվում:

Ուսումնասիրվող ոլորտում առկա խնդիրների մեկ այլ խմբի գոյությունը բացակայում է համապարասխան օրենսդրության բացակայությամբ: Լինելով ԿԽՎԿ կոնվենցիայի կողմ՝ համաձայն ԿԽՎԿ կոմիտեի թիվ 19 (1992) գլխավոր հանձնարարականի Հայաստանը դեռ պետք է ճանաչի և իր ներպետական օրենսդրության մեջ արտացոլի, որ գենդերային բռնությունը կանանց նկատմամբ խտրականության ձև է, որը հետևաբար նշանակում է կանանց մարդու իրավունքների ոտնահարում՝ համաձայն Կոնվենցիայի: Այս ճանաչումն էական նշանակություն ունի, քանի որ այն հետևողական քաղաքականության և ռազմավարության ստեղծման ու կանանց նկատմամբ բռնության բոլոր դրսևորումներին անդրադարձող համապարփակ միջոցառումների մշակման նախապայման է: Օրենսդրությունը շատ կարևոր է: Առաջին, այն սահմանում է բռնության կոնկրետ գործողությունները որպես հանցագործություն և օրինախախտում՝ այդպիսով արգելելով դրանք: Երկրորդ, այն ցույց է տալիս, որ գենդերային բռնությունն այլևս անձնական խնդիր չէ, այլ ավելի շուտ հասարակական: Վերջապես, այն տրամադրում է գենդերային բռնության դեմ պայքարելու իրավական միջոցների ամբողջ մի խումբ: Բացի այդ, արդյունավետ իրավական համակարգը կարևոր է, քանի որ այն հիմք է ստեղծում քաղաքականության մշակման համար: Թեկուզև օրենքներն ինքնին համադարման միջոց չեն (քանի որ դրանք պետք է կենսագործվեն՝ արդյունավետ դառնալու համար), այնուամենայնիվ դրանք նախապայման են (անհրաժեշտ, չնայած ոչ բավարար պայման): Պահանջվում է համապատասխան օրենսդրություն գենդերային բռնության խնդիրների խմբին մտածված անդրադարձնալու և այս երևույթի դեմ արդյունավետ և բազմակողմանի պայքար մղելու համար:

Գենդերային բռնությանն անդրադարձող հատուկ օրենսդրության բացակայությունը մեծ խնդիր է Հայաստանում: Բացի այդ, ընտանեկան բռնության մասին որևէ նշում չկա երկրի Քրեական օրենսգր-

¹⁶ «American Leadership for the 21st Century: Doing What's Right and Smart for America's Future»: Մադլեն Օլբրայթ, ԱՄՆ պետքարտուղար: Ջեյմս Հելմս դասախոսություն, Ուիլսոնյան համալսարան, մարտի 25 1997թ. <http://gos.sbc.edu/albright4.html>

¹⁷ Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների եվրոպական մակարդակով հավաքագրման պատշաճ գործունեության հեռանկարներ և ստանդարտներ: Օժանդակ փաստաթուղթ: Ներկայացված է CAHRV-ի կողմից, 2007թ., էջ 2:

¹⁸ CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 (2 փետրվարի 2009թ.):

քում: Քանի որ այն սահմանված չէ որպես հանցագործություն, ընտանեկան բռնությունը քրեականացված չէ: Ամուսնական (սեռական զուգընկերոջ կողմից) բռնաբարությունը նույնպես սահմանված չէ որպես հանցագործություն և քրեականացված չէ: Ընդհանուր առմամբ Քրեական օրենսգիրքը գենդերային զգայուն չէ: Նույնը վերաբերում է մյուս օրենքներին, որոնք անդրադառնում են բռնության տարբեր տեսակյուններին: Օրինակ, *Սոցիալական աջակցության մասին օրենքը* (ընդունվել է 2005թ. հոկտեմբերի 24-ին) հանձնարարում է, այլոց թվում, ժամանակավոր օթևան տրամադրել բռնության զոհերին (Հոդված 12): Այնտեղ չկան դրույթներ, որոնք առանձին վերաբերեն կանանց նկատմամբ բռնության կամ գենդերային բռնության զոհերին և որոնք անդրադառնան տվյալ զոհերի հատուկ կարիքներին:

Վերջերս մշակվել է *Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքը* (*Գենդերային հավասարության օրենքը*): *Գենդերային հավասարության օրենքի* նախագիծը շուտով նախատեսվում է ներկայացնել խորհրդարանին՝ ընդունելու համար: Թեպետև օրենքը (ընդունվելու դեպքում) մեծ նվաճում կլինի քաղաքական կարևոր մի շարք ոլորտներում գենդերային հավասարության օրակարգի մշակման և գերակայությունների սահմանման առումով, այնուամենայնիվ այն չի անդրադառնում գենդերային բռնությանը:

Այս բացը չի կարող լրացվել մեկ այլ դրական զարգացմամբ, *viz.* այն փաստով, որ *Ընտանեկան բռնության մասին օրենքի* մշակումը շուտով կավարտվի: Մնում է սպասել՝ երբ կընդունվի *Ընտանեկան բռնության մասին օրենքը*: Հայաստանի կառավարությունը դեռևս հստակ ժամկետներ չի սահմանել և հանձնառություններ չի ստանձնել կապված այս օրենքի հետ, չնայած որ դեռ 2002թ. ԵԱՀԿ-ն խիստ հանձնարարում էր մասնակից պետություններին «ներպետական օրենքներ ընդունել ընտանեկան բռնության մասին»¹⁹:

Թեկուզև ընդունվելու դեպքում *Ընտանեկան բռնության մասին օրենքը* կարող է առաջընթացի կարևոր քայլ լինել՝ ազդարարելով այս կարևոր հարցով լրջորեն զբաղվելու իշխանությունների քաղաքական կամքն ու պատրաստակամությունը, այնուամենայնիվ դեռ շատ հեռու կլինի նրանից, ինչ ակնկալվում է գենդերային բռնության մասին օրենքից: Նախ և առաջ, օրենքը չի վերաբերում այն դեպքերին, երբ բռնության հեղինակներն այլ բռնարարներ են և ոչ թե ընտանիքի անդամները: Երկրորդ, այն չունի արդյունավետ միջամտող մեխանիզմներ՝ բացառությամբ ծանրացուցիչ հանգամանքներում հարձակման դեպքերի: Երրորդ և ամենակարևորը, մանրամասնելով ընտանեկան բռնության գործողությունները «սահմանումների» բաժնում (Հոդված 3)՝ այն սահմանափակում է պատասխանատվությունն այն գործողություններով, որոնք ներկա օրենսդրության մեջ որակված են որպես քրեական հանցագործություն: Սակայն շատ գործողություններ, որոնք *Ընտանեկան բռնության մասին օրենքի* նախագծում սահմանված են որպես ընտանեկան բռնություն, այդպիսին չեն որակված Քրեական օրենսգրքում: Սեռական բնույթի գործողությունները (մասնավորապես՝ ամուսնական բռնաբարությունը և բռնաբարությունը մշտական կամ պատահական զուգընկերների և համատեղ բնակվողների միջև, հասկացություններ, որոնք, ի դեպ, չեն կիրառվել *Ընտանեկան բռնության օրենքի* նախագծում), հոգեբանական բռնության գործողությունները և ֆիզիկական բռնության գործողությունների հիմնական մասը, սեռական զուգընկերների կողմից (կամ ավելի լայն՝ ընտանիքում) կատարվելու դեպքում չեն պատժվում Քրեական օրենսգրքով: Հայաստանի քրեական իրավունքում համապատասխան միջոցների և պատժամիջոցների այս բացը հնարավոր չի դարձնում «արագ և արդյունավետ գործողություններ ձեռնարկել բռնության հեղինակների դեմ և շտկել այն վնասները, որ պատճառվել են բռնության զոհ դարձած կանանց» (ինչպես հանձնարարված է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից²⁰):

Պերսոնական գենդերային հավասարության քաղաքականության հայեցակարգի և դրա կիրառման ուսզմնավարության նպատակն է լրացնել վերոնշյալ բացերը, մասնավորապես՝ առաջարկված *Գեն-*

¹⁹ ԵԱՀԿ, Եզրափակիչ գեկույց, Վիեննա, 2002թ., էջ 5:

²⁰ Եվրոպայի խորհուրդ: Կանանց նկատմամբ բռնության դեմ ուղղված կանանց պաշտպանության վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ (2002)5 հանձնարարականը անդամ պետություններին (Հավելված 35):

դերային հավասարության օրենքում, քանի որ նրա բաժիններից մեկը բացառապես նվիրված է գենդերային բոնության վերացմանը: Հայեցակարգը որպես հիմնական նպատակ և պետական գենդերային քաղաքականության գերակա ոլորտ է սահմանում *Գենդերային բոնության վերացման մասին օրենքի* մշակումը և ընդունումը: Այն հստակ նշում է, որ առաջարկված Օրենքը պետք է օգտագործի միջազգային լավագույն փորձը և ուղղորդվի օրենսդրության օրինակելի նմուշներով և միջազգային իրավական նորմերով: Քանի որ այս խնդիրները պահպանվել են հաստատված տարբերակում, Հայեցակարգը զգալի առաջընթաց կապահովի երկրում գենդերային բոնության կանխարգելման և վերացման ոլորտում: Հայեցակարգը գերկարևոր է դարձնում այն փաստը, որ այն ոչ միայն ուղենիշային, այլև **քաղաքական փաստաթուղթ է**: Այն ոչ միայն հույս է ներշնչում, որ Հայաստանի կառավարությունը գենդերային բոնության խնդիրն վերաբերվում է լրջորեն և պարտավորվում կանխարգելել և պայքարել դրա դեմ, այլև ակնկալիքներ է արթնացնում *Գենդերային բոնության վերացման մասին օրենքի* ապագայի հետ կապված: Միայն այդպիսի օրենքը կարող է բազմակողմանի մոտեցում ապահովել՝ երաշխավորելով բոնության ներկա և հավանական զոհերի համապատասխան պաշտպանությունը համապատասխան իրավական շրջանակներում (արդյունավետ պատժամիջոցներ և տույժեր, դատական արգելող հրամաններ, ֆինանսական օժանդակություն, ապաստաններ, հոգեբանական վերականգնում և այլն) և համապատասխան պետական հաստատությունների և ոչ կառավարական կազմակերպությունների համագաղթյալ համակարգված արդյունավետ աշխատանքը: Այսպիսով, այն հնարավոր կդարձնի արդյունավետ անդրադառնալ կանանց առանձին իրավիճակներին և բոլոր միջոցառումներն ու միջամտությունները համապատասխանեցնել զոհերի առանձնահատուկ կարիքներին: Ամենայն հավանականությամբ, *Գենդերային բոնության վերացման մասին օրենքը* հստակ կսահմանի, որ գենդերային բոնության բոլոր ձևերը հանցագործություն են, ինչպես նաև կթվարկի գենդերային բոնության այն բոլոր ձևերը, որոնք դասակարգվում են որպես քրեական հանցագործություն:

Չնայած որ դժվար է գերազնահատել օրենքների, ռազմավարությունների և գործողությունների ծրագրի կարևորությունը, դրանց պետք է հարմարեցվեն համապատասխան քաղաքական կամքն ու հանձնառությունը՝ կանանց նկատմամբ բոնությանը, մասնավորապես՝ ընտանեկան բոնությանը վերջ դնելու նպատակով: Ինչպես վկայում են միջազգային կազմակերպություններն ու հետազոտողները, բոնությանը վերջ դնելու նպատակ հետապնդող իրավական դրույթների և ազգային ռազմավարությունների միջև բացը՝ մի կողմից, և դրանց փոխակերպումը կոնկրետ գործունեության, մասնավորապես ֆինանսական օժանդակության՝ մյուս կողմից, շարունակում է ամենակարևոր մարտահրավերը հանդիսանալ Եվրոպայի որոշ հատվածներում²¹:

Հայաստանը բացառություն չէ: Չնայած որ կանանց իրավունքների, գենդերային հավասարության և կանանց նկատմամբ խտրականության և բոնության կանխարգելման և վերացման վերաբերյալ քաղաքական առումով կոռեկտ ճարտասանությունն այլևս օտար չէ պետական հաստատությունների և բարձրաստիճան պաշտոնյաների համար, հատկապես նրանց, ովքեր կանոնավոր փոխգործակցում են միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ, այս հայտարարությունները դեռևս կարիք ունեն փոխակերպվելու հետևողական և ուղղորդված գործողությունների:

Մեկ այլ խնդրահարույց ոլորտ է հավասարի վիճակագրության բացակայությունը: Կանանց նկատմամբ բոնության դեմ պայքարելու արդյունավետ ռազմավարության մշակումը պահանջում է համապարփակ և ճշգրիտ տվյալների մատչելիություն տվյալ բոնության տարածվածության և հաճախականության վերաբերյալ: Ավելորդ է նշել, որ գենդերային բոնության դրսևորումները հիմնականում ոչ միայն բավարար չեն հաղորդվում, այլև համապատասխանաբար փաստաթղթերով չեն ձևակերպվում: Համապարփակ վիճակագրական տվյալները պակաս կարևոր չեն գենդերային բոնության շուրջ առկա լռությունը սասանելու և երկրում երևույթի հերքումը դադարեցնելու համար: Արձագանքելով համաշխարհային, տարածաշրջանային կամ ներպետական մակարդակներում իրականաց-

²¹ Տես օրինակ՝ Ընտանեկան բոնության վերացումը Հարավարևելյան Եվրոպայում և Թուրքիայում. տարածաշրջանային ռազմավարությանն ընդառաջ գործողությունների ծրագիր: ՄՄԿԶՀ/UNIFEM Կենտրոնական և Արևելյան Եվրոպա, Բրատիսլավա, 10 հուլիսի 2007թ., էջ 21:

ված տարբեր հետազոտությունների և հաղորդումների արդյունքներին, որոնք վկայում են, որ չկա որևէ կին, որը պաշտպանված է գենդերային բռնությունից՝ անկախ իր տարիքից, բնակության երկրից, զբաղմունքից, սոցիալ-տնտեսական կարգավիճակից և այլն, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի զեկույցում նշվում է, որ «կանանց նկատմամբ բռնությունը շարունակում է գոյություն ունենալ աշխարհի բոլոր երկրներում որպես մարդու իրավունքների տարածված ոտնահարում և գենդերային հավասարության հասնելու մեծ խոչընդոտ»²²:

Այնուամենայնիվ, գենդերային բռնության (ներառյալ ընտանեկան բռնության) հերքումը, առնվազն որպես սոցիալական երևույթ, որն ունի այնպիսի մասշտաբներ, որ կարող է հանրային մտահոգություն առաջ բերել, ներկայիս Հայաստանում հազվադեպ երևույթ չէ: Դա առկա է՝ չնայած համատեղ կրթական և հանրային իրազեկության բարձրացման քարոզարշավին և ծրագրային այլ ջանքերին (թեև իրականացվում են համեստ մասշտաբներով), որ գործադրում են կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող տեղական ոչ կառավարական կազմակերպությունները և միջազգային հանրությունը, հիմնականում՝ ՄԱԿ-ը և եվրոպական կազմակերպությունները: Այն, որ նշված ջանքերը որոշակի արդյունքներ ունեցել են՝ ճանապարհ բացելով գենդերային բռնությունը որպես Հայաստանի առջև ծառայած լուրջ խնդիր սահմանելու համար, չպետք է խանգարի ընդունելու, որ թեկուզև բավական երկար ժամանակ այս խնդրի նշանակության ճանաչման հարցին ցուցաբերվել է «կեղծ նվիրվածություն», մարդկանց էական զանգվածը դեռ չի ընդունում գենդերային, մասնավորապես՝ ընտանեկան բռնությունը որպես լուրջ սոցիալական խնդիր: Հնարավոր չէ հաշվել այդ մարդկանց թիվը բացարձակ ճշգրտությամբ, քանի որ չկան հստակ տվյալներ: Մովորաբար դրանք մոտավոր կամ փորձագիտական հաշվարկներ են, որոնք հիմնված են հարցումների, հանրային քննարկումների, հրատարակությունների, բանավեճերի, պատահական փաստերի և այլնի արդյունքում ձեռք բերված տվյալների վրա: Մինևույն ժամանակ՝ մատչելի տվյալները հակված են մատնանշելու, որ մերժողական վերաբերմունքը փոխհատվում է սոցիալական դասի, սոցիալ-տնտեսական կարգավիճակի, տարիքի և նույնիսկ գենդերի սահմանագծերի հետ, և միայն կրթության մակարդակն է աստիճանաբար դառնում այն գործոնը, որն ուժեղ բացասական փոխկախվածություն է դրսևորում:

Մի շարք գործոնների համադրումն օգնում է բացատրել գենդերային բռնության դեպքերը բացահայտելու և դրանց մասին տեղեկացնելու գերիշխող դժկամությունը: Դրանցից մի քանիսն են՝ *հայրիշխանական կարծրաբերությունը* և *վերաբերմունքը*, այդ թվում՝ այնպիսի վերաբերմունքը, որը հակված է մեղադրելու զոհին, կանխարգելման, ուղղորդման, պաշտպանության և պատժի համապարփակ համակարգի *բացակայությունը*, սոցիալական, տնտեսական և նույնիսկ առողջության ու անվտանգության հետ կապված *ծանր հետևանքները*, այդ թվում՝ օրենքի հարկադիր կատարման մարմինների պաշտոնյաների և դատավորների դատապարտող մոտեցման պատճառով *կրկին հետապնդվելու* մտավախությունը և գենդերային առումով նրբանկատ ու զոհակենտրոն մոտեցման բացակայությունը, որոնց պատճառով գենդերային բռնության զոհերը չեն հանդգնում հաղորդել հանցագործության մասին: Սա է այն հիմնական պատճառներից մեկը, թե ինչու պաշտոնական վիճակագրությունը չի կարող ներկայացնել այս ոլորտում տիրող իրավիճակի իրական պատկերը: Այն ներկայացնում է միայն «սառցաբեկորի» գազաթը, քանի որ բռնության գործողությունների մասին հիմնականում (հատկապես, երբ դրանք կատարում է սեռական զուգընկերը կամ որևէ ծանոթ, կամ երբ այդ գործողությունները հոգեբանական կամ հատկապես սեռական բնույթ ունեն) կամ անբավարար են հաղորդում կամ ընդհանրապես չեն հաղորդում: Բացի այդ, պետք է խոստովանել, որ գենդերային բռնության արմատական պատճառների, ինչպես նաև դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, առողջապահական և քաղաքական ծախսերի, ազդեցությունների և հետևանքների հետազոտումը պաշտոնական վիճակագրության գործառնություն չէ ի պաշտոնե, դրա բացակայությունը լուրջ սահմանափակումներ է դնում տվյալների կիրառելիության և բացատրական նշանակության ու ներուժի վրա՝ թողնելով բացեր, որոնք անհրաժեշտ է լրացնել այլ միջոցներով:

Սա բացատրում է հետազոտությունների, այդ թվում նաև սոցիոլոգիական կամ միջառարկայական

²² Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերաբերյալ մանրամասն հետազոտություն: Գլխավոր քարտուղարի զեկույց: UN doc. A/61/122/Add.1. Նյու Յորք, 2006թ., էջ 9:

հետազոտությունների և ուսումնասիրությունների նշանակությունը: Զարմանալի չէ, որ դեռ 1995թ. Պեկինյան գործողությունների ծրագիրը խստիվ հանձնարարում էր «խթանել կանանց նկատմամբ բռնության պատճառների, բնույթի, լրջության և հետևանքների հետազոտությունը»²³:

Հայաստանում անց են կացվել սակավաթիվ հետազոտություններ, որոնք բացառապես ուղղված են եղել կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրին: Այստեղ անհրաժեշտ է նշել դրանցից երեքը: Մեկն իրականացվել է 2003-2004թթ. *Սոցիոմետր* անկախ սոցիոլոգիական կենտրոնի կողմից: Հետազոտությունը պատվիրվել էր *Կանանց ֆորում* ՀԿ-ի կողմից՝ Համաշխարհային ուսուցում կազմակերպության «ՀԿ-ների հզորացում» ծրագրի միջոցով ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ/USAID) տրամադրած ֆինանսավորմամբ²⁴: Հետազոտությունը հիմնականում ուղղված էր աշխատավայրում կանանց նկատմամբ սեռական բնույթի ոտնձգություններին: Ուսումնասիրությունն իրականացվել է երեք փուլով՝ փորձնական փուլ (Երևանում և չորս մարզերում՝ 160 կանանց շրջանում), միջանկյալ փուլ (հարցումն անց է կացվել 5 քաղաքներում՝ 500 կանանց և 100 տղամարդկանց շրջանում) և վերջնական փուլ (այդ նույն քաղաքներում՝ 600 կանանց շրջանում): Ընտրանքները ներառել են 18 տարեկանից բարձր կանանց: Արդյունքները ցույց են տալիս, որ աշխատավայրում կանանց նկատմամբ սեռական բնույթի ոտնձգությունները մեկուսի երևույթ չեն, այլ այլուր տեղի ունեցող բռնության և սեռական ոտնձգությունների շարունակությունը: Հետազոտության տվյալների վերլուծության արդյունքում փորձագետները եզրակացրել են, որ «կանանց նկատմամբ բռնությունը ստեղծել է ընդհանուր միջավայր, որի դրսևորումները առկա են ամենուր»: Մեկ այլ ապշեցուցիչ եզրակացություն. հարցված կանանց 78%-ը կարծում են, որ կանայք «շարունակում են լինել ճնշված, ենթարկվել բռնությունների և սեռական բնույթի ոտնձգությունների»: Հետազոտությունը նաև դասակարգել է աշխատավայրում սեռական բնույթի ոտնձգությունների ենթարկվելու վտանգը որպես ամենաբարձր, իսկ տանը նման վտանգը (հատկապես կապված սեռական զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելու հետ)՝ որպես բավական բարձր:

Հիշատակված երեք հետազոտությունների մեջ «Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության»²⁵ վերաբերյալ հետազոտությունը միակն է, որն ըստ էության անց է կացվել երկրի ամբողջ տարածքում: Այն պատվիրվել էր *Կանանց իրավունքների կենտրոն* ՀԿ-ի կողմից և իրականացվել 2007թ. Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ/ԱՄԱ) *Քաղաքական վերլուծությունների Թուրիանջյան կենտրոնի* կողմից՝ Կաթոլիկ օգնության ծառայության հայաստանյան մասնաճյուղի և ԵԱՀԿ տրամադրած ֆինանսական միջոցներով: Ուսումնասիրությունը հիմնված է 1,006 դեմ-առդեմ հարցումների վրա՝ 17-78 տարեկան կանանց շրջանում Երևանից և երկրի բոլոր տասը մարզերից ընտրված տնային տնտեսություններից՝ ամենավերջին մարդահամարին համաչափ: Տվյալների հավաստիությունը փոքր-ինչ վտանգված էր այն փաստով, որ հարցազրույցների 2%-ը անց էր կացվել սեռական զուգընկերոջ ներկայությամբ: Հետազոտությունը մանրամասն անդրադարձել է ընտանեկան բռնության բազմաթիվ տեսանկյուններին, այդ թվում՝ հոգեբանական և ֆիզիկական բռնության շրջանակին, կանանց նկատմամբ բռնության հանդեպ վերաբերմունքին, ընտանեկան բռնության ընկալման մակարդակին, ընտանեկան բռնության հետևանքներին, կանանց նկատմամբ բռնությանը վերջ դնելու նպատակ հետապնդող միջոցառումների համեմատական արդյունավետությանը, ընտանեկան փոխհարաբերությունների ընկալումներին և այլն: Հետազոտության կարևոր բաղադրիչներից մեկը հարցումների զուգորդումն էր ինքնուրույն վարվող քարտերի հետ, որոնք ավելի լավ էին ապահովում գաղտնիությունը և օգնում էին ստուգել հարցազրույցի արդյունքները: Ուսումնասիրության շատ կարևոր սահմանափակում է, որ հրապարակված արդյունքները չեն անդրադառնում սեռական բռնության խնդիրներին (չնայած, համաձայն հաշվետվության, ինքնուրույն վարվող վերոնշյալ քարտերում սեռական բռնության մասին նշվել է): Պատճառը պարզ չէ և բացատրված

²³ Պեկինյան հռչակագիր և գործողությունների ծրագիր: Կանանց հարցերով չորրորդ համաշխարհային խորհրդաժողով (Պեկին, Չինաստան, 4-15 սեպտեմբերի 1995թ.): UNDP, 1996թ., էջ 81 (129a):

²⁴ Աշխատավայրում կանանց նկատմամբ սեռական բնույթի ոտնձգություններ. իրավիճակը, ապագայի ծրագրեր և հիմնահարցեր: Երևան, 2003թ., 35 էջ (հայերեն):

²⁵ Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնություն: Համազգային հետազոտության արդյունքների զեկույց: Երևան, «Լիմո» հրատարակչություն, 2007թ., 123 էջ (հայերեն և անգլերեն տարբերակներ):

չէ, չնայած որ հետազոտության սահմանած նպատակներից մեկն է եղել «գնահատել ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնությունների մակարդակը Հայաստանում», ինչը ենթադրաբար պետք է նաև ներառեր սեռական բնույթի ոտնձգությունները, հատկապես քանի որ եռանդուն ջանքեր էին գործադրվել հետազոտելու հոգեբանական, ինչպես նաև միջին և դաժան ֆիզիկական բռնությունները: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցմանը մասնակցած կանանց 66%-ը ենթարկվել է հոգեբանական, իսկ 28%-ը միջին կամ դաժան ֆիզիկական բռնության տանը՝ հատկապես սեռական զուգընկերոջ կողմից: Մեկ այլ կարևոր բացահայտում էլ այն է, որ հարցման մասնակիցների 60.5%-ը համոզված է, որ ընտանեկան բռնությունը լայն տարածում ունի Հայաստանում:

Երրորդը «Հայաստանում կին փախստականների և ապաստան հայցողների շրջանում սեռական և գենդերային բռնություն»²⁶ հետազոտությունն է, որը պատվիրվել էր Փախստականների գծով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ/UNHCR) կողմից և 2008թ. իրականացվել նույնպես ՀԱՀ Քաղաքական վերլուծությունների Թուրիանյան կենտրոնի կողմից: Հասկանալի չէ, թե ինչու են հեղինակները հետազոտության վերնագրում և մի շարք ենթավերնագրերում սեռական բռնությունը առանձնացնում գենդերային բռնությունից, երբ հետազոտության տեքստում և աղյուսակներում նման տարբերակում չի կատարվում (և ճիշտը դա է):

Հիմնված լինելով բացառապես գենդերային բռնության վրա՝ հետազոտությունն ուղղված է եղել հայ հասարակության մի փոքր հատվածի միայն: 392 դեմ-առ-դեմ հարցազրույցներ են անցկացվել 18-75 տարեկան կանանց հետ, ում նույնպես տրվել են ինքնուրույն վարվող երեք տեսակ քարտեր, որտեղ թվարկված են բռնության գործողություններ, որոնց նրանք կարող էին ենթարկված լինել որպես փախստականներ և ապաստան հայցողներ՝ հակամարտության հետևանքով փախչելու ժամանակ (քարտ 1), Հայաստան գալուց ի վեր (բռնություններ՝ գործադրված ոչ իրենց ընտանիքի անդամ հանդիսացող անձանց կողմից՝ քարտ 2, և իրենց սեռական զուգընկերների կողմից՝ քարտ 3): Չնայած որ ինքնուրույն վարվող քարտերն օգտագործվում են ավելի մեծ գաղտնիություն պահպանելու նպատակով և պահվում են առանձին կնքված ծրարներում, որպեսզի հարցվողներին հնարավոր չլինի դրանց միջոցով նույնականացնել, այս հետազոտությունը նախընտրել է մեկ այլ մոտեցում: Հարցազրույց վարողը, հիմնվելով լրացված քարտի տվյալների վրա, հարցման մասնակցին պետք է լրացուցիչ հարցեր տար՝ խնդրո առարկա բռնության շուրջ նրան ավելի մանրակրկիտ քննելու նպատակով: Այս մոտեցումը գուցե ներգործած լինի հետազոտության տվյալների հավաստիության վրա, ինչպես հարցազրույցի ընթացքում այլոց ներկայության հանգամանքը (սեռական զուգընկեր, տնային տնտեսության այլ ավագ անդամ կամ երեխաներ՝ համապատասխանաբար 8%, 12% և 9%): Հարցազրույցների միայն 64%-ն է անցկացվել առանց այլ անձի ներկայության:

Հարցումը կենտրոնացել էր այնպիսի խնդիրների վրա, ինչպիսին են կյանքը նախքան հակամարտությունը, փախուստը տվյալ վայրից, գենդերային բռնությունը տարհանման ընթացքում, փախստականի փորձառությունը հակամարտությանը հաջորդած ժամանակահատվածում Հայաստանում գենդերային բռնության առումով, զուգընկերոջ հետ փոխհարաբերությունները, ընտանեկան բռնության չափը և այլն: Հետազոտության արդյունքները, *inter alia*, ցույց են տալիս, որ հարցման մասնակիցների մոտ 4%-ը Հայաստանում ենթարկվել է բռնության որևէ տեսակի՝ ընտանիքի շրջանակից դուրս, և որ սեռական զուգընկեր ունեցող մասնակիցների 17%-ը առնվազն մեկ անգամ ենթարկվել է ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնության ներկա զուգընկերոջ կողմից: Արժանահիշատակ է նաև մեկ այլ կարևոր բացահայտում, որ հարցման մասնակիցների 45.9%-ը կարծում է, որ ընտանեկան բռնությունը լայն տարածված խնդիր է Հայաստանում (հարցման մասնակիցների 28.6%-ը արտահայտել են հակառակ կարծիք, իսկ 25.5%-ը որոշակի պատասխան չի տվել):

Անհրաժեշտ է շեշտել, որ չնայած հիմնված չլինելով ազգային ընտրանքի վրա, ուստիև չապահո-

²⁶ Հետազոտության արդյունքների զեկույց. Հայաստանում կին փախստականների և ապաստան հայցողների շրջանում սեռական և գենդերային բռնություն: Երևան, Կանանց իրավունքների կենտրոն, 2008թ., 100 էջ (հայերեն և անգլերեն տարբերակներ):

վելով ազգային ներկայացուցչականություն, հետազոտության արդյունքները կարևոր տեսակետներ են ներկայացնում այս դեռևս ոչ բավարար հետազոտված ոլորտում: Այդ հետազոտությունները քաղաքականությանն ու գործողություններին ուղղված կարևոր միջոցառումներ էին, որոնք օգնել են տեսանելի դարձնել կանանց նկատմամբ բռնության հասարակական կարևոր խնդիրը, բարձրացնել հանրային իրազեկության մակարդակը, համախմբել քաղաքացիական հասարակական կազմակերպությունները՝ այս հարցի շուրջ համապատասխան իշխանությունների վրա ազդելու և Կառավարության կողմից այս խնդրի գոյության ճանաչման և դրա լուծման նպատակով միջոցների ձեռնարկման հասնելու նպատակով: Չնայած հետազոտություններում առկա սահմանափակումներին, վերապահումներին և թերություններին՝ դրանք հիմք են ստեղծել և տարբեր աստիճանի ու որոշ չափով հղումների շրջանակ ապահովել այս ոլորտում հետագա հետազոտությունների համար:

Արժանահիշատակ է, որ վերոնշյալ հետազոտություններից ոչ մեկը չի պատվիրվել կամ ֆինանսավորվել Հայաստանի կառավարության կողմից: Դրանք բացառապես իրականացվել են տեղական ոչ կառավարական կազմակերպությունների և օտարերկրյա կամ միջազգային կազմակերպությունների համատեղ նախաձեռնությամբ:

Մի քանի այլ հետազոտություններ ներառել են կանանց նկատմամբ բռնությանն առնչվող հարցերին նվիրված (սովորաբար շատ կարճ) բաժին: Դրանցից են Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունները (ՀԺԱՀ/ADHS)²⁷, որոնք իրականացվել են 2000թ. և 2005թ. Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ/NSS) և ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ ԱՄՆ ORC Macro կազմակերպության տրամադրած տեխնիկական աջակցությամբ: Որպես համաշխարհային MEASURE DHS ծրագրի մի մաս, ՀԺԱՀ-ն նպատակ ունի տվյալներ հավաքել պտղաբերության, ընտանիքի պլանավորման և մոր ու մանկան առողջության վերաբերյալ: Դրանք ֆինանսավորվել են ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից: Կանանց նկատմամբ բռնությանն առնչվող հարցերին անդրադառնալու ՀԺԱՀ-ի շրջանակները սահմանափակվել են կանանց ծեծի ենթարկելու և ամուսնուն սեռական հարաբերությունների մեջ մերժելու հետ կապված վերաբերմունքի ուսումնասիրությամբ: Առաջինը կարևոր է ՀԺԱՀ-ի համար որպես կանանց կողմից իրենց կարգավիճակի ընկալման արտահայտություն, իսկ երկրորդը՝ որպես կանանց վերահսկելիության աստիճանի չափորոշիչ, որը կարևոր նշանակություն ունի ժողովրդագրական և առողջապահական տեսանկյունից՝ սեռական հարաբերության վերաբերյալ որոշում կայացնելու առումով: Մրանք ՀԺԱՀ-ի համատեքստում կարևորվում են նաև նրանով, որ կանանց ինքնուրույն (լիազորված) լինելու երեք հիմնական ցուցիչներից երկուսն են (ցուցիչներից երրորդը տնային տնտեսության որոշումներում կանանց մասնակցությունն է):

ՀԺԱՀ-ի նշանակությունը դժվար է գերազնահատել մի շարք գործոնների պատճառով: Նախ և առաջ, հետազոտությունն իրականացվել է սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանական, տեխնիկական, լոգիստական և այլ պահանջներին խիստ համապատասխանությամբ: Երկրորդ, այն իրականացված է ազգային ընտրանքի հիման վրա, ուստի արդյունքներն ու տվյալները ներկայացուցչական են: Երրորդ, Հայաստանի գործակալությունների ակտիվ ընդգրկվածությունը վկայում է կանանց նկատմամբ բռնությանն առնչվող գոնե մի քանի հարցերով կառավարության թեկուզ մակերեսային հետաքրքրվածության մասին: Չորրորդ, վերջին, բայց ամենևին ոչ ամենաանկարևոր նկատառումն այն է, որ արդյունքներն ու տվյալները պաշտոնական են, քանի որ համաձայն Հայաստանի օրենսդրության, ազգային ներկայացուցչականությունն ապահովող ընտրանքի հիման վրա իրականացված հետազոտությունների տվյալները համարվում են պաշտոնական միայն այն դեպքում, եթե դրանք ներկայացնում է ԱՎԾ-ն:

²⁷ Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2000թ. (ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Առողջապահության նախարարություն և ORC Macro): Քալվերտոն, Մարիլանդ, դեկտեմբեր, 2001թ.: xxiv, 369 էջ: Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2005թ. (ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Առողջապահության նախարարություն և ORC Macro): Քալվերտոն, Մարիլանդ, դեկտեմբեր, 2006թ.: xxiv, 396 էջ:

Այս տեսակի մեկ այլ հետազոտություն է *Ընտանիքը որպես ինստիտուտ* ուսումնասիրությունը²⁸: Այն իրականացվել է 2006թ. ՊՎԾ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ/UNFPA) ֆինանսավորմամբ և տեխնիկական աջակցությամբ: Ազգային ներկայացուցչականությունն ապահովող 2,500 տնային տնտեսությունից կազմված ընտրանքով այս հետազոտությունը հիմնականում ուղղված է եղել Հայաստանում ընտանիքի կարգավիճակը որոշող գործոնների և ընտանիքի՝ որպես սոցիալական հիմնական հաստատության ներկա իրավիճակի ուսումնասիրությանն ու փոփոխություններ առաջ բերած խորքային պատճառներին: Հարցաշարը ներառում էր նաև մի փոքր բաժին՝ ընտանեկան բռնությանն առնչվող երեք հարցով՝ (ա) որքան սովորական երևույթ է ընտանեկան բռնությունը երկրում, (բ) մեծ ընտանիքներում ընտանիքի տարբեր անդամների նկատմամբ բռնության ձևերը և (գ) հարցվածների ընտանիքներում բռնության տարածվածությունը:

Չնայած որ հետազոտությունը կարևոր բացահայտումներ է արել, տվյալները (ընդհանուր առմամբ հետազոտության և մասնավորապես՝ ընտանեկան բռնությանը վերաբերող հատվածի) լրջորեն սահմանափակված են, քանի որ դրանք չեն տարանջատվել ըստ սեռի (և կրթության, զբաղվածության կարգավիճակի և այլ հարակից գործոնների²⁹), հիմնականում անհնար դարձնելով այլ հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների հետ համեմատությունը: Տվյալների համեմատելի լինելը կարևոր գործոն է՝ նկատի ունենալով ուսումնասիրության այս ոլորտում առկա տվյալների սակավությունը:

Նշված հատվածից ստացված արդյունքները նույնպես լուրջ սահմանափակումներ ունեն, քանի որ հետազոտությունից բխողը դուրս է մնացել սեռական բռնությունը, իսկ բռնության գործողությունների ցուցակում չեն ընդգրկվել միջին և ծանր ֆիզիկական բռնությունների մեծ մասը:

Չնայած այս բոլոր սահմանափակումներին, արդյունքները կարևոր են, քանի որ դրանք լույս են սփռում էական նշանակություն ունեցող որոշ հարցերի վրա: Այսպես, հարցման մասնակիցների 50.5%-ը (բոլոր տարիքների, կրթական մակարդակների, կյանքի տարբեր ոլորտների տղամարդ և կին ներկայացուցիչներ) կարծում է, որ ընտանեկան բռնությունը բավականին սովորական և նույնիսկ տարածված երևույթ է Հայաստանում, մինչդեռ միայն 15.5%-ն է կարծում, որ դա այդպես չէ: Տվյալները ցույց են տալիս բռնության որոշ ձևերի հարաբերականորեն բարձր տարածվածությունն այն ընտանիքներում, որտեղ կանանց բռնության զոհ դառնալու հավանականությունը միջինը+ 1.4-1.8 անգամ գերազանցում է տղամարդկանց զոհ դառնալու հավանականությանը:

Մեկ այլ հետազոտություն, որն անդրադարձել է բռնության հետ կապված միևնույն հարցերին, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՄԱՄՀ/UNICEF) կողմից ֆինանսավորված՝ *Դպրոցական երեխաների առողջական վարքագծի հետազոտությունն է*³⁰: Այն անց է կացվել 2005թ. Արաբկիր բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի և ՄԱՄՀ-ի կողմից՝ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության հովանու ներքո: Հետազոտության նպատակն էր հայտնաբերել և գնահատել դեռահասների վարքագծերը, գիտելիքները, վերաբերմունքը և գործելակերպը կապված առողջապահական հարցերի հետ: Ընտրանքը ներառում էր 12-17 տարեկան 1,206 աշակերտ (որոնց 87.0%-ը 15-16 տարեկան) 60 ավագ դպրոցներում (դպրոցներից 20-ը ընտրվել էին մայրաքաղաք Երևանում, 20-ը՝ ավելի փոքր քաղաքներում և 20-ը՝ գյուղերում): Իր տեսակի մեջ միակ այս հետազոտությունը հետաքրքիր և օգտակար մտնեցում է ցուցաբերում իրենց ընտանիքներում, դպրոցներում և այլուր աղջիկների և տղաների նկատմամբ բռնության տարածվածության և հաճախականության խնդրին: Թեկուզև հաստատելով այն տարածված կարծիքը, որ դեռահասները տարիքային այդ խմբում հազվադեպ չեն դառնում հոգեբանական և ֆիզիկական (հատկապես միջին ֆիզիկական) բռնության թիրախ, հետազոտության արդյունքներն

²⁸ Ընտանիքը որպես ինստիտուտ: Երևան, ՀՀ ԱՎԾ և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՄԱԲՀ/UNFPA, 2006թ., 54 էջ:

²⁹ Տվյալները տարանջատվել են բացառապես ըստ բնակչության վայրի (քաղաքային թե գյուղական):

³⁰ Դպրոցական երեխաների առողջական վարքագծի հետազոտության գեկույց: Երևան, Արաբկիր բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ և ՄԱՄՀ/UNICEF, 2007թ.: xii, 141 էջ:

ի չիք են դարձնում այն լեզենդը, թե սեռական բռնությունը խնդիր չէ: Դրանք հստակ ցույց են տալիս, որ սեռական ոտնձգությունն ու հարկադիր սեռական հարաբերությունն այնքան էլ ծայրահեղ հազվադեպ բնույթ չի կրում Հայաստանում, ինչպես հակված են մտածել և պնդել կրթական համակարգի շատ աշխատակիցներ, ծնողներ, պաշտոնյաներ և այլն: Բռնություններին (և հատկապես սեռական բռնությանը) բարձր տոկոսով չարձագանքելուն վերաբերող հարցերը անանուն հետազոտության մեջ ցույց են տալիս, որ հարցվածներից շատերը, հատկապես իգական սեռի ներկայացուցիչները, անհարմար են զգում բացահայտել նման տեղեկություններ: Սա պետք է ահագանգ լինի բոլոր առնչվող կողմերի, ոչ կառավարական կազմակերպությունների և լայն հասարակության համար:

Վերոնշյալ հետազոտությունները շատ կարևոր են եղել իրավիճակի ախտորոշման առումով՝ ցույց տալով, որ գենդերային բռնությունը գոյություն ունի Հայաստանում, և ի հայտ բերելով այդ փաստն ապացուցող տվյալներ և խոր մոտեցում գենդերային բռնության տարբեր ասպեկտներին՝ դրանով իսկ ճեղքելով լուծության պատը և խթանելով հանրային քննարկումները գենդերային բռնության շուրջ: Այնուհանդերձ դրանք նույնիսկ բոլորը միասին չեն կարողացել տրամադրել ազգային ներկայացուցչությունն ապահովող ընտրանքի վրա հիմնված անհերքելի ապացույցներ և համապարփակ տվյալներ գենդերային բռնության տարբեր ձևերի տարածվածության և հաճախականության, ազդեցության և հետևանքների, դրա դեմ պայքարելու ռազմավարությունների և տվյալ երևույթին սերտորեն առնչվող այլ խնդիրների վերաբերյալ:

Այսպիսով, կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի տարածվածության մասին գիտելիքների հիմքը շատ սահմանափակ է, քանի որ բացառապես կանանց նկատմամբ բռնությանը նվիրված սակավաթիվ (և իրարից տարբեր) հետազոտություններ են իրականացվել, և նույնիսկ չեն կիրառվել միջազգային հետազոտությունների այն մեթոդաբանությունն ու ձևաչափը, որոնք թույլ են տալիս համեմատություններ և խոր վերլուծություն կատարել: Լավագույն դեպքում կանանց նկատմամբ բռնությունը եղել է բազմանպատակ հետազոտությունների մի բաժնի թեմաներից մեկը (ինչպես օրինակ՝ ԺԱՀ Հայաստան 2000թ. և 2005թ.³¹):

Հետևաբար, ընդունվել է, որ կարիք կա մշակել և իրականացնել մի այնպիսի համապարփակ հետազոտություն, որը հիմնված կլինի ազգային ներկայացուցչությունն ապահովող ընտրանքի վրա և որի ընթացքում կկիրառվեն խիստ վստահելի մեթոդաբանական և վերլուծական մոտեցումներ և հետազոտական տեխնիկա, և որը հնարավոր առավելագույն չափով կուսումնասիրի գենդերային բռնության խնդրի հիմնական տեսանկյունները ներկայիս հայ հասարակությունում, այդ թվում՝ բռնության տարբեր ձևերի *տարածվածությունը* և *հաճախականությունը*, բռնության ազդեցությունը կանանց ընդհանուր և վերաբրտադրողական առողջության վրա, բռնության գոհերի կողմից *դիմակայման ռազմավարությունը* և *վերաբերմունքը* բռնության առանձին ձևերի և տեսակների նկատմամբ: Սա էր ներկա հետազոտությունն իրականացնելու մասին որոշման հիմնական պատճառը, որը մշակվել և համապատասխանաբար իրականացվել է նկատի առնելով վերը նշված նպատակները՝

Հետազոտության իմաստն է՝ տրամադրել հիմնավոր քանակական տվյալներ, որոնք՝

- լինեն հավաստի, համապարփակ և պաշտոնական,
- հետազոտության համար պատասխանատու խմբին, ինչպես նաև ընդհանրապես հետազոտություններ անցկացնող համայնքին հնարավորություն ընձեռեն իրականացնել քաղաքականությանն ուղղված վերլուծություն,
- տրամադրեն անհրաժեշտ հիմնարար գիտելիքներ, որը որոշում կայացնողներին կօգնի ձևավորել լավատեղյակ կարծիքներ և կատարել ավելի լավ ընտրություններ, և
- քաղաքականություն կերտողներին զինեն լրացուցիչ կարևոր միջոցներով, որոնք անհրաժեշտ են

³¹ Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2000թ.: Քավլերտոն, Մարիլանդ, Ազգային վիճակագրական ծառայություն, Առողջապահության նախարարություն և ORC Macro), 2001թ.: Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2005թ.: Քավլերտոն, Մարիլանդ, Ազգային վիճակագրական ծառայություն, Առողջապահության նախարարություն և ORC Macro), 2006թ.:

գենդերային բռնության բոլոր ձևերը կանխարգելելու և վերացնելու արդյունավետ ռազմավարություններ մշակելու համար:

Այսպիսով, Հայաստանում իրականացված այս հարցումը յուրատեսակ է մի քանի առումով: Հիմնվելով ավելի վաղ իրականացված հետազոտությունների վրա՝ ներկա ուսումնասիրությունն առաջին համապարփակ հանձնառությունն է, որ նախաձեռնել է ՄԱԲՀ-ը՝ օգտագործելով ազգային ներկայացուցչությունն ապահովող ընտրանքի հիման վրա հետազոտություն գենդերային բռնությունը սահմանելու և նկարագրելու նպատակով: Խիստ կարևոր է, որ բազմաթիվ շահագրգիռ կողմերի համագործակցությամբ հետևողական համատեղ ջանքեր գործադրվեն՝ կանոնավոր ձևով իրականացնելու, *mutatis mutandis*, միևնույն հետազոտությունը (դրանով ապահովելով ոչ միայն հետևողական, այլև, որ ավելի կարևոր է, երկարատև հետազոտություններ): Կանոնավոր կրկնվելու դեպքում այս հետազոտությունը չի լինի եզակի և *ad hoc*, թեկուզև կարևոր նախաձեռնություն:

ԳԼՈՒԽ 2. ՍԵՌԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բոնությունը որևէ հասարակության համար նոր երևույթ չէ: Այն կիրառվել և դեռ կիրառվում է տարբեր ձևերով և դրսևորումներով (ներառյալ կառուցվածքային բոնությունը) ամբողջ աշխարհում, թեկուզև դաժանության և տարածվածության տարբեր աստիճաններով՝ կախված քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերից և տվյալ իրավիճակից, իշխանության կառուցվածքից, սոցիալական համախմբվածությունից, մշակութային և բարոյական նորմերից, արժեքներից և ավանդույթներից, որոնք կարգավորում են սոցիալական փոխհարաբերությունները, տարածված գաղափարախոսություններից, իրավական համակարգից և օրենքի կիրառման արդյունավետությունից, երկրների միջև առկա հակամարտություններից և այլն:

Բոնության բովանդակալից քննարկման համար պահանջվում է համապարփակ գործառական սահմանում, որը պետք է լինի ավելի ընդգրկուն, քան այն սահմանումը, որ ներկայացնում է երևույթի ավանդական ընկալումը: Այս նպատակին լավ է ծառայում Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից ձևակերպված ընդգրկուն և հանգամանորեն մշակված սահմանումը: ԱՀԿ-ն բոնությունը սահմանում է որպես «սեփական անձի, այլ անձի կամ որևէ խմբի կամ համայնքի նկատմամբ ֆիզիկական ուժի կամ իշխանության նպատակային օգտագործումը, սպառնալիքը կամ փաստացի կիրառումը, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել վնասվածքի, մահվան, հոգեբանական վնասի, թերզարգացման կամ զրկանքի»³²: Սահմանման նորությունը միայն նպատակադրվածությունը, ազդեցությունն ու հետևանքները շեշտելը չէ: Բոնության ավանդական ընկալման կարևոր լրացում է այստեղ «իշխանություն» առանցքային բառը: Դրա օգտագործման նպատակն է այն կարևոր դերի ճանաչումը, որ կարող են խաղալ իշխանական փոխհարաբերությունները բոնության այնպիսի գործողությունների հրահրման համար, ինչպիսին են ահաբեկումն ու սպառնալիքները: Փորձագետների մեկնաբանություններն այս սահմանման մեջ «ֆիզիկական ուժ» և «իշխանություն» բառերը զուգորդելու վերաբերյալ ցույց են տալիս, որ դրանց օգտագործումը «պետք է ընկալվի ներառելով ֆիզիկական, սեռական և հոգեբանական բոնության բոլոր տեսակները...»³³:

Այս հետազոտության համար հատուկ նշանակություն ունեն «գենդերային բոնություն» և «կանանց նկատմամբ բոնություն» տերմինները, որոնք իրականում փոխարինաբար են կիրառվում շատ համատեքստերում և բոնությանը մոտենում են գենդերային տեսանկյունից:

«Գենդերային բոնություն» տերմինն առաջ էր քաշվել, եթե ոչ ներմուծվել, ԿԽՎԿ կոմիտեի կողմից: Համաձայն ԿԽՎԿ կոմիտեի թիվ 19 գլխավոր հանձնարարականի (ընդունված 1992թ. 11-րդ նստաշրջանում), այն «բոնություն է, որն ուղղված է կնոջ նկատմամբ, որովհետև նա կին է, կամ բոնություն, որը նրա վրա ազդում է անհամաչափորեն»: Այս մեկնաբանությունը լայնորեն օգտագործվել և օգտագործվում է և կրկին վերահաստատվել է ՄԱԿ-ի³⁴ և միջազգային այլ կազմակերպությունների կողմից:

Քանի որ գերակշռող դեպքերում գենդերային բոնության գոհերը կանայք են, զարմանալի չէ, որ այս բոնությանը հիմնականում, հատկապես ՄԱԿ-ի համակարգում վերաբերվում են որպես կանանց մարդու իրավունքների ոտնահարում: Դրանով էլ բացատրվում է «կանանց նկատմամբ բոնություն»

³² ԱՀԿ Բոնությունների և առողջության հարցերով համաշխարհային խորհրդակցություն: *Բոնություններ. հանրային առողջապահության գերակա խնդիր*: Ժնև, ԱՀԿ, 1996թ. (WHO/EHA/SPI.POA.2 փաստաթուղթ):

³³ *Բոնությունների և առողջության հարցերով համաշխարհային գեկույց*: Քրուգ Է.Գ. ն.ն., խմբ. Ժնև, ԱՀԿ, 2002թ., էջ 5:

³⁴ Օրինակ՝ *Կանանց նկատմամբ բոնության բոլոր ձևերի վերաբերյալ մանրամասն հետազոտության ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի 2006թ. գեկույց*: Փաստաթուղթ A/61/122/Add.1, և հետագայում հրատարակվել է համապատասխան գիրքը. *Կանանց նկատմամբ բոնության վերացումը: Խոսքերից դեպի գործողություն*: Գլխավոր քարտուղարի հետազոտություն: Նյու Յորք, ՄԱԿ, 2006թ.:

տերմինը, որը *Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին հռչակագրի* Հոդված 1-ում սահմանվում է որպես «գենդերային բռնության ցանկացած գործողություն, որը ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք է պատճառում կամ կարող է պատճառել կանանց, ինչպես նաև այդպիսի գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք կամ ազատությունից կամայական զրկում՝ լինի հասարակական թե անձնական կյանքում»³⁵: Ինչպես նշվեց առաջին գլխում, ՄԱԿ-ը գենդերային բռնությունը որակում է որպես խտրականության ձև և կանանց մարդու իրավունքների ոտնահարում, ներառյալ «անձի անվտանգության իրավունքը, ֆիզիկական և մտավոր առողջության հնարավոր ամենաբարձր չափանիշների իրավունքը, խոշտանգումներից կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքը և կյանքի իրավունքը»³⁶:

Քանի որ այս գլուխը նվիրված է սեռական զուգընկերոջ բռնությանը (ՍԶԲ), ապա այն նույնպես սահմանման կարիք ունի: Իրականում վերոնշյալ ստանդարտ սահմանումները, *mutatis mutandis*, կիրառվում են նաև սեռական զուգընկերոջ բռնության առնչությամբ: Այլ կերպ ասած, այն գենդերային բռնություն է, որը տեղի է ունենում նախ և առաջ հասարակական կյանքի շրջանակներից դուրս չափահասների միջև՝ ընտանեկան միջավայրում կամ սեռական զուգընկերոջ հետ փոխհարաբերություններում, երկրորդը՝ անկախ գոհի կամ բռնարարի սեռական պատկանելիությունից: «Գենդերային բռնություն» և «կանանց նկատմամբ բռնություն» տերմինները լայնորեն են մեկնաբանվում՝ ընդգրկելով հոգեբանական, ֆիզիկական և սեռական վնաս³⁷ պատճառող բռնությունները, չարաշահող և սպառնացող վարքագիծը, հատկապես սեռական զուգընկերների միջև: Այսպիսով, դրանք դուրս են գալիս հոգեբանական բռնության, ֆիզիկական ագրեսիայի և սեռական բռնության շրջանակներից՝ ներառելով վերահսկողական վարքագծի տարբեր ձևեր:

Մինչ այս նոր տեսանկյունը կարևոր է *per se*, այն նաև էական առնչություններ ունի գենդերային բռնության, մասնավորապես՝ սեռական զուգընկերոջ կողմից բռնության նկատմամբ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման հետ: *Որակելով ջանքերը*, որոնք ուղղված են սահմանափակելու հայրական ընտանիքի հետ և այլ սոցիալական շփումները, մեկուսացնելու անձին իր ընկերներից, վերահսկելու զուգընկերուհու համար առողջապահական, այլ ծառայությունների, օժանդակության և տեղեկատվության մատչելիությունը, մշտապես վերահսկելու զուգընկերուհու գործողությունները և «հետապնդման» ենթարկելու նրա շարժումները, *որպես բռնություն*, որը չի կարելի հանդուրժել և պետք է հանգեցնի պետության միջամտությանը, այս մոտեցումը քարոզում է անձի անհատական իրավունքների և սոցիալական ազատությունների, հատկապես անձնական ինքնուրույնության իրավունքի և ազատ ընտրության իրավունքի ավելի լավ պաշտպանություն: Սեռական զուգընկերոջ կողմից սեռական բռնությունը, և նույնիսկ ավելի լայն առումով՝ ընտանեկան բռնությունն այժմ ոչ միայն գիտական համայնքի, քաղաքական գործիչների, քաղաքացիական ակտիվիստների և Եվրոպայի ու Հյուսիսային Ամերիկայի պետական իշխանությունների, ինչպես նաև համապատասխան առաջատար միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, այլև լայն հասարակայնության ավելի ու ավելի մեծ հատվածների կողմից ընկալվում է որպես քաղաքական գործողություն. քանի որ մարդու հիմնարար իրավունքների խախտում է, ուստիև պետք է համապատասխան մոտեցման արժանանա:

Այս նոր տեսանկյունը հիմնականում արդեն ընդունված է ՄԱԿ-ի և Եվրոպական առաջատար կազմակերպությունների կողմից տեսականորեն և իրավական ոլորտը բարելավելու իրենց ջանքերում, վերապատրաստական և կրթական գործունեությունների իրականացման մեջ, ինչպես նաև գործնական աշխատանքում՝ հիմնված տեխնիկական աջակցության վրա, և դրա ապահովման պայմաններում:

³⁵ *Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին հռչակագիր*: Գլխավոր ասամբլեայի թիվ 48/104 քանաձև, 20 դեկտեմբերի 1993թ.:

³⁶ *Հումանիտար արտակարգ իրավիճակներում գենդերային բռնության դեմ միջոցառումների ուղենիշներ*. սեռական բռնության կանխարգելումը և դրա դեմ պայքարը: Ժնև, IASC, 2005թ., էջ 1:

³⁷ Որոշ պետություններ (օր.՝ Մեծ Բրիտանիան) պետական մակարդակով արդեն իսկ ընդլայնել են կամ նախատեսում են ընդլայնել սեռական զուգընկերոջ կողմից բռնության հասկացությունը՝ ներառելով բռնության ֆինանսական, տնտեսական և նույնիսկ կառուցվածքային ձևերը:

Այստեղ կարևոր է նշել, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 61/143 բանաձևը «կոչ է անում վերացնել գենդերային բոնության բոլոր ձևերը ընտանիքում... և շեշտում կանանց և աղջիկների նկատմամբ բոնության բոլոր տեսակներին որպես՝ քրեական հանցագործությունների վերաբերվելու անհրաժեշտությունը, որոնք պատժելի են օրենքով»³⁸:

Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ սեռական զուգընկերոջ բոնությունը բոնության ամենատարածված ձևն է, որին ենթարկվում են կանայք ամբողջ աշխարհում: Միննույն ժամանակ, սեռական զուգընկերոջ կողմից գործադրվող բոնությունն ամենայն հավանականությամբ բոնության առավել վատթար ձևերից է, քանի որ հաճախ «անտեսանելի» է տվյալ հարաբերությունների շրջանակից դուրս գտնվողների համար, կամ չափազանց մոտ է ընտանեկան և ընկերական շրջանակին, և քանի որ ՍԶԲ կանոնավոր ենթարկվելու դեպքում զոհերն առավելագույնս խոցելի են և նվազագույնս պաշտպանված, ինչը կարող է հանգեցնել երկարաժամկետ դաժան ֆիզիկական, մտավոր և վերարտադրողական առողջությանն առնչվող հետևանքների:

Հայաստանը չի քրեականացնում սեռական զուգընկերոջ բոնությունը *per se*, ի տարբերություն որոշ երկրների, օրինակ՝ Ֆրանսիայի, որը սեռական զուգընկերոջ բոնությունը համարում է հանցագործություն և որը «վերաբերվում է զուգընկերոջ կողմից գործադրված բոնությանը ... որպես ֆիզիկական հանցագործության ծանրացուցիչ հանգամանքի...»³⁹:

Բազմաթիվ հետազոտություններ հարուստ վկայություն են տրամադրում այն մասին, որ ՍԶԲ-ն բոնության ամենատարածված ձևն է, որին ենթարկվում են կանայք ամբողջ աշխարհում, համաձայն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի գեկույցի՝ «ինտիմ փոխհարաբերություններում կանանց նկատմամբ բոնության տարբեր տեսակների տարածվածությունը, որը վկայակոչվում է որպես ընտանեկան բոնություն կամ ամուսնական բոնություն, այժմ լավ ապացուցված է»⁴⁰:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան բոնությունն ավանդական և լայնորեն գործածվող տերմին է (հիմնականում) կանանց նկատմամբ ընտանեկան միջավայրում տեղի ունեցող բոնության դեպքերի համար: Այնուամենայնիվ, կանանց նկատմամբ բոնության հետազոտությունների համատեքստում աստիճանաբար ի հայտ եկավ այն ընկալումը, որ այս տերմինի իմաստը կարող է այդպես նեղացվել միայն կամայականորեն, իսկ իրականում այն ավելի ընդգրկուն տերմին է: Ընտանեկան բոնությունն ընտանիքի ներսում տեղի ունեցող բոնություն է և չի սահմանափակվում միայն կանանց նկատմամբ բոնությամբ: Այն կարող է նաև ուղղված լինել (ինչը սովորաբար պատահում է) երեխաների և/կամ ծերերի դեմ: Այնուամենայնիվ, այն առավել հաճախ ուղղված է կանանց և աղջիկների դեմ, որոնք, համաձայն ընտանիքի ներսում տեղի ունեցող սեռական բոնության, ամուսնական բոնաբարության, արյունապղծության և պատվի համար կատարվող հանցագործությունների տարածվածության փաստերի և տվյալների, այս դեպքերի հիմնական զոհերն են:

Այնուամենայնիվ, «ընտանեկան բոնություն» տերմինից գոնե առայժմ չի կարելի հրաժարվել սեռական զուգընկերոջ կողմից բոնության ենթարկված կանանց վիճակը նկարագրելիս՝ տերմինի կիրառման երկարաժամկետ ավանդույթի, ինչպես նաև հանրային քննարկումներում և քարոզչական և իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված բազմաթիվ հրապարակումներում դրա հաճախ օգտագործման պատճառով⁴¹: Այսպիսով, մինչ շնորհիվ իր ճշգրտության «սեռական զուգընկերոջ կողմից բոնություն» տերմինը նշված հարցի շուրջ հրապարակումներում ավելի ու ավելի նախընտրելի է դառնում «ընտանեկան բոնություն» տերմինի համեմատությամբ, դրանք վերը նշված

³⁸ *Կանանց նկատմամբ բոնության բոլոր ձևերի արմատական վերացմանն ուղղված ջանքերի ուժեղացում*: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 61/143 բանաձև, 19 դեկտեմբերի 2006թ. (փաստաթուղթ A/RES/ 61/143), (պարբերություն 4):

³⁹ *Ֆրանսիայում կանանց նկատմամբ բոնությունը*: ԿԻՎԿ կոմիտեի համար պատրաստված գեկույց, ՕՄՇԷ: Ժնև, 2003թ., էջ 11:

⁴⁰ *Կանանց նկատմամբ բոնության վերացումը*: ՄԱԿ ԳՔ հեղափոխություն, էջ 43:

⁴¹ Տե՛ս, օրինակ, *Կանանց նկատմամբ բոնության դեմ պայքարը և ՀՄԵ-ի իրականացումը*: Ժնև, ԱՀԿ, 2005թ., էջ 4: *Բոնությունների և առողջության հարցերով համաշխարհային գեկույց*: Քրոզ Է.Գ. ն.ս., խմբ. Ժնև, ԱՀԿ, 2002թ., էջ 91:

պատճառներով երբեմն փոխարինաբար են գործածվում տվյալ գեկույցում, ինչպես նաև հղումներում և մեջբերումներում և այլն:

Համընդհանուր ուշադրությունն աստիճանաբար ուղղվում է դեպի ընտանեկան բռնությունը՝ ընտանեկան միջավայրում կանանց նկատմամբ իրականացվող բռնության իմաստով, քանի որ բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ ընտանեկան բռնությունը գենդերային բռնության ամենատարածված ձևերից է⁴²: Ներկա հետազոտությունը միտված է հաստատել այս եզրակացությունները: Նախ և առաջ, երբևէ գուզրնկեր ունեցած կանանց 8.0%-ն իրենց սեռական գուզրնկերոջ կողմից ենթարկվել է առնվազն մեկ տեսակի ֆիզիկական բռնության: Երկրորդ, ամբողջ ընտրանքի կանանց միայն 2%-ն է հաղորդել, որ երբևէ ենթարկվել է ֆիզիկական բռնության ոչ թե իր սեռական գուզրնկերոջ, այլ՝ ուրիշ տղամարդու կողմից: Եվ վերջապես, խնդրո առարկա ֆիզիկական բռնության գրեթե բոլոր օրինակներն ընտանեկան բռնության դեպքեր էին, քանի որ կատարվել էին ընտանիքի ներսում: Հիմնական բռնարարները հայրերը կամ խորթ հայրերն են, կամ ընտանիքի այլ տղամարդ կամ կին անդամները: Նրանց համատեղ բաժին է ընկնում կատարված բռնությունների 1.8%-ը, իսկ բռնի գործողությունների մնացած 0.2%-ը կատարվել են սիրած տղաների կամ ուսուցիչների կողմից:

Այս հետազոտության շրջանակներում, ինչպես ավելի վաղ նշվեց, ընտանեկան բռնությունը (կամ սեռական գուզրնկերոջ կողմից բռնությունը) ընկալվում է որպես գենդերային բռնություն ընտանեկան համատեքստում, այսինքն՝ կնոջ նկատմամբ զգացական, ֆիզիկական և/կամ սեռական բռնություն նրա ներկայիս կամ նախկին սեռական գուզրնկերոջ (ամուսին կամ այլ տղամարդ, որի հետ կինը կայուն փոխհարաբերությունների մեջ է, հատկապես երբ նրանք միասին են ապրում) կողմից:

Ինչպես գենդերային բռնությունն ընդհանրապես, այնպես էլ ընտանեկան բռնությունը կապված է գենդերային անհավասարության հետ և հանդիսանում է դրա արդյունքը, ինչն ունի կառուցվածքային, տնտեսական, մշակութային և սոցիալական պատճառներ և հիմնականում բխում է իշխանության անհավասարակշռությունից և տարբեր միջոցների անհավասար մատչելիությունից ու դրանց նկատմամբ անհավասար վերահսկողությունից:

Ընտանիքում կանանց խոցելիության մեծացումը ուշադրության է արժանացել միջազգային մակարդակով: ԵԱՀԿ Մարդու իրավունքների հարցերով լրացուցիչ հանդիպումները «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը և դրա դեմ ուղղված պայքարը» (որոնք գումարվել են Վիեննայում 2002թ. մարտին) մատնանշել են, որ «տունը, որը պետք է լիներ որպես ամբողջ, իրականում սպառնալիք է ներկայացնում շատ կանանց համար»⁴³:

Առաջինը և ամենակարևորը պետք է շեշտել, որ ընտանեկան բռնությունը շատ երկրներում և միջազգային մակարդակով այլևս չի ընկալվում որպես անձնական/ընտանեկան խնդիր: Այն ընդունվում է որպես սոցիալական, մշակութային, կրթական, տնտեսական, իրավական և մարդու իրավունքներին, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, սեռական և վերարտադրողական առողջության հարթություններին փոխհատվող հանրային հիմնախնդիր, որը կարող է ունենալ քաղաքական հետևանքներ և արձագանքներ:

Խնդրի բազմաշերտությունն ու նրբությունը, նրա համատարած բնույթի մասին ավելացող ապացույցները և մարդկային ու սոցիալական մեծ ծախսերը, որոնց այն հանգեցնում է, ինչպես նաև կանանց նկատմամբ սեռական գուզրնկերոջ կողմից դրսևորվող բռնությունը կանխելու և դրա դեմ պայքարելու պետությունների հանձնառությունը խթանեցին հետագա հետազոտության իրականացումը: Այն ներառում է կոնկրետ դեպքերի ուսումնասիրություններ, համեմատական վերլուծություն-

⁴² Տե՛ս, օրինակ, *Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարը. ծրագրերի փորձարկում և իրականացում*: Հոմ, ՄԱԲՀ, 2003թ., էջ 10:

⁴³ ԵԱՀԿ Մարդու իրավունքների հարցերով լրացուցիչ հանդիպումներ՝ «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը և դրա դեմ ուղղված պայքարը»: Վիեննա, 2002թ., էջ 2: Զարգացնելով թեման և շարունակելով օգտագործել այս փոխաբերությունը՝ *Բայթյան երկրների խորհրդի հանձնակարար* Հելեն Դեգնը շեշտեց, որ ներկայումս բազմաթիվ եվրոպական հանրություններում «սպառնալիքները ծավալում են ամբողջի ներսում ... Շատ կանայք ... գտնվում են ընտանեկան ամբողջի ծուղակում, ինչն իրականում ավելի շուտ բանտ է կամ գնդան...»: Նույն տեղում, էջ 21:

ներ, բազմաթիվ երկրների բնակչության վրա հիմնված փոխհատվող հետազոտություններ և այլն, որոնք կամ բացառապես ուղղված են ՍԶԲ երևույթին, կամ ավելի հաճախ՝ կանանց նկատմամբ բռնության առավել ընդգրկուն համատեքստին: Մույն հետազոտությունն ուսումնասիրում է կանանց նկատմամբ բռնության տարբեր տեսանկյունները՝ միևնույն ժամանակ մեծ ուշադրություն դարձնելով ՍԶԲ խնդրին:

Այս գլխում ներկայացված են այն կանանց հետազոտության տվյալները, ովքեր *հիմնականում* (բայց ոչ բացառապես) ունեն կամ նախկինում ունեցել են զուգընկերներ: Մրանք այն կանայք են, ովքեր կամ ամուսնացած են օրենքով, կամ քաղաքացիական կարգով: Այստեղ անհրաժեշտ է մի կարևոր նշում. աղյուսակներում «ամուսնական կարգավիճակ» տերմինը (որը ներկայացված է երեք կատեգորիայով՝ «երբևէ չամուսնացած», «ներկայումս ամուսնացած» և «նախկինում ամուսնացած»), որն օգտագործված է ամբողջ զեկույցում, իրականում պայմանական տերմին է՝ նկարագրելու ոչ միայն վերոնշյալ ամուսնությունների բոլոր տեսակները, այլև որևէ սեռական զուգընկերոջ գոյությունը ներկայում կամ անցյալում կամ նրա բացակայությունը: Այսպիսով, «ներկայումս (նախկինում) ամուսնացած» նշանակում է ներկայումս (կամ նախկինում) սեռական զուգընկեր/ամուսին ունեցող կին, իսկ «երբևէ չամուսնացած» նշանակում է կին, որը երբևէ չի ունեցել սեռական զուգընկեր, այդ թվում՝ ամուսին:

Քանի որ կանանց նկատմամբ սեռական զուգընկերների բռնարարքներն իրենց բնույթով և դաժանությամբ տարբերվում են ըստ բռնության տարբեր տեսակների՝ միայնաց միջև և տեսակի ներսում, հետազոտությունները, որպես կանոն, դրանցից յուրաքանչյուրին անդրադառնում են առանձին-առանձին: Ներկա հետազոտությունը հետևում է այս մոդելին՝ հետազոտելով բռնության տարածվածությունը և հնարավորության դեպքում բռնարարքների հաճախականությունը յուրաքանչյուր կատեգորիայում:

Քանի որ հետազոտությանը մասնակցած կանայք հարցվել են իրենց անձնական փորձառության մասին, ապա հասկանալի է, որ սույն հետազոտությունը զբաղվում է միայն այնպիսի բռնարարքների ուսումնասիրությամբ, որոնք չեն ավարտվել մահով, քանի որ անկախ այդ բռնարարքների դաժանությունից և դրանց հետևանքներից, զոհ դարձած կանայք ողջ են մնացել:

Այս գլխում «**տարածվածություն**» տերմինն օգտագործվում է ներկայացնելու երբևէ զուգընկեր ունեցած կանանց մասնաբաժինը, ովքեր սեռական զուգընկերոջ կողմից ենթարկվել են բռնության իրենց կյանքի որևէ հատվածում («տարածվածությունը կյանքի ընթացքում») կամ հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում («տարածվածությունը կոնկրետ ժամանակահատվածում»), մինչդեռ «**հաճախականությունը**» ներկայացնում է երբևէ զուգընկեր ունեցած կանանց մասնաբաժինը, ովքեր սեռական զուգընկերոջ կողմից ենթարկվել են բռնության կոնկրետ ժամանակահատվածում (հետազոտությանը նախորդած 12 ամիսներին կամ դրանից առաջ) մի քանի անգամ (ինչը չափվել է երեք կատեգորիայով՝ «մեկ անգամ», «մի քանի անգամ» և «շատ անգամ»)՝⁴⁴:

Գենդերային բռնության ինչ լինելու կամ չլինելու հետ կապված անորոշություններից, թյուրըմբռումներից և սուբյեկտիվ ընկալումներից ու կարծիքների տարբերությունից խուսափելու նպատակով կանանց անձնական փորձառություններին վերաբերող հարցերը ձևակերպվել են զգուշությամբ և խնամքով, ինչի մասին վկայում են հետազոտության համապատասխան հատվածները: Միևնույն ժամանակ, կարևոր է նաև ստուգել հարցվողների գիտելիքները և սեռական զուգընկերոջ կողմից գենդերային բռնության մասին նրանց տեսանկյունների համապատասխանությունը: Հետևաբար նրանց հարց էր ուղղվել, թե արդյո՞ք իրենք գենդերային բռնություն են համարում որոշակի դեպքեր: Աղյուսակ 2.1-ը ներկայացնում է նրանց արձագանքների վերաբերյալ տվյալները: Բռնու-

⁴⁴ Բազմաթիվ երկրների բնակչության վրա հիմնված և այլ հետազոտություններում այս տերմինների օգտագործման բացատրության և նկարագրության համար տե՛ս Էլսբերգ Մ. և Հեյզ Լ., *Ուսումնասիրելով կանանց նկատմամբ բռնությունը. Գործնական ուղեցույց հեղափոխողների և իրավապաշտպանների համար*: Վաշինգտոն, ԱՇԿ, PATH, 2005թ., էջ 86, և *Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերաբերյալ մանրամասն հեղափոխություն*: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի զեկույց: Նյու Յորք, ՄԱԿ, 2006թ. (փաստաթուղթ A/61/122/Add.1), էջ 60: *Կանանց նկատմամբ բռնության վերացումը*: ՄԱԿ ԳԲ հեղափոխություն, էջ 70:

թյան և դրա տարբեր դրսևորումների մասին կանանց պատկերացումը նույնպես կարևոր է, որովհետև այն ձևավորում է նրանց ընկալումներն ու վերաբերմունքը, որոնք ունեն լուրջ անձնական և սոցիալական նշանակություն, հետևանքներ և արձագանքներ:

Աղյուսակ 2.1. Հարցվողների ընկալումը գենդերային բնության վերաբերյալ

Ընտրանքի 15-59 տարեկան կանանց փոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր դրական են պատրաստանել այն հարցին, թե արդյո՞ք սեռական զուգընկերոջ/ամուսնու սրորև նշված գործողությունները գենդերային բնություն են:

		Ֆիզիկական վնասվածք	Բանավոր վիրավորանք	Կնոջը հրապարակապես նվազեցնելը	Բանավոր սպառնալիքներ	Փողից զրկելը	Կնոջն աշխատել արգելելը	Ստիպողական սեռական հարաբերությունը	Բնության անվագն մեկ ատանձին տե- սակ նշողների տոկոսը	Կանանց թիվը (բոլորը)
Տարիք	15-24	89.0	56.5	77.1	61.9	64.0	63.7	83.4	90.9	297
	15-19	84.3	66.7	73.0	66.9	69.8	69.3	78.8	86.4	128
	20-24	92.6	48.7	80.1	58.2	59.5	59.5	86.9	94.4	169
	25-34	92.3	59.8	80.8	72.3	73.4	71.3	90.7	96.6	518
	35-44	92.4	47.6	79.7	61.7	68.1	69.7	90.4	95.9	705
	45-59	91.3	51.6	77.2	61.2	65.8	67.5	88.4	94.7	1,229
Բնակության վայր	Քաղաքային	93.1	55.8	81.8	68.0	72.5	72.0	91.0	96.2	2,011
	Երևան	91.9	67.0	83.5	71.8	75.4	76.1	93.9	97.2	792
	Այլ քաղաքային	93.9	48.6	80.7	65.6	70.6	69.3	89.2	95.5	1,219
	Գյուղական	87.2	44.0	69.4	51.2	54.3	58.6	82.7	91.7	738
Ամուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած	88.1	60.3	77.9	68.8	69.5	71.3	83.8	91.3	382
	Ներկայումս ամուսնացած	92.4	49.9	78.8	61.5	66.9	67.4	89.7	95.9	2,082
	Նախկինում ամուսնացած	89.5	62.7	76.7	71.4	70.3	71.3	89.0	93.2	285
Երեխաների թիվը	0	89.0	58.9	78.1	68.4	69.3	70.3	84.6	92.0	470
	1-2	92.9	53.0	82.1	65.3	70.1	70.1	90.7	96.0	1,495
	3+	90.4	48.2	71.9	57.2	61.9	64.0	87.7	94.8	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	69.9	57.0	65.2	60.4	57.0	57.0	69.9	69.9	8
	Ընդհանուր տարրական	88.1	43.4	67.4	47.7	52.4	49.8	78.6	93.3	118
	Ընդհանուր միջնակարգ	90.3	45.4	74.3	56.0	61.9	62.5	86.6	93.7	1,104
	Միջին մասնագիտական	91.1	54.2	79.4	67.4	67.6	68.5	89.0	95.0	881
	Բարձրագույն	95.2	64.7	86.7	74.1	80.4	81.9	94.3	97.7	638
Զբաղվածու- թյուն	Չաշխատող	91.5	52.1	79.6	64.2	67.7	66.7	88.0	94.4	1,712
	Աշխատող	91.2	54.3	77.0	64.0	69.4	73.4	90.9	95.9	873
	Սեզոնային աշխատանք	93.3	50.4	76.8	55.3	58.9	61.6	86.4	95.7	149
	Այլ	89.0	40.3	57.4	38.9	42.0	33.5	79.3	89.0	15
Ընդամենը		91.5%	52.7%	78.5%	63.5%	67.6%	68.4%	88.8%	95.0%	2,749

Արժանահիշատակ է, որ հարցմանը մասնակցած կանանց գերակշիռ մեծամասնության կարծիքով կնոջ սեռական գուգընկերոջ կողմից ցանկացած գործողություն, որը հանգեցնում է ֆիզիկական վնասվածքի և ստիպողական սեռական հարաբերության, բռնություն է (համապատասխանաբար՝ 91.5% և 88.8%): Հարցվողների ավելի քան երեք քառորդը (78.5%) բռնություն են համարում կնոջը հրապարակավ նվաստացնելը: Կանանց ավելի փոքր տոկոսը բռնություն է համարում փողից զրկելը (67.6%) կամ կնոջն աշխատել արգելելը (68.4%) (դրանք իրականում այսպես կոչված «տնտեսական բռնության» տեսակներ են) կամ բանավոր սպառնալիքները (63.5%) (այդ թվում՝ բաժանվելու կամ վնասվածք հասցնելու սպառնալիքները): Հարցմանը մասնակցած կանանց միայն 52.7%-ն է բռնություն համարում բանավոր վիրավորանքը (այդ թվում՝ զրպարտելը, չարախոսելը և բղավելը):

Ինչպես վկայում են աղյուսակում ամփոփված տվյալները, բռնության վերաբերյալ հարցվողների ընկալումը տարբերվում է ոչ միայն ըստ նրանց կենսագրական բնութագրիչների, այլև խնդրո առարկա *բռնության ձևի*: Այլ կերպ ասած՝ անհատական կենսագրական բնութագրիչների (ինչպես՝ տարիք, կրթություն, ամուսնական կարգավիճակ, բնակության վայր կամ երեխաների թիվ) հարաբերական կշիռը տարբեր է՝ կախված նրանից, թե ինչպիսի գործողություններ են գնահատվում որպես բռնություն:

Օրինակ՝ տվյալները վկայում են, որ տարիքը տարբերակիչ գործոն չէ, երբ կինը որպես բռնություն է գնահատում սեռական գուգընկերոջ կողմից ցուցաբերված այն վարքագիծը, որը հանգեցրել է կնոջ ֆիզիկական վնասվածքի և, թեկուզ ավելի քիչ չափով, ստիպողական սեռական հարաբերության: Կանանց տարիքային տարբեր խմբերում վերոնշյալ գործողությունները համարվում են բռնություն՝ 89.0%-92.4% առաջինի դեպքում և 83.4%-90.7%՝ երկրորդի դեպքում, եթե հաշվի չեն առնվում ամենաերիտասարդ ենթախմբից (15-19 տարեկան) ստացված տվյալները: Այս ենթախմբում վերոնշյալ գործողությունները բռնություն որակող կանանց մասնաբաժինը 7 տոկոսային կետով ավելի ցածր է գրանցված միջին արժեքից առաջին դեպքում և 9.5 տոկոսային կետով՝ երկրորդ դեպքում: Նույնը վերաբերում է նվաստացնող վերաբերմունքի նկատմամբ կանանց դիրքորոշմանը:

Տարիքը որպես գործոն նշանակություն է ձեռք բերում «տնտեսական բռնության» դեպքում: Չնայած հարցվողների այն մասնաբաժինը, ովքեր փողից զրկելը կամ կնոջն աշխատել արգելելը բռնություն են համարում, ավելի փոքր է, քան ֆիզիկական և սեռական բռնության դեպքում, այնուամենայնիվ այստեղ օրինաչափությունն այլ է և տարիքը նշանակություն ունի: Սեռական գուգընկերոջ կողմից կնոջը փողից զրկելը բռնություն համարողների ամենացածր ցուցանիշը գրանցվել է 15-24 տարեկանների (64.0%), և էլ ավելի ցածր՝ 20-24 տարեկանների ենթախմբերում (59.5%): Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 25-34 տարեկան ենթախմբում (73.4%), որը նվազում է 35-44 և 45-59 տարեկանների ենթախմբերում (համապատասխանաբար՝ 68.1% և 65.8%): Պատկերը նույնն է կնոջն աշխատել արգելելը որպես բռնություն համարողների դեպքում (տոկոսային ցուցանիշները շատ նման են նախորդ օրինակին):

Անհրաժեշտ է նշել, որ այն դեպքում, երբ բռնության ցանկացած տեսակի հետ կապված կտրուկ տարբերություն է դիտարկվում երկու հաջորդական ենթախմբերի (15-19 և 20-24 տարեկանների) կարծիքների միջև, ֆիզիկական և սեռական բռնության ու նվաստացնող վերաբերմունքի դեպքում առաջին ենթախմբում ավելի քիչ է հակված բռնություն որակելու համապատասխան գործողությունները, մինչդեռ «տնտեսական բռնության» դեպքում (բանավոր վիրավորանքի ու բանավոր սպառնալիքների)՝ միանգամայն հակառակ պատկերն է:

Ըստ «բնակության վայրի» գործոնի՝ տվյալները ցույց են տալիս, որ թեև 5-7 տոկոսային կետի տարբերություն կա Երևանից և այլ քաղաքային բնակավայրերից հարցվողների միջև, նրանց (միասին և առանձին վերցրած) և գյուղական բնակավայրերում ապրողների միջև այս տարբերությունն ավելի մեծ է և միջինը կազմում է 10 կամ ավելի տոկոսային կետ: Այսպիսով, ստիպողական սեռական հարաբերությունը բռնություն է համարում քաղաքային բնակավայրերից հարցվածների 91.0%-ը, ի տարբերություն գյուղական բնակավայրերից հարցվածների 82.7%-ի: Սեռական գուգընկերոջ կողմից կնոջը հրապարակավ նվաստացնելը բռնություն է համարում քաղաքայինների 81.8%-ը՝ գյու-

ղաբնականների 69.4%-ի դիմաց: Տարբերությունը շատ ավելի մեծ է, երբ խոսքը վերաբերում է կնոջն աշխատել արգելելուն (68.0%-ը՝ 51.2%-ի դիմաց), փողից զրկելուն (72.5%-ը՝ 54.3%-ի դիմաց) և բանավոր սպառնալիքներին (68.0%-ը՝ 51.2%-ի դիմաց):

Միակ բացառությունը (բացի այն գործողություններից, որոնք հանգեցնում են ֆիզիկական վնասվածքների և մեծապես ու գրեթե միաձայն համարվում են բռնություն հարցվածների բոլոր ենթախմբերի կողմից) բանավոր վիրավորանքի ընկալումն է: Մի կողմից մեծ տարբերություն կա քաղաքային բնակավայրերից (նրանց 48.6%-ը համարում է բռնություն) և գյուղական բնակավայրերից հարցվածների (44.0%), իսկ մյուս կողմից՝ երևանաբնակների (67.0%) կարծիքների միջև: Այսպիսով, եթե երևանաբնակների երկու երրորդը բռնություն է համարում իր սեռական զուգընկերոջ կողմից բանավոր վիրավորանքը, ապա այլ քաղաքային բնակավայրերից և գյուղական բնակավայրերից հարցվածների կեսից քիչն ունի այս դիրքորոշումը:

Երեխաների թվաքանակի գործոնը միատեսակ ազդեցություն չունի: Այսպես, երեք և ավելի երեխա ունեցող հարցվողների տոկոսը, ովքեր հակված են վերոնշյալ բոլոր գործողությունները բռնություն համարելու, ավելի ցածր է, քան մեկ կամ երկու երեխա ունեցողների (բացառությամբ ստիպողական սեռական հարաբերության և ֆիզիկական բռնության դեպքերի) կամ երեխա չունեցողների ցուցանիշները:

Ավելի խառը և ոչ հստակ միտվածություն կա, երբ համեմատում ենք մեկ կամ երկու երեխա ունեցող հարցվողների տվյալները երեխա չունեցողների տվյալների հետ: Նրանց կարծիքներն իրականում համընկնում են «տնտեսական բռնության» գնահատման ժամանակ (համապատասխանաբար՝ 70.1% և 70.3% կնոջն աշխատել արգելելու դեպքում և համապատասխանաբար՝ 70.1% և 69.3% փողից զրկելու դեպքում): Ինչ վերաբերում է կանքին հակառակ սեռական հարաբերություն ունենալուն, ֆիզիկական վնասվածքին և նվաստացնող վերաբերմունքին, ապա դրանք բռնություն համարողների տոկոսն ավելի բարձր է մեկ կամ երկու երեխա ունեցողների, քան երեխա չունեցողների շրջանում (համապատասխանաբար՝ 90.7%-ը՝ 84.6%-ի դիմաց, 92.9%-ը՝ 89.0%-ի դիմաց և 82.1%-ը՝ 78.1%-ի դիմաց): Սակայն պատկերը բոլորովին այլ է բանավոր սպառնալիքների և հատկապես բանավոր վիրավորանքի դեպքում (համապատասխանաբար՝ 65.3%-ը՝ 68.4%-ի դիմաց և համապատասխանաբար՝ 53.0%-ը՝ 58.9%-ի դիմաց):

Հստակ արտահայտված միտվածություն է դիտարկվում տվյալներն ըստ «ամուսնական կարգավիճակի» վերլուծելիս: Երբևէ սեռական զուգընկեր չունեցած և վերոնշյալ բոլոր գործողությունները որպես բռնություն որակող հարցվողների տոկոսը գրեթե նույնն է, ինչ որ նախկինում սեռական զուգընկեր ունեցած կանանց դեպքում (համապատասխանաբար՝ 71.3% և 71.3% կնոջն աշխատել արգելելու, 69.5% և 70.3% փողից զրկելու, 77.9% և 76.7% նվաստացնող վերաբերմունքի, 88.1% և 89.5% ֆիզիկական վնասվածքի, 68.8% և 71.4% բանավոր սպառնալիքների, 60.3% և 62.7% բանավոր վիրավորանքի դեպքում): Միակ բացառությունը ստիպողական սեռական հարաբերություն ունենալու դեպքում է, որը որպես բռնություն գնահատողների տոկոսը առաջին խմբում նշանակալիորեն ավելի ցածր է, քան երկրորդում (83.8%-ը՝ 89.0%-ի դիմաց):

Նշված երկու ենթախմբերի և ներկայումս սեռական զուգընկեր ունեցող կանանց միջև տարբերությունը շատ հստակ է (հատկապես՝ կապված բանավոր վիրավորանքի և բանավոր սպառնալիքների ու «տնտեսական բռնության» տեսակների գնահատման հետ), քանի որ վերջինն առանձնանում է առաջին երկու խմբերից: Անհրաժեշտ է նշել, այնուամենայնիվ, որ ստիպողական սեռական հարաբերության գնահատման դեպքում ներկայումս սեռական զուգընկեր ունեցող և ստիպողական սեքսը բռնություն համարող հարցվողների մասնաբաժինը գրեթե նույնն է, ինչ որ նախկինում սեռական զուգընկեր ունեցած հարցվողների դեպքում: Այս առումով այս երկու ենթախմբերը կտրուկ տարբերվում են երբևէ սեռական զուգընկեր չունեցած հարցվողներից:

Կրթությունը մի գործոն է, որը տարբերակում է հարցվողներին ամենացայտուն, կայուն և միատեսակ ձևով՝ կապված նրանց կողմից վերոնշյալ գործողությունները բռնություն գնահատելու հետ:

Աչքի է ընկնում կրթական մակարդակի և վերոնշյալ գործողությունները բնություն ընկալելու միջև ուժեղ փոխկապակցվածությունը: Ավելի կոնկրետ, կրթական մակարդակի և նշված գործողությունները որպես կանանց նկատմամբ բնություն որակելու միջև դիտվում է ուղիղ հարաբերակցություն, մասնավորապես՝ **որքան բարձր է կրթական մակարդակը, այնքան ավելի բարձր է այս գործողությունները բնություն որակողների մասնաբաժինը:** *Չկա կրթական մակարդակի կամ բնության ձևի հետ կապված այս միտումից և որևէ շեղում:*

Մեկ այլ կարևոր միտում է այն, որ առանձին ենթախմբերի միջև տարբերությունները բավականին մեծ են ըստ բնության բոլոր ձևերի և որ միջինում դրանք գերազանցում են նաև այլ գործոններով պայմանավորված խմբերի ցուցանիշները (ըստ բնակության վայրի, ամուսնական կարգավիճակի, երեխաների քանակի և տարիքի): Սա վերաբերում է նաև ստիպողական սեռական հարաբերության և ֆիզիկական վնասվածք հասցնող գործողությունների գնահատականին, երբ մյուս գործոնների հետ կապված տվյալները կամ համընկնում են, կամ այդ ենթախմբերի միջև ոչ հավաստի տարբերություններ են արձանագրվում:

Այսպիսով, ստիպողական սեռական հարաբերությունը համարում են բնություն բարձրագույն կրթությամբ հարցվողների 94.3%-ը՝ տարրական կրթությամբ հարցվողների 78.6%-ի դիմաց (միջին մասնագիտական և ընդհանուր միջնակարգ կրթությամբ հարցվողների համապատասխանաբար՝ 89.0% և 86.6%-ը): Նմանապես, ֆիզիկական վնասվածք պատճառող գույքընկերոջ վարքագիծը բնություն է համարում բարձրագույն կրթությամբ հարցվողների 95.2%-ը՝ տարրական կրթությամբ հարցվողների 88.1%-ի դիմաց (միջնակարգ մասնագիտական և ընդհանուր միջնակարգ կրթությամբ հարցվողների համապատասխանաբար՝ 91.1% և 90.3%-ը):

Պակաս տպավորիչ չեն բնության առանձին տեսակների գնահատման դեպքում ենթախմբերի միջև տարբերությունները ոչ միայն տարբեր գործոնների տեսանկյունից, այլև հենց նույն՝ կրթության գործոնի շրջանակներում: Սա վերաբերում է հարցվողների ենթախմբերի միջև տարբերություններին (որոնք կարող են վերագրվել կրթությանը) նրանց կողմից այն գործողությունների գնահատման դեպքում, որոնք միջազգայնորեն լայն ճանաչում ունեն և աստիճանաբար պետականորեն ընդունվում են որպես «հոգեբանական բնություն» և «տնտեսական բնություն»:

«Հոգեբանական բնություն» կատեգորիայի բոլոր երեք ձևերը, որոնք նշված են աղյուսակում, լավ ներկայացնում են պատկերը: Այսպես, բանավոր սպառնալիքները բնություն համարող հարցվողների մասնաբաժիններն ըստ տարրական, միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համապատասխանաբար կազմում են 47.7%, 56.0%, 67.4% և 74.1%: Բանավոր վիրավորանքի դեպքում՝ համապատասխանաբար 43.4 %, 45.4%, 54.2% և 64.7%, իսկ նվաստացնող վերաբերմունքի դեպքում՝ համապատասխանաբար 67.4%, 74.3%, 79.4% և 86.7%:

«Տնտեսական բնության» կատեգորիայի երկու տեսակները՝ փողից գրկելը և կնոջն աշխատել արգելելը, նույնպես լավ արտահայտում են այս միտումը: Այսպիսով, առաջինի դեպքում տոկոսային մասնաբաժինները համապատասխանաբար կազմում են 52.4%, 61.9%, 67.6% և 80.4%, իսկ երկրորդի դեպքում՝ համապատասխանաբար 49.8%, 62.5%, 68.5% և 81.9%:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ԳԲ-ի համապատասխան ընկալում ունեցող կանանց մասնաբաժինը խիստ տատանվում է՝ կախված բնության տեսակի և հարցվողների կենսագրական բնութագրիչներից: Այնուամենայնիվ, չնայած այս տարբերություններին, կանանց *մեծամասնությունը* (և ոչ թե հազիվ կեսը) ունի գենդերային բնության բոլոր ձևերի համարժեք ընկալում: Սակայն նաև պետք է նշել, որ այս մեծամասնությունը լայնորեն տատանվում է՝ գերակշռողից (ֆիզիկական վնասվածքների և ստիպողական սեռական հարաբերության առնչությամբ) մինչև շատ (սեռական գույքընկերոջ կողմից կնոջը հրապարակավ նվաստացնելու գնահատման), այնուհետև մինչև ակնհայտ (տնտեսական բնության և բանավոր սպառնալիքների հետ կապված) և մինչև աննշան (կապված բանավոր վիրավորանքի հետ):

Նույնիսկ եթե կարևոր է ճանաչել, թե ո՞րն է գենդերային բնությունը, դա միայն առաջին քայլն է:

Թեկուզև ճանաչելով գենդերային բռնությունը՝ անձը կարող է թաքցնել և արդարացնել այն մի շարք պատճառներով: Ահա թե ինչու կարևոր է ի հայտ բերել գենդերային բռնության նկատմամբ մեր վերաբերմունքը: Այս հարցին է նվիրված սույն գլխի հաջորդ հատուկ ենթաբաժիններից մեկը:

ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ/ԶԳԱՑԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Չնայած որոշ գիտնականներ և բժիշկներ փորձում են հստակ կարգավորել այս կատեգորիան՝ բաժանելով այն երկու մասի, առանձնացնելով հոգեբանական բռնությունը զգացականից, այնուամենայնիվ դրա համար չկան կայուն հիմքեր և հիմնականում այս երկու տերմիններն օգտագործվում են փոխարինաբար:

Հոգեբանական բռնությունը գործողությունների մի ծավալուն խումբ է, որն ընդգրկում է զրպարտանքը կամ արհամարհանքը, հոգեբանական շանտաժը կամ բանավոր վիրավորանքը, այդ թվում՝ անարգանքը և սպառնալիքները, ահաբեկումն ու ագրեսիվ բղավելը, զրպարտելը, վախեցնելը, ստորացնելը և «հոգեբանական ահաբեկությունը»⁴⁵:

Բազմաթիվ երկրների բնակչության վրա հիմնված փոխհատվող հետազոտությունների անցկացման նպատակով ԱՀԿ-ի մշակած հարցաշարը, որը նաև օգտագործվել է այս հետազոտության մեջ, բնեռվում է հոգեբանական բռնության չորս հիմնական ձևերի վրա. (ա) կնոջը վիրավորել կամ ստիպել նրան վատ մտածել իր մասին, (բ) նվաստացնել կամ ստորացնել կնոջն այլ մարդկանց ներկայությամբ, (գ) կնոջը դիտավորյալ վախեցնել կամ ահաբեկել և (դ) սպառնալ վնասել կնոջը կամ նրա սիրելի մեկին: Թեև այս ցուցակն ըստ էության ընդգրկում է, այն անշուշտ դուրս է թողնում հոգեբանական բռնության որոշ կարևոր ձևեր, որոնց ներկայացման համար վերոնշյալ չորս ձևերը կարող են ծառայել միայն խիստ սահմանափակ չափով: Այսպես, բռնությունը կամ բռնության սպառնալիքը՝ ուղղված կնոջ երեխայ (ներ) ին, կնոջ նկատմամբ հոգեբանական բռնության ամենադաժան ձևերից մեկն է: Սակայն գոյություն ունեցող ձևաչափը լավագույն դեպքում հնարավոր է դարձնում հոգեբանական բռնության այս ձևի վերաբերյալ ձեռք բերել միայն անուղղակի ապացույցներ:

Այս հետազոտության տվյալներն անկասկած ցույց են տալիս, որ հոգեբանական բռնությունը գլխավորում է ցուցակը, քանի որ տուժածների մեծամասնությունն այս կատեգորիայում են: Ինչպես վկայում է Ադյուսակ 2.2-ը, հարցմանը մասնակցած և երբևէ զուգընկեր ունեցած կանանց 25.0%-ը նշել է, որ ենթարկվել է հարցաշարում թվարկված հոգեբանական բռնության ձևերից առնվազն մեկին: Ադյուսակում ամփոփված տվյալները նաև հաստատում են ավելի վաղ նմանօրինակ հետազոտությունների արդյունքում բացահայտված օրինաչափությունը, մասնավորապես՝ հոգեբանական բռնության տարածվածությունը հակադարձաբար է փոխկապակցվում *գործողության դաժանությամբ*: Այլ կերպ ասած, որքան ավելի ծանր է բռնության տեսակը, այնքան քիչ է դրա տարածվածությունը, և հակառակը՝ հոգեբանական բռնության ավելի չափավոր տեսակների դեպքերն ավելի մեծ հավանականություն ունեն: Այսպիսով, վերոնշյալ կատեգորիայում կանանց 24.6%-ը նշել է, որ սեռական զուգընկերն իրեն վիրավորել է, մինչդեռ միայն 7.9%-ն է ենթարկվել նվաստացման այլ մարդկանց ներկայությամբ, 5.1%-ը՝ դիտավորյալ ահաբեկման և ընդամենը 2.8%-ին են սպառնացել, որ կվնասեն կնոջը կամ նրա սիրելի մեկին:

Հոգեբանական բռնության տարածվածությունը հակադարձաբար է փոխկապակցվում նաև գոհի կրթական մակարդակին, եթե հաշվի է առնվում ընդհանուր պատկերը: Այսպիսով, հոգեբանական բռնության որևէ տեսակի ենթարկված զոհերի տոկոսը նվազում է 36.3%-ից (ընդհանուր տարրական կրթությամբ կանանց դեպքում) մինչև 27.5% (ընդհանուր միջնակարգ), 21.1% (միջին մասնագիտական) մինչև 22.6% (բարձրագույն կրթություն): Այնուամենայնիվ, կան որոշ աննշան տատանումներ, երբ «կրթության մակարդակի» տեսանկյունից վերլուծվում են հոգեբանական բռնության անհատական ձևերը: Այդ դեպքում ընդհանուր օրինաչափությունը որոշ չափով շեղվում է, քանի որ ահաբեկման և սպառնալիքների ենթարկված բարձրագույն կրթությամբ կանանց տոկոսը գերազանցում է ընդհանուր միջնակարգ և միջին մասնագիտական կրթությամբ կանանց ցուցանիշը:

⁴⁵ Տե՛ս, օրինակ, *Կանանց նկատմամբ բռնության վերացումը: ՄԱԿ ԳՔ հեղափոխություն*, էջ 45:

Զբաղվածության կարգավիճակն ընդհանուր առմամբ կարծես ճշգրիտ կանխորոշիչ գործոն չէ, չնայած որ անհատական ձևերի հետ կապված կարող է ինչ-որ չնչին ռիսկային գործոն (0.3-2.1 տոկոսային կետերի սահմաններում) հանդիսանալ կանանց համար՝ հոգեբանական բռնության ծանր և հատկապես չափավոր ձևերի ենթարկվելու առումով: Սեգոնային աշխատանքն առանձնանում է որպես հստակ ռիսկային գործոն, չնայած այն սահմանափակվում է բռնության ամենաչափավոր ձևերով:

Տարիքային գործոնը նույնպես դրսևորում է կայուն, թեկուզև փոքր-ինչ բարդ օրինաչափություն:

Աղյուսակ 2.2. Սեռական գուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ հոգեբանական բռնության տարածվածությունը

15-59 տարեկան երրևէ զուգրնկեր ունեցած կանանց մասնաբաժինն ըստ կենսագրական բնութագրիչների, ուլքեր երրևէ սեռական զուգրնկերոջ կողմից ենթարկվել են հոգեբանական բռնության ստորև նշված ձևերից մեկին կամ մի քանիսին (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Սեռական գուգրնկերը					
		Վերաբերել է/առիպել է կնոջը վատ մտածել իր մասին	Նվաստացրել/ստորացրել է կնոջն այլ մարդկանց ներկայությամբ	Գիտավորյալ այնպիսի գործողություններ է կատարել, որ կնոջը վախեցնի կամ անհարենի (օրինակ՝ ի միջի այլոց նայել է նրա վրա՝ բղավելով կամ իրեր ջարդելով)	Սպանանցել է մնասել կնոջը կամ նրա սիրելի մեկին	Բռնության առնվազն մեկ առանձին տեսակ նշույնների առկայություն	Կանանց թիվը (երրևէ զուգրնկեր ունեցած)
Տարիք	15-24	8.8	1.3	1.6	0.0	8.8	107
	15-19	3
	20-24	7.9	1.4	1.0	0.0	7.9	104
	25-34	17.0	4.1	3.9	2.3	17.0	451
	35-44	28.7	8.0	5.9	3.1	29.1	656
	45-59	26.8	9.9	5.5	3.1	27.4	1,153
Բնակության վայր	Քաղաքային	24.2	8.0	5.6	3.2	24.2	1,710
	Երևան	14.6	5.2	4.4	2.9	14.6	668
	Այլ քաղաքային	30.3	9.8	6.3	3.4	30.3	1,042
	Գյուղական	25.9	7.6	3.9	1.7	27.2	657
Ամուսն. կարգավիճակ	Ներկայումս ամուսնացած	23.8	6.1	3.8	1.9	24.2	2,082
	Նախկինում ամուսնացած	30.7	20.6	14.8	9.4	31.2	285
Կենդանի երեխաների թիվը	0	21.1	12.6	6.7	5.5	21.9	88
	1-2	22.2	6.4	5.0	2.1	22.4	1,495
	3+	29.6	10.2	5.1	3.8	30.3	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	4
	Ընդհանուր տարրական	36.3	11.1	8.8	5.1	36.3	101
	Ընդհանուր միջնակարգ	27.5	9.1	5.1	3.0	28.2	962
	Միջին մասնագիտական	21.1	5.8	3.5	1.6	21.4	823
	Բարձրագույն	22.6	8.3	7.1	4.1	22.6	477
Զբաղվածություն	Չաշխատող	23.8	6.4	4.6	2.8	24.0	1,467
	Աշխատող	24.2	9.8	6.4	3.2	25.0	742
	Սեգոնային աշխատանք	36.7	13.3	3.8	0.6	37.7	143
	Այլ	15
Ընդամենը		24.6	7.9	5.1	2.8	25.0	2,367

Չնայած այս դեպքում սա դրական փոխկապակցվածության բավականին կայուն օրինաչափություն է: Հիմնականում բռնության տարածվածությունը հստակ աճում է տարիքին զուգընթաց: Կանխատեսելի էր, որ որքան ավելի տարիքով մեծ է հարցվողը, այնքան մեծ է հավանականությունը, որ նա երբևէ հոգեբանական բռնության է ենթարկվել սեռական զուգընկերոջ կողմից: 15-24, 25-34 և 35-44 տարիքային խմբերի տվյալները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հաջորդ խմբի համար հոգեբանական բռնությունը գրեթե երկու անգամ բարձր է նախորդի համեմատությամբ (համապատասխանաբար՝ 8.8%, 17.0% և 29.1%), աննշան տատանումներով, երբ տվյալները բաշխված են ըստ հոգեբանական բռնության առանձին ձևի: Հասնելով իր ծայրակետին՝ բռնությունը փոքր-ինչ նվազում է և հավասարվում 27.4%-ի հաջորդ տարիքային խմբի համար, որը հարցման վերջին՝ 45-59 տարեկանների խումբն է: Նույնը փաստորեն վերաբերում է հոգեբանական բռնության առանձին ձևերին:

Երեխաների թվաքանակի կամ բնակության վայրի գործոնների հետ կապված տվյալները որևէ ընդհանուր կայուն միտում չեն բացահայտում: Կանանց նկատմամբ հոգեբանական բռնության տարածվածությունը երեխա չունեցող կանանց շրջանում կայուն բարձր է դաժան ձևերի դեպքում, իսկ չափավոր ձևերի դեպքում՝ ընդհակառակը: Երբևէ զուգընկեր ունեցած կանանց 29.6%-ը մատնանշել է, որ իրենց զուգընկերները վիրավորել են կամ ստիպել վատ մտածել իր մասին, մինչդեռ բռնության այդ տեսակի մասին մատնանշել է երբևէ զուգընկեր ունեցած երեխա չունեցող կանանց 21.1%-ը: Նվաստացման, ահաբեկման և սպառնալիքների մասին նշել են համապատասխանաբար՝ առաջին խմբում 10.2%, 5.1% և 3.8%, երկրորդ խմբում՝ 12.6%, 6.7% և 5.5% կանայք:

Այլ քաղաքային բնակավայրերում հոգեբանական բռնության տարածվածությունը մայրաքաղաքի հետ համեմատությամբ կայուն բարձր է: Տարբերությունն առավել ակնհայտ է արտացոլված հոգեբանական բռնության առնվազն մեկ ձևի ենթարկված կանանց առնչվող տվյալներում, Երևանի և այլ քաղաքային բնակավայրերի դեպքում՝ համապատասխանաբար 14.6% և 30.3%:

Հոգեբանական բռնության առանձին ձևերի տարածվածության մասին գյուղաբնակ կանանց տված պատասխանների արդյունքում պատկերը բավականին նման է Երևանին, բացառությամբ վիրավորանքի դեպքում առկա կտրուկ տարբերության (Երևանում 14.6%՝ գյուղական բնակավայրերում 25.9%-ի դիմաց):

Հոգեբանական բռնության բոլոր ձևերի (ինչպես նաև ֆիզիկական և սեռական բռնության բոլոր ձևերի, ինչը կներկայացվի ստորև) լավագույն կանխորոշիչ գործոն է ներկա ամուսնական կարգավիճակը: Այն կանանց դեպքում, ովքեր ամուսնալուծված են կամ այլևս չեն ապրում իրենց զուգընկերոջ հետ, կայուն դիտարկվում է նրանց նկատմամբ զուգընկերոջ կողմից երբևէ գործադրված բռնության էականորեն բարձր մակարդակ՝ ամուսնացած կանանց համեմատությամբ: Հնարավոր է նաև, որ *բռնությունը նպաստավոր կամ առաջնային գործոն է հանդիսացել սեռական զուգընկերոջից բաժանվելու կամ հեռանալու համար:* Հետազոտության ընտրանքի կանանց 31.2%-ը, ում կապը տղամարդու հետ ավարտվել է ամուսնալուծությամբ կամ բաժանությամբ, նշում է, որ ենթարկվել է հոգեբանական բռնության առնվազն մեկ ձևի: Նախկինում զուգընկեր ունեցած կանանց շրջանում երբևէ հոգեբանական բռնության ենթարկվածներից միայն 19.3%-ի զուգընկերն է մահացել, մինչդեռ ամուսնալուծված կամ առանձնացած կանայք կազմում են 78.1%: Այսպիսով, հոգեբանական բռնությունը չի կարող անտեսվել որպես գործոն, որը մյուս գործոնների (հատկապես ֆիզիկական և/կամ սեռական բռնությամբ վատթարացած) հետ մեկտեղ հանգեցրել է ամուսնալուծության/առանձնացման:

Մյուս կողմից՝ մեկ այլ, պակաս ճշմարտանման բացատրություն կարող է լինել այն, որ ամուսնալուծված կամ սեռական զուգընկերոջից առանձնացած կինը կարող է ավելի ցավագին և գերքննադատաբար վերաբերվել իր նախկին զուգընկերոջը: Փաստորեն այս երկու հնարավոր բացատրությունները միմյանց փոխադարձաբար չեն բացառում և չեն բացառում նաև այլ գործոններ:

Աղյուսակ 2.3. Սեռական զուգընկերոջ կողմից կնոջ նկատմամբ հոգեբանական բռնության տարածվածությունը անցած 12 ամիսներին (ըստ առանձին տեսակների)

Սեռական զուգընկերոջ կողմից երբևէ հոգեբանական բռնության փորձեր ձևերի ենթարկված 15-59 տարեկան կանանց մասնաբաժինն ըստ հոգեբանական բռնության մեկ կամ մի քանի տեսակի՝ անցած 12 ամիսներին (“[]” 25-49 դեպքերի համար):

Սեռական զուգընկերը			
	Անցած 12 ամիսներին	Երբևէ	Անցած 12 ամիսներին վստահություն ստացած կանանց %-ը
Վիրավորել է/ ստիպել է կնոջը վատ մտածել իր մասին	227	582	39.0%
Նվաստացրել/ ստորացրել է կնոջն այլ մարդկանց ներկայությամբ	67	187	35.8%
Դիտավորյալ այնպիսի գործողություններ է կատարել, որ կնոջը վախեցնի կամ ահաբեկի (օրինակ՝ իմիջիայլոց նայել է նրա վրա՝ բղավելով կամ իրեր ջարդելով)	48	121	[39.7%]
Սպառնացել է վնասել կնոջը կամ նրա սիրելի մեկին	29	66	[43.9%]

Աղյուսակ 2.3-ում ամփոփված տվյալները հստակ ցույց են տալիս, որ սեռական զուգընկերոջ կողմից հոգեբանական բռնության ենթարկված հարցվողների բավականին մեծ տոկոս (35.8%-43.9%) նշել է անցած 12 ամիսների ընթացքում հոգեբանական բռնության ենթարկված լինելու մասին:

Ցուցանիշը շատ ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր ներկայումս սեռական զուգընկերունեն (43.6%-65.0%), ինչի մասին է վկայում Աղյուսակ 2.4-ը: Բացարձակ արժեքները հոգեբանական բռնության երկու դեպքում էլ փոքր-ինչ ցածր են, որպեսզի ընդհանուր եզրակացություններ արվեն: Այնուամենայնիվ, դրանք բացահայտում են մի ակնհայտ միտում և ապահովում հիմքեր եզրակացնելու, որ հոգեբանական բռնության ծավալները թեկուզ չեն մեծանում, բայց և չեն էլ նվազում:

Աղյուսակ 2.4. Սեռական զուգընկերոջ կողմից ներկայումս զուգընկեր ունեցող կանանց նկատմամբ հոգեբանական բռնության տարածվածությունն անցած 12 ամիսներին

Սեռական զուգընկերոջ կողմից երբևէ հոգեբանական բռնության փորձեր ձևերի ենթարկված 15-59 տարեկան ներկայումս ամուսնացած կամ սեռական զուգընկեր ունեցող կանանց մասնաբաժինն ըստ հոգեբանական բռնության մեկ կամ մի քանի տեսակի՝ անցած 12 ամիսներին (“[]” 25-49 դեպքերի համար):

Սեռական զուգընկերը			
	Անցած 12 ամիսներին	Երբևէ	Անցած 12 ամիսներին վստահություն ստացած կանանց %-ը
Վիրավորել է/ ստիպել է կնոջը վատ մտածել իր մասին	216	496	43.6%
Նվաստացրել/ ստորացրել է կնոջն այլ մարդկանց ներկայությամբ	58	127	45.7%
Դիտավորյալ այնպիսի գործողություններ է կատարել, որ կնոջը վախեցնի կամ ահաբեկի (օրինակ՝ իմիջիայլոց նայել է նրա վրա՝ բղավելով կամ իրեր ջարդելով)	42	79	[53.2%]
Սպառնացել է վնասել կնոջը կամ նրա սիրելի մեկին	26	40	[65.0%]

Թեկուզև հետագա և երկարատև ուսումնասիրություններ են անհրաժեշտ սահմանելու երկարաժամկետ դինամիկան և միտումները, այնուամենայնիվ այս հետազոտությունը կայուն օրինաչափություն է ցույց տալիս. ընտրանքի երբևէ զուգընկեր ունեցած յոթ (ոթ) կանանցից մեկը հոգեբանական բռնության է ենթարկվել հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում, հետևաբար երբևէ զուգընկեր ունեցած կանանց մեկ տասներորդը բռնության է ենթարկվել հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում:

Աղյուսակներ 2.5 և 2.6-ը լույս են սփռում հոգեբանական բռնության հաճախականության վրա թե՛

երկարաժամկետ և թե՛ կարճաժամկետ առումով: Տվյալները ցույց են տալիս, որ հոգեբանական բռնության գործողությունները մեկուսացված չեն և, բացառությամբ հազվադեպ դրվագների, դրանք սովորական երևույթ են այն փոխհարաբերություններում, որտեղ տեղի են ունենում: Տվյալները շատ չեն տատանվում վերոնշյալ ժամանակահատվածում սեռական զուգընկերոջ կողմից կանանց նկատմամբ գործադրված հոգեբանական բռնության հաճախականության հետ կապված: Չնայած որոշակի վերապահումներին (որոշ դեպքերում ցածր բացարձակ արժեքների պատճառով) աղյուսակի տվյալները բացահայտում են հոգեբանական բռնության հաճախականության կայուն օրինաչափություն:

Աղյուսակ 2.5. Սեռական զուգընկերոջ կողմից կանանց նկատմամբ հոգեբանական բռնության հաճախականությունը անցած 12 ամիսներից առաջ

15-59 տարեկան կանանց մասնաբաժինը, ում սեռական զուգընկերը վիրավորել կամ սրիպել է վայր մտնել իր մասին, նվաստացրել կամ սրորացրել է այլ մարդկանց ներկայությամբ, դիտարկող զործողություններ է կատարել նրան վախեցնելու կամ ահաբեկելու նպատակով և/կամ սպառնացել է վնասել նրան կամ սիրելի որևէ մեկին անցած 12 ամիսներից առաջ, և ովքեր նշել են, որ սա պարտադիր է մեկ, մի քանի կամ շատ անգամ (“[]” 25-49 դեպքերի համար):

Վերջին 12 ամիսներից առաջ					
Կանանց թիվը	Կանայք, ովքեր ենթարկվել են	Մեկ անգամ	Մի քանի անգամ	Շատ անգամ	Ընդամենը, %
356	Սեռական զուգընկերոջ կողմից վիրավորանքի	26.0%	55.1%	18.9%	100.0%
120	Սեռական զուգընկերոջ կողմից նվաստացման	12.9%	51.2%	35.9%	100.0%
72	Սեռական զուգընկերոջ կողմից ահաբեկման	8.0%	53.7%	38.3%	100.0%
37	Սեռական զուգընկերոջ կողմից վնասելու սպառնալիքի	[8.9%]	[52.4%]	[38.7%]	[100.0%]

Այդ խմբում հարցվող կանանց 74.0%-ը նշել է, որ սեռական զուգընկերոջ կողմից ենթարկվել է վիրավորանքի, 87.1%-ը՝ նվաստացման, 92.0%-ը՝ ահաբեկման, իսկ 91.1%-ը՝ վնասելու սպառնալիքի *մի քանի կամ շատ անգամ* հետազոտությանը նախորդած 12 ամիսներից առաջ ընկած ժամանակահատվածում: Հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում մինևույն խմբի կանանց տվյալներն են՝ համապատասխանաբար 75.5%, 85.8%, 95.0% և 98.0%:

Աղյուսակ 2.6. Սեռական զուգընկերոջ կողմից կանանց նկատմամբ հոգեբանական բռնության հաճախականությունը անցած 12 ամիսներին

15-59 տարեկան կանանց մասնաբաժինը, ում սեռական զուգընկերը վիրավորել կամ սրիպել է վայր մտնել իր մասին, նվաստացրել կամ սրորացրել է այլ մարդկանց ներկայությամբ, դիտարկող զործողություններ է կատարել նրան վախեցնելու կամ ահաբեկելու նպատակով և/կամ սպառնացել է վնասել նրան կամ սիրելի որևէ մեկին անցած 12 ամիսներին, և ովքեր նշել են, որ սա պարտադիր է մեկ, մի քանի կամ շատ անգամ (“[]” 25-49 դեպքերի համար):

Վերջին 12 ամիսներին					
Կանանց թիվը	Կանայք, ովքեր ենթարկվել են	Մեկ անգամ	Մի քանի անգամ	Շատ անգամ	Ընդամենը, %
227	Սեռական զուգընկերոջ կողմից վիրավորանքի	24.5%	53.3%	22.2%	100.0%
67	Սեռական զուգընկերոջ կողմից նվաստացման	14.2%	38.6%	47.2%	100.0%
48	Սեռական զուգընկերոջ կողմից ահաբեկման	[5.0%]	[32.3%]	[62.7%]	100.0%
29	Սեռական զուգընկերոջ կողմից վնասելու սպառնալիքի	[2.0%]	[19.4%]	[78.6%]	[100.0%]

Այսպիսով, տվյալները ցույց են տալիս, որ բացահայտված միտումը շարունակում է պահպանվել, և նույնիսկ բարձրանում է (սկստի առնելով այն փաստը, որ խնդրո առարկա ժամանակահատվածը, այսինքն՝ 12 ամիսը, բավականին երկար է միտումները բացահայտելու համար), հատկապես կապված հոգեբանական բռնության առավել դաժան ձևերի հետ: Հետազոտությանը նախորդած 12

ամիսներից առաջ ընկած ժամանակահատվածում կանանց 38.3%-ը սեռական զուգընկերոջ կողմից ենթարկվել է ահաբեկման և սպառնալիքների մի քանի անգամ, իսկ 38.7%-ը ենթարկվել է իրենց կամ սիրելի որևէ մեկին վնասելու սպառնալիքի: Մինևույն ժամանակ, կանանց տոկոսային մասնաբաժինները, ովքեր նշել են հարցմանը նախորդած 12 ամիսների ընթացքում շատ անգամ հոգեբանական բռնության ենթարկվելու մասին, բարձրանում են՝ համապատասխանաբար մինչև 62.75% և 78.6%:

ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Հոգեբանական բռնությունը նաև ներառում է վերահսկողական վարքագիծ, այդ թվում՝ գործողություններ, ջանքեր և միջոցներ՝ կնոջը մեկուսացնելու և նրա սոցիալական շփումներն ու կապն ընկերների և նույնիսկ ընտանիքի հետ նվազագույնի հասցնելու, տեղեկատվության և ծառայությունների մատչելիությունը սահմանափակելու և նրա շարժումներն ու գործողությունները վերահսկելու ու տնային գործերի շրջանակից դուրս իր բոլոր նախաձեռնությունների համար սեռական զուգընկերոջ համաձայնությունը ստիպված խնդրելու նպատակով: Հաճախ վերահսկողական վարքագիծը նաև բարդանում է սեփականատիրական վարքագծով, ինչն էապես նպաստում է կանանց անզոր դարձնելուն:

Փորձագետները նշում են, որ ընտանեկան բռնությունն օրինականացվում է, «երբ տղամարդու վերահսկողությունը կնոջ նկատմամբ լայնորեն ընդունվում և մշակութային առումով արդարացվում է»⁴⁶: Հետևաբար, վերահսկողական վարքագիծն արժանի է հատուկ ուշադրության, և այս բաժինը նվիրված է Հայաստանում հոգեբանական բռնության տարբեր ձևերի տարածվածությանն առնչվող հետազոտության տվյալներին:

Աղյուսակ 2.7-ը հստակ ցույց է տալիս, որ հարցվող կանանց 61.7%-ի սեռական զուգընկերները դրսևորում են վերահսկողական վարքագծի որևէ ձև: Նկատելի է, որ կնոջ տարիքն իրականում որոշիչ գործոն չէ: Հոգեբանական բռնության այս տեսակն ազդում է տարբեր տարիքային խմբերի կանանց վրա գրեթե նույն ձևով: Եթե սեռական զուգընկերոջ կողմից վերահսկողական վարքագծի դրսևորման մասին նշող կանանց մասնաբաժինը հստակ ավելի ցածր է 45-59 տարեկան կանանց շրջանում (59.0%), այն այնուամենայնիվ շատ բարձր է 15-24 տարիքային խմբում (69.0%), գերազանցելով 25-34 տարեկան կանանց շրջանում գրանցված ցուցանիշը (61.0%) և էլ ավելի մեծանալով 35-44 տարիքային խմբի դեպքում (65.6%): Սակայն երբեմն վերահսկողական վարքագծի առանձին ձևերը զգալիորեն տարբերվում են:

Վերահսկողական վարքագծի լայն տարածվածությունը կարող է բացատրվել կոնկրետ հետամնաց միտումների արտացոլմամբ, այդ թվում՝ հայրիշխանական սոցիալական և մշակութային նորմերի ու կարծրատիպերի վերելքով, ինչին հանգեցրել է անցումային ժամանակաշրջանը, որը սոցիալական մեծ ծախսեր է պահանջել մարդկային տանջանքների և զրկանքների առումով: Այս ենթադրության ճշմարտացիությունն ապացուցվում է աղյուսակում տեղ գտած տվյալներով: Հայաստանում հայրիշխանական նորմերն ավելի տարածված են գյուղական բնակավայրերում և Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում, որտեղ բնակիչներն իրենց մտածելակերպով, ավանդույթներով և կենսակերպով ընդհանուր առմամբ ավելի մոտ են գյուղաբնակներին, քան մայրաքաղաքի բնակիչներին: Փաստորեն զարմանալի չէ, որ Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում և գյուղական բնակավայրերում վերահսկողական վարքագծի առնվազն մեկ տեսակի ենթարկված կանանց մասնաբաժինները համապատասխանաբար կազմում են 67.4% և 64.7%, ինչն էապես բարձր է Երևանի բնակիչների շրջանում գրանցված ցուցանիշի համեմատությամբ (49.7%):

Տարբերակման ամենակարևոր գործոնը *կրթությունն է*: Պատահական չէ, որ որքան ավելի բարձր է կնոջ կրթական մակարդակը, այնքան ավելի շատ է հաշվի առնվում նրա տեսակետը սեռական զուգընկեր ընտրելիս, ուստի ավելի հավանական է, որ զուգընկերը հարաբերականորեն ավելի լայն

⁴⁶ *Կանանց նկարմամբ բռնության դեմ պայքարը. ծրագրերի փորձարկում և իրականացում*: Հոռն, 15/19 սեպտեմբերի 2003թ. (էջ 15):

մտահորիզոն կունենա: Այսպիսով, հիմքեր կան կարծելու, որ կանանց կրթական մակարդակը և վերահսկողական վարքագծի տարածվածությունը հակադարձ հարաբերության մեջ են: Սա հստակ օրինաչափություն է, որը բացահայտված է աղյուսակի տվյալներով. տարբերությունն առավել նկատելի է բարձրագույն կրթությամբ կանանց դեպքում: Եթե սեռական գուգրնկերոջ կողմից վերահսկողական վարքագծի առնվազն մեկ տեսակի ենթարկվածների մասնաբաժինները կազմում են տարրական կրթությամբ կանանց շրջանում 69.5%, ընդհանուր միջնակարգ կրթությամբ՝ 65.0% և միջին մասնագիտական կրթությամբ՝ 62.40%, ապա բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում այդ ցուցանիշը նվազում է մինչև 52.1%:

Չնայած *գրադվածության* գործոնի հետ կապված տարբերությունները մեծ չեն, այնուամենայնիվ այն վկայում է վերահսկողական վարքագծի հիմքում ընկած հայրիշխանական նորմերի և ընկալումների մասին: Մոտավորապես 8.5 տոկոսային կետով տարբերությունը չաշխատող (64.7%) և աշխատող (56.3%) կանանց միջև նույնպես հակված է արտացոլելու, թե որքանով են «հայրիշխանական» կամ «ազատական» արժեքները յուրացվել կնոջ սեռական գուգրնկերոջ կողմից: Նվազ լայնախոհ գուգրնկերները հակված են ավելի ավանդական գենդերային դերերի և կնոջը հատկացնում են հիմնականում, եթե ոչ բացառապես, տնային տնտեսուհու դեր: Բացի ավելի պակաս վերահսկողական վարքագիծ դրսևորելուց, ավելի «ազատական» մոտեցման հակված գուգրնկերները կարող են խրախուսել կնոջ աշխատելը:

Աղյուսակ 2.7. Սեռական գույզընկերոջ կողմից վերահսկողական վարքագծի տարածվածությունը

Սեռական գույզընկերոջ կողմից վերահսկողական վարքագծի մեկ կամ մի քանի ձևերի ենթարկված երբևէ գույզընկեր ունեցած 15-59 տարեկան կանանց մասնաբաժինն ըստ կենսագրական բնութագրիչների (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Սեռական գույզընկերը							Վերահսկողական վարքագծի անկախ մեկ տեսակի ենթարկված հարցվողների տոկոսը	Կանանց թիվը (երբևէ գույզընկեր ունեցած)
		Փորձում է չթողնել կնոջը հանդիպել ընկերների հետ	Փորձում է սահմանափակել կնոջ հայրական ընտանիքի հետ շփումը	Պարտադիր պետք է միշտ իմանա կնոջ որտեղ լինելը	Արհամարհում է կնոջը	Ջայրանում է, երբ այլ տղամարդու հետ է կինը խոսում	Կասկածում է, որ կինն անհավատարիմ է	Վստահ է, որ կինն իր թույլտվությունը պետք է վերցնի բժշկի դիմելուց առաջ		
Տարիք	15-24	12.7	7.2	57.7	0.0	14.9	3.0	22.4	69.0	107
	15-19	3
	20-24	12.5	6.8	58.3	0.0	14.1	3.1	20.9	69.0	104
	25-34	11.7	6.0	51.9	3.1	20.7	6.2	25.3	61.0	451
	35-44	10.5	5.6	58.5	3.1	21.1	8.2	20.1	65.6	656
	45-59	8.8	5.6	52.4	4.2	21.5	7.0	20.5	59.0	1,153
Բնակության վայր	Քաղաքային	11.6	6.7	53.1	3.9	22.6	8.0	19.8	60.5	1,710
	Երևան	11.5	6.6	43.8	4.5	19.6	5.5	16.7	49.7	668
	Այլ քաղաքային	11.6	6.8	59.0	3.6	24.5	9.5	21.8	67.4	1,042
	Գյուղական	5.9	3.2	57.1	2.3	16.6	4.5	25.7	64.7	657
Ամուսնական կարգավիճակ	Ներկայումս ամուսնացած	8.7	4.3	54.7	1.9	19.6	5.8	20.8	62.2	2,082
	Նախկինում ամուսնացած	19.4	16.6	50.3	15.4	31.0	16.0	26.0	57.9	285
Կենդանի երեխաների թիվը	0	13.4	9.4	53.7	9.2	27.4	8.6	27.1	58.0	88
	1-2	11.0	6.2	53.7	3.8	22.0	7.3	19.5	61.9	1,495
	3+	7.7	4.5	55.3	2.3	18.1	6.2	24.4	61.7	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	4
	Ընդհանուր տարրական	8.3	5.9	62.8	1.7	26.2	9.5	25.0	69.5	101
	Ընդհանուր միջնակարգ	8.1	4.7	56.3	3.4	21.7	6.2	24.4	65.0	962
	Միջին մասնագիտական	11.5	5.7	54.8	3.2	20.1	5.8	20.3	62.4	823
	Բարձրագույն	11.7	8.0	47.3	4.7	19.6	10.3	16.7	52.1	477
Զբաղվածություն	Չաշխատող	10.0	4.7	57.8	2.8	22.4	6.1	21.3	64.7	1,467
	Աշխատող	10.4	7.1	48.9	4.4	19.7	7.5	22.2	56.3	742
	Սեզոնային աշխատանք	6.7	9.0	46.9	3.9	12.8	13.2	19.3	59.9	143
	Այլ	15
Ընդամենը		10.0%	5.7%	54.2%	3.5%	20.9%	7.0%	21.4%	61.7%	2,367

Վերահսկողական վարքագծի որոշ ձևեր, հատկապես կապված այլ տղամարդու հետ կնոջ հավանական կամ փաստացի շփման և նրա առողջությանն ու անուղղակիորեն սեռականությանն առնչվող խնդիրների հետ, նույնպես սերտորեն կապված են հայրիշխանական սոցիալ-մշակութային նորմերի և կարծրատիպերի հետ:

Այս կանանց 54.2%-ը նշում է, որ սեռական գուգընկերը պարտադիր պետք է միշտ իմանա կնոջ որտեղ լինելը: Սա չի կարող համարվել սովորական անվստահություն: Դժվար է պատկերացնել, որ այդքան մեծ թվով կանայք սեռական գուգընկերոջը կարող են առիթ տված լինել մտածելու, որ այդ շփումները հեռու են գնացել: Սա իրականում հայրիշխանական մտածողության առանձնահատկությունն է, որը միտված է կանանց, հատկապես երիտասարդ կանանց, ընկալելու որպես ոչ այնքան հասուն ու պատասխանատու և ոչ այնքան վստահելի էակների, նրանց ինքնուրույն թողնելու համար: Այսպիսով, ենթադրվում է, որ կանայք ուղղորդման, ղեկավարման և վերահսկման կարիք ունեն: Նրանց գործողությունները և նույնիսկ շարժումները պետք է մշտապես վերահսկվի: Թվում է՝ ընտրանքի յուրաքանչյուր երկրորդ կնոջ սեռական գուգընկերը վստահություն չունի կնոջ հետ իր փոխհարաբերությունների նկատմամբ: Ըստ ստացված տվյալների՝ նրանց 7.0%-ը կասկածում է գուգընկերուհուն դավաճանության մեջ: Այս արտառոց դիրքորոշումն⁴⁷ ավելի ուժեղ է արտահայտված 35-44 տարեկանների դեպքում (8.2%), հատկապես ավելի երիտասարդ կանանց համեմատությամբ (6.2%՝ 25-34 և 3.0%՝ 20-24 տարիքային խմբերի համար), և Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների դեպքում (9.5%-ը՝ գյուղաբնակների 4.5%-ի և երևանաբնակների 5.5%-ի համեմատությամբ): Սա հստակ չհիմնավորված դիրքորոշում է, որովհետև փոքր քաղաքներում մարդկանց անձնական կյանքն ավելի քիչ է քողարկված և ավելի շատ է հայտնվում տեսադաշտում: Խիստ անհավանական է, որ այդքան մեծ թվով կանայք, հատկապես միջին տարիքի, այս քաղաքներում վտանգի տակ կդնեն իրենց հեղինակությունն ու հարաբերությունները: Այդ կասկածների արժանահավատությունը նվազում է նաև Երևանի տվյալների համեմատության ժամանակ: Երևանում, որտեղ անհավատարմության ցանկացած ձևի համար ավելի «նպաստավոր» պայմաններ կան գաղտնիության ավելի մեծ հնարավորության առումով, երբ մարդիկ հիմնականում այնքան են կենտրոնացած իրենց խնդիրների, հետաքրքրությունների և անձնական կյանքի վրա, որ այլոց մասին նրանք չեն էլ մտածում, «կասկածյալների» տոկոսը 1.7 անգամ ավելի պակաս է:

Վերակենդանացող հայրիշխանական կարծրատիպերի և նորմերի պարագայում զարմանալի չէ, որ հարցմանը մասնակցած երբևէ գուգընկեր ունեցած կանանց 20.9%-ը նշում է, որ իր սեռական գուգընկերը զայրանում է, երբ կինն այլ տղամարդու հետ է խոսում, և որ այդ կանանց 21.4%-ի գուգընկերներն ակնկալում են, որ կանայք իրենց թույլտվությունը պետք է վերցնեն առողջապահական ծառայություններին դիմելուց առաջ: Կրկին՝ կրթական ավելի բարձր մակարդակ ունեցող կանանց գուգընկերներն ավելի ազատամիտ և հանդուրժողական մտտեցում են ցուցաբերում, քան կրթական ավելի ցածր ցենզ ունեցող կանանց գուգընկերները:

«Երեխաների» գործոնը նույնպես պետք է հաշվի առնվի սեռական փոխհարաբերություններում վերահսկողական վարքագծի գնահատման ժամանակ: Թեև այդ գործոնը նույնքան միատեսակ և հստակ ազդեցություն չունի, ինչպես կրթական ցենզը, այնուամենայնիվ այն բավականին հզոր, ուստիև կանխորոշիչ գործոն է թվում վերահսկողական վարքագծի հիմնական ձևերի պարագայում: Հիմնականում, երեխա չունեցող կանանց սեռական գուգընկերներն ավելի շատ են վերահսկողական վարքագիծ դրսևորում (միջինը 1.3-2.5 անգամ), քան 1-2 և հատկապես երեք և ավելի երեխաներ ունեցող կանանց գուգընկերները: Այսպես, ըստ հարցման մասնակիցների պատասխանների, եթե երեխա չունեցող կանանց գուգընկերների 13.4%-ը փորձում է չթողնել կնոջը հանդիպել ընկերների հետ, 9.4%-ը՝ սահմանափակել հայրական ընտանիքի հետ շփումը, 9.2%-ը արհամարհում է, 27.4%-ը զայրանում է, երբ կինն այլ տղամարդու հետ է խոսում, և 8.6%-ը կասկածում է անհավատարմության մեջ, ապա 1-2 երեխա ունեցող կանանց գուգընկերների շրջանում համապատասխան ցուցանիշներն են՝ 11.0%, 6.2%, 3.8%, 22.0% և 7.3%, իսկ երեք և ավելի երեխաներ ունեցողների դեպքում՝ 7.7%, 4.5%,

⁴⁷ Սա արդարաոց է, հաշվի առնելով ներկա սոցիալական և մշակութային համարեքսորը և գերակշռող փեսակերները և արժեքները, ինչպես նաև վայելչության և սեփական արժանապատվության զգացումի նորմերը:

2.3%, 18.1% և 6.2%:

Այս օրինաչափությունն, այնուամենայնիվ, չի պահպանվում «պարտադիր պետք է միշտ իմանա կնոջ որտեղ լինելը» սեռական գուգրնկերոջ *սկսկալիքի* և «կինն իր թույլտվությունը պետք է վերցնի բժշկի դիմելուց առաջ» նրա *սկսկալիքի* դեպքերում: Ինչպես վկայում է միևնույն աղյուսակը, պատկերը խառն է:

Նպատակադրվածությունն ուժեղ միատեսակ միտում է դրսևորում՝ կապված «երեխաների» գործոնի հետ: Այլ կերպ ասած, անկախ այն հանգամանքից, թե գույգն ընդհանրապես երեխաներ ունի և քանի երեխա ունի, գուգրնկերների գրեթե միևնույն բարձր տոկոսը պարտադիր պետք է միշտ իմանա կնոջ որտեղ լինելը: Քանի որ երեխաների թիվը տարբերակիչ գործոն չէ, ապա կարելի է կատարել երկու տեսական եզրակացություն: Առաջինը, որ նպատակադրվածության ուժգնությունը կամ բացարձակ կարևորությունը միտված է ցույց տալու, որ այս դեպքում հիմնականում աշխատում են սոցիալ-մշակութային գործոնները, մասնավորապես՝ վերը նշված հայրիշխանական կարծրատիպերի և նորմերի վերելքի պայմաններում: Կամ՝ կարելի է ենթադրել, որ հարցման ենթարկված կանանց գուգրնկերների գրեթե կեսի պարագայում առկա այդ խնդիրը հոգեբանական է, որի դեպքում նպատակադրվածությունը կարող է հալածախտային (պարանոյալ) բնույթ կրել, քանի որ այն ներառում է չափից դուրս, եթե ոչ բուլորովին անտրամաբանական կասկածամտություն: Երկրորդ, որքան էլ հարաբերականորեն «փոքր» (1.65%) տարբերություն է դիտարկվում ըստ այս գործոնի, այդ տարբերությունը նույնպես մշակութային և հատկապես կրթական գործոնների ազդեցության արտացոլումն է: Տարբերությունը, մի կողմից, երեխա չունեցող կամ 1-2 երեխա ունեցող կանանց և, մյուս կողմից, 3 և ավելի երեխա ունեցող կանանց միջև է: Հիմնականում, աշխարհի հասարակություններում (և Հայաստանը բացառություն չէ) որպես կանոն՝ որքան ավելի բարձր է կնոջ կրթական մակարդակը, այնքան նա ավելի քիչ երեխաներ ունի: Այսպիսով, ենթադրելով, որ ավելի լավ կրթված կանայք ունեն ավելի քիչ երեխաներ, կրթության գործոնը, որ քննարկվեց վերևում, կարող է որոշ չափով որպես բացատրություն ծառայել:

Չկա որևէ միանշանակ բացատրություն, թե ինչու է պատկերը խառը՝ երեխաների թվաքանակի և բժշկի դիմելուց առաջ թույլտվություն վերցնելու սեռական գուգրնկերոջ *սկսկալիքի* միջև փոխկապակցվածության առնչությամբ: Հնարավոր վարկածներից մեկն այն է, որ տնտեսական (առավել կոնկրետ՝ ֆինանսական) նկատառումները պետք է հաշվի առնվեն վերահսկելու *ցանկության* կամ *սոցիալ-մշակութային նախադրյալների*, ինչպես նաև համապատասխան կրթական գործոնի հետ համատեղ, ընդ որում նկատի առնելով, որ այդ գործոնների հարաբերական ազդեցությունը տարբեր է երեխաների թվաքանակով պայմանավորված փոխհարաբերությունների տարբեր փուլերում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկական բռնությունը բռնության մի տեսակ է, որն անմիջապես ներգործություն ունի կնոջ բարեկեցության վրա և վտանգ է ներկայացնում նրա առողջության, այդ թվում նաև մտավոր, և/կամ կյանքի համար: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի զեկույցը տրամադրում է կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության գործառական սահմանում. «Ֆիզիկական բռնությունը ներառում է ֆիզիկական/հոգեկան ուժի կամ զենքի նպատակային օգտագործում՝ կնոջը վնասելու կամ վիրավորելու նպատակով»⁴⁸: Սույն հետազոտության մեջ ֆիզիկական բռնության երևույթը ուսումնասիրվել է այս բնորոշման սահմաններում: Հետազոտության շրջանակներում դիտարկվել են սեռական գուգրնկերոջ կողմից ֆիզիկական բռնության այն վեց հիմնական դրսևորումները, որոնց ուղղված էր ԱՀԿ-ի հարցաշարը՝ մշակված բազմաթիվ երկրների բնակչության վրա հիմնված փոխհատվող հետազոտությունների համար: Այս գործողություններն են՝ սեռական գուգրնկերը (1) *սպտակել կամ որևէ բան է շարքել կնոջ վրա, որը կարող էր նրան ցավ պատճառել* (2) *հրել կամ հարվածել կամ մնազերից քաշել է*, (3) *բռնուցքով կամ ինչ-որ այլ բանով խփել է*, որը կարող էր նրան վնասել, (4) *նորքով հարվածել, քարշ փվել կամ ծեծել է*, (5) *դիրավորյալ խեղդել կամ այրել է* և (6) *սպառնացել է օգրա-*

⁴⁸ Կանանց նկատմամբ բռնության վերացումը: ՄԱԿ ԳԶ հետազոտություն, էջ 43:

գործել կամ իրականում կնոջ դեմ օգտագործել է հրազեն, դանակ կամ այլ զենք: Այսպիսով, այս ձևերը ներառում են ՍԶԲ գործողությունների հարաբերականորեն լայն տիրույթ՝ «մեղմ»-ից մինչև չափավոր և դաժան տեսակները:

Ինչպես վկայում են աղյուսակներ 2.8 և 2.9-ում տեղ գտած հետազոտության տվյալները, կանանց նկատմամբ սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնությունն ավելի քիչ է տարածված երկրում, քան հոգեբանական բռնությունը և վերահսկողական վարքագիծը (երկուսը վերցրած միասին, և երբ համեմատում ենք երեք կատեգորիաների միջև ըստ դաժանության աստիճանի), և ֆիզիկական բռնության տարածվածությունը հակադարձ փոխկապակցվում է գործողության դաժանությանը: Այսպես, հարցմանը մասնակցած երբևէ զուգընկեր ունեցած կանանց 8.9%-ը նշել է, որ զուգընկերոջ կողմից ենթարկվել է ֆիզիկական բռնության առնվազն մեկ ձևի: Ցուցանիշի առյուծի բաժինն ընկնում է բռնության «մեղմ» ձևին (որն ըստ էության «մեղմ» է միայն համեմատականորեն): Այսպես, այս խմբում կանանց 8.0%-ը նշում է, որ իրեն ապտակել են կամ իր վրա ինչ-որ բան են շարտել, որը կարող էր ցավ պատճառել: Տոկոսային մասնաբաժինը կետով կամ գրեթե կիսով չափ պակասում է «չափավոր» ձևերի դեպքում, քանի որ կանանց 4.4%-ն է նշել, որ իրենց հրել կամ հարվածել կամ մազերից քաշել են, մինչդեռ 4.1%-ը նշում է, որ զուգընկերը խփել է իրեն բռունցքով կամ ինչ-որ այլ բանով, որ կարող էր վնասել իրեն: Կանանց 2.3%-ին ոտքով հարվածել, քարշ տվել կամ ծեծել են: Ֆիզիկական բռնության դաժան տեսակների է ենթարկվել մեկ տոկոսից քիչ կանայք: 0.9% -ը նշել է, որ իր սեռական զուգընկերը խեղդել կամ այրել է իրեն, իսկ 0.5%-ը՝ որ զուգընկերը սպառնացել կամ իրականում օգտագործել է իր վրա հրազեն, դանակ կամ այլ զենք:

Իրականում, այս բացահայտումներն ամբողջովին անակնկալ չեն, նկատի առնելով բռնության այս ձևի բնույթը, հետևանքները, ազդեցություններն ու արձագանքները, հատկապես հոգեբանական բռնության և վերահսկողական վարքագծի համեմատությամբ:

Եթե Աղյուսակ 2.8-ում արտացոլված է սեռական զուգընկերոջ կողմից կանանց նկատմամբ գործադրվող ֆիզիկական բռնության ընդհանուր պատկերը սույն հետազոտության շրջանակներում, իսկ տվյալները բաշխված են ըստ կարևոր ստանդարտ կենսագրական բնութագրիչների, ապա Աղյուսակ 2.9-ում ամփոփված տվյալները բացահայտում են առանձին ձևերի հետ կապված կարևոր և հետաքրքիր նրբություններ, ինչը հնարավոր է դարձնում կատարել ավելի համապարփակ և խոր վերլուծություն: Մասնավորապես, ընդհանուր պատկերում բացահայտված ակնհայտ միտումներն ավելի տարբեր են, ակնհայտ և կայուն, երբ վերլուծվում են ըստ ավելի մանրամասն տվյալների՝ տարանջատված ըստ առանձին ձևերի, քան հոգեբանական բռնության և վերահսկողական վարքագծի պարագայում:

Առաջին հայացքից, տվյալներն ի հայտ են բերում հստակ և կայուն (չնայած նվազագույն) դրական փոխկապակցվածություն՝ երեխաների թվի և ֆիզիկական բռնության տարածվածության միջև: Այսպես, երբևէ զուգընկեր ունեցած և երեխաներ չունեցող կանանց 8.5%-ը նշել է սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության գործադրման մասին, մինչդեռ այս ցուցանիշն աճում է մեկ կամ երկու երեխա ունեցող (8.7%) և նույնիսկ ավելի է բարձրանում երեք և ավելի երեխա ունեցող (9.2%) կանանց շրջանում: Այնուամենայնիվ, երբ տվյալները բաշխվում են ըստ առանձին ձևերի, ապա փոխկապակցվածությունը ճիշտ է միայն բռնության «մեղմ» ձևերի համար, իսկ այլ ձևերի դեպքում՝ հակառակն է, և ենթախմբերի ցուցանիշների միջև տարբերությունը որոշ դեպքերում ավելի մեծ է: Այսպիսով, երբ սեռական զուգընկերն ապտակում է կնոջը կամ որևէ բան է շարտում նրա վրա, որը կարող էր ցավ պատճառել, այդ դեպքում երեխա ունենալու կամ չունենալու հանգամանքը զսպող գործոն չէ: Մինչդեռ ֆիզիկական բռնության մյուս ձևերի դեպքում երեխաները կանխարգելող գործոն են, ինչն ամենից ակներև է «չափավոր» ձևերի դեպքում: Ինչպես վկայում են Աղյուսակ 2.9-ում ամփոփված տվյալները, 1-2 երեխա ունեցող կանայք համապատասխանաբար 1.5-2 անգամ ավելի քիչ են նշել, որ իրենց հրել (կամ հարվածել կամ մազերից քաշել) կամ բռունցքով (կամ ինչ-որ այլ բանով) խփել են՝ երեխա չունեցող կանանց համեմատությամբ:

Աղյուսակ 2.8. Սեռական զուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնության տարածվածությունը կյանքի ընթացքում

Երբևէ զուգրնկեր ունեցած 15-59 տարեկան կանանց մասնաբաժինն ըստ կենսագրական բնութագրիչների, ուրբեր սեռական զուգրնկերոջ կողմից երբևէ ենթարկվել են կամ չեն ենթարկվել ֆիզիկական բռնության (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Ենթարկվել են	Չեն ենթարկվել	Ընդամենը, %	Կանանց թիվը (երբևէ զուգրնկեր ունեցած)
Տարիք	15-24	2.8	97.2	100	107
	15-19	3
	20-24	2.3	97.7	100	104
	25-34	5.3	94.7	100	451
	35-44	10.5	89.5	100	656
	45-59	9.9	90.1	100	1,153
Բնակության վայր	Քաղաքային	8.2	91.8	100	1,710
	Երևան	7.1	92.9	100	668
	Այլ քաղաքային	8.9	91.1	100	1,042
	Գյուղական	10.7	89.3	100	657
Ամուսնական կարգավիճակ	Ներկայումս ամուսնացած	7.3	92.7	100	2,082
	Նախկինում ամուսնացած	20.4	79.6	100	285
Կենդանի երեխաների թիվը*	0	8.5	91.5	100	88
	1-2	8.7	91.3	100	1,495
	3+	9.2	90.8	100	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	4
	Ընդհանուր տարրական	16.7	83.3	100	101
	Ընդհանուր միջնակարգ	10.9	89.1	100	962
	Միջին մասնագիտական	7.5	92.5	100	823
	Բարձրագույն	5.7	94.3	100	477
Զբաղվածություն	Չաշխատող	7.2	92.8	100	1,467
	Աշխատող	8.7	91.3	100	742
	Սեզոնային աշխատանք	27.1	72.9	100	143
	Այլ	15
Ընդամենը		8.9%	91.1%	100%	2,367

Աղյուսակ 2.9. Սեռական զուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնության տարածվածությունը կյանքի ընթացքում

15-59 տարեկան երբևէ զուգրնկեր ունեցած կանանց մասնաբաժինն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր երբևէ սեռական զուգրնկերոջ կողմից ենթարկվել են ֆիզիկական բռնության ստորև նշված դրսևորումներից մեկին կամ մի քանիսին (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Սեռական զուգրնկերը						Առնվազն մեկ առանձին տեսակ նշողների տոկոսը	Կանանց թիվը (երբևէ զուգրնկեր ունեցած)
		Ապտակել է կամ որևէ բան է շարունակնոջ վրա, որ կարող էր ցավ պատճառել	Հրել կամ հարվածել կամ մագերից քաշել է	Բռունցքով կամ ինչ-որ այլ բանով խփել է կնոջը, որ կարող էր վնասել	Ոտքով հարվածել, քարշ տվել կամ ծեծել է կնոջը	Դիտավորյալ խեղդել կամ այրել է կնոջը	Սպանացել է, օգտագործել կամ իրականում կնոջ վրա օգտագործել է հրազեն, դանակ կամ այլ զենք		
Տարիք	15-24	2.8	1.0	0.0	0.0	0.0	0.0	2.8	107
	15-19	20.0	3
	20-24	2.3	1.0	0.0	0.0	0.0	0.0	2.3	104
	25-34	5.1	4.1	3.2	2.4	0.7	1.1	5.3	451
	35-44	10.3	5.7	5.0	3.3	1.3	0.2	10.5	656
	45-59	8.4	4.1	4.4	1.9	0.9	0.5	9.9	1,153
Բնակության վայր	Քաղաքային	7.2	3.8	4.2	2.8	1.2	0.7	8.2	1,710
	Երևան	6.5	3.9	3.1	2.3	1.0	0.7	7.1	668
	Այլ քաղաքային	7.7	3.8	4.9	3.0	1.4	0.7	8.9	1,042
	Գյուղական	10.1	6.1	3.9	1.2	0.2	0.1	10.7	657
Ամուսնական կարգավիճակ	Ներկայումս ամուսնացած	6.4	3.0	3.0	1.0	0.5	0.1	7.3	2,082
	Նախկինում ամուսնացած	20.0	15.0	12.8	12.2	4.2	3.7	20.4	285
Կենդանի երեխաների թիվը	0	7.3	7.6	7.6	4.2	0.6	0.6	8.5	88
	1-2	7.5	4.2	4.0	2.4	1.2	0.7	8.7	1,495
	3+	9.1	4.6	4.1	1.9	0.5	0.2	9.2	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	4
	Ընդհանուր տարրական	15.9	15.1	12.5	5.1	0.6	1.9	16.7	101
	Ընդհանուր միջնակարգ	9.4	4.1	4.3	1.8	0.8	0.6	10.9	962
	Միջին մասնագիտական	6.8	3.5	2.9	1.8	0.3	0.3	7.5	823
	Բարձրագույն	5.7	4.4	4.2	3.8	2.4	0.7	5.7	477
Զբաղվածություն	Չաշխատող	6.2	2.7	2.9	1.3	0.5	0.4	7.2	1,467
	Աշխատող	8.3	5.3	5.2	4.1	1.9	0.9	8.7	742
	Սեզոնային աշխատանք	25.9	17.8	10.7	3.3	0.0	0.0	27.1	143
	Այլ	15
Ընդամենը		8.0%	4.4%	4.1%	2.3%	0.9%	0.5%	8.9%	2,367

* Թեև երեխաների թիվը կարևոր գործոն է և ինքնին արդեն ցուցիչ է, այնուամենայնիվ, դրա վրա մեծ ազդեցություն ունեն սան այլ գործոններ, ինչպես օրինակ՝ տարիքը, կրթությունը և բնակության վայրը (նվաճ են մի քանիսը՝ նշանակության նվազման կարգով):

Տարիքը կարևոր գործոն է, որը կարող է լրացուցիչ լույս սփռել բնության հետ կապված հասարակության մեջ գերակշռող մշակութային և սոցիալական նորմերի վրա: Տարիքի և ֆիզիկական բնության տարածվածության միջև դրական փոխկապակցվածության միտումը հստակ է և ոչ զարմանալի: Ակնհայտ է, որ ընդհանուր առմամբ, որքան ավելի տարեց է կինը, այնքան ավելի շատ տարիներ է անցկացրել իր սեռական գուգրնկերոջ (գուգրնկերների) հետ և ավելի մեծ է բնության ենթարկվելու հավանականությունը: Ամեն դեպքում, ընդհանուր պատկերը չի հաստատում լայնորեն տարածված այն կարծրատիպերը, որոնց համաձայն կանայք, մասնավորապես՝ ավելի տարեցները, որպես ամուսնացած կին կամ մայր՝ հատուկ կարգավիճակ ունեն և հարգանք են վայելում հասարակությունում: Ավելի շուտ՝ հակառակը, տարիքային յուրաքանչյուր հաջորդ խմբում կանանց ավելի մեծ տոկոսն է (գոնե այս հետազոտության արդյունքներից դատելով) դառնում սեռական գուգրնկերոջ բնության թիրախ՝ արտահայտված բնության ավելի մեծ հաճախականությամբ և ավելի դաժան ձևերով: Տվյալների համեմատությունը 15-24, 25-34 և 35-44 տարիքային խմբերի միջև ցույց է տալիս, որ երբևէ գուգրնկեր ունեցած կանանց շրջանում բնության առնվազն մեկ տեսակի ենթարկվածների տոկոսը գրեթե երկու անգամ մեծանում է յուրաքանչյուր հաջորդ տարիքային խմբում: Այսպիսով, եթե այս երեք խմբերից առաջինում ցուցանիչը կազմում է 2.8%, ապա երկրորդի դեպքում 5.3% է, իսկ երրորդի դեպքում՝ 10.5%: Այնուհետև, ընտրանքում ընդգրկված վերջին՝ 45-59 տարեկանների խմբի դեպքում տարածվածությունը փոքր-ինչ նվազում է (մինչև 9.9%): 15-24 տարեկանները ենթարկվում են բացառապես ֆիզիկական բնության «մեղմ» ձևերի: Հաջորդ տարիքային խմբի ներկայացուցիչները (25-34 տարեկան կանայք) ի հավելումն նշում են նաև ֆիզիկական բնության չափավոր և դաժան ձևերի ենթարկվելու մասին, իսկ ֆիզիկական բնության բոլոր ձևերի ենթարկվածների տոկոսը տարիքային հաջորդ խմբում (այսինքն՝ 35-44 տարեկան կանայք) ամենաբարձրն է հարցվողների մեջ՝ բացառությամբ զենքի օգտագործման սպանալիքների և փաստացի օգտագործման դեպքերի:

Ինչպես հոգեբանական բնության և վերահսկողական վարքագծի դեպքում, ֆիզիկական բնության տարածվածությունը նույնպես հակադարձ փոխկապակցվում է գոհերի *կրթական մակարդակին*, եթե հաշվի է առնվում ընդհանուր պատկերը: Երբևէ գուգրնկեր ունեցած կանանց շրջանում գոհերի տոկոսը կայուն նվազում է 16.7%-ից՝ տարրական, մինչև 7.5%՝ միջին մասնագիտական և մինչև 5.7%՝ բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում: Այսպիսով, ընդհանուր առմամբ *կրթությունը* սեռական գուգրնկերոջ կողմից ֆիզիկական բնության ցածր տարածվածության բավականին ճշգրիտ կանխորոշիչ գործոն է, հատկապես կրթական ցենզի որոշակի մակարդակից հետո (տվյալ դեպքում՝ ընդհանուր միջնակարգ կրթության):

Ինչ վերաբերում է *բնակության վայրի* գործոնին, ապա տվյալները ցույց են տալիս հետաքրքիր, թեև փոքր-ինչ բարդ օրինաչափություն: Դատելով ընդհանուր պատկերից, ֆիզիկական բնությունն ամենաքիչը տարածված է Երևանում և ամենաշատը՝ գյուղական բնակավայրերում, իսկ Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում արձանագրվել է տարածվածության գրեթե նույն մակարդակը, ինչ որ գյուղական բնակավայրերում: Սակայն սխալ կլիներ համապարփակ ընդհանրացումներ անել, առանց խմբավորված տվյալներին առավել մանրամասն ծանոթանալու, ինչի դեպքում պարզ է դառնում, որ իրավիճակն իրականում ավելի խճճված է: Պարզվում է, որ գյուղական բնակավայրերն «առաջնորդող» են միայն բնության «մեղմ» ձևերի առումով, մինչդեռ բնության չափավոր և հատկապես դաժան ձևերի տարածվածությամբ գյուղական բնակավայրերը «հետ են մնում»: Հետաքրքիր է, որ Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերն այս առումով առաջնային դիրքերում են: Այսպես, այլ քաղաքային բնակավայրերից կանանց միայն 3.0%-ն է նշել, որ իրեն ուրքով հարվածել, քարշ տվել կամ ծեծել են, 4.9%-ին խփել են բռունցքով կամ ինչ-որ այլ բանով, 0.7%-ին սպառնացել են զենքով (կամ իրականում օգտագործել են զենք), իսկ 1.4% կանանց գուգրնկերները նրանց խեղդել կամ այրել են: Գյուղաբնակ կանանց դեպքում ցուցանիշները համապատասխանաբար կազմում են 1.2%, 3.9%, 0.1% և 0.2%: (Երևանում բնության այս ձևերը նշող կանանց դեպքում ցուցանիշները համապատասխանաբար կազմում են 2.3%, 3.1%, 0.7% և 1.0%):

Ջրաղվածության կարգավիճակին վերաբերող տվյալները բացահայտում են, որ աշխատելը սեռական գույքակերոջ կողմից բռնության ենթարկվելու հավանականության առումով կանանց համար հստակ «ռիսկի» գործոն է, թեկուզև ոչ ամենահզորը: Կարևոր է, որ այս գործոնը վերաբերում է բոլոր հարցվողներին՝ կապված բռնության առանձին ձևերի հետ: Աշխատանքն առնվազն տնտեսական անկախության և ապահովության միջոց է, նաև ապահովում է սոցիալական առավել բարձր կարգավիճակ և ընտանիքում որոշումների կայացման առումով ավելի մեծ լիազորություն: Այսպիսով, կարող է թվալ, որ աշխատող կանայք պետք է ավելի քիչ դառնան սեռական գույքակերոջ կողմից բռնության թիրախ: Քանի որ դա այդպես չէ, և քանի որ ցուցանիշները շատ ցածր են (և շատ նման), առաջին հերթին, կարելի է վերապահումով ենթադրել, որ ինչպիսի կշիռ էլ ունենա «աշխատելու» գործոնը, այն արտահայտվում է միայն մյուս գործոնների հետ գույքորդամբ, ընդ որում՝ ազդեցությունը հիմնականում անուղղակի է:

Հետազոտության տվյալները հստակ հիմնավորում են երկու կարևոր եզրակացություններ, որոնք ավելի վաղ ձևավորվել էին հոգեբանական բռնության բաժնում: *Առաջին*, որ ներկայիս «ամուսնական կարգավիճակը» սեռական գույքակերոջ կողմից ֆիզիկական բռնության բոլոր ձևերի լավագույն կանխորոշիչ գործոնն է: Այսինքն՝ ֆիզիկական բռնության ենթարկված լինելու մասին նշած կանանց տոկոսը առնվազն 3-4 անգամ ավելի ցածր է այն կանանց շրջանում, ովքեր ներկայումս սեռական գույքակեր ունեն: Անհրաժեշտ է նշել, որ սեռական գույքակերոջ կողմից բռնության ենթարկված զոհերի շրջանում ներկայումս գույքակեր ունեցող և չունեցող կանանց միջև տոկոսային մասնաբաժինների հարաբերակցության տարբերությունը կայուն մեծանում է բռնության դաժանության մեծացմանը գույքաբաց: Եթե ֆիզիկական բռնության «մեղմ» ձևերի դեպքում առաջինի ցուցանիշը 3-4 անգամ ավելի ցածր է, քան երկրորդինը, ապա «չափավոր» ձևերի դեպքում՝ 5-10 անգամ և դաժան ձևերի դեպքում՝ տասից ավելի (երբեմն շատ) անգամ մեծ է: *Երկրորդ* եզրակացությունն այն է, որ բռնությունը (տվյալ դեպքում ֆիզիկական բռնությունը) կարևոր պատճառ կամ առնվազն նպաստավոր գործոն է եղել ամուսնալուծությունների կամ բաժանումների համար: Հարցման ընտրանքի կանանց 20.4%-ը, ում կապը տղամարդու հետ ավարտվել է ամուսնալուծությամբ կամ բաժանությամբ, նշել են, որ իրենք ենթարկվել են ֆիզիկական բռնության առնվազն մեկ ձևի: Նախկինում գույքակեր ունեցած կանանց շրջանում երբևէ ֆիզիկական բռնության ենթարկվածներից միայն 14.4%-ի գույքակերն է մահացել, մինչդեռ ամուսնալուծված կամ գույքակերոջից առանձնացած կանայք կազմում են 81.6%: Այսպիսով, ֆիզիկական բռնությունը հոգեբանական բռնության հետ միասին հստակ նպաստավոր գործոն է ամուսնալուծությունների և բաժանումների համար:

Անհրաժեշտ է նշել, որ հետազոտության ընտրանքի երբևէ գույքակեր ունեցած և սեռական գույքակերոջ կողմից երբևէ ֆիզիկական բռնության ենթարկված կանանց 28.6%-ը ֆիզիկական բռնության են ենթարկվել հետազոտությանը նախորդած 12 ամիսների ընթացքում:

Ֆիզիկական բռնության հաճախականության վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 2.10-ում: Ինչպես հոգեբանական բռնության դեպքում, սեռական փոխհարաբերություններում տեղի ունեցող ֆիզիկական բռնությունը նույնպես մեկուսի և հազվադեպ դրվագ չէ: Ըստ հետազոտության տվյալների, հարցմանը նախորդած 12 ամիսների ընթացքում գրանցված ֆիզիկական բռնության գործողությունների մեծամասնությունը տեղի է ունեցել ոչ թե մեկ, այլ մի քանի և նույնիսկ շատ անգամ: Այս ժամանակահատվածում գույքակերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված կանանց 76.4%-88.7%-ը նշել է, որ բռնության է ենթարկվել «մի քանի անգամ» կամ «շատ անգամ»:

Աղյուսակ 2.10. Սեռական զուգընկերոջ կողմից կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության որոշ ձևերի հաճախականությունն անցած 12 ամիսներից առաջ

Հետազոտությանը նահորդած 12 ամիսներից առաջ սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված 15-59 տարեկան կանանց մասնաբաժինը, ովքեր նշել են, որ սա պատահել է մեկ, մի քանի կամ չար անգամ (“/” 25-49 դեպքերի համար):

Վերջին 12 ամիսներից առաջ					
Կանանց թիվը	Կանայք, որոնց	Մեկ անգամ	Մի քանի անգամ	Շատ անգամ	Ընդամենը, %
131	Ապտակել , որևէ բան են շարտել, ինչը կարող էր ցավ պատճառել նրան	12.8%	60.3%	26.9%	100.0%
80	Հրել կամ հարվածել կամ մազերից քաշել են	13.1%	52.2%	34.7%	100.0%
78	Բռունցքով կամ ինչ-որ այլ բանով խփել են, ինչը կարող էր վնասել նրան	23.6%	44.5%	31.9%	100.0%
40	Ուռքով հարվածել, քարշ տվել կամ ծեծել են	[11.3%]	[48.2%]	[40.5%]	[100.0%]

Պետք է նշել նաև, որ ֆիզիկական բռնության «չափավոր» ձևերի դեպքում «շատ անգամ» պատասխան տվողների միջին մասնաբաժինը նույնն է, կամ երբեմն նույնիսկ ավելի բարձր, ֆիզիկական բռնության «մեղմ» ձևերի հետ համեմատելիս:

Անհրաժեշտ են ավելի նպատակաուղղված հետազոտություններ՝ որոշելու, թե սեռական զուգընկերոջ կողմից կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության հաճախականության տվյալ միտումներն արդյո՞ք ներկայումս նույնպես հարատևում են: Ֆիզիկական բռնությունը նույնպես արժանի է հետազոտման, քանի որ հանդես է գալիս որպես բռնության այլ ձևերին զուգորդվող կամ դրանք խորացնող գործոն:

ՄԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Սեռական բռնությունը կանանց նկատմամբ բռնության շատ լուրջ տեսակ է, որը ներառում է գործողությունների ծավալուն շարք, և որն իր վատթարագույն ձևերով ունի երկարաժամկետ և հեռահար դաժան հետևանքներ ֆիզիկական, մտավոր, սեռական և վերարտադրողական առողջության վրա: Սեռական բռնության շատ օգտակար սահմանում է տրամադրել ԱՀԿ-ն իր 2002թ. *Բռնությունների և առողջության հարցերով համաշխարհային զեկույցում*: Այդ սահմանման համաձայն՝ սեռական բռնություն է համարվում «որևէ անձի կողմից ... որևէ միջավայրում բռնության գործադրմամբ սեռական ցանկացած գործողությունը, սեռական հարաբերություն ունենալու փորձը, անցանկալի սեռական մեկնաբանությունները կամ ոտնձգությունները կամ թրաֆիքինգի ենթարկելը կամ անձի սեռականության դեմ ուղղված որևէ այլ գործողություն»⁴⁹: Կարևոր է, որ այսպես մեկնաբանվելով, սեռական բռնությունը նաև ներառում է սեռական ոտնձգությունը, թեկուզև անուղղակիորեն: Այս սահմանումն օգտակար է եղել քննարկումները և օրենսդրական միջոցառումները կամրջելու և ավելի կառուցողական, իմաստալի և արդյունավետ արդյունքների հասնելու առումով:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի զեկույցում ներկայացված են տարբեր համատեքստեր, որոնցում կանայք կարող են սեռական բռնության ենթարկվել: Զեկույցում ձևակերպվել է կանանց նկատմամբ սեռական բռնության գործառական սահմանում. «Սեռական բռնությունը ներառում է վիրավորական բռնի սեռական կապ, որը կնոջը ստիպում է զբաղվել սեռական գործողություններով իր կամքին հակառակ, ինչպես նաև հիվանդ, հաշմանդամ, ճնշման տակ կամ ոգելից խմիչքի կամ այլ թմրամիջոցների ազդեցության տակ գտնվող կնոջ հետ սեռական հարաբերություն ունենալու փորձը կամ սեռական հարաբերությունը»⁵⁰:

ԱՀԿ, PATH զեկույցն ավելի խորն է ուսումնասիրել հարկադրանքի հիմքում ընկած գաղափարը և ընդգծել սեռական զուգընկերոջ կողմից սեռական բռնությունը, ներառյալ նվաստացնող գոր-

⁴⁹ Բռնությունների և առողջության հարցերով համաշխարհային զեկույց: Ժնև, ԱՀԿ, 2002թ., էջ 149:
⁵⁰ Կանանց նկատմամբ բռնության վերացումը: ՄԱԿ ԳՔ հետազոտություն, էջ 43:

ծողությունները: «Հարկադրանքի չափանիշն այն է, որ կինը չունի ընտրություն և բախվում է դաժան ֆիզիկական, սոցիալական կամ տնտեսական հետևանքների, եթե ընդդիմանում է սեռական ոտնձգություններին ... [Շ]ատ փոխադարձ չհամաձայնեցված սեռական հարաբերություններ են տեղի ունենում համաձայնեցված միությունների ներսում, այդ թվում՝ կինը ստիպողական սեռական հարաբերություն է ունենում, երբ ինքը դա չի ցանկանում, կամ ընդգրկվում է սեռական բնույթի գործողություններում, որոնք իր կարծիքով արժանապատվությունը վիրավորող կամ նվաստացնող են»⁵¹:

Թերևս սեռական բռնությունը բռնության վատթարագույն տեսակն է, քանի որ հանգեցնում է մարմնի ամբողջականության և անձի արժանապատվության ոտնահարման, ներառյալ՝ նվաստացնող կամ ստորացնող վերաբերմունքի, և քանի որ անխուսափելիորեն պատճառում է երկարաժամկետ հոգեբանական վնասներ և խեղումներ: Չնայած որ ամենայն հավանականությամբ սեռական բռնությունն ամենացավալի փորձառությունն է կանանց համար, այն միաժամանակ բռնության մի տեսակ է, որի մասին նրանք ամենաքիչն են տրամադրված խոսել :

Սույն հետազոտությունն անդրադարձել է սեռական զուգընկերոջ կողմից կանանց նկատմամբ սեռական բռնությանը: Հետազոտության հարցաշարը, որը բազմաթիվ երկրների բնակչության վրա հիմնված փոխհատվող հետազոտությունների համար ԱՀԿ-ի մշակած հարցաշարին է հիմնված, անդրադարձել է կանանց նկատմամբ սեռական զուգընկերոջ կողմից իրականացված սեռական բռնության ընդամենը երեք ձևերին: Դրանք են՝ (ա) ֆիզիկապես կնոջը ստիպել սեռական հարաբերություն ունենալ նրա կամքին հակառակ, (բ) նույնիսկ իր կամքին հակառակ երբևէ սեռական հարաբերություն ունենալ՝ վախենալով զուգընկերոջ հնարավոր արձագանքից (գ) կնոջը ստիպել սեռական բնույթի որևէ գործողություն կատարել, որը նրա կարծիքով արժանապատվությունը ստորացնող կամ նսեմացնող է: Այսպիսով, սույն հետազոտության մեջ սեռական բռնությունը շատ սահմանափակ է ուսումնասիրվել: Սակայն իրենց բնույթով այս ձևերը բավականին ընդգրկուն են և ներառում, անփոփոմ կամ արտացոլում են մեծ թվով միևնույն բնույթի գործողություններ: Այսպիսով, ինչ-որ առումով կարելի է համարել, որ դրանք սեռական բռնության գործողությունների առավել ընդգրկուն խումբ են ներկայացնում: Բացի այդ, ներկայացնելով սեռական բռնության չափավորից դաժան ձևերը՝ սեռական զուգընկերոջ կողմից բռնության առումով, դրանք նաև ինքնըստինքյան ընդգրկում են բոլոր մեղմ ձևերը: Այս մոտեցման թերություններից մեկն այն է, որ հնարավոր չէ համոզվել, թե արդյո՞ք որևէ (ուղիղ կամ հակադարձ) փոխկապակցվածություն կա *սեռական բռնության տարածվածության* և *գործողության դաժանության միջև*:

Աղյուսակներ 2.11 և 2.12-ում ներկայացված տվյալներից կարող է թվալ, որ կանանց նկատմամբ սեռական բռնությունը Հայաստանում տարածված երևույթ չէ: Այսպիսով, հարցմանը մասնակցած երբևէ զուգընկեր ունեցած կանանց միայն 3.2%-ն է նշել, որ երբևէ զուգընկերոջ կողմից ենթարկվել է սեռական բռնության վերոնշյալ ձևերից որևէ մեկին: Չնայած որ իսկապես սեռական բռնությունն ավելի քիչ է տարածված՝ հոգեբանական և նույնիսկ ֆիզիկական բռնության համեմատությամբ, այն հազիվ թե հազվադեպ երևույթ լինի երկրում՝ նկատի առնելով ավանդական սոցիալական և մշակութային նորմերի և արժեքների քայքայմամբ ուղեկցվող ընդհանուր հասարակական համատեքստը և անհանգիստ, երբեմն անկայուն իրականությունը, անցումային ժամանակաշրջանը:

Քանի որ առկա փաստերն աղճատված են և ավելի հաճախ հիմնված են փորձագետների կարծիքների և հաշվարկների, պատահական փաստերի, ասեկոսենների և սահմանափակ մասշտաբի այլ հետազոտությունների, քան հստակ տվյալների վրա, թվում է՝ երևույթի մասին բավարար տեղեկություններ չկան, մասնավորապես երբ խոսքը վերաբերում է սեռական զուգընկերոջ կողմից բռնություններին: Սրա հիմնական պատճառներից մեկը ճնշամիջոցների և կրկին բռնության զոհ դառնալու վախն է: Մեկ այլ հիմնական պատճառ կարող է լինել այն, որ կանայք գիտեն, որ ամենայն հավանականությամբ կբախվեն սոցիալական պարսավանքի՝ կարեկցանքի հանդիպելու փոխարեն, եթե բացահայտեն իրենց սեռական, մասնավորապես սեռական փոխհարաբերությունների մանրամասները և եթե բողոքեն իրենց ամուսնու ոչ ողջունելի գործողություններից: Ուստի նրանք չեն

⁵¹ ԱՀԿ, PATH, 2005թ., էջ 17:

ուզում, որպեսզի իրենց տրավմաներին գումարվի նաև ծանոթ վիրավորանքը, որն այս դեպքում կարող է վերածվել սոցիալական խարանի: Հաջորդ մեծ պատճառն իրազեկության ցածր մակարդակն է և ընդհանուր առմամբ հասարակությունում բնականոն սեռական հարաբերությունների և իրավական կրթության պակասը: Կարող է թվալ, թե մարդիկ հիմնականում անկեղծ հավատում են, որ ամուսինը պետք է ակնկալի կնոջ լրիվ գիջողականությունը և որ «լավ» կինը պարտավոր է ծառայություններ մատուցել: Այս մտածելակերպը հասարակության լայն հատվածներին չի պատկանում, բայց հստակ արտացոլվում է ներպետական օրենսդրության մեջ: Այսպիսով, համաձայնեցված միությունների փոխհարաբերությունները կարգավորող օրենքները (հատկապես Ընտանեկան օրենսգիրքը) չի կիրառում «չհամաձայնեցված սեռական հարաբերությունների» գաղափարը նրանց նկատմամբ: Ամուսնական բռնաբարությունը նույնպես ներառված չէ երկրի Քրեական օրենսգրքում (կամ այս խնդրին առնչվող ցանկացած այլ օրենքում): Դրան չեն վերաբերվում որպես հանցագործություն, այնպես որ այն քրեականացված չէ և բռնաբարներին հնարավոր չէ դատական կարգով պատասխանատվության կանչել:

Սակավաթիվ կանայք են դիմում և բաց խոսում շահագրգիռ պետական գործակալությունների, ոչ կառավարական կազմակերպությունների կամ գիտնականների հետ, եթե երբևէ դիմում կամ խոսում են: Սա այնպիսի տեղեկատվություն է, որ հարցվողներն առավել դժկամությամբ են բացահայտում: Այս հետազոտությունը բացառություն չէ: Հիմքում ընկած պատճառները պարզ են: Դրանցից կարելի է նշել մի քանիսը՝ խնդրի նուրբ բնույթը, արմատացած կանխակալ վերաբերմունքը, մեղքի և ամոթի ավանդապաշտական ընկալումները և «վայելչության» նորմերը, ինչպես նաև հարցման ձևաչափը (դեմ առ դեմ հարցազրույցներ): Այն բացառում է անանունությունը և մեծապես հենվում վստահությանն ու փոխադարձ լավ հարաբերությունների վրա, որոնք ամեն դեպքում հազվագյուտ երևույթներ են և որոնց դժվար է հանդիպել հատկապես մեր օրերում:

Աղյուսակ 2.11. Սեռական գույքը կողմից կնոջ նկատմամբ սեռական բռնության տարածվածությունը

Սեռական գույքը կողմից երբևէ սեռական բռնության ենթարկված 15-59 տարեկան երբևէ գույքը ունեցած կանանց մասնաբաժինն ըստ կենսագրական բնութագրիչների (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Այո	Ոչ	Ընդամենը, %	Կանանց թիվը (երբևէ գույքը ունեցած)
Տարիք	15-24	1.7	98.3	100	107
	15-19	3
	20-24	1.7	98.3	100	104
	25-34	2.3	97.7	100	451
	35-44	5.7	94.3	100	656
	45-59	2.6	97.4	100	1,153
Բնակության վայր	Քաղաքային	2.8	97.2	100	1,710
	Երևան	2.6	97.4	100	668
	Այլ քաղաքային	2.9	97.1	100	1,042
	Գյուղական	4.7	95.3	100	657
Ամուսնական կարգավիճակ	Ներկայումս ամուսնացած	3.0	97.0	100	2,082
	Նախկինում ամուսնացած	5.7	94.3	100	285
Կնոջ երեխաների թիվը	0	2.9	97.1	100	88
	1-2	3.0	97.0	100	1,495
	3+	4.1	95.9	100	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	4
	Ընդհանուր տարրական	7.7	92.3	100	101
	Ընդհանուր միջնակարգ	3.6	96.4	100	962
	Միջին մասնագիտական	2.7	97.3	100	823
	Բարձրագույն	2.9	97.1	100	477
Զբաղվածություն	Չաշխատող	2.5	97.5	100	1,467
	Աշխատող	3.3	96.7	100	742
	Սեզոնային աշխատանք	12.0	88.0	100	143
	Այլ	15
Ընդամենը		3.3%	96.7%	100%	2,367

Այս հանգամանքներում զարմանալի չէ, որ ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 2.11-ում ամփոփված տվյալները, նախկինում գույքը ունեցած և հարցմանը մասնակցած կանանց միայն 3.3%-ն է հաղորդել, որ ենթարկվել է սեռական բռնության առնվազն մեկ ձևի: Աղյուսակ 2.12-ը տվյալներ է տրամադրում ոչ միայն ըստ հարցվողների կենսագրական բնութագրիչների, այլև՝ վերոնշյալ սեռական բռնության երեք ձևերի: Այսպես, ընտրանքում ընդգրկված և երբևէ գույքը ունեցած կանանց միայն 3.0%-ն է ընդունել, որ իր սեռական գույքը ֆիզիկապես ստիպել է իրեն սեռական հարաբերություն ունենալ, երբ նա չի ցանկացել, 1.7%-ը խոստովանել է, որ սեռական հարաբերություն է ունեցել իր կամքին հակառակ, որովհետև վախեցել է, թե ինչ կանի գույքը, և շատ չնչին՝ 0.8%-ը խոստովանել է, որ սեռական գույքը իրեն ստիպել է կատարել սեռական բնույթի որևէ գործողություն, որն իր կարծիքով ստորացնող կամ նսեմացնող էր:

Միևնույն ժամանակ հնարավոր է, որ սեռական բռնությունն իսկապես ցուցակում վերջին տեղն է գրավում ըստ իր տարածվածության՝ հոգեբանական բռնությունից և վերահսկողական վարքագծից,

ինչպես նաև (ավելի պակաս չափով) ֆիզիկական բռնությունից հետո:

Աղյուսակ 2.12. Սեռական զուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ սեռական բռնության տարածվածությունը

Սեռական զուգրնկերոջ կողմից սեռական բռնության մեկ կամ մի քանի ձևերի ենթարկված երբևէ զուգրնկեր ունեցած 15-59 տարեկան կանանց մասնաբաժինն ըստ կենսագրական բնութագրիչների (“...” 25-ից պակաս ղեկաբերի համար):

		Ձեր ներկայիս ամուսինը/զուգրնկերը կամ որևէ այլ սոցալմարդ երբևէ ֆիզիկապես ստիպել է Ձեզ սեռական հարաբերություն ունենալ, երբ դուք չեք ուզել	Դուք երբևէ սեռական հարաբերություն ունեցել եք, երբ ինքնորոշվելու չեք ուզել, որովհետև վախեցել եք, թե ինչ կանի Ձեր զուգրնկերը կամ որևէ այլ զուգրնկեր	Ձեր զուգրնկերը կամ որևէ այլ սոցալմարդ երբևէ ստիպել է Ձեզ որևէ սեռական բնույթի բան անել, որը Ձեր կարծիքով ստորացնող կամ նսեմացնող էր	Նշված պատճառներից առնվազն մեկին դրական պատասխանողների տոկոսը	Կանանց թիվը (երբևէ զուգրնկեր ունեցած)
Տարիք	15-24	0.7	1.7	0.0	1.7	107
	15-19	3
	20-24	0.7	1.7	0.0	1.7	104
	25-34	2.3	1.3	0.8	2.3	451
	35-44	5.3	2.7	2.0	5.7	656
	45-59	2.3	1.4	0.3	2.6	1,153
Բնակության վայր	Քաղաքային	2.5	1.8	0.8	2.8	1,710
	Երևան	2.0	1.8	0.9	2.6	668
	Այլ քաղաքային	2.8	1.7	0.8	2.9	1,042
	Գյուղական	4.5	1.7	0.8	4.7	657
Ամուսնական կարգավիճակ	Ներկայումս ամուսնացած	2.8	1.4	0.7	3.0	2,082
	Նախկինում ամուսնացած	4.6	4.1	1.7	5.7	285
Կենդանի երեխաների թիվը	0	2.9	2.9	1.6	2.9	88
	1-2	2.7	1.4	0.8	3.0	1,495
	3+	3.8	2.2	0.7	4.1	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	4
	Ընդհանուր տարրական	7.7	3.2	0.0	7.7	101
	Ընդհանուր միջնակարգ	3.1	1.8	0.9	3.6	962
	Միջին մասնագիտական	2.5	1.1	0.5	2.7	823
	Բարձրագույն	2.9	2.4	1.5	2.9	477
Զբաղվածություն	Չաշխատող	2.2	1.4	0.4	2.5	1,467
	Աշխատող	3.0	2.3	1.6	3.3	742
	Սեզոնային աշխատանք	12.0	2.3	1.6	12.0	143
	Այլ	15
Ընդամենը		3.0%	1.7%	0.8%	3.3%	2,367

Ինչպես բռնության մյուս տեսակների դեպքում, կրթությունը և տարիքը կարևոր և որոշ չափով նաև սեռական բռնությունը կանխորոշող գործոններ են, հատկապես երբ հաշվի են առնվում բոլոր տվյալները: Սեռական բռնության և զոհերի *կրթական մակարդակի* միջև հակադարձ փոխկապակցվածությունը գրեթե միանշանակ է: Աղյուսակ 2.11-ը հստակ ցույց է տալիս, որ երբևէ զուգընկեր ունեցած զոհերի շրջանում ցուցանիշը տարրական կրթությամբ կանանց շրջանում գրանցված 7.7%-ից կտրուկ ընկնում է մինչև 3.6%՝ ընդհանուր միջնակարգ կրթության դեպքում, և հասնում է 2.7%-ի՝ միջին մասնագիտական կրթության դեպքում, և փոքր-ինչ ավելի բարձրանալով (2.9%) բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում՝ նախորդ խմբի համեմատությամբ: Սակայն իրավիճակն այնքան էլ հստակ չէ, երբ տվյալները բաշխվում են ըստ առանձին ձևերի (տե՛ս Աղյուսակ 2.12), չնայած տատանումները չնչին են:

Տարիքի գործոնն առավել միատեսակ է, քան կրթական ցենզը: Միտումը կրկնում է հոգեբանական և ֆիզիկական բռնությունների դեպքում բացահայտված օրինաչափությունը: *De facto* չհամաձայնեցված սեռական հարաբերությունների բոլոր ձևերը միասին վերցրած, 15-24, 25-34 և 35-44 տարիքային խմբերում գրանցված կտրուկ աճը (համապատասխանաբար՝ 1.7%, 2.3% և 5.7%) այնուհետև նվազում է վերջին (45-59 տարեկանների) խմբում մինչև 2.6%: Սակայն առանձին ձևերի համար հաշվարկված տվյալները բացահայտում են վերոնշյալ միտվածության որոշ տատանումներ: Այսպիսով, տարիքային խմբի հետ կապված չնչին տարբերություններ կան այն կանանց շրջանում, ովքեր իրենց կամքին հակառակ երբևէ սեռական հարաբերություն են ունեցել, քանի որ վախեցել են, թե ինչ կանի զուգընկերը:

Հարցման տվյալները մատնանշում են, որ *գրադվածությունը* չի ազդում սեռական բռնության տարածվածության վրա (տարբերությունը կազմում է 0.8%-ից 1.29% բոլոր հարցվողների շրջանում), բացառությամբ այն կանանց, ովքեր սեզոնային աշխատանքով են զբաղվում: Բացառությունը չնայած գործնականում սահմանափակվում է սեռական բռնության մեկ տեսակով (կնոջը ստիպել է սեռական հարաբերություն ունենալ, երբ նա չի ցանկացել):

Նմանապես *բնակության վայրի* գործոնը դրսևորվում է միայն սեռական բռնության մեկ տեսակի (վերոնշյալ) դեպքում, իսկ ընդհանուր տվյալներում՝ նույնիսկ ավելի չափավոր: Այսպիսով, երբևէ ստիպողական սեռական հարաբերություն ունեցած կանանց մասնաբաժինն ամենափոքրն է Երևանի բնակիչների (2.0%) և ամենամեծը՝ գյուղաբնակների շրջանում (4.5%), իսկ Երևանից դուրս այլ քաղաքաբնակների համար այն կազմում է 2.8%: Երբևէ սեռական բռնության ենթարկված կանանց մասնաբաժիններն այս ենթախմբերի հարցվողների համար համապատասխանաբար կազմում են 2.6%, 4.7% և 2.9%:

Ինչ վերաբերում է *երեխաների թվին*, ապա սա էական գործոն չէ սեռական զուգընկերոջ կողմից սեռական բռնության պարագայում, ինչի մասին է վկայում Աղյուսակներ 2.11 և 2.12-ում արտացոլված օրինաչափությունը: Եթե երբևէ բռնության ենթարկված կանանց տոկոսը 1 կամ 2 երեխա ունեցողների շրջանում ընդհանուր առմամբ նույնն է (\approx 3.0%) (և առանձին ձևերի համար նույնիսկ ավելի ցածր), ինչ որ երեխա չունեցող կանանց դեպքում (այստեղ այն տատանվում է 0.2%-1.5%), ապա 3 և ավելի երեխա ունեցող կանանց տոկոսն ավելի բարձր է (4.1%): Եթե երեխա ունենալը կարևոր գործոն լիներ, ապա տոկոսը համաչափ կաճեր կամ կնվազեր, ինչը տվյալ դեպքում չի դիտվում:

Սեռական զուգընկերոջ կողմից սեռական բռնությանը վերաբերող արդյունքները նաև հիմնավորում են այն եզրակացությունը, որ կայացվել էր ավելի վաղ՝ ներկայիս «ամուսնական կարգավիճակը» սեռական զուգընկերոջ կողմից գործադրվող բռնության բոլոր ձևերի լավագույն կանխորոշիչ գործոնն է (տվյալ դեպքում սա վերաբերում է չհամաձայնեցված սեռական հարաբերություններին): Սեռական բռնության մասին հաղորդող կանանց տոկոսային մասնաբաժինը 1.9 անգամ ավելի փոքր է ընդհանուր տարածվածության (և 1.6-2.9 անգամ ավելի փոքր՝ առանձին ձևերի տարածվածության) դեպքում այն կանանց շրջանում, ովքեր ներկայումս սեռական զուգընկեր ունեն՝ ի տարբերություն նրանց, ովքեր զուգընկեր են ունեցել նախկինում, իսկ ներկայումս չունեն:

Հետազոտության մատչելի արդյունքները հնարավորություն են տալիս որոշել սեռական զուգընկերոջ կողմից սեռական բռնության հաճախականությունը միայն հետազոտությանը նախորդող 12 ամիսներից առաջ ընկած ժամանակահատվածում և միայն բռնության երկու ձևերի առնչությամբ: Հոգեբանական և ֆիզիկական բռնության նման, սեռական բռնությունը նույնպես սեռական փոխհարաբերություններում հազվադեպ երևույթ չէ: Աղյուսակ 2.13-ում ամփոփված տվյալները ցույց են տալիս, որ միևնույն կանայք սեռական բռնության են ենթարկվում մեկից ավելի անգամ: Խնդրո առարկա ժամանակահատվածում կանանց 88.12%-95.2%-ը ստիպողական որևէ տեսակի չհամաձայնեցված սեռական հարաբերություն է ունեցել «մի քանի անգամ» կամ «շատ անգամ»:

Աղյուսակ 2.13. Սեռական զուգընկերոջ կողմից սեռական բռնության ենթարկվելու հաճախականությունն անցած 12 ամիսներից առաջ

Հետազոտությանը նախորդած 12 ամիսներից առաջ սեռական զուգընկերոջ կողմից սեռական բռնության ենթարկված 15-59 տարեկան կանանց մասնաբաժինը, ովքեր նշել են, որ սա պատահել է մեկ, մի քանի կամ շատ անգամ (“I” 25-49 դեպքերի համար):

Վերջին 12 ամիսներից առաջ					
Կանանց թիվը	Կանայք, որոնց սեռական զուգընկերը	Մեկ անգամ	Մի քանի անգամ	Շատ անգամ	Ընդամենը, %
47	Ֆիզիկապես ստիպել է նրան սեռական հարաբերություն ունենալ, երբ նա չի ցանկացել	[11.9%]	[63.4%]	[24.7%]	100.0%
34	Սեռական հարաբերություն է ունեցել կնոջ հետ, երբ նա չի ցանկացել, որովհետև վախեցել է, թե ինչ կանի զուգընկերը	[7.5%]	[73.7%]	[18.8%]	100.0%

Այսպիսով, թե՛ տարածվածության և թե՛ հաճախականության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ եթե սեռական զուգընկերոջ կողմից սեռական բռնությունը խնդիր է, այն միևնույն է՝ հասարակության համար մտում է հիմնականում կոծկված և անտեսանելի, քանի որ շատ կանայք նախընտրում են լռել և չբացահայտել փաստերը: Դրա համար նրանք ունեն բազմաթիվ պատճառներ: Ավելի նպատակաուղղված և համապատասխանաբար մշակված հետազոտություններ են անհրաժեշտ՝ հետազոտելու և բացահայտելու այն երևույթը, թե ինչպես են կանայք հաշտվում այս խնդրի հետ կամ ինչ լուծումներ են գտնում (եթե լուծումներ գտնում են), և ինչպես ու ինչ չափով են կարող սոցիալական և պետական այլ քաղաքականությունները փոխել իրավիճակը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց կողմից խնդրի ընկալումը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՆՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ աշխարհում կատարված հետազոտությունների տվյալները հակված են մատնանշելու, որ սեռական զուգընկերոջ կողմից բռնության կիրառման դեպքում այն հազվադեպ է սահմանափակվում միայն մեկ ձևով: Դրանց համատեղելիությունը որոշ փոխհարաբերություններում տարօրինակ չէ, հատկապես երբ խոսքը վերաբերում է սեռական և ֆիզիկական բռնություններին: Բռնության այս երկու տեսակների զուգորդումը կարևոր է նաև այն պատճառով, որ կանայք, «ովքեր զուգընկերոջ կողմից ենթարկվում են թե՛ ֆիզիկական և թե՛ սեռական բռնության, ենթակա են առողջական խնդիրներ ունենալու ավելի մեծ ռիսկի, քան նրանք, ովքեր ենթարկվում են միայն ֆիզիկական բռնության»⁵²:

Ինչպես ցույց են տալիս տարբեր երկրներում կատարված հետազոտությունները, Էական փոխհատում կա սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական և սեռական բռնությունների միջև⁵³:


Սակայն, չնայած որ հիմքեր կան համարելու, որ բռնության յուրաքանչյուր կատեգորիա կարող է

⁵² Բռնությունների և առողջության հարցերով համաշխարհային զեկույց: Քրուզ Է.Գ. ևն., խմբ. Ժնև, ԱՀԿ, 2002թ., էջ 163:
⁵³ Գարսիա-Մորենտ, Կ. ևն., *Բազմաթիվ երկրների հիմնական վրա կանանց առողջության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ԱՀԿ-ի հետազոտություն. տարածվածության, առողջության վրա հետևանքների և կանանց արձագանքների վերաբերյալ նախնական տվյալներ*: Ժնև, ԱՀԿ, 2005թ., էջ 32:

դառնալ նպաստավոր կամ խթանող գործոն (քանի որ ագրեսիվ վարքագիծը դառնում է օրինաչափություն, այն հակում ունի տարածվելու, անցնելու և «լցվելու» այլ ոլորտներ) և ունենալ լրացուցիչ, կուտակվող և/կամ ամրապնդվող ազդեցություն, այնուամենայնիվ սա կոշտ կանոն չէ, և այս երևույթի սահմանները զգալիորեն տատանվում են՝ կախված երկրից և մշակույթից: Այսպիսով, համոզիչ ապացույցներ կան, որ եթե Հյուսիսային և Կենտրոնական Ամերիկայում սեռական բռնությունը սովորաբար զուգորդվում է ֆիզիկական և հոգեբանական բռնության հետ, ապա Թաիլանդում, Բանգլադեշում և Եթովպիայում դա այդպես չէ⁵⁴:

Ուստի, հետաքրքիր կլինի տեսնել, թե Հայաստանն ինչ դիրքում է այս առումով: Առկա փաստերը կարծես թե ցույց են տալիս, որ սեռական բռնությունը սովորաբար զուգորդվում է ֆիզիկական բռնությամբ: Համաձայն հետազոտության տվյալների, ըստ էության, սեռական բռնության ենթարկված հինգ կանանցից չորսը ենթարկվում են նաև ֆիզիկական բռնության: Սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական և սեռական բռնության կյանքի ընթացքում տարածվածության տվյալները ներկայացված են Գծապատկեր 2.1-ում:

Գծապատկեր 2.1. Երբևէ զուգընկեր ունեցած կանանց շրջանում զուգընկերոջ կողմից սեռական և ֆիզիկական բռնության տարածվածությունը կյանքի ընթացքում




- Սեռական զուգընկերոջ կողմից սեռական բռնության ենթարկված երբևէ զուգընկեր ունեցած կանանց մասնաբաժինը,
- Սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված երբևէ զուգընկեր ունեցած կանանց մասնաբաժինը,
- Սեռական զուգընկերոջ կողմից սեռական և ֆիզիկական բռնության ենթարկված երբևէ զուգընկեր ունեցած կանանց մասնաբաժինը,
- Սեռական զուգընկերոջ կողմից սեռական կամ ֆիզիկական բռնության ենթարկված երբևէ զուգընկեր ունեցած կանանց մասնաբաժինը:

Ավելի համապարփակ պատկեր կարելի է ստանալ, երբ կյանքի ընթացքում տարածվածության տվյալները բաշխվում են ըստ բռնության առանձին կատեգորիաների (օրինակ՝ «միայն ֆիզիկական բռնություն» և «միայն սեռական բռնություն»): Այդ դեպքում արդյունքները հստակ ցույց են տալիս, որ չնայած սեռական և ֆիզիկական բռնությունները պարտադիր չէ, որ միաժամանակ գործադրվեն, այնուամենայնիվ, սեռական կամ ֆիզիկական բռնության զոհ դարձած յուրաքանչյուր չորս կանանցից մեկը եղել է *թե՛ ֆիզիկական և թե՛ սեռական* բռնության զոհ: Այս եզրակացությունը բխում է Գծապատկեր 2.2-ից:

⁵⁴ Էլբերգ Մ. և Հեյզ Լ., *Ուսումնասիրելով կանանց նկատմամբ բռնությունը. գործնական ուղեցույց հեղափոխողների և իրավապաշտպանների համար*: Վաշինգտոն, ԱՀԿ, PATH, 2005թ., էջ 16:

Գծապատկեր 2.2. Երբևէ սեռական և/կամ ֆիզիկական բռնության ենթարկված կանանց շրջանում միայն սեռական, միայն ֆիզիկական և սեռական ու ֆիզիկական բռնության տարածվածությունը կյանքի ընթացքում



- Երբևէ բռնության ենթարկված կանանց մասնաբաժինը, ովքեր իրենց սեռական զուգընկերոջ կողմից ենթարկվել են միայն սեռական բռնության,
- Երբևէ բռնության ենթարկված կանանց մասնաբաժինը, ովքեր իրենց սեռական զուգընկերոջ կողմից ենթարկվել են միայն ֆիզիկական բռնության,
- Երբևէ բռնության ենթարկված կանանց մասնաբաժինը, ովքեր իրենց սեռական զուգընկերոջ կողմից ենթարկվել են սեռական ու ֆիզիկական բռնության:

Տվյալները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հինգերորդ կինը, ով ենթարկվել է ֆիզիկական բռնության, նաև սեռական բռնության զոհ է դարձել: Այս եզրակացությունը նաև հիմնավորվում է մեկ այլ հարցի (Տես՝ հարցաշարի թիվ 903 հարցը) պատասխաններով, ըստ որի սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված կանանց առնվազն 20%-ը նաև ստիպողական սեռական հարաբերություն է ունեցել նրա հետ:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ վերջին հինգ տասնամյակների ընթացքում հայ հասարակությունը բախվել է երևույթների, որոնք ավելի վաղ գրեթե գոյություն չեն ունեցել և որոնք, ինչպես հայտնի է, էապես նպաստում են այն մտածողության ձևավորմանը, որը կանանց նկատմամբ ֆիզիկական և սեռական բռնությանը վերաբերվում է որպես թույլատրելի երևույթի: Դրանք են պոռնկությունը, թրաֆիքինգը և պոռնկագրությունը:

Հայաստանում, ինչպես և շատ հետխորհրդային երկրներում, գրանցվել է կանանց պոռնկության և թրաֆիքինգի, ինչպես նաև պոռնկագրական տեսանյութերի եթե ոչ արտադրության, ապա (առնվազն այն, ինչ համարվում է «էրոտիկ») տարածման աննախադեպ աճ՝ հեռուստատեսությամբ, DVD-ների միջոցով, տպագիր մամուլով, հատուկ հրատարակություններով և, հատկապես, ինտերնետով: Այս նյութերն անհատնում են և, ըստ էության, հասանելի բոլորին՝ նույնիսկ երեխաներին և անչափահասներին: Ակնհայտ սեռական բնույթի նյութերը, հատկապես կանանց սեռական շահագործման պատկերները և կանանց որպես սեքս-առարկա պատկերելը (ինչը հաճախ է հանդիպում նման նյութերում), տարածվում են և սովորաբար գրաքննության չեն ենթարկվում: Սա պետք է որոշակի լուրջ մտահոգության առարկա լինի, քանի որ, ինչպես շեշտվել է Պեկինյան գործողությունների ծրագրում, դրանք «գործոններ են, որոնք նպաստում են այնպիսի բռնության շարունակական տարածմանը, որը վատ ազդեցություն է ունենում լայն հասարակության և մասնավորապես երեխաների և երիտասարդների վրա»⁵⁵:

Մինչ այդ նյութերը ձևավորում և հավերժացնում են կարծրատիպային վերաբերմունքը կանանց նվաստացման ընկալումներում, ինչի արդյունքում գերշեշտվում է նրանց ստորակա դիրքը, դրանք նաև տարածում են այն գաղափարը, որ կանայք իրականում դրանից հաճույք են ստանում: Ի հա-

⁵⁵ Պեկինյան գործողությունների ծրագիր, պարբերություն 118 (էջ 75):


վելումն լրատվամիջոցների, դրանք հազվագյուտ երևույթներ չեն որոշ փոփ-մշակույթի հատվածներում, որոնք ամեն օր գրավում են անչափահաս և երիտասարդ ակտիվներին: Կարելի է ակնկալել, որ այդ վերաբերմունքի և ընկալումների յուրացումը նպաստում է կանանց նկատմամբ ֆիզիկական և սեռական բռնությանը, այդ թվում նաև սեռական հարաբերությունների համատեքստում:

ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ ԵՎ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկական և սեռական բռնության միջև փոխկապակցվածությունը (եթե այդպիսին կա) պարզելու նպատակով, ընտրանքում ընդգրկված կանանց, ովքեր երբևէ ենթարկվել են ֆիզիկական բռնության սեռական զուգընկերոջ կողմից, հարց էր առաջադրվել, թե արդյո՞ք այդ բռնությունը զուգորդվել կամ հաջորդվել էր ստիպողական սեռական հարաբերությամբ: Ինչպես ցույց են տալիս Գծապատկեր 2.3-ի տվյալները, եթե հարցվողների գրեթե երկու երրորդը պատասխանել է, որ նման դեպք չի եղել, մնացած մեկ երրորդն ունեցել է նման փորձառություն կամ մոռացել է կամ նախընտրում է մոռանալ դրա մասին: Ամեն դեպքում, հարցվողների 18.7%-ը հաստատ ենթարկվել է ֆիզիկական և սեռական բռնությունների՝ զուգորդվող կամ անմիջապես հաջորդվող դեպքերով: Միայն 7.3%-ն է դրանց մասին հաղորդել որպես առանձին դիպվածների, որոնք տեղի են ունեցել մեկ կամ երկու անգամ, մինչդեռ 11.4%-ը նշել է, որ դրանք անսովոր դեպքեր չեն եղել և տեղի են ունեցել մի քանի կամ շատ անգամ կամ նույնիսկ գրեթե միշտ:

Գծապատկեր 2.3 Սեռական զուգընկերոջ կողմից ստիպողական սեռական հարաբերության տարածվածությունը բռնության դեպքի ժամանակ կամ դեպքից հետո

Սեռական զուգընկերոջ կողմից երբևէ ֆիզիկական բռնության ենթարկված 15-59 տարեկան կանանց (226 կին) մասնաբաժինը, ովքեր երբևէ ստիպված են եղել (կամ ոչ) նրա հետ սեռական հարաբերություն ունենալ բռնության դեպքի ժամանակ կամ դեպքից հետո:



Ինչպես նշվեց ավելի վաղ, չհամաձայնեցված սեռական հարաբերության և ամուսնական բռնաբարության հասկացությունները դեռ խորթ են հայ հասարակության շրջանում գերակշռող մտածելակերպին և երկրի օրենսդրությանը: Մի կողմից իրավական պաշտպանության բացակայությունը, իսկ մյուս կողմից՝ կանանց իրազեկության ցածր մակարդակը կարող են ինչ-որ չափով բացատրել սեռական բռնության մասին տվյալների բացահայտման ցածր մակարդակը (երբ այն չի ընկալվում որպես այդպիսին), նույնիսկ ֆիզիկական բռնությամբ վատթարացած լինելու դեպքում: Ընտրանքում ընդգրկված երբևէ զուգընկեր ունեցած կանանց շրջանում ֆիզիկական բռնությամբ վատթարացված սեռական բռնության ենթարկվածների մասնաբաժինը 2%-ից փոքր է եղել:

ՍԵՌԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԴՐԵԼԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ֆիզիկական բռնության հիմքում ընկած պատճառները քննարկելիս «զգուշություն» բառը տեղին չէ: Հիմնականում հետազոտություններն արտացոլել են նշված այն պատճառները կամ պատճառը, որ հարցվողները «կարդացել» են այլոց գործողություններում: Երկու դեպքում էլ թյուրմեկնաբանման շատ տեղ կա, և սխալի միջակայքը կարող է տատանվել լայն սահմաններում՝ թեկուզև ոչ որոշակի:

Այս հետազոտության շրջանակներում փորձ է արվել՝ ստուգելու, թե հարցվողի տեսանկյունից ինչպիսի իրավիճակներ են հանգեցրել զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության:

Աղյուսակ 2.14-ում ամփոփված տվյալները ներկայացնում են հետևյալ պատկերը: Առաջին, հարցվողների գրեթե կեսը մատնանշել է, որ սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկվելու հատուկ պատճառ չի եղել: Սա նշանակում է, *inter alia*, որ այդ կանայք կամ չեն հիշում, թե ինչ պատճառով են տեղի ունեցել դեպքերը, կամ չեն հարցրել զուգընկերոջը, կամ զուգընկերը որևէ բացատրություն չի տվել իր բռնի վարքագծի համար: Մեկ այլ հնարավոր տարբերակ է, որ երբեմն իսկապես որևէ, անգամ չնչին պատճառ չի եղել: Բռնի փոխհարաբերություններում այնքան էլ հազվագյուտ երևույթ չէ, երբ ի հայտ է գալիս բռնության օրինաչափություն, որը կարող է պարտադիր «վավերական» պատճառ չպահանջել բռնության համար:

Տվյալներից նաև կարող է բխել մեկ այլ եզրակացություն, որ պատճառները բազմազան են, քանի որ հարցվողների 96.3%-ը նշել է առնվազն մեկ պատճառ, իսկ դրանցից յուրաքանչյուրը կազմում է առանձին փոքր մասնաբաժին: Անհրաժեշտ է նշել, որ կնոջ հղիությունը ֆիզիկական բռնության պատճառ չէ, քանի որ հարցվողների միայն 0.6%-ն է նշել դրա մասին:

Երրորդ, որ պատճառների ցուցակը բավականին սպառիչ է, քանի որ հարցվողների միայն 5.9%-ն է նշել այլ պատճառներ:

Աղյուսակ 2.14. Սեռական զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության պատճառները

Սեռական զուգընկերոջ կողմից երբևէ ֆիզիկական բռնության ենթարկված 15-59 տարեկան կանանց մասնաբաժինը, ովքեր բռնությունը բացատրել են արորև նշված պատճառներով:

Ընդամենը	100%
Ոչ մի հատուկ պատճառ	47.9%
Տղամարդը հարբած է	33.0%
Գումարային խնդիրներ	18.2%
Իր աշխատավայրում դժվարություններ	5.7%
Նա աշխատանք չունի	10.1%
Տանն ուտելիք չկա	3.1%
Իր կամ կնոջ ընտանիքի հետ խնդիրներ	6.8%
Կինը հղի է	0.6%
Նա խանդում է կնոջը	10.6%
Կինը հրաժարվում է սեքսից	3.4%
Կինը չի ենթարկվում	2.5%
Այլ	5.9%
Առնվազն մեկ պատճառ նշած կանանց տոկոսը	96.3%
Կանանց թիվը (ով երբևէ ֆիզիկական բռնության է ենթարկվել զուգընկերոջ կողմից)	210

Եվ վերջապես, աղյուսակից հետևում է, որ առանձին պատճառների հարաբերական «կշիռը» կամ նշանակությունը տարբեր է և շատ լայն սահմաններում: Ըստ կարևորության դրանք բաժանվում են մի քանի խմբի:

Շատ աննշան պատճառներ են, երբ կինը չի ենթարկվում կամ մերժում է սեռական հարաբերություն ունենալ կամ լավ չի պատրաստում ուտելիքը (այս պատճառները նշվել են հարցվողների կողմից համապատասխանաբար՝ 2.5%, 3.4% և 3.1% դեպքերում):

Հարցվողների ավելի բարձր տոկոսը բռնի վարքագծի պատճառ է համարում տղամարդու աշխատավայրում դժվարությունները և կնոջ կամ իր ընտանիքի հետ խնդիրները (համապատասխանաբար՝ 5.7% և 6.8%):

Հարցվողներից յուրաքանչյուր տասներորդը նշել է, որ զուգընկերոջ բռնի վարքագծի պատճառը նրա աշխատանք չունենալը կամ խանդելն է (համապատասխանաբար՝ 10.1% և 10.6%):

Գումարային խնդիրները լուրջ պատճառ են, քանի որ հարցվողների 18.2%-ը դա է նշում ցուցակում:

Տղամարդու հարբելու հետ կապված խնդիրներն առանձնահատուկ են որպես բռնի վարքագծի միակ առավել էական պատճառ: Հարցվողների մեկ երրորդը (33.0%) բռնի վարքագիծը կապում է հարբածության հետ:

Ոգելից խմիչքի չափազանց օգտագործումը որոշակիորեն ռիսկի գործոն է: Այս հետազոտության արդյունքները հստակ հիմնավորում են այլ երկրներում իրականացված հետազոտությունների և հարցումների արդյունքները, որոնք սեռական զուգընկերոջ կողմից ոգելից խմիչքի օգտագործման և բռնության միջև բացահայտել են ուժեղ փոխկապակցվածություն, ինչը ցույց է տվել, որ ակոհոլը կարող է խթանող դեր խաղալ ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունների տարբեր ձևերի դրսևորման մեջ:

Աղյուսակի տվյալները նաև կարծես թե ցույց են տալիս, որ տղամարդու ագրեսիան բավական շատ դեպքերում հրահրվում է տնտեսական անորոշության, գործազրկության և ֆինանսական խնդիրների պատճառով:

Հետազոտության տվյալները նաև հիմնավորում են այս գլխում ավելի վաղ կատարված այն եզրակացությունները, որոնք վերաբերում են սեռական զուգընկերոջ կողմից բռնության և արմատացած կարծրատիպերի ու գենդերային ոչ ճկուն դերեր խթանող որոշակի սոցիալական ու մշակութային նորմերի միջև սերտ փոխկապակցվածությանը:

ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Երեխաների ներկայությունը բռնության դեպքերի ժամանակ շատ ցավալի փորձառություն է թե՛ բռնության զոհի և թե՛ հենց երեխաների համար: Որոշ երեխաներ, ովքեր ականատես են լինում ընտանեկան բռնություններին, լուրջ վնասներ են կրում, որոնք կարող են իրականում համարվել երեխաների նկատմամբ հոգեբանական բռնության դրսևորում: ԵԱՀԿ 2002թ. Վիեննայի հանդիպմանը փորձագետները նշել են, որ ընտանեկան բռնությունը ծանր ազդեցություն ունի ականատես երեխայի ապագայի վրա⁵⁶:

⁵⁶ ԵԱՀԿ, Վիեննայի հանդիպում, 2002թ., էջ 12:

Աղյուսակ 2.15. Հարցվողների մանկության ընթացքում հարցվողների մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնությունները վերջիններիս գուգընկերների կողմից

Մոր նկատմամբ ֆիզիկական բռնությանն ակնապես դարձած 15-59 տարեկան բոլոր մասնակից կանանց տրոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Այո	Ոչ	Ծնողները միասին չեն ապրել	Զգիտի/չի հիշում	Հրաժարվել է/ պատասխան չկա	Ընդամենը, %	Կանանց թիվը (բոլոր կանայք)
Տարիք	15-24	5.0	84.3	2.4	7.9	0.4	100	297
	15-19	2.6	81.0	0.6	15.8	0.0	100	128
	20-24	6.8	86.7	3.8	1.9	0.8	100	169
	25-34	7.0	87.7	0.6	4.0	0.7	100	518
	35-44	10.5	83.0	0.6	5.3	0.6	100	705
	45-59	6.4	79.0	1.1	10.1	3.4	100	1,229
Բնակություն	Քաղաքային	7.0	83.4	1.2	6.8	1.6	100	2,011
	Երևան	5.9	90.1	1.1	2.8	0.1	100	792
	Այլ քաղաքային	7.8	79.0	1.2	9.4	2.6	100	1,219
	Գյուղական	8.5	79.1	0.7	9.3	2.4	100	738
Ամուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած	5.5	85.0	0.8	8.1	0.6	100	382
	Ներկայումս ամուսնացած	7.7	82.3	1.0	6.7	2.3	100	2,082
	Նախկինում ամուսնացած	8.1	77.3	1.9	12.4	0.3	100	285
Երեխաների թիվը	0	6.1	85.3	0.8	7.2	0.6	100	470
	1-2	7.6	81.1	1.3	7.7	2.3	100	1,495
	3+	8.0	82.4	0.6	7.3	1.7	100	784
Կրթություն	Կրթության ընթացակայություն	8
	Ընդհանուր տարրական	8.0	78.9	1.8	9.3	2.0	100	118
	Ընդհանուր միջնակարգ	9.9	76.6	1.5	8.6	3.4	100	1,104
	Միջին մասնագիտական	6.9	83.4	0.5	8.2	1.0	100	881
	Բարձրագույն	3.8	90.8	0.8	4.2	0.4	100	638
Զբաղվածություն	Չաշխատող	7.1	81.8	0.9	8.1	2.1	100	1,712
	Աշխատող	7.4	85.1	1.6	5.0	0.9	100	873
	Սեզոնային աշխատանք	12.1	69.9	0.5	13.2	4.3	100	149
	Այլ	15
Ընդամենը		7.4%	82.2%	1.0%	7.5%	1.9%	100%	2,749

Ինչպես վկայում է Աղյուսակ 2.15-ը, վճռորոշ պատասխանները կազմում են մոտավորապես 90%, իսկ անորոշության «գորշ տարածքը» կազմում է մնացած 10%-ը: Հետևաբար, այն կանանց տոկոսային մասնաբաժինը, ում մայրերին բռնացել են ամուսինները, տատանվում է 7.4%-17.8%: Շատ հայ մայրեր փորձում են իրենց երեխաներին հեռու պահել ֆիզիկական և նույնիսկ հոգեբանական բռնություններից՝ ջանալով հնարավորինս այդ խնդիրը պահել լռության և գաղտնիության մեջ: Ամեն դեպքում, պետք է մի փոքր վերապահումով մոտենալ, քանի որ հարցվողների նշանակալի մասնաբաժինը

100%-ով վստահ չէր, որ իրենց մայրերը ֆիզիկական բռնության չեն ենթարկվել:

Նաև օգտակար է վերլուծել տվյալներն ըստ երկու գործոնների, որոնք այս դեպքում էական են, *այսինքն՝* հարցվողների տարիքը և բնակության վայրը: Ինչ վերաբերում է տարիքին, ապա հիմնվելով հարցման տվյալներին, կարելի է պայմանական եզրակացություն անել, որ կարծես սեռական զուգընկերոջ կողմից բռնությունը կայուն, չնայած շատ դանդաղ, նվազում է (կամ գոնե չի աճում), միջսերնդային առումով: Այլ կերպ ասած, ավելի երիտասարդ սերունդների մայրերը, ըստ հաղորդումների, ավելի քիչ են բռնության ենթարկվել, քան տարիքով ավելի մեծ սերունդների մայրերը (ուսումնասիրվել է երեք սերունդ, նկատի առնելով, որ սերնդային հաջորդականությունը պայմանականորեն տեղի է ունենում միջինը 15 տարվա կտրվածքով): Ինչպես ցույց են տալիս աղյուսակում ամփոփված տվյալները, ամենաերիտասարդ տարիքային խմբում (15-19 տարեկան) իրենց մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնության մասին հայտնել է հարցվողների 2.6%-ը, մինչդեռ 25-34 տարեկանների խմբում ցուցանիշը կազմում է 7.0%: 20-24 և 35-44 տարեկանների դեպքում տոկոսային մասնաբաժինները համապատասխանաբար կազմում են 6.8% և 10.5%:


Միակ բացառությունն այս միտումից տարիքով ամենամեծ խումբն է, բայց պետք է նաև նշել, որ այս խմբի կանանց հարաբերականորեն բարձր տոկոսն ընդհանրապես հրաժարվել է պատասխանել (3.4%, մինչդեռ տարիքային այլ խմբերի համար այդ ցուցանիշը կազմել է 0%-0.8%): Ենթադրելով, որ նրանք, ովքեր պատասխան չեն տվել այդ հարցին, անհարմար են զգացել բացահայտել նման նուրբ տեղեկատվություն, և որ իրականում մայրերը շատ դեպքերում ենթարկվել են բռնության զուգընկերոջ կողմից, ընդհանուր ցուցանիշը համապատասխանում է առկա միտումին:

Բնակության գործոնը նույնպես կարևոր է: Համաձայն աղյուսակի տվյալների, առավել ցածր ցուցանիշ է գրանցվել Երևանում (5.9%), իսկ ամենաբարձրը՝ գյուղական բնակավայրերում (8.5%)՝ այլ քաղաքային բնակավայրերի դեպքում տատանվելով այս երկու ցուցանիշների միջև (7.8%), բայց առավել մոտ լինելով գյուղական բնակավայրերի ցուցանիշին: Չնայած արդեն իսկ նկատելի տարբերությանը, այն կլինեք շատ ավելի ցայտուն Երևանի և գյուղական բնակավայրերի միջև, եթե վերահսկվեր տեղաշարժման գործոնը և կատարվեին համապատասխան ճշգրտումներ: Թեկուզ և աշխարհագրական տեղաշարժը չի կարող և չպետք է ընդհանուր առմամբ անտեսվի (մասնավորապես այն պատճառով, որ կանայք Հայաստանում հաճախ են այլ վայրեր տեղափոխվում ամուսնության արդյունքում), և որովհետև այս հետազոտության ընտրանքի կանանց 84.9%-ն ամուսնացած է կամ ամուսնացած է եղել (89.6%-ը զուգընկեր ունի), այնուամենայնիվ ընդհանուր միտում, *mutatis mutandis*, կարելի է տեսնել, քանի որ «հարսների հոսքը» սովորաբար ավելի շատ ուղղված է դեպի ավելի մեծ քաղաքներ կամ քաղաքամերձ շրջաններ: Երևանը հազվադեպ է «ելքի» վայր դառնում, այլ ավելի շուտ նպատակակետ է: Հիմնական ելքի վայրերն են գյուղերը և փոքր քաղաքները: Այլ կերպ ասած, քանի որ հարցվողների ծնողական ընտանիքների մի անորոշ մասնաբաժինն այլ տարածքներում են, և նկատի առնելով երիտասարդ կանանց ամուսնությունների հետ կապված տեղաշարժման հիմնական ուղղությունը, Երևանի ցուցանիշը պետք է որոշակիորեն ավելի ցածր լիներ, իսկ այլ քաղաքային բնակավայրերում, հավանաբար, գրեթե նույնը, իսկ քաղաքային բնակավայրերում, ամենայն հավանականությամբ, ավելի բարձր:

Քանի որ իմանալը և ականատես լինելը տարբեր բաներ են (չնայած սերտորեն փոխկապված) երեխաների վրա հոգեբանական ազդեցության և մտավոր-առողջական հետևանքների առումով, դրական պատասխան տված և պատասխանել չցանկացող կանանց հարցրել են, թե արդյո՞ք երեխա ժամանակ ականատես են եղել այդ բռնությանը:

Գծապատկեր 2.4. Հարցվողների կողմից մանկության ընթացքում հարցվողների մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնությանն ականատես լինելը

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան կանանց (255 կին) տոկոսային բաշխվածությունն ըստ նախորդ հարցին նրանց տված պատասխանի, թե արդյոք իրենց մայրերը ֆիզիկական բռնության են ենթարկվել զուգընկերոջ կողմից և արդյոք երեխա ժամանակ իրենք ականատես են եղել այդ բռնությանը:



Գծապատկեր 2.4-ում ամփոփված տվյալներից հետևում է, որ նշված կանանց առնվազն երկու երրորդը (և հնարավոր է նույնիսկ մինչև չորս հինգերորդը) երեխա ժամանակ ականատես է եղել, թե ինչպես է իր մորը ֆիզիկական բռնության ենթարկել զուգընկերը: Այլ կերպ ասած, ընտրանքում ընդգրկված կանանց 6.0% և 7.9%-ը՝ համապատասխանաբար, երեխա ժամանակ տեսել կամ լսել է մոր ֆիզիկական բռնությունը:

Այս ազդեցության ևս մեկ կարևոր տեսանկյունն էլ այն է, որ ընտանիքում երեխաների ներկայությամբ տեղի ունեցող բռնության դեպքերն ամրապնդում են բռնության միջսերնդային շրջափուլը: ԱՀԿ-ն իր 2002թ. զեկույցում եզրակացրել է, որ «անձնական պատմության գործոնների մեջ հայրական ընտանիքում բռնությունը հատկապես հզոր ռիսկի գործոն է տղամարդկանց համար՝ զուգընկերոջ ագրեսիա ցուցաբերելու առումով»⁵⁷:

Միայնաց հաջորդող հետազոտությունները ցույց են տվել, որ բռնի ընտանիքում մեծանալը բավականին ճշգրիտ կանխորոշիչ գործոն է, որ չափահաս տարիքում տվյալ անհատները հակված կլինեն բռնության վարքագիծ ցուցաբերելու⁵⁸ և որ մշտապես ընտանեկան բռնությանն ականատես լինելը կարող է անձնական փոխհարաբերություններում բռնության օրինակ ծառայել ամբողջ կյանքի ընթացքում⁵⁹:

Աղյուսակներ 2.16-ա և 2.16-բ-ում ամփոփված տվյալները հստակ մատնանշում են, որ կանանց զուգընկերներն ավելի են հակված բռնության, եթե նրանց մայրերին ծեծել են ամուսինները: Համաձայն աղյուսակ 2.16-ա-ի, ընտրանքում ընդգրկված (15-59 տարեկան) երբևէ զուգընկեր ունեցած կանանց շրջանում, ովքեր երբևէ ենթարկվել են ֆիզիկական բռնության սեռական զուգընկերոջ կողմից, ֆիզիկական բռնության ենթարկված մայրեր ունեցող զուգընկերների տոկոսն 8 անգամ ավելի բարձր է (20.9%), քան սեռական զուգընկերոջ կողմից երբևէ ֆիզիկական բռնության չենթարկված երբևէ զուգընկեր ունեցած կանանց շրջանում (2.6%):

⁵⁷ ԱՀԿ զեկույց, 2002թ., էջ 98:
⁵⁸ Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարը. ծրագրերի փորձարկում և իրականացում: Հոմ, Իտալիա, 15/19 սեպտեմբեր 2003թ., էջ 15:
⁵⁹ Տե՛ս Կանանց նկատմամբ բռնության վերացումը: ՄԱԿ ԳՔ հետազոտություն, էջ 61:

Աղյուսակ 2.16-ա. Հարցվողների նկատմամբ ֆիզիկական բռնությունը՝ կապված հարցվողների բռնի և ոչ բռնի զուգընկերների մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնության հետ

Զուգընկերոջ մայրը ծեծի է ենթարկվել կամ չի ենթարկվել իր ամուսնու կողմից	15-59 տարեկան երբևէ զուգընկեր ունեցած կանայք, ովքեր երբևէ ֆիզիկական բռնության են ենթարկվել կամ չեն ենթարկվել սեռական զուգընկերոջ կողմից	
	Ենթարկվել է	Չի ենթարկվել
Զուգընկերոջ մայրն իր ամուսնու կողմից ծեծի է ենթարկվել	20.9%	2.6%
Ծեծի չի ենթարկվել	33.2%	69.2%
Ծնողները միասին չեն ապրել	0.5%	1.5%
Չգիտի	45.0%	25.8%
Հրաժարվել է /պատասխան չկա	0.5%	0.8%
Ընդամենը (երբևէ զուգընկեր ունեցած) 2,367	100.0%	100.0%

Աղյուսակ 2.16-ա-ում տեղ գտած տվյալները շատ ավելի արտահայտիչ են: Տղամարդ զուգընկերները, ում մայրերին ծեծել են ամուսինները, գրեթե տասն անգամ ավելի մեծ հավանականություն ունեն ֆիզիկական բռնություն դրսևորել իրենց կանանց նկատմամբ (43.6%), քան նրանք, ում մայրերը ծեծի չեն ենթարկվել (4.5%):

Աղյուսակ 2.16-բ. Հարցվողների բռնի և ոչ բռնի զուգընկերների մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնությունը

Զուգընկերոջ մայրը ծեծի է ենթարկվել կամ չի ենթարկվել իր ամուսնու կողմից	15-59 տարեկան երբևէ զուգընկեր ունեցած կանայք, ովքեր երբևէ ֆիզիկական բռնության են ենթարկվել կամ չեն ենթարկվել սեռական զուգընկերոջ կողմից		
	Ենթարկվել է	Չի ենթարկվել	Ընդամենը
Զուգընկերոջ մայրն իր ամուսնու կողմից ծեծի է ենթարկվել	43.6%	56.4%	100.0%
Ծեծի չի ենթարկվել	4.5%	95.5%	100.0%

Այսպիսով, սույն հետազոտության արդյունքները հաստատում են բռնության միջսերնդային շրջափուլի և ընտանիքում բռնության ենթարկված մայրեր ունեցող տղամարդկանց միջանձնային հարաբերություններում բռնության օրինաչափության վերաբերյալ այլ հետազոտությունների արդյունքում կայացված եզրակացությունները:

Այստեղ կարելի է և անհրաժեշտ է շեշտադրել «գոհի շրջափուլի» խնդիրը. այն կանայք, ում մայրերը բռնության են ենթարկվել և մեծացել են բռնի միջավայրում, սեռական զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելու ավելի մեծ հավանականություն ունեն:

Աղյուսակ 2.16-գ. Բռնի և ոչ բռնի սեռական զուգընկերներ ունեցող հարցվողների մայրերի նկատմամբ ֆիզիկական բռնությունը

Հարցվողի մայրը ծեծի է ենթարկվել կամ չի ենթարկվել իր ամուսնու կողմից	15-59 տարեկան երբևէ զուգընկեր ունեցած կանայք, ովքեր երբևէ ֆիզիկական բռնության են ենթարկվել կամ չեն ենթարկվել սեռական զուգընկերոջ կողմից	
	Ենթարկվել է	Չի ենթարկվել
Հարցվողի մայրն իր ամուսնու կողմից ծեծի է ենթարկվել	13.8%	7.1%
Ծեծի չի ենթարկվել	69.0%	83.1%
Ծնողները միասին չեն ապրել	2.9%	.9%
Չգիտի	7.6%	7.3%
Հրաժարվել է /պատասխան չկա	6.7%	1.6%
Ընդամենը (երբևէ զուգընկեր ունեցած) 2,749	100.0%	100.0%


Ինչպես վկայում են Աղյուսակ 2.16-գ-ում ամփոփված տվյալները, սեռական գույքընկերոջ կողմից բռնության ենթարկված կանանց 13.8%-ի մայրերին ամուսինները ծեծել են, մինչդեռ բռնության չենթարկված կանանց մայրերն իրենց ամուսինների կողմից ծեծի են ենթարկվել երկու անգամ պակաս դեպքերում (7.1%):

Մյուս կողմից՝ կանանց 15.8%-ը, ում մայրերը ծեծի են ենթարկվել ամուսինների կողմից, ֆիզիկական բռնության առումով բռնի գույքընկեր ունեն կամ ունեցել են: Ցուցանիշը երկու անգամ ցածր է այն կանանց դեպքում, ում մայրերն իրենց ամուսինների կողմից ծեծի չեն ենթարկվել (7.5%):

Այս արատավոր շրջանն այստեղ կանգ չի առնում: Ինչպես ցույց են տալիս Գծապատկեր 2.5-ում ամփոփված տվյալները, ֆիզիկական բռնության ենթարկված կանանց գրեթե երկու երրորդը նշել է, որ իրենց երեխաներն ականատես են եղել իրենց նկատմամբ բռնության գործադրմանը, իսկ նման բռնության դեպքերի գրեթե կեսը տեղի է ունեցել նաև մի քանի կամ շատ անգամ:

Գծապատկեր 2.5. Հարցվողների նկատմամբ ֆիզիկական բռնությունը, որին ականատես են եղել երեխաները

Ձուգրնկերների կողմից բռնության ենթարկված և երեխա ունեցող ընտանիքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց (203 կին) տոկոսային բաշխվածությունը, որոնց նկատմամբ զուգրնկերոջ կողմից գործադրված բռնությանը երեխաներն ականատես են եղել:



ԿԱՆԱՆՑ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Չնայած որ գենդերային բռնության հիմնական գոհերը կանայք են, երբեմն կինը նույնպես դիմում է բռնության: Այս հետազոտության ձևաչափը հնարավորություն է տվել ուսումնասիրել ֆիզիկական բռնության ենթարկված կանանց վարքագծի օրինաչափությունները: Պետք է նշել, որ չնայած հիմնականում կանանց ներգրավվածությանը բռնության շրջափուլում, այնուամենայնիվ նրանցից շատ քչերն են առանց պատճառի կամ վրեժից դրդված բռնարարքներ կիրառում սեռական գույքընկերոջ նկատմամբ: Աղյուսակ 2.17-ա-ում ամփոփված տվյալները ցույց են տալիս, որ կանանց հազիվ 3.5%-ն է ընդունում, որ ֆիզիկական բռնություն է կիրառել սեռական գույքընկերոջ նկատմամբ, երբ վերջինն իրեն չի խփել կամ ֆիզիկապես վատ չի վարվել: Մյուս կողմից՝ այս խմբի հարցվողների 92.1%-ը հստակ նշել է, որ երբևէ ֆիզիկական բռնություն չի կիրառել գույքընկերոջ նկատմամբ, եթե վերջինը չի հարձակվել իր վրա:

Աղյուսակ 2.17-ա. Հարցվողների կողմից սեռական գույքընկերոջ նկատմամբ ֆիզիկական բռնությունը

Ձուգրնկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված 15-59 տարեկան կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ այն հարցի, թե արդյոք (եթե այո, ապա ինչ հաճախականությամբ) նրանք, թեկուզ առանց պատճառի, բռնություն են գործադրել զուգրնկերոջ նկատմամբ:

Երբեք	Մեկ կամ երկու անգամ	Մի քանի անգամ	Շատ անգամ	Չգիտի/չի հիշում	Հրաժարվել է /պատասխան չկա	Ընդամենը	Կանանց թիվը (ով բռնության է ենթարկվել զուգրնկերոջ կողմից)
92.1%	2.8%	0.6%	0%	2.2%	2.3%	100%	226

Այն հարցին, թե արդյոք իրենք հակահարված հասցրել են իրենց պաշտպանելու համար, այս կանանց հիմնական մասը դրական պատասխան է տվել: Ինչպես վկայում են Աղյուսակ 2.17-բ-ում ամփոփված տվյալները, այս կանանց միայն 20%-ը (կամ առավելագույնը 25%-ը) հակահարված է հասցրել սեռական գույքընկերոջ կողմից բռնության դեպքում: Ամեն դեպքում, ֆիզիկական բռնության ենթարկված կանանց երեք քառորդը բռնության չի դիմել նույնիսկ ինքնապաշտպանության նպատակով:

Այսպիսով, պարզ է, որ, ընդհանուր առմամբ, կանայք, նույնիսկ ֆիզիկական բռնության ենթարկվածները, բռնություն չեն նախաձեռնում կամ իրականացնում սեռական գույքընկերոջ նկատմամբ և որ նրանցից միայն մի քանիսն են դիմում բռնության՝ ինքնապաշտպանության կամ վրեժ լուծելու նպատակով:

Աղյուսակ 2.17-բ. Հարցվողների կողմից զուգրնկերոջ նկատմամբ ֆիզիկական բռնությունը

Ձուգրնկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված 15-59 տարեկան կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ այն հարցի, թե արդյոք (եթե այո, ապա ինչ հաճախականությամբ) նրանք հակահարված են հասցրել կամ դիմել են ինքնապաշտպանության:

Երբեք	Մեկ կամ երկու անգամ	Մի քանի անգամ	Շատ անգամ	Չգիտի/չի հիշում	Հրաժարվել է /պատասխան չկա	Ընդամենը	Կանանց թիվը (ով բռնության է ենթարկվել զուգրնկերոջ կողմից)
75.5%	17.8%	0.7 %	0.9 %	2.5%	2.6%	100%	226

ԲՈՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Բռնության նկատմամբ, այդ թվում նաև սեռական գույքընկերոջ կողմից գործադրված, վերաբերմունքի դրսևորումները շատ կարևոր են, որովհետև դրանք կամ միանգամայն ընդդիմանում, կամ նույնիսկ դատապարտում են բռնությունն առանց որևէ նախապայմանի՝ դրանով իսկ խթանելով բռնության դեմ անհանդուրժողականությունը և նվազեցնելով դրա տարածվածությունը, կամ էլ կոծկում են զուգրնկերոջ կողմից գործադրվող բռնությունը որոշակի պայմանների դեպքում: Այս վերջին վերաբերմունքը հատուկ է որոշակի մշակույթների, որոնք խթանում են բարդ և անպատժելիության այնպիսի միջավայր, որում (ինչպես նշում է *Կանանց նկատմամբ բռնության հարցերով հարուկ զեկուցողը*), զոհերը մեղադրվում, իսկ բռնարարները ներվում են⁶⁰:

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ նույնիսկ կանանց շրջանում համաձայնություն չկա զուգրնկերոջ կողմից բռնությանն առնչվող հարցերի շուրջ: Նրանց բազմազան տեսակետներն արտացոլում են տարբեր այն կարծիքները, որոնք առկա են լայն հասարակությունում, ինչպես նաև միևնույն երևույթի տարբեր տեսանկյունների հստակ տարբերվող ընկալումները միևնույն անձանց կողմից: Տարբերությունները կախված են կրթական մակարդակից, տարիքից և բնակության վայրից:

⁶⁰ *Կանանց նկատմամբ բռնության հարցերով հարուկ զեկուցողի զեկույցը* (Համառոտագիր, E/CN.4/2003/75, 6 հունվարի 2003թ.: Մեջբերված է վերջնական զեկույցում, Պարշաձ գործունեություն, Փորձագետների հանդիպում, Վիեննա, 2005թ., էջ 5):

Այսպիսով, այն հարցին, թե արդյոք ընտանիքից դուրս այլ մարդիկ պետք է միջամտեն, երբ անուսինը վատ է վերաբերվում իր կնոջը, ընտրանքում ընդգրկված կանանց հիմնական մասը (60.8%) բացասական պատասխան է տվել: Հարցվողների ընդամենը 27.5%-ն է համաձայնել, որ այլ մարդիկ կարող են միջամտել նման իրավիճակին (տես Աղյուսակ 2.18):

Տվյալների վերլուծությունն ըստ կենսագրական բնութագրիչների ցույց է տալիս ավելի բարդ պատկեր, քան վերոնշյալ դեպքերում: Կարծիքների տարբերությունները միատեսակ չեն փոխկապակցվում բնութագրիչների մեծ մասի հետ, իսկ եթե նույնիսկ միատեսակ են փոխկապակցվում, ապա բացատրության համար այլ գործոնների կարիք ունեն: Այսպիսով, բոլոր չափանիշներով փոքր քաղաքներում և գյուղերում բնակվողներն ավելի պահպանողական և ավանդական, եթե չասենք խիստ հայրիշխանական տեսակետների են հակված: Սակայն Աղյուսակ 2.18-ում ամփոփված տվյալները հստակ ցույց են տալիս, որ իրավիճակը միանգամայն հակառակն է: Ընտանեկան բռնությանը դրսից միջամտելու գաղափարին ընդդիմացող հարցվողների թիվն ամենաբարձրը Երևանում է (68.0%), մինչդեռ գյուղական բնակավայրերում այն ամենացածրն է (56.8%): Այլ քաղաքային բնակավայրերում այս ցուցանիշը զգալիորեն ցածր է Երևանից (58.5%): Կարևոր է նաև, որ չկողմնորոշված հարցվողների մասնաբաժինն ավելի բարձր է Երևանից դուրս (13.1%՝ այլ քաղաքային, 11.4%՝ գյուղական բնակավայրերի և 6.8%՝ Երևանի դեպքում):

Կրթական մակարդակի ազդեցությունը նույնպես միանշանակ չէ: Այսպես, ընտանեկան բռնության դեպքում այլ մարդկանց միջամտելու գաղափարի կողմնակիցների առավելագույն տոկոսը գրանցվել է տարրական կրթությամբ կանանց շրջանում (34.7%), մինչդեռ միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ հարցվողների շրջանում այս ցուցանիշն ավելի ցածր է (համապատասխանաբար՝ 28.9% և 27.9%): Տարբերությունները շատ ավելի ակնառու են այն հարցվողների շրջանում, ովքեր այս ձևակերպման հետ համաձայն չեն: Այսպիսով, չնայած որ ընտանեկան բռնության դեպքերին այլ մարդկանց միջամտելու կարծիքը չկիսող հարցվողների տոկոսը մոտավորապես նույնն է ընդհանուր միջնակարգ և միջին մասնագիտական ու բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում (համապատասխանաբար՝ 61.6%, 60.2% և 63.0%), նման կարծիք ունեցողների տոկոսը տարրական կրթությամբ կանանց շրջանում շատ ավելի ցածր է (47.1%): Այս երկու կարծիքների միջև չկողմնորոշված հարցվողների տոկոսն ավելի բարձր է տարրական կրթությամբ կանանց շրջանում (16.0%), մինչդեռ մասնագիտացված միջնակարգ և բարձրագույն կրթությամբ հարցվողների շրջանում այն ակնհայտորեն ցածր է (համապատասխանաբար՝ 9.9% և 8.1%):

Տարիքը որպես գործոն այստեղ նույնիսկ ավելի պակաս կարևոր է թվում: Աղյուսակի տվյալները չեն բացահայտում որևէ կոնկրետ միատեսակ օրինաչափություն: Եթե 15-19 տարեկաններն առավել «բարեհաճ են» այն գաղափարի նկատմամբ, որ ընտանիքից դուրս այլ մարդիկ պետք է միջամտեն, երբ տղամարդը վատ է վերաբերվում իր կնոջ նկատմամբ (նրանց 37.0%-ը կողմ է այս գաղափարին, իսկ 39.0%-ը՝ դեմ), ապա այս տարիքային խմբում որոշակի պատասխան չունեցողների կամ պատասխանել չցանկացողների տոկոսն առավելագույնը չէ (համապատասխանաբար՝ 20.0% և 4.0%): Հաջորդ տարիքային խումբը (20-24 տարեկաններ) ակնհայտորեն ավելի քիչ է կողմնակից արտաքին միջամտությանը, նրանց ընդամենը 26.9%-ն է համաձայն, իսկ 56.3%-ը համաձայն չէ այդ ձևակերպման հետ: Այն կանանց մասնաբաժինը, ովքեր նշել են, որ չգիտեն կամ հրաժարվել են պատասխանել, նույնպես հարաբերականորեն բարձր է (համապատասխանաբար՝ 14.6% և 2.2%): 25-34 տարեկանների շրջանում կողմնակիցների և ընդդիմադիրների միջև բաժանումը գրեթե նույնն է, ինչ որ նախորդ տարիքային խմբի դեպքում: Այստեղ «կողմնակիցները» կազմում են 31.1%, իսկ «ընդդիմադիրները»՝ 59.9%: Այս խմբի յուրաքանչյուր կատեգորիայում մոտավորապես 4 տոկոս աճը նախորդի համեմատությամբ կարող է բացատրվել պատասխան տալ չկարողացած կամ չկամեցած հարցվողների հավասարաչափ նվազմամբ (համապատասխանաբար՝ 8.6% և 0.4%): Այս գաղափարի ամենաքիչ կողմնակիցներն են 35-44 տարեկանները՝ ընդամենը 23.0%-ը, իսկ 67.8%-ը դեմ են վերոնշյալ ձևակերպմանը: Տարիքային վերջին խումբը (45-59 տարեկաններ) էապես տարբերվում է նախորդ խմբից իր մոտեցմամբ և ավելի մոտենում է 20-24 և 25-34 տարեկանների տեսակետին:

Աղյուսակ 2.18. Ամուսնու կողմից կնոջ նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքում ընտանիքից դուրս այլ մարդկանց միջամտության նկատմամբ վերաբերմունքը

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց փոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր ամուսնու կողմից կնոջ նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքում ընտանիքից դուրս այլ մարդկանց միջամտության վերաբերյալ փվել են ստորև նշված պարամետրերը («...» 25-ից պակաս դեպքերի համար):

		Համա- ձայն է	Համա- ձայն չէ	Չգիտի	Հրաժարվել է / պատասխան չկա	Ընդամենը, %	Կանանց թիվը (բոլորը)
Տարիք	15-24	31.3	48.8	16.9	3.0	100.0	297
	15-19	37.0	39.0	20.0	4.0	100.0	128
	20-24	26.9	56.3	14.6	2.2	100.0	169
	25-34	31.1	59.9	8.6	0.4	100.0	518
	35-44	23.2	67.8	8.2	0.8	100.0	705
	45-59	27.5	60.0	11.8	0.7	100.0	1,229
Բնակության վայր	Քաղաքային	26.6	62.3	10.6	0.5	100.0	2,011
	Երևան	24.6	68.0	6.8	0.6	100.0	792
	Այլ քաղաքային	27.9	58.5	13.1	0.5	100.0	1,219
	Գյուղական	29.8	56.8	11.4	2.0	100.0	738
Ամուսնական կարգավիճակ	Ամուսնացած չի եղել	30.2	49.0	18.4	2.4	100.0	382
	Ներկայումս ամուսնացած	25.7	64.4	9.4	0.5	100.0	2,082
	Նախկինում ամուսնացած	37.0	49.9	11.2	1.9	100.0	285
Երեխաների թիվը	0	30.2	50.5	17.1	2.2	100.0	470
	1-2	26.8	64.7	7.8	0.7	100.0	1,495
	3+	27.1	59.5	12.8	0.6	100.0	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	8
	Ընդհանուր տարրական	34.7	47.1	16.9	1.3	100.0	118
	Ընդհանուր միջնակարգ	25.2	61.6	12.4	0.8	100.0	1,104
	Միջին մասնագիտական	28.9	60.2	9.9	1.0	100.0	881
	Բարձրագույն	27.9	63.0	8.1	1.0	100.0	638
Զբաղվածություն	Չաշխատող	26.6	60.2	12.3	0.9	100.0	1,712
	Աշխատող	29.0	62.7	7.4	0.9	100.0	873
	Սեզոնային աշխատանք	26.8	58.2	13.3	1.7	100.0	149
	Այլ	15
Ընդամենը		27.5%	60.8%	10.8%	0.9%	100.0%	2,749

Ինչ վերաբերում է «ամուսնական կարգավիճակի» գործոնին, ապա անհրաժեշտ է նշել, որ նախկինում ամուսնացած կանայք հարաբերականորեն (քանի որ այս գաղափարին դեմ կանանց տոկոսն ավելի բարձր է այս խմբում) ավելի կողմ են այս գաղափարին (37.0%-ը՝ 49.9%-ի դիմաց), քան երբևէ սեռական զուգընկեր չունեցած կանայք (ովքեր երբևէ ամուսնացած չեն եղել) (30.2%-ը՝ 49.0%-ի դիմաց) և էականորեն ավելի շատ, քան ներկայումս ամուսնացած կանայք (25.7%-ը՝ 64.4%-ի դիմաց):

Տարիքի, կրթության մակարդակի և բնակության վայրի հետ փոխկապակցվածությունների հետ միասին «ամուսնական կարգավիճակին» առնչվող այս տատանումները ցույց են տալիս, որ լայն հասարակությունում գոյություն չունի որևէ միասնական գերակշիռ վերաբերմունք այս ձևակերպման նկատմամբ և որ կանանց անձնական փորձը (կամ դրա բացակայությունը) կարևոր դեր է խաղում նրանց վերաբերմունքի ձևավորման գործում:

Այս արդյունքներն առանձնապես զարմանալի չեն, քանի որ ընտանեկան բռնությունը հասարակության մեջ դեռևս հիմնականում արգելված թեմա է, ինչն էապես չի արժարժվում հանրային քննարկումներում և քննարկվելու դեպքում նույնիսկ, սովորաբար լինում է մակերեսային և շատ ընդհանրացված ձևով:

Ինչպես վկայում է Աղյուսակ 2.19-ա-ն, հետազոտությանը մասնակցած բոլոր կանանց ընդամենը 7.7%-ն է կարծում, որ ընտանեկան խնդիրները (իսկ ներքնտանեկան բռնությունն ընտանեկան ամենաուրբ խնդիրներից մեկն է) կարելի է քննարկել ընտանիքից դուրս այլ մարդկանց հետ, մինչդեռ գերակշիռ մեծամասնությունը (90.5%) համոզված է, որ ընտանեկան խնդիրները պետք է քննարկվեն միմիայն ընտանիքի ներսում:

Աղյուսակ 2.19. Ընտանիքի անդամներից բացի այլ մարդկանց հետ ընտանեկան խնդիրները քննարկելու նկատմամբ վերաբերմունքը

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունը, որոնք ընտանիքի անդամներից բացի այլ մարդկանց հետ ընտանեկան խնդիրները քննարկելու հարցին տվել են ստորև նշված պատասխանները:

	Համաձայն է	Համաձայն չէ	Չգիտի	Հրաժարվել է / պատասխան չկա	Ընդամենը	Կանանց թիվը (բոլորը)
Ընդամենը	90.5%	7.7%	1.3%	0.5%	100%	2,749

Այնուամենայնիվ, հարցի վերաձևակերպումից հետո, երբ կանանց հարցրել են, թե արդյոք նրանք կարծում են, որ ընտանեկան բռնությունն անձնական խնդիր է, որին օրենքը չպետք է միջամտի, պատասխաններում գերակշռել է առաջին հարցին տրված պատասխանների հայելային պատկերը (տես Աղյուսակ 2.20):

Աղյուսակ 2.20. Ընտանեկան բռնության դեպքում օրենքի միջամտության նկատմամբ վերաբերմունքը

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց փոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր պարասխանել են ընտանեկան բռնության դեպքում օրենքի միջամտելու վերաբերյալ հարցին (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Համա- ձայն է	Համա- ձայն չէ	Չգիտի	Հրաժարվել է / պատասխան չկա	Ընդամենը, %	Կանանց թիվը (բոլորը)
Տարիք	15-24	29.6	53.2	14.4	2.8	100.0	297
	15-19	20.9	55.9	20.5	2.7	100.0	128
	20-24	36.1	51.2	9.7	3.0	100.0	169
	25-34	31.2	55.6	12.5	0.7	100.0	518
	35-44	33.3	54.1	11.7	0.9	100.0	705
	45-59	30.2	53.5	15.5	0.8	100.0	1,229
Բնակության վայր	Քաղաքային	30.6	55.5	13.1	0.8	100.0	2,011
	Երևան	41.9	47.2	9.9	1.0	100.0	792
	Այլ քաղաքային	23.3	60.8	15.2	0.7	100.0	1,219
	Գյուղական	32.5	50.2	15.9	1.4	100.0	738
Ամուսնական կարգավիճակ	Ամուսնացած չի եղել	30.5	48.5	18.9	2.1	100.0	382
	Ներկայումս ամուսնացած	31.5	54.9	12.9	0.7	100.0	2,082
	Նախկինում ամուսնացած	29.6	55.1	13.6	1.7	100.0	285
Երեխաների թիվը	0	30.5	50.9	16.5	2.1	100.0	470
	1-2	32.4	55.6	11.2	0.8	100.0	1,495
	3+	29.1	52.8	17.3	0.8	100.0	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	8
	Ընդհանուր տարրական	26.0	50.3	22.7	1.0	100.0	118
	Ընդհանուր միջնակարգ	31.5	51.5	15.9	1.1	100.0	1,104
	Միջին մասնագիտական	29.6	55.9	13.7	0.8	100.0	881
	Բարձրագույն	33.2	56.7	8.8	1.3	100.0	638
Ջրավաճառ- թյուն	Չաշխատող	30.7	52.4	15.9	1.0	100.0	1,712
	Աշխատող	32.2	57.1	9.8	0.9	100.0	873
	Սեզոնային աշխատանք	27.3	58.3	13.3	1.1	100.0	149
	Այլ	15
Ընդամենը		31.1%	54.0%	13.9%	1.0%	100.0%	2,749

Հարցվողների կեսից ավելին (54.0%) կարծում է, որ օրենքը պետք է միջամտի, մինչդեռ հարցվողների գրեթե մեկ երրորդը (31.1%) այն կարծիքին է, որ ընտանեկան բռնությունն անձնական խնդիր է, որին օրենքը չպետք է միջամտի: Հարցվողների 13.9%-ը չի կարողացել որոշակի պատասխան տալ այս հարցին, իսկ 1.0%-ը հարցին ընդհանրապես չի պատասխանել:

Ինչպես վկայում են Աղյուսակ 2.20-ում ամփոփված տվյալները, կենսագրական որոշ բնութագրիչներ ավելի ակնհայտ և հիմնավոր ազդեցություն ունեն հարցվողների վերաբերմունքի ձևավորման վրա,

քան մյուսները: Ուստիև, որպես գործոններ, այս բնութագրիչները կարող են ավելի մեծ կանխորոշիչ ուժ ունենալ կամ առնվազն ավելի լավ արտացոլել ընտրանքում գերակշռող վերաբերմունքը:

Անհրաժեշտ է նշել, որ *տարիքը* տարբերակիչ ուժեղ գործոն չէ այս դեպքում: Ընդհանուր առմամբ, հազվադեպ «համաձայնություն» կա տարիքային տարբեր խմբերի միջև: Այն հարցվողների տոկոսը, ովքեր համաձայն չեն ձևակերպմանը, թե ընտանեկան բռնությունն անձնական խնդիր է, որին օրենքը չպետք է միջամտի, այսինքն՝ ովքեր կողմ են օրենքի կողմից միջամտությանը, գրեթե նույնն է տարիքային խմբերից յուրաքանչյուրում՝ չնչին տատանումներով: Այս ցուցանիշը կազմում է 53.2%՝ 15-24 տարեկանների, 55.6%՝ 25-34 տարեկանների, 54.1%՝ 35-44 տարեկանների և 53.5%՝ 45-59 տարեկանների խմբերում: Նույնը վերաբերում է նրանց, ովքեր կարծում են, որ ընտանեկան բռնությունն անձնական խնդիր է, որին օրենքը չպետք է միջամտի: Այսպես մտածողների մասնաբաժինը վերոնշյալ տարիքային խմբերում համապատասխանաբար կազմում է 29.6%, 31.2%, 33.3% և 30.2%:

Միակ և էական բացառությունը՝ առաջին տարիքային խմբի երկու ենթախմբերի միջև առկա ակնհայտ տարբերությունն է: Եթե 15-19 տարեկանների 55.9%-ը կողմնակից է ընտանեկան բռնության դեպքերին օրենքի միջամտությանը, ապա 20-24 տարեկանների շրջանում այն 51.2% է: Օրենքի միջամտության ընդդիմադիրների մասնաբաժինը վերջին խմբում 1.7 անգամ ավելի մեծ է (36.1%), քան 15-19 տարեկանների շրջանում: Նաև կարևոր է նշել, որ 15-19 տարեկանների 20.5%-ը դեռ չեն կողմնորոշվել այս հարցի շուրջ, մինչդեռ 20-24 տարեկանների շրջանում «չգիտեմ» պատասխանն է տվել միայն 9.7%-ը:

Երեխաների թիվը վերոնշյալ երկու դեպքերում էլ տարբերակիչ գործոն չէ: Տարբերությունները չնչին են, և ինչն ավելի կարևոր է, չկա մեկ առանձին օրինաչափություն, որն արտացոլի փոխկապակցվածությունը հարցվողի վերաբերմունքի և երեխա(ներ) ունենալու միջև: Իրականում, ըստ էության, տարբերություններ չկան այն կանանց տեսակետների միջև, ովքեր երեխա չունեն և ովքեր ունեն երեք և ավելի երեխա: Ընտանեկան բռնության դեպքում օրենքի միջամտության կողմնակիցների մասնաբաժինները համապատասխանաբար կազմում են 50.9% և 52.8%: Նման անձնական խնդրին օրենքի միջամտությանը դեմ հարցվողների մասնաբաժինները համապատասխանաբար կազմում են 30.5% և 29.1%, իսկ չկողմնորոշված հարցվողների մասնաբաժինները՝ համապատասխանաբար 16.5% և 17.3%: Երկու խմբերը տարբերվում են մեկ կամ երկու երեխա ունեցող հարցվողների խմբից, չնայած այդ տարբերությունը զգալի չէ:

Կրթության ազդեցությունը նույնպես միանշանակ չէ: Մի կողմից թվում է՝ ուղիղ փոխկապակցվածություն կա կրթական ցենզի և ընտանեկան բռնության դեպքում օրենքի միջամտության հանդեպ կնոջ դրական վերաբերմունքի միջև: Այլ կերպ ասած, որքան ավելի բարձր է հարցվողի կրթական մակարդակը, այնքան մեծ է հավանականությունը, որ նա ավելի բարեհաճ կլինի այն գաղափարի նկատմամբ, որ ընտանեկան բռնությունն անձնական խնդիր չէ, որին օրենքը չպետք է միջամտի: Սակայն տարբերությունը հարաբերականորեն փոքր է այլ խնդիրների վերաբերյալ տեսակետների համեմատությամբ: Այսպես, առաջին խմբի հարցվողների 50.3%-ը և վերջին խմբի հարցվողների 56.7%-ը կարծում են, որ օրենքը չպետք է միջամտի ընտանեկան բռնության դեպքում: Այս հարցի շուրջ դեռևս չկողմնորոշվածների տոկոսը սակայն նվազում է՝ կապված կրթության մակարդակի բարձրացման հետ (ընդհանուր տարրական՝ 22.7% և բարձրագույն՝ 8.8%): Մյուս կողմից՝ մինևույն ուղիղ փոխկապակցվածությունն է գրանցվել կրթական ցենզի և ընտանեկան բռնության դեպքերին օրենքի միջամտությանը կանանց բացասական վերաբերմունքի միջև: Այլ կերպ ասած, վերը նշվածի ակնհայտ հակասությունն է, որ որքան բարձր է կրթության մակարդակը, այնքան նա ավելի է հակված բարեհաճ *չլինելու* այն գաղափարի նկատմամբ, որ ընտանեկան բռնությունն անձնական խնդիր չէ, որին օրենքը չպետք է միջամտի: Սակայն այս եզրակացությունը վերաբերում է հարցվողների ավելի փոքր խմբի: Ընդհանուր տարրական կրթությամբ հարցվողների 26.0%-ը և բարձրագույն կրթությամբ հարցվողների 33.2%-ը կողմ են այն ձևակերպմանը, որ ընտանեկան բռնությունն անձնական խնդիր է, որին օրենքը չպետք է միջամտի: Այսպիսով, ըստ կրթության բաշխվածության, հարցվողների յուրաքանչյուր խմբում այս ձևակերպմանը համաձայնածների տոկոսը 1.7-2 անգամ

ավելի ցածր է, քան՝ չհամաձայնաձևներինը:

Ըստ «ամուսնական կարգավիճակի»՝ տվյալները դրսևորում են մի հետաքրքիր օրինաչափություն- , ըստ որի խիստ հազվադեպ միասնականություն կա ներկայումս գուգրնկեր ունեցող և նախկինում գուգրնկեր ունեցած կանանց միջև: Այսպես, հարցվողների մասնաբաժինը, ովքեր կողմ են այն գաղափարին, թե ընտանեկան բռնությունն անձնական խնդիր չէ, որին օրենքը չպետք է միջամտի, կազմում է 54.9%՝ առաջին, և 55.1%՝ վերջին խմբում: Այն հարցվողների մասնաբաժինը, ովքեր բարեհաճ չեն վերոնշյալ գաղափարին, կազմում է 31.5%՝ առաջին, և 29.6%՝ երկրորդ խմբում: Այս խմբերում կանանց գրեթե միևնույն տոկոսն է ընտրել «չգիտեմ» տարբերակը (12.9% և 13.6%):

Երբևէ գուգրնկեր չունեցած կանանց տվյալներն այլ օրինաչափություն են դրսևորում՝ նախորդ երկու խմբերի համեմատությամբ: Եթե այն հարցվողների տոկոսը, ովքեր համաձայնել են, թե ընտանեկան բռնությունն անձնական խնդիր է, որին օրենքը չպետք է միջամտի (30.5%) գրեթե նույնն էր, ինչ որ նախորդ երկու խմբերում, ապա այս ձևակերպման հետ չհամաձայնաձևների տոկոսն այս դեպքում ավելի ցածր է (48.5%): Այսպիսով, այս կանանց գրեթե կեսը, բայց ոչ մեծամասնությունը, կողմնակից է այն գաղափարին, որ ընտանեկան բռնությունն անձնական խնդիր չէ, և օրենքը պետք է միջամտի: «Զգիտեմ» պատասխանողների տոկոսը (18.9%) նույնպես նկատելիորեն բարձր է հարցվողների այս խմբում՝ նախորդ երկու խմբերի համեմատությամբ:

Բնակչության վայրը հստակ ամենատարբերակիչ գործոնն է նշված հարցի հանդեպ ձևավորված վերաբերմունքի առումով: Անհրաժեշտ է նշել, որ քաղաքաբնակ (այս կատեգորիան ներառում է Երևանի և այլ քաղաքների բնակիչներին) և գյուղաբնակ հարցվողների միջև տարբերությունն ակնկալվածի չափ մեծ չէ: Այսպես, քաղաքաբնակ հարցվողների 30.6%-ը և գյուղաբնակների 32.5%-ն ընտանեկան բռնությունը համարում են անձնական խնդիր, որին օրենքը չպետք է միջամտի: Միևնույն ժամանակ, քաղաքաբնակ հարցվողների 55.5%-ը և գյուղաբնակների 50.2%-ը համաձայն չեն այս տեսակետի հետ: Առաջին խմբի 13.1%-ը և վերջինի 15.9%-ը այս հարցի շուրջ դեռ չեն կողմնորոշվել:

Այնուամենայնիվ, զգալի տարբերություն է նկատվում Երևանի և այլ քաղաքային բնակավայրերի հարցվողների միջև: Առաջին, երևանաբնակ կանանց գրեթե կեսը, բայց ոչ մեծամասնությունը, համարում է, որ օրենքը պետք է միջամտի ընտանեկան բռնության դեպքում (47.2%): Այլ քաղաքային բնակավայրերից հարցվողների շրջանում նման ձևով մտածողները կազմում են 60.8%: Երկրորդ, երևանաբնակ հարցվողների տոկոսը, ովքեր կարծում են, որ օրենքը չպետք է միջամտի ընտանեկան բռնությանը, աննախադեպ բարձր է (41.9%): Ընտրանքում ընդգրկված հարցվողների ոչ մի այլ խումբ կամ ենթախումբ նման բարձր ցուցանիշ չի արձանագրել օրենքի կողմից միջամտությանը դեմ արտահայտվելու առումով: Այսպես մտածող հարցվողների տոկոսը շատ, գրեթե աննախադեպ ցածր է այլ քաղաքային բնակավայրերում (23.3%): Երրորդ, չկողմնորոշված հարցվողների տոկոսը երևանաբնակների շրջանում ցածր է (9.9%), հատկապես այլ քաղաքային բնակավայրերի համեմատությամբ (15.2%):

Թեև ոչ այնքան մեծ, այնուամենայնիվ տարբերությունը երևանաբնակների և այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների տեսակետների միջև բավականին զգալի է, հատկապես այն հարցվողների դեպքում, ովքեր կարծում են, որ ընտանեկան բռնությունն անձնական խնդիր է, որին օրենքը չպետք է միջամտի: Եթե այսպես է մտածում գյուղաբնակ հարցվողների ընդամենը 32.5%-ը, ապա երևանաբնակ հարցվողների շրջանում այսպես մտածողների թիվը գրեթե 10 տոկոսային կետով ավելի բարձր է (41.9%):

Հետագա հետազոտություններ և ուսումնասիրություններ, այդ թվում՝ որակական հետազոտություններ են անհրաժեշտ, որպեսզի հաշվարկվեն այդ տարբերությունները, ինչպես նաև հիմնավորվեն երևանաբնակների հայրիշխանական տեսակետներին առավել հակվածության պատճառները՝ այլ քաղաքային և նույնիսկ գյուղական բնակավայրերի բնակիչների համեմատությամբ:

Տվյալները հակված են մատնանշելու, որ հայ հասարակության տարբեր հատվածներում աստիճանաբար տարածվում է այն ընկալումը, որ կանանց նկատմամբ բռնությունն անձնական խնդիր չէ,

նույնիսկ եթե իրագործվել է ընտանիքի անձնական ոլորտում, և որ պետությունը պարտավոր է միջամտել՝ բռնությանը վերջ դնելու և այն կանխելու ու գենդերային բռնության թիրախ դարձած կանանց համապատասխան պաշտպանություն տրամադրելու նպատակով:

Մեկ այլ կարևոր խնդիր է, թե արդյոք հարցմանը մասնակցած կանայք արդարացնում են գուցընկերոջ կողմից բռնությունը որոշակի իրավիճակներում: Աղյուսակ 2.21-ում ներկայացված են կնոջ նկատմամբ տղամարդու վատ վերաբերմունքի համար բավարար մի շարք պատճառների նկատմամբ կանանց տեսակետների վերաբերյալ տվյալներ:

Աղյուսակ 2.21. Կանանց տեսակետներն այն պատճառների վերաբերյալ, որոնք կարող են արդարացնել տղամարդու կողմից կնոջը ձեռնարկելը

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց փոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր կարծում են, որ տղամարդու համար բավարար պատճառ է խիել իր կնոջը, եթե (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Կինը տնային գործերը չի կատարել այնպես, որ ամուսինը գոհ լինի	Կինը չի ենթարկվում ամուսնուն	Կինը հրաժարվում է սեռական հարաբերություն ունենալ ամուսնու հետ	Կինը հարցնում է ամուսնուն, թե արդյոք նա սիրուհիներ ունի	Ամուսինը կասկածում է, որ կինը հավատարիմ չէ	Ամուսինը պարզում է, որ կինը հավատարիմ չէ	Նշված պատճառներից ամուսնուն անհիմն համայնքում կանանց տոկոսը	Կանանց թիվը (բոլորը)
Տարիք	15-24	0.9	7.8	0.7	3.4	3.3	35.0	37.3	297
	15-19	1.7	6.8	1.0	1.8	3.1	32.6	33.1	128
	20-24	0.2	8.6	0.5	4.6	3.5	36.8	40.5	169
	25-34	1.3	8.6	0.6	2.3	5.2	31.0	34.1	518
	35-44	2.5	11.4	1.7	4.4	5.6	35.9	39.1	705
	45-59	2.8	11.9	2.0	2.2	5.8	34.5	37.4	1,229
Բնակության վայր	Քաղաքային	2.2	9.7	1.4	3.0	4.6	33.3	36.4	2,011
	Երևան	3.7	7.3	1.7	2.0	4.2	24.8	28.4	792
	Այլ քաղաքային	1.3	11.2	1.2	3.7	4.8	38.8	41.5	1,219
	Գյուղական	2.2	13.5	1.8	2.6	7.5	36.9	39.5	738
Ամուսնական կարգավիճակ	Ամուսնացած չի եղել	0.3	4.3	0.5	2.2	3.8	23.5	25.2	382
	Ներկայումս ամուսնացած	2.8	12.1	1.6	3.0	6.0	36.5	39.8	2,082
	Նախկինում ամուսնացած	0.7	8.6	2.5	3.0	2.7	32.4	34.4	285
Երեխաների թիվը	0	0.7	5.0	0.7	2.2	3.8	25.0	26.5	470
	1-2	2.3	10.1	1.3	3.2	4.8	35.6	38.7	1,495
	3+	3.1	15.2	2.4	2.9	7.5	37.3	40.9	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	8
	Ընդհանուր տարրական	3.2	21.6	5.7	3.1	4.9	41.0	44.1	118
	Ընդհանուր միջնակարգ	2.1	14.1	1.7	3.4	5.9	39.2	42.4	1,104
	Միջին մասնագիտական	3.0	10.0	1.6	3.6	6.6	35.5	38.8	881
	Բարձրագույն	1.1	3.3	0.2	1.0	2.5	22.8	24.7	638
Զբաղվածություն	Չաշխատող	2.6	11.8	1.7	4.0	5.9	35.8	38.5	1,712
	Աշխատող	1.9	8.1	1.0	1.1	3.4	29.9	32.9	873
	Մեզոնային աշխատանք	0.4	13.8	2.5	1.5	10.2	42.8	48.6	149
	Այլ	15
Ընդամենը		2.2%	10.7%	1.5%	2.9%	5.4%	34.3%	37.2%	2,749

Ինչպես ցույց են տալիս տվյալները, կնոջը խփելու հանդեպ կանանց վերաբերմունքը մեծապես կախված է հարցվողի կենսագրական բնութագրիչներից:

Այսպես, այս հարցի վերաբերյալ նշված վեց հանգամանքներից առնվազն երեքը չեն համարվել կնոջը խփելու բավարար պատճառ: Հարցվողների համապատասխանաբար միայն 1.5%, 2.2% և 2.9%-ն են կարծում, որ ամուսինը բավարար պատճառ ունի կնոջը խփելու, եթե վերջինը *հրաժարվում է սեռական հարաբերություն ունենալ ամուսնու հետ, փնային գործերը չի կատարում այնպես, որ ամուսինը գոհ լինի*, կամ *հարցնում է ամուսնուն, թե արդյոք նա սիրուհիներ ունի*:

Կնոջը խփելու համար մյուս երեք պատճառները, հարցվողների կարծիքով, ավելի հիմնավոր են թվում, թեկուզև տարբեր չափով: Անհրաժեշտ է նաև նշել, որ կախված նշված պատճառներից, հարցվողների տեսակետների միջև տարբերություններն առավել ցայտուն ու ակնառու են դառնում:

Չնայած ավելի մեծ լինելու պարագային, քան առաջին երեք հանգամանքների դեպքում, հարցվողների մասնաբաժինը, ովքեր կարծում են, որ *ամուսնու կասկածները կնոջ հավատարմության վերաբերյալ* կնոջը խփելու բավարար պատճառ են, այնուամենայնիվ ցածր է (5.4%): «Տարիքի» և «երեխաների թվի» գործոններն ուղղակի և հստակ փոխկապակցվում են այս պատճառի նկատմամբ հարցվողի տեսակետի հետ: Այլ կերպ ասած, որքան ավելի տարիքով մեծ են հարցվողները և/կամ որքան ավելի շատ երեխաներ ունեն, այնքան ավելի մեծ է նրանց շրջանում կնոջն անհավատարմության մեջ կասկածելու համար խփելը հիմնավոր պատճառ համարողների տոկոսը: Այսպես, եթե 15-24 տարեկան հարցվողների 3.3%-ն այս կասկածները համարում է հիմնավոր պատճառ, ապա նման ձևով մտածող հարցվողների ցուցանիշը 45-59 տարեկանների խմբում 1.8 անգամ ավելի մեծ է (5.8%): Նմանապես, եթե երեխաներ չունեցող հարցվողների ընդամենը 3.8%-ն է այդ կարծիքին, ապա 1-2 և երեք կամ ավելի երեխա ունեցող հարցվողների շրջանում այս կարծիքին են համապատասխանաբար 4.8% և 7.5%-ը:

«Բնակության վայրի» գործոնը նույնպես հարաբերականորեն ուժեղ ազդեցություն ունի: Անհավատարմության մեջ կնոջը կասկածելը նրան խփելու բավարար պատճառ համարող հարցվողների մասնաբաժինը 1.5 անգամ ավելի մեծ է գյուղական (7.5%), քան քաղաքային բնակավայրերում (4.6%): Կարևոր է, որ այս դեպքում Երևանի և այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների տված պատասխանների միջև տարբերությունը մեծ չէ:

Ինչ վերաբերում է «ամուսնական կարգավիճակի» գործոնին, ամենամեծ տարբերությունը գրանցվել է ներկայումս զուգընկեր ունեցող (6.0%) և անցյալում զուգընկեր ունեցած (2.7%) և երբևէ զուգընկեր չունեցած (3.8%) հարցվողների միջև:

Հազվագյուտ փաստ է, երբ «կրթության» գործոնի ազդեցությունը բավականին խրթին ձևով է հանդես գալիս: Կրթական մակարդակի և առավել առաջադիմական տեսակետների ուղիղ փոխկապակցվածության սովորական օրինաչափությունն այս դեպքում գրեթե հակադարձված է: Այսպես, եթե տարրական կրթությամբ հարցվողների միայն 4.9%-ն է արդարացնում անհավատարմության մեջ կասկածելու դեպքում կնոջը խփելը, ապա ընդհանուր միջնակարգ և միջին մանսագիտական կրթությամբ հարցվողների դեպքում ցուցանիշները համապատասխանաբար կազմում են 5.9% և 6.6%: Միայն բարձրագույն կրթության դեպքում է, որ սովորական օրինաչափությունը վերականգնվում է, և վերոնշյալ պատճառը խփելու համար բավարար համարող հարցվողներն այս ենթախմբում կազմում են ամենացածր տոկոսը (2.5%):

Ընտրանքի յուրաքանչյուր տասը հարցվողից մեկը (կամ 10.7%-ը) կարծում է, որ ամուսինը կնոջը խփելու բավարար պատճառ ունի, եթե վերջինը *չի ենթարկվում իրեն*: «Տարիքի» և «երեխաների թվի» գործոններն ուղիղ փոխկապակցվում են այս հանգամանքի վերաբերյալ հարցվողների ունեցած կարծիքի հետ, այսինքն՝ որքան ավելի տարիքով մեծ են հարցվողները և/կամ որքան ավելի շատ երեխաներ ունեն, այնքան ավելի մեծ է նրանց շրջանում կնոջ անհնազանդությունն ամուսնու խփելու համար բավարար պատճառ համարողների տոկոսը:

Տարիքային խմբերում ցուցանիշը բարձրանում է 15-24 տարեկանների շրջանում գրանցված 7.8%-ից մինչև 8.6%՝ 25-34 տարեկանների շրջանում և մինչև 11.4% և 11.0%՝ համապատասխանաբար 35-44 և 45-59 տարիքային խմբերում:

Եթե երեխա չունեցող հարցվողների միայն 5.0%-ն է համարում, որ կնոջ անհնազանդությունն ամուսնու խփելու համար բավարար պատճառ է, ապա 1-2 կամ երեք և ավելի երեխա ունեցողների շրջանում այս տեսակետը կիսող հարցվողները համապատասխանաբար կազմում են 10.1% և 15.2%:

Ինչ վերաբերում է «ամուսնական կարգավիճակի» գործոնին, ապա ամենացածր ցուցանիշը թերևս երբևէ զուգընկեր չունեցած կանանց շրջանում է: Այս ցուցանիշը երկու անգամ մեծանում է նախկինում զուգընկեր ունեցած (8.6%) և գրեթե երեք անգամ՝ ներկայումս զուգընկեր ունեցող (12.1%) հարցվողների շրջանում:

«Բնակության վայրի» և հատկապես «կրթության» գործոններն ունեն այնպիսի ազդեցություն, որը համապատասխանում է սովորական օրինաչափությանը: Երևանի բնակիչներն այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների համեմատությամբ առավել քիչ են հակված կնոջ անհնազանդությունն ամուսնու խփելու համար հիմնավոր պատճառ համարելու (7.3%-ը՝ 11.2%-ի դիմաց): Նմանապես, վերջիններն ավելի քիչ են դա հիմնավոր պատճառ համարում, քան գյուղական բնակավայրերի բնակիչները (13.5%): Որքան ավելի բարձր է հարցվողների կրթական մակարդակը, այնքան ավելի քիչ են նրանք կնոջ անհնազանդությունը համարում ամուսնու համար խփելու հիմնավոր պատճառ: Այն հարցվողների մասնաբաժինը, ովքեր դա հիմնավոր պատճառ են համարում, նվազում է 21.6%-ից (ընդհանուր տարրական կրթությամբ հարցվողներ) մինչև 14.1% և 10.0% (համապատասխանաբար՝ ընդհանուր միջնակարգ և միջին մասնագիտական կրթությամբ հարցվողներ) և հասնում մինչև 3.3% (բարձրագույն կրթությամբ հարցվողներ):

Հարցվողների կարծիքով, *անհավասարությունը*, թվում է ամուսնու համար կնոջը խփելու ամենամեծ արդարացումը: Ընտրանքի յուրաքանչյուր երրորդ կինը (34.3%) արդարացնում և ներում է իր կնոջը խփող ամուսնուն, եթե վերջինը պարզել է, որ կինը հավատարիմ չէ: Սա հստակ ցուցանիշ է, որ հայրիշխանական կարծրատիպերը խոր արմատներ են ձգել լայն հասարակության մեջ, երբ կանանց զգալի մասնաբաժինը, չնայած կրկնակի չափանիշները գիտակցելուն, արդարացնում է սեռական զուգընկերոջ բռնությունը կնոջ նկատմամբ, ով շեղվում է «ընդունված» սոցիալական նորմերից կամ չի համապատասխանում դրանց, որոնք ղեկավարում են կնոջ սեռականությունը:

Անհրաժեշտ է նշել, որ ընտրանքում ընդգրկված գրեթե բոլոր *տարիքային* խմբերի կանայք սկզբունքորեն ունեն միևնույն վերաբերմունքը (ամուսնական դավաճանությունը կնոջը խփելու համար հիմնավոր պատճառ է համարում հարցվողների 34.5%-35.9%-ը), բացառությամբ 25-34 տարեկանների, որտեղ ցուցանիշը կազմում է 31.0%:

Հարցվողների սոցիալական և ժողովրդագրական մնացած բոլոր բնութագրիչները ևս (ինչպես՝ բնակության վայր, ամուսնական կարգավիճակ, երեխաների թիվ և կրթություն) հստակ և նշանակալի ազդեցություն ունեն նրանց վերաբերմունքի ձևավորման վրա:

Երեխաների գործոնը շատ կարևոր է: Գրեթե միևնույն թվով կանայք, ովքեր ունեն 1-2 (35.6%) կամ երեք կամ ավելի երեխա (37.3%), արդարացնում են ամուսնուն, որը խփել է իր կնոջը դավաճանության համար: Զգալիորեն փոքր թիվ կազմող երեխա չունեցող կանայք (25.0%) ամուսնական դավաճանությունը համարում են սեռական զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելու հիմնավոր պատճառ:

Նմանապես, ներկայումս զուգընկեր ունեցող և նախկինում զուգընկեր ունեցած կանանց միջև տարբերությունը շատ փոքր է՝ երբևէ զուգընկեր չունեցած կանանց համեմատությամբ: Այսպես, ներկայումս զուգընկեր ունեցող կանանց 36.5%-ը համարում է, որ դավաճանությունն ամուսնու համար կնոջը խփելու հիմնավոր պատճառ է: Այլևս զուգընկեր չունեցող կանանց շրջանում նման կարծիքի է հարցվողների 32.4%-ը: Երբևէ զուգընկեր չունեցած կանանց միայն 23.5%-ն է կիսում այս կարծիքը:

Առաջին հայացքից, քաղաքաբնակների և գյուղաբնակների միջև վերաբերմունքի տարբերությունը շատ փոքր է (համապատասխանաբար՝ 33.3% և 36.9%): Այնուամենայնիվ, երբ տվյալները բաշխվում են ըստ Երևանի և այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների, ապա ստացված պատկերը զգալիորեն տարբեր է: Այսպես, երևանաբնակների շրջանում վերոնշյալ պատճառը խփելու համար բավարար համարողների թիվը նույնիսկ ավելի բարձր է (38.8%), քան գյուղաբնակների շրջանում: Մյուս կողմից, Երևանում բնակվող հարցվողների մասնաբաժինը, ովքեր վերոնշյալ իրավիճակում արդարացնում են սեռական գույքնկերոջ կողմից բռնությունը, 1.5 անգամ ավելի փոքր է (24.8%):

«Կրթության» գործոնի ներգործությունը համապատասխանում է ակնկալվող օրինաչափությանը, այսինքն՝ **որքան բարձր է կրթության մակարդակը, այնքան քիչ է հավանականությունը, որ հարցվողները կներեն սեռական գույքնկերոջ կողմից բռնությունը**, նույնիսկ եթե այն հրահրված է անհավատարմությամբ: Իր անհավատարիմ կնոջը խփող ամուսնուն արդարացնող հարցվողների տոկոսը նվազում է ընդհանուր տարրական կրթությամբ կանանց շրջանում գրանցված 41.0%-ից մինչև 22.8%՝ բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում (ընդհանուր միջնակարգ և միջին մասնագիտական կրթությամբ կանանց դեպքում ցուցանիշները համապատասխանաբար կազմում են 39.2% և 35.5%):

ՍԵՌԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

Կնոջ սեռական ինքնուրույնության ճանաչումը և դրա նկատմամբ հարգանքն ու պաշտպանությունն օրենքով՝ կանանց նկատմամբ բռնությանը վերջ դնելու ամենաէական նախապայմաններից են, քանի որ կնոջ սեռականության նկատմամբ վերահսկման օրինական և ընդունելի լինելու ընկալումն արմատական պատճառ և խթան է հանդիսանում կանանց նկատմամբ ֆիզիկական և սեռական բռնությունների շատ ձևերի համար: Կանանց սեռական ինքնուրույնության մերժումը կանանց ստորակայության և տղամարդկանց գերիշխանության ամրապնդման վերջնական պատակը և, միևնույն ժամանակ, մղիչ ուժն է:

Ինչպես մատնանշված է ԱՀԿ 2002թ. զեկույցում, շատ տղամարդիկ չեն ընդունում կնոջ՝ «սեռական հարաբերություն ունենալու վերաբերյալ ինքնուրույն որոշում կայացնելու իրավունքը: Շատ մշակույթներում կանայք, ինչպես և տղամարդիկ ամուսնության պարագայում համարում են, որ կինը գրեթե առանց սահմանափակումների պարտավոր է լինել սեռականորեն մատչելի ...»⁶¹:

Անհրաժեշտ է նշել, որ չնայած հարցման տվյալները որոշակի հայրիշխանական արժեքների վերածննդի փաստեր են տրամադրում և հակված են մատնանշելու, որ կանանց ենթակայություն և տղամարդկանց գերիշխանություն վերագրող որոշ մշակութային և սոցիալական նորմեր կարող են կարևորվել, դրանք նաև աներկբայորեն ցույց են տալիս, որ հարցմանը ենթարկված կանանց մեծամասնությունը մերժում է տղամարդկանց սեռական առանձնաշնորհության գաղափարը:

Այս բաժնում *հարցվողների չհամաձայնվելն* այն պնդմանը, թե կինը պարտավոր է սեռական հարաբերություն ունենալ ամուսնու հետ, նույնիսկ եթե ինքը չի ցանկանում, և ամուսնացած կնոջ՝ մի շարք պատճառներով ամուսնու հետ սեռական հարաբերություն չունենալու իրավունքի *ճանաչումը* մեկնաբանվում են որպես կնոջ սեռական ինքնուրույնության գրավական:

⁶¹ ԱՀԿ զեկույց, 2002թ., էջ 162:

Աղյուսակ 2.22. Հարցվողների կարծիքները ցանկությանը հակառակ ամուսնու հետ սեռական հարաբերություն ունենալու կնշ «պարտականության» վերաբերյալ

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց փոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր համաձայն են կամ համաձայն չեն այն ձևակերպմանը, որ կինը պարտավոր է սեռական հարաբերություն ունենալ ամուսնու հետ, նույնիսկ եթե ինքը չի ցանկանում (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Համա- ձայն է	Համա- ձայն չէ	Չգիտի	Հրաժարվել է / պատասխան չկա	Ընդամենը, %	Կանանց թիվը (բոլորը)
Տարիք	15-24	11.6	59.3	22.9	6.2	100.0	297
	15-19	14.7	45.1	33.2	7.0	100.0	128
	20-24	9.3	70.0	15.1	5.6	100.0	169
	25-34	17.0	69.0	10.4	3.6	100.0	518
	35-44	12.2	75.0	9.4	3.4	100.0	705
	45-59	15.0	70.0	11.7	3.3	100.0	1,229
Բնակության վայր	Քաղաքային	13.2	72.4	10.8	3.6	100.0	2,011
	Երևան	16.1	77.5	5.8	0.6	100.0	792
	Այլ քաղաքային	11.4	69.1	14.1	5.4	100.0	1,219
	Գյուղական	17.1	63.3	15.4	4.2	100.0	738
Ամուսնական կարգավիճակ	Ամուսնացած չի եղել	8.2	60.2	27.2	4.4	100.0	382
	Ներկայումս ամուսնացած	15.4	72.1	9.2	3.3	100.0	2,082
	Նախկինում ամուսնացած	14.2	67.4	12.3	6.1	100.0	285
Երեխանե- րի թիվը	0	10.2	61.1	24.4	4.3	100.0	470
	1-2	13.5	74.5	8.0	4.0	100.0	1,495
	3+	18.3	66.6	12.4	2.7	100.0	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	8
	Ընդհանուր տարրական	24.2	53.4	17.2	5.2	100.0	118
	Ընդհանուր միջնակարգ	16.2	64.5	14.4	4.9	100.0	1,104
	Միջին մասնա- գիտական	13.5	71.7	11.3	3.5	100.0	881
	Բարձրագույն	10.1	80.1	8.0	1.8	100.0	638
Զբաղվածու- թյուն	Չաշխատող	14.4	69.8	12.2	3.6	100.0	1,712
	Աշխատող	12.8	73.2	10.5	3.5	100.0	873
	Սեզոնային աշխատանք	19.3	55.0	19.3	6.4	100.0	149
	Այլ	15
Ընդամենը		14.2%	70.0%	12.1%	3.7%	100.0%	2,749

Աղյուսակ 2.22-ում ամփոփված տվյալները ցույց են տալիս, որ հարցվողների ընդամենը 14.2%-ն է համաձայն այն ձևակերպմանը, որ կինը պարտավոր է սեռական հարաբերություն ունենալ ամուսնու հետ, նույնիսկ եթե ինքը չի ցանկանում: Մինչև ժամանակ, այս ձևակերպմանը չհամաձայնած հարցվողների տոկոսը 5 անգամ ավելի բարձր է (70.0%): Հարցվողների 12.1%-ը չեն կարողացել պա-

տասխանել, իսկ 3.7%-ը հստակ պատասխան չեն տվել՝ *կողմ են*, թե *դեմ*:

Տարիքային գործոնը հետաքրքիր զարգացում է ցույց տալիս: Կանանց սեռական ինքնությունության ջատագովների նվազագույն ցուցանիշը գրանցվել է 15-19 տարեկանների խմբում (45.1%), ովքեր ընտրանքի ամենաքիչ հասունացած և փորձառու ներկայացուցիչներն են: Սակայն պետք է նշել, որ այս ցուցանիշը կազմում է տվյալ ենթախմբի գրեթե կեսը, և միայն 14.7%-ն են համաձայն այն ձևակերպմանը, որ կինը պարտավոր է սեռական հարաբերություն ունենալ իր ամուսնու հետ, նույնիսկ եթե չի ցանկանում: Հաջորդ 20-24 տարեկանների ենթախմբից մինչև բոլոր հաջորդ տարիքային խմբերը կանանց սեռական ինքնությունության ջատագովների տոկոսը կազմում է մոտ 70.0% և ավելի:

Ինչ վերաբերում է *բնակության* գործոնին, ապա կնոջ սեռական ինքնությունության ամենաշատ կողմնակիցները Երևանից են (77.5%) և այլ քաղաքային բնակավայրերից (69.1%): Չնայած կնոջ սեռական ինքնությունության կողմնակիցների մակարդակն առավել ցածր է գյուղաբնակների շրջանում, այնուամենայնիվ դրանք կազմում են հստակ մեծամասնություն՝ 63.3%, իսկ այլ կերպ մտածողները՝ ընդամենը 17.1%:

Հետաքրքիր պատկեր է ստացվում, երբ տվյալները բաշխվում են ըստ «*ամուսնական կարգավիճակի*»: Երբևէ զուգընկեր չունեցած հարցվողներն ամենափոքր տոկոսն են կազմում կնոջ սեռական ինքնությունության թե՛ կողմնակիցների և թե՛ հակառակորդների շրջանում՝ ի տարբերություն ներկայումս զուգընկեր ունեցող կամ նախկինում զուգընկեր ունեցած կանանց: Այդ խմբի հարցվողների 8.2%-ը համաձայնել և 60.2%-ը՝ չեն համաձայնել այն ձևակերպմանը, որ կինը պարտավոր է սեռական հարաբերություն ունենալ իր ամուսնու հետ, նույնիսկ եթե չի ցանկանում: Այս ձևակերպմանը համաձայնած և չհամաձայնած հարցվողների մասնաբաժինները համապատասխանաբար կազմում են 15.4% և 72.1%՝ ներկայումս զուգընկեր ունեցող՝ և 14.2% և 67.4%՝ նախկինում զուգընկեր ունեցած կանանց դեպքում: Փոքր-ինչ զարմանալի է, որ այս ձևակերպման շուրջ չկողմնորոշված հարցվողների տոկոսը 2-3 անգամ ավելի բարձր է նախկինում զուգընկեր ունեցած և ներկայումս զուգընկեր ունեցող կանանց շրջանում (համապատասխանաբար՝ 12.3% և 9.2%):

«*Երեխաների թվի*» գործոնի ազդեցությունը հետևում է միևնույն օրինաչափությանը: Իրենց մոտեցման մեջ դեռևս չկողմնորոշված հարցվողների տոկոսը սակայն ամենաբարձրն է երեխա չունեցող կանանց շրջանում (24.4%), մինչդեռ այդ ցուցանիշը 2-3 անգամ ցածր է երեք կամ ավելի (12.4%) և մեկ կամ երկու երեխա (8.0%) ունեցող կանանց շրջանում: Համապատասխանաբար, կնոջ սեռական ինքնությունության կողմնակիցների և հակառակորդների տոկոսն ամենացածրն է երեխա չունեցող հարցվողների շրջանում (համապատասխանաբար՝ 10.2% և 61.1%)՝ երեխաներ ունեցող հարցվողների համեմատությամբ: Միևնույն ժամանակ, երեք կամ ավելի երեխա ունեցող կանայք ավելի քիչ են կողմնակից կնոջ սեռական ինքնությունությանը, քան 1-2 երեխա ունեցողները: Այսպիսով, առաջին խմբի 18.3%-ը համաձայն է և 66.6%-ը համաձայն չէ այն ձևակերպմանը, որ կինը պարտավոր է սեռական հարաբերություն ունենալ իր ամուսնու հետ, նույնիսկ եթե ինքը չի ցանկանում, մինչդեռ հաջորդ խմբի համապատասխան ցուցանիշները կազմում են 13.5% և 74.5%:

«*Կրթության*» գործոնի հետ կապված՝ կնոջ սեռական ինքնությունության կողմնակիցների թիվը բնականաբար ուղիղ փոխկապակցվում է հարցվողների կրթական մակարդակի հետ: Անհրաժեշտ է նաև նշել, որ կրթական ցենզի աճին զուգընթաց ոչ միայն մեծանում է կնոջ սեռական ինքնությունության կողմնակիցների թիվը, այլև մեծանում է կողմնակիցների հարաբերական կշիռն ընդդիմադիրների նկատմամբ, մինչդեռ այս հարցում դեռևս չկողմնորոշված հարցվողների թիվը (նաև պատասխանից հրաժարված) նվազում է:

Այսպիսով, ընդհանուր տարրական կրթությամբ հարցվողների շրջանում միայն աննշան մեծամասնությունը (53.4%) չի համաձայնում այն ձևակերպմանը, որ կինը պարտավոր է սեռական հարաբերություն ունենալ իր ամուսնու հետ, նույնիսկ եթե չի ցանկանում: Այս ցուցանիշն ավելի քան երկու անգամ գերազանցում է կնոջ սեռական ինքնությունությանն ընդդիմադիրների թիվը (24.2%):

Ընդհանուր միջնակարգ կրթությամբ կանանց խմբում կնոջ սեռական ինքնությունության կողմնա-

կիցների թիվը (64.5%) մոտ 4 անգամ ավելի բարձր է, քան հակառակորդներինը (16.2%):

Միջին մասնագիտական կրթությամբ հարցվողների շրջանում կնոջ սեռական ինքնությունության կողմնակիցների թիվը (71.7%) մոտավորապես 5.5 անգամ ավելի մեծ է, քան ընդդիմադիրներինը (13.5%):

Ինչ վերաբերում է բարձրագույն կրթությամբ հարցվողներին, ապա նրանց շրջանում կնոջ սեռական ինքնությունության կողմնակիցների թիվը (80.1%) մոտավորապես 8 անգամ ավելի բարձր է, քան հակառակորդներինը (10.1%):

«Չգիտեմ» տարբերակն ընտրած հարցվողների մասնաբաժինները վերոնշյալ խմբերի համար համապատասխանաբար կազմում են 17.2%, 14.4%, 11.3% և 8.0%:

Հարցման ժամանակ նաև հետազոտվել է, թե արդյո՞ք հարցվողները հիմնավորված են համարում որոշ պատճառներ, որոնց դեպքում ամուսնացած կինը կարող է հրաժարվել սեռական հարաբերություն ունենալ իր ամուսնու հետ:

Աղյուսակ 2.23. Հարցվողների կողմից մի շարք պատճառների ընկալումը, որոնց դեպքում ամուսնացած կինը կարող է հրաժարվել սեռական հարաբերություն ունենալ իր ամուսնու հետ

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց փոփոխյին բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր համաձայն են այն ձևակերպմանը, որ կինը կարող է հրաժարվել սեռական հարաբերություն ունենալ իր ամուսնու հետ, եթե՝ (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Ցանկություն չունի	Ամուսինը հարբած է	Կինը հիվանդ է	Ամուսինը վատ է վերաբերվում կնոջը	Նշված պատճառներից առնվազն մեկին համաձայնած կանանց տոկոսը	Կանանց թիվը (բոլորը)
Տարիք	15-24	70.3	75.1	76.7	75.2	78.6	297
	15-19	62.3	66.0	66.5	65.2	67.2	128
	20-24	76.4	81.9	84.4	82.8	87.3	169
	25-34	71.1	76.3	79.9	77.6	81.0	518
	35-44	73.0	78.1	80.7	76.4	83.1	705
	45-59	70.7	77.1	80.8	77.5	83.1	1,229
Բնակության վայր	Քաղաքային	70.7	76.1	77.7	75.0	79.9	2,011
	Երևան	83.1	88.5	88.8	86.9	90.9	792
	Այլ քաղաքային	62.6	68.0	70.5	67.2	72.7	1,219
	Գյուղական	73.2	79.5	86.9	82.5	88.6	738
Ամուսնական կարգավիճակ	Ամուսնացած չի եղել	68.9	70.8	73.4	72.4	74.6	382
	Ներկայումս ամուսնացած	72.5	78.4	81.6	78.3	83.8	2,082
	Նախկինում ամուսնացած	66.4	75.1	78.3	73.7	81.3	285
Երեխաների թիվը	0	68.3	72.4	75.4	74.4	76.3	470
	1-2	73.2	78.6	80.9	78.4	83.0	1,495
	3+	69.6	76.6	81.7	75.8	84.2	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	8
	Ընդհանուր տարրական	48.0	60.4	70.5	66.9	73.4	118
	Ընդհանուր միջնակարգ	72.7	77.2	81.2	76.7	83.7	1,104
	Միջին մասնագիտական	69.4	75.5	78.4	75.4	80.3	881
	Բարձրագույն	76.0	81.7	82.6	81.7	84.0	638
Զբաղվածություն	Չաշխատող	68.5	74.8	78.6	74.9	80.3	1,712
	Աշխատող	77.9	82.2	83.9	81.8	86.6	873
	Սեզոնային աշխատանք	64.2	71.1	76.6	74.1	78.5	149
	Այլ	15
Ընդամենը		71.3%	77.0%	80.2%	77.0%	82.2%	2,749

Ինչպես վկայում են Աղյուսակ 2.23-ում ամփոփված տվյալները, չնայած սեռականության ոլորտում լայնորեն տարածված են կրկնակի չափանիշները, իսկ հայրիշխանական կարծրատիպերը վերածնվում են, ինչպես նաև հիմնական մշակութային և հասարակական նորմերը երկրում կողմնակից չեն կնոջ ինքնուրույնությանը, հատկապես իր մարմնի և սեռականության նկատմամբ վերահսկողություն ունենալու առումով, այնուհանդերձ հարցվողների զգալի մեծամասնությունը ոչ միայն մերժում է տղամարդու սեռական առանձնաչափերը, այլև հիմնավոր է համարում այն պատճառները, որոնց

պարագային ամուսնացած կինը կարող է հրաժարվել սեռական հարաբերություն ունենալ ամուսնու հետ:

Հետազոտությանը մասնակցած կանանց 71.3%-ը կարծում է, որ ամուսնացած կինը կարող է հրաժարվել սեռական հարաբերություն ունենալ իր ամուսնու հետ, եթե ցանկություն չունի, 77.0%-ը՝ եթե ամուսինը հարբած է, 80.2%-ը՝ եթե կինը հիվանդ է և 77.0%-ը՝ եթե ամուսինը վատ է վերաբերվում:

Առաջին պատճառն այն է, որ *կինը ցանկություն չունի սեռական հարաբերություն ունենալ*: Այս հարցը շատ նման է ամուսնու հետ սեռական հարաբերություն ունենալու կնոջ «պարտականության» հարցին, որի մասին հիշատակվեց ավելի վաղ: Չնայած ըստ կենսագրական բնութագրիչների տվյալների բաշխվածության ժամանակ մի շարք աննշան տատանումների, ընդհանուր առմամբ կանայք այս հարցին հիմնականում պատասխանել են այնպես, ինչպես «պարտականության» հարցի դեպքում:

Ինչ վերաբերում է երկրորդ պատճառին (այսինքն՝ *ամուսինը հարբած է*), ապա առանձին գործոնների ազդեցությունը տարբեր է: Ամենից «չեզոք» գործոնը *տարիքն է*, քանի որ տարիքային խմբերի միջև տարբերությունները միջին հաշվով նվազագույնն են: Միակ բացառությունը՝ երկու ենթախմբերի՝ 15-19 (66.0%) և 20-24 տարեկանների (81.9%) միջև գրանցված տարբերությունն է, ինչը, հավանաբար, բացատրվում է նրանց սոցիալական հասունության և փորձառության տարբերությամբ:

Բնակության վայրին առնչվող տարբերությունները բավականին ցայտուն են: Եթե երևանաբնակ հարցվողների 88.5%-ը հիմնավոր է համարում այդ պատճառը, ապա այլ քաղաքային բնակավայրերում բնակվողների «միայն» 68.0%-ն է մտածում այդպես, իսկ գյուղաբնակների ցուցանիշը դրանց միջակայքում է և կազմում է 79.5%:

Այս պատճառը բավարար է համարվում *ներկայումս զուգրնկեր ունեցող* կանանց մեծ մասի կողմից (78.4%)՝ ի տարբերություն *նախկինում զուգրնկեր ունեցած* (75.1%) կամ *երբևէ զուգրնկեր չունեցած* (70.8%) կանանց:

Տարբերությունները շատ ավելի փոքր են, երբ տվյալները բաշխվում են ըստ *երեխաների թվի*: Վերը նշված պատճառն ամուսնու հետ սեռական հարաբերություն ունենալուց հրաժարվելու համար հիմնավոր համարող հարցվողների ամենաբարձր տոկոսը գրանցվել է 1 կամ 2 երեխա ունեցող կանանց շրջանում (78.6%): Փոքր-ինչ ավելի ցածր տոկոս է գրանցվել երեք և ավելի երեխա ունեցող կանանց շրջանում (76.6%): Երեխա չունեցող կանանց շրջանում այդ կարծիքին է հարցվողների 72.4%-ը:

«*Կրթության*» գործոնի դեպքում տվյալները ցույց են տալիս, որ առկա է կրթական մակարդակի և կնոջ սեռական ինքնուրույնության կողմնակիցների միջև ուղիղ փոխկապակցվածության սովորական օրինաչափությունը, փոքր բացառություն է նկատվում միայն մասնագիտական կրթությամբ կանանց դեպքում: Ամենանկատելի տարբերությունը դիտվում է ընդհանուր տարրական և ընդհանուր միջնակարգ կրթությամբ հարցվողների միջև: Առաջին խմբում ամուսնու հարբածությունը կնոջ կողմից նրա հետ սեռական հարաբերություն ունենալուց հրաժարվելու հիմնավոր պատճառ համարողները կազմում են 60.4%: Երկրորդ խմբում ցուցանիշը 77.2% է: Միջին մասնագիտական կրթություն ստացած հարցվողների շրջանում այս ցուցանիշը փոքր-ինչ ցածր է (75.5%), քան նախորդ խմբում: Տոկոսը թերևս ամենաբարձրն է բարձրագույն կրթությամբ հարցվողների դեպքում (81.7%):

Ինչ վերաբերում է հաջորդ պատճառին (այսինքն՝ *ամուսինը վատ է վերաբերվում կնոջը*), ապա առանձին գործոնների ազդեցությունը շատ նման է նախորդ պատճառի դեպքում դրանց ազդեցությանը: Տատանումներն ու տարբերություններն ընդհանուր առմամբ շատ փոքր են: Ամեն դեպքում, դրանք չեն փոխում ընդհանուր պատկերը:

Աղյուսակ 2.23-ում ընդգրկված տվյալները ցույց են տալիս, որ հարցվողների կարծիքով ամուսնու հետ սեռական հարաբերություն ունենալուց հրաժարվելու ամենից «վավերական» պատճառն ամուսնացած կնոջ համար իր հիվանդ լինելն է, քանի որ յուրաքանչյուր հինգ հարցվողից չորսն այդպես է մատնանշել:

Առանձին գործոնների (կենսագրական բնութագրիչների) ազդեցության օրինաչափությունն ըստ

էության նույնն է, ինչ մյուս պատճառների դեպքում, և միայն որոշ միտումներ ավելի ցայտուն են արտահայտված: Այսպես, «*քննակության վայրի*» գործոնի դեպքում՝ այս պատճառը հիմնավոր համարող հարցվողների մասնաբաժինը գյուղաբնակների շրջանում ոչ միայն շատ բարձր է (86.9%), այլև մոտենում է նույն կարծիքը հայտնաձեռնված երևանաբնակ հարցվողների ցուցանիշին (88.8%): «*Կրթական*» գործոնի դեպքում՝ նույնիսկ ընդհանուր տարրական կրթությամբ հարցվողների մասնաբաժինը, ովքեր կարծում են, որ կինը կարող է հրաժարվել ամուսնու հետ սեռական հարաբերություն ունենալուց, եթե ինքը հիվանդ է, բարձր է (70.5%), իսկ նույն կարծիքն ունեցող հարցվողների մյուս ենթախմբերի միջև տարբերությունը շատ փոքր է (81.2%՝ ընդհանուր միջնակարգ, 78.4՝ մասնագիտական, և 82.6%՝ բարձրագույն կրթությամբ հարցվողների շրջանում):

Հետազոտության արդյունքները տրամադրում են համոզիչ փաստեր, որ հարցվողների գերակշիռ մեծամասնությունը ճանաչում է կնոջ սեռական ինքնուրույնությունը, չի ընդունում տղամարդու սեռական առանձնաշնորհը և ինտիմ փոխհարաբերություններում չի ներում կամ արդարացնում ստիպողական սեռական հարաբերությունը⁶²:

ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Սերտորեն կապված լինելով իրական հավասարության սկզբունքին, որը շեշտադրում է կանանց համար հավասար իրավունքները և հնարավորությունները, կանանց տնտեսական անկախության գաղափարը, *inter alia*, պահանջում է հասարակության մեջ կանանց *քաղաքական, տնտեսական և սոցիալական ազդեցության* աճ, կանանց՝ *որոշումներ կայացնելու և իրենց սեփական կյանքը վերահսկելու*, ինչպես նաև *ինքնարտահայտման և ինքնահասարակարման ավելի մեծ լիազորություն*:

Քանի որ «կանանց նկատմամբ բռնությունը կարևոր սոցիալական մեխանիզմներից մեկն է, որով կանայք ակամա հայտնվում են ստորակա կարգավիճակում տղամարդկանց համեմատ»⁶³, կանանց տնտեսական անկախությունից, այդ թվում՝ տնտեսական եկամուտներից զրկելը, համարվում է *կանանց նկատմամբ տնտեսական բռնություն*:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի *Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության արմատական վերացման մասին բանաձևը* ճանաչում է, որ «ընտանեկան բռնությունը կարող է ներառել տնտեսական եկամուտներից զրկում և մեկուսացում, և որ նման մոտեցումը կարող է ուղղակի վնաս պատճառել կնոջ ապահովությանը, առողջությանը կամ բարեկեցությանը»⁶⁴:

Հետևաբար, կանանց *տնտեսական անկախությունն* առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ այն ավելի մեծ ֆինանսական և անձնական ինքնուրույնության նախապայման է: Երբ կանայք ֆինանսապես ինքնուրույն են, տնտեսական առումով իրենք իրենց վրա հույս դնող և ինքնաբավ, ինչպես նաև նրանց հասանելի են կենսամիջոցները և, ընդհանրապես, երբ տնտեսապես անկախ են, ապա նրանք ավելի քիչ են կախված (կամ ընդհանրապես կախված չեն) իրենց ամուսնուց (զուգրնկերոջից) և ավելի լավ են պաշտպանված սեռական զուգրնկերոջ կողմից բռնությունից: Այս դեպքում կանայք իրատեսական հնարավորություններ ունեն և ի վիճակի են բռնի փոխհարաբերություններին վերջ դնելու որոշում կայացնել, որովհետև հենվում են ոչ միայն զուտ սոցիալական օժանդակության և ապահովության, այլև իրենց սեփական տնտեսական եկամուտների վրա:

Հետազոտության ընթացքում տվյալներ են հավաքագրվել՝ գնահատելու *կնոջ անկախ լինելու հնարավորությունները*, ինչպիսին են՝ սեփականության, աշխատանքի, սեփական եկամուտների տնօրինման և ամուսնու/զուգրնկերոջ համեմատ կնոջ վաստակած գումարի չափի, ինչպես նաև կնոջ *տնտեսական անկախության* կամ սեռական զուգրնկերոջ կողմից կնոջ նկատմամբ *տնտեսական*

⁶² Այսպիսով, հետազոտության արդյունքները հստակ մատնանշում են, որ ՄԱԲՀ փորձագետների այն եզրահանգումը, որ «բազմաթիվ երկրներում տղամարդիկ և կանայք միանման տեսակետներ ունեն ամուսնական բռնաբարության, ստիպողական սեռական հարաբերության և զուգրնկերոջ համապատասխան բռնությունների նկատմամբ» (ՄԱԲՀ, Հոտ, 2003թ., էջ 15), Հայաստանին չի վերաբերում:

⁶³ Հոչակագիր, 1993թ. (Գլխավոր ասամբլեայի թիվ 48/104 բանաձև, 20 դեկտեմբերի 1993թ.):

⁶⁴ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 58/147 բանաձև:

բռնության (երբ ամուսինը/զուգընկերը վերցնում է կնոջ եկամուտը/խնայողությունները կամ հրաժարվում է կենցաղային ծախսերի համար գումար տրամադրել) վերաբերյալ տվյալները:

Ռեսուրսային միջոցների տնօրինումը և վերահսկումը տնտեսական անկախության և ինքնուրույնության կարևոր ցուցիչներ են:

Գյուղական բնակավայրերի հիմնական սեփականություններն են՝ հողատարածքը, կենդանիները, արտադրանքը և բերքը: Ինչպես վկայում է Աղյուսակ 2.24-ը, գյուղաբնակ կանանց միայն շատ փոքր տոկոսն է ինքնուրույն տնօրինում այս ռեսուրսները: Հետևաբար նրանց ինքնուրույնությունն ու անկախ որոշումներ կայացնելու կարողությունը չափազանց սահմանափակ է: Բացի այդ, նույնիսկ եթե գյուղաբնակ կանանց զգալի մասը տնօրինում է այս ռեսուրսային միջոցներն ուրիշների հետ համատեղ (սովորաբար ամուսինների կամ հայրական ընտանիքի անդամների), դրանց նկատմամբ լիազորությունը և վերահսկողությունը սովորաբար չնչին է:

Աղյուսակ 2.24. Հողատարածքի, կենդանիների, արտադրանքի և բերքի սեփականությունը գյուղական բնակավայրերում

15-59 տարեկան գյուղաբնակ կանանց մասնաբաժինն ըստ հողատարածքի, կենդանիների, արտադրանքի և բերքի սեփականության:

Սեփականության տեսակը/ տնտեսական եկամուտ	Կնոջ սեփականությունն է	Սեփականությունը կիսում է ուրիշների հետ	Կնոջ սեփականությունը չէ	Ընդամենը	Կանանց թիվը (գյուղաբնակ)
Հողատարածք	9.0%	78.2%	12.8%	100.0%	738
Խոշոր կենդանիներ	3.0%	49.3%	47.7%	100.0%	738
Մանր կենդանիներ	3.3%	52.2%	44.5%	100.0%	738
Արտադրանք և բերք	2.8%	42.4%	54.8%	100.0%	738

Ձեռնարկատիրական գործունեությունը նույնպես տնտեսական անկախության և կենսունակության լավ ցուցիչ է: Հետազոտության ընթացքում տվյալներ են հավաքագրվել նաև ձեռնարկատիրական սեփականության վերաբերյալ: Այդ տվյալները ներկայացված են Աղյուսակ 2.25-ում: Ինչպես ցույց են տալիս տվյալները, սեփական ձեռնարկատիրություն ունեցող կանանց ընդհանուր տոկոսը շատ չնչին է (0.6%): Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում չկան կանայք, ովքեր ունեն իրենց սեփական ձեռնարկությունները, իսկ գյուղական բնակավայրերում՝ կանանց միայն 0.1%-ն ունի: Ի հակադրություն, Երևանում հարցմանը մասնակցած կանանց 2.0%-ը սեփական ձեռնարկություն ունի:

Մյուս կողմից, ինչ վերաբերում է ձեռնարկությունների համատեղ տնօրինությանը, ապա կանանց ավելի մեծ տոկոսը նշել է, որ համասեփականատեր է ուրիշների հետ (3.3%): Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ նման կանանց տոկոսը գրեթե նույնն է Երևանում (2.9%) և այլ քաղաքային բնակավայրերում (3.0%), ինչն ավելի քիչ է գյուղական բնակավայրերի համեմատ (4.4%):

Աղյուսակ 2.25. Ձեռնարկատիրական սեփականություն

Ընդհանուր ընդգրկված 15-59 տարեկան կանանց տոկոսն ըստ ձեռնարկությունների սեփականության:

Բնակության վայր	Կնոջ սեփականությունն է	Սեփականությունը կիսում է ուրիշների հետ	Կնոջ սեփականությունը չէ	Ընդամենը	Կանաց թիվը (հարցվողներ)
Քաղաքային	0.8%	2.9%	96.3%	100.0%	2,011
Երևան	2.0%	2.9%	95.1%	100.0%	792
Այլ քաղաքային	0.0%	3.0%	97.0%	100.0%	1,219
Գյուղական	0.1%	4.4%	95.5%	100.0%	738
Ընդամենը	0.6%	3.3%	96.1%	100.0%	2,749

Ընդհանուր առմամբ, սեփական կամ ուրիշների հետ միասին բիզնես չունեցող կանանց մասնաբաժինը չափազանց բարձր է (96.1%), չհաշված բնակության վայրին առնչվող աննշան տատանումները:

Տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ կանայք չունեն այն տնտեսական եկամուտները, որոնք բավարար կլինեին ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար՝ հատկապես քաղաքային բնակավայրերում:

Թեկուզև ոչ այնքան կարևոր, ինչպես որ շարժական և անշարժ կապիտալը, սեփականությունն այնուամենայնիվ կանանց տնտեսական անկախության և ինքնուրույնության կարևոր ցուցիչ է: Աղյուսակ 2.26-ում ներկայացված են տվյալներ կանանց արժեքավոր գույքի սեփականության վերաբերյալ: Կանանց շատ փոքր տոկոսն ունի բնակարան կամ մեծ կենցաղային իրեր (համապատասխանաբար՝ 12.2% և 13.1%), միակ բացառությունը կազմում է զարդեղենը (32.9%): Հարցվողների չնչին փոքրամասնությունն ունի ավտոմեքենա (3.0%) և խնայողություններ բանկում (1.6%): Այնուամենայնիվ, միևնույն ժամանակ, հարցման ենթարկված կանանց մեծամասնությունը բնակարանի (76.0%) և մեծ կենցաղային իրերի (78.6%) համասեփականատերեր են: Հարցվողների փոքր մեծամասնությունն ուրիշների հետ տնօրինում է զարդեղենը (51.8%): Հարցվողների 19.7%-ն ավտոմեքենայի համասեփականատեր է, իսկ 6.8%-ը՝ բանկի խնայողությունների:

Աղյուսակ 2.26. Սեփականության և հնարավոր տնտեսական եկամուտների տնօրինումը

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր ունեն (իրենք կամ ուրիշների հետ) կամ չունեն սեփականություն և տնտեսական եկամուտներ:

Սեփականության տեսակը/ տնտեսական եկամուտ	Կնոջ սեփականությունն է	Սեփականությունը կիսում է ուրիշների հետ	Կնոջ սեփականությունը չէ	Ընդամենը	Կանանց թիվը/բոլոր հարցվողները
Տուն/բնակարան	12.2%	76.0%	11.8%	100.0%	2,749
Մեծ կենցաղային իրեր (հեռուստացույց, գազօջախ, մահճակալ և այլն)	13.1%	78.6%	8.3%	100.0%	2,749
Զարդեղեն (ոսկեղեն, այլ արժեքավոր իրեր)	32.9%	51.8%	15.3%	100.0%	2,749
Մեքենա	3.0%	19.7%	77.3%	100.0%	2,749
Խնայողություններ բանկում	1.6%	6.8%	91.6%	100.0%	2,749
Այլ սեփականություն	0.4%	0.2%	99.4%	100.0%	2,749

Անհրաժեշտ է նշել, որ կանանց հարաբերականորեն մեծ մասնաբաժինը սեփականություն կամ համասեփականություն չունի: Նրանց 8.3%-ը չունի կենցաղային մեծ իրեր, օրինակ՝ մահճակալ, հեռուստացույց կամ գազօջախ: Ավելի կարևոր է նշել, որ հարցվողների 11.8%-ը չունի սեփական տուն, իսկ 91.6%-ը՝ խնայողություններ բանկում: Տվյալները ցույց են տալիս, որ չնայած կանանց հիմնական մասը համատեղ տնօրինում է ինչ-որ սեփականություն, չափազանցություն կլինեի ասել, որ նրանք համապատասխան տնտեսական երաշխիքներ ունեն:

Ինքնուրույն փող վաստակելը կնոջ տնտեսական և, մասնավորապես, ֆինանսական կարգավիճակի կարևոր ասպեկտ է: Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 2.27-ում ընդգրկված տվյալները, հարցվող կանանց միայն 37.7%-ն է ընդգրկված եկամտաբեր գործունեությունում, մասնավորապես շահութաբեր աշխատանքում:

Աղյուսակ 2.27. Ինքնուրույն գումար վաստակող կանայք

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր ընդգրկված են եկամտաբեր գործունեությունում (ինչպես օրինակ՝ շահութաբեր աշխատանք, այդ թվում՝ սեզոնային աշխատանքներ):

Ընդգրկված են եկամտաբեր գործունեությունում (այդ թվում՝ աշխատանք)	Չաշխատող	Ընդամենը	Կանանց թիվը (բոլոր հարցվողները)
37.7%	62.3%	100.0%	2,749

Այլ կերպ ասած, յուրաքանչյուր երեք կնոջից երկուսը փող չեն վաստակում աշխատանքի կամ եկամտաբեր այլ գործունեության միջոցով, ուստի ապրուստի և օժանդակության առումով կախված են այլ մարդկանցից, հիմնականում՝ սեռական գույզընկերոջից:

Ընտանեկան բյուջեում կնոջ ներդրման բաժինը գույզընկերոջ ներդրման համեմատությամբ նույնպես կարող է բավականին ճշգրիտ պատկերացում ձևավորել կանանց հնարավոր տնտեսական կարգավիճակի վերաբերյալ, չնայած դա բավարար չէ պատկերացնելու, թե այդ կարգավիճակն ինչպես է փոխվում որոշումներ կայացնելու կարողության և վերահսկման պարագայում:

Աղյուսակ 2.28. Ընտանեկան բյուջեում կնոջ ներդրումը գույզընկերոջ ներդրման համեմատությամբ

Ընտանեկան բյուջեում 15-59 տարեկան կանանց տնտեսական ակտիվության ընդհանուր ընտանեկան բյուջեում կնոջ ներդրման գույզընկերոջ ներդրման համեմատությամբ:

Տրամադրում է ավելի շատ, քան գույզընկերը	Տրամադրում է ավելի քիչ, քան գույզընկերը	Տրամադրում է գրեթե նույնքան, որքան գույզընկերը	Չգիտի/չի հիշում	Հրաժարվել է /պատասխան չկա	Ընդամենը	Ներկայումս գույզընկեր ունեցող կանանց թիվը, ովքեր ինքնուրույն գումար են վաստակում
13.9%	59.1%	19.4%	5.3%	2.3%	100.0%	723

Ինչպես վկայում են Աղյուսակ 2.28-ի տվյալները, զգալի տարբերություններ կան ընտանեկան բյուջեում կնոջ և տղամարդու ներդրած գումարների միջև: Այս տարբերությունները կարող են հանգեցնել տնտեսական կարգավիճակի և որոշումներ կայացնելու կարողության անհամաչափության կամ գոնե հիմք ստեղծել դրա համար՝ ամրապնդելով հայրիշխանական ստորակարգային փոխհարաբերությունները: Այսպիսով, ներկայումս գույզընկեր ունեցող և ինքնուրույն գումար վաստակող կանանց ընդամենը 13.9% և 19.4%-ն է համապատասխանաբար նշել , որ տուն են բերում ավելի շատ գումար, քան ամուսինը, կամ գրեթե նույնքան գումար, որքան տրամադրում է ամուսինը: Հստակ մեծամասնությունը (59.1%) տրամադրում է ավելի քիչ, քան իր ամուսինը: Ավելի դյուրին է ձեռք բերել և պահպանել ավելի հավասար և պակաս բռնի փոխհարաբերություններ, երբ կնոջ և տղամարդու եկամուտների միջև տարբերությունը մեծ չէ:

Բայց նույնիսկ գումար վաստակելու դեպքում, ոչ բոլոր կանայք են կարողանում այն ծախսել ըստ իրենց հայեցողության: Աղյուսակ 2.29-ի տվյալները ցույց են տալիս կանանց որոշումներ կայացնելու կարողությունը՝ կապված իրենց վաստակած գումարը ծախսելու հետ:

Աղյուսակ 2.29. Կնոջ վաստակած գումարը ծախսելու հետ կապված որոշումների կայացումը

Ներկայումս գույզընկեր ունեցող 15-59 տարեկան այն կանանց տնտեսական ակտիվությունը, ովքեր գումար են վաստակում և ծախսում այն, ինչպես ուզում են, կամ ամբողջությամբ կամ մասամբ այդ գումարը տալիս են գույզընկերոջը:

Իր ընտրությամբ	Փողի մի մասը տալիս է գույզընկերոջը	Ամբողջ գումարը տալիս է գույզընկերոջը	Չգիտի/չի հիշում	Հրաժարվել է /պատասխան չկա	Ընդամենը	Ներկայումս գույզընկեր ունեցող կանանց թիվը, ովքեր ինքնուրույն գումար են վաստակում
85.0%	10.6%	1.7%	0.9%	1.8%	100.0%	723

Ներկայումս գույզընկեր ունեցող փող վաստակող կանանց գերակշիռ մեծամասնությունը (85.0%) կարող է ծախսել գումարն ըստ իր հայեցողության: Այս խմբի կանանց 10.6%-ն իր վաստակածի մի մասը և միայն 1.7%-ը՝ ամբողջությամբ տալիս է գույզընկերոջը:

Տնտեսական անկախությունից կանանց զրկելը կամ նրանց նկատմամբ տնտեսական բռնությունը ավելի ուղղակիորեն դրսևորված է այն դեպքերում, երբ սեռական գույզընկերը վերցնում է կնոջ վաս-

տակած գումարը կամ խնայողությունները նրա կամքին հակառակ, կամ ստիպում է նրան թողնել, հրաժարվել աշխատանքից:

Աղյուսակ 2.30. Սեռական գույքը կողմից կանանց վաստակած գումարը կամ խնայողությունները վերցնելը կնոջ կամքին հակառակ

Ներկայումս գույքը ունեցող 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունը, ում գույքը կողմից վերցնել են կամ չեն վերցնել կնոջ վաստակած գումարը կամ խնայողությունները կնոջ կամքին հակառակ:

Երբեք	Մեկ կամ երկու անգամ	Մի քանի անգամ	Շատ անգամ /միշտ	Չկա, քանի որ կինը խնայողություններ/եկամուտ չունի	Չգիտի/չի հիշում	Հրաժարվել է/պատասխան չկա	Ընդամենը	Ներկայումս գույքը ունեցող կանայք
74.4%	7.2%	1.1%	0.4%	12.0%	2.4%	2.5%	100.0%	2,057

Ըստ Աղյուսակ 2.30-ի, հարցմանը մասնակցած կանանց մոտավորապես 9.0%-ն է հաղորդել, որ իր գույքը կողմից վերցնել են իր եկամուտը/խնայողություններն իր կամքին հակառակ: Այդպիսի դեպքերը մեծամասամբ տեղի են ունեցել միայն մեկ կամ երկու անգամ: Չորս կանանցից երեքը նշել են, որ նման բան երբեք չի եղել: Համոզիչ փաստեր չկան հարցվողների 12.0%-ի դեպքում, քանի որ նրանք չունեն եկամուտ կամ խնայողություններ, հետևաբար չեն կարող որևէ կերպ պատասխանել տվյալ հարցին: Ամեն դեպքում, տվյալները կարծես ցույց են տալիս, որ տնտեսական բռնության այս ձևը տարածված չէ ներկայիս հայ հասարակությունում:

Փոխադրյալ կերպով տվյալներն աներկբայորեն ցույց են տալիս, որ բռնության տարբեր ձևերը հակված են տեղի ունենալ «ձեռք ձեռքի տված»: Այսպիսով, այն հարցվողների շրջանում, ում գույքը կողմից վերցնել են կամ չեն վերցնել կնոջ եկամուտը կամ խնայողությունները կնոջ կամքին հակառակ, ֆիզիկական բռնության ենթարկված կանանց տոկոսը 5.8 անգամ, սեռական բռնության դեպքում՝ 7.0 անգամ և հոգեբանական բռնության դեպքում՝ 2.3 անգամ ավելի ցածր է, քան այն հարցվողների շրջանում, ում ամուսինը կամ գույքը կողմից շատ անգամ (միշտ) վերցնել են կնոջ եկամուտը կամ խնայողությունները նրա կամքին հակառակ (համապատասխանաբար՝ 5.7%-ը՝ 33.5%-ի դիմաց, 2.4%-ը՝ 16.7%-ի դիմաց և 22.1%-ը՝ 50.0%-ի դիմաց):

Կանանց նկատմամբ տնտեսական բռնության մեկ այլ դրսևորում է տեղի ունենում այն ժամանակ, երբ սեռական գույքը կողմից չի ուզում, որ կինը աշխատի, և կինը ստիպված է լինում թողնել աշխատանքը: Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 2.31-ի տվյալները, սա, թվում է, խնդիր չէ հայ հասարակությանը, քանի որ ներկայումս գույքը կողմից ունեցող կանանց միայն 7.4%-ն է նշել, որ թողել է աշխատանքը, որովհետև գույքը կողմից չի ցանկացել, որ նա աշխատի: Հարցվողների գերակշիռ մեծամասնությունը (86.9%) նշել է, որ երբևէ աշխատանքից չի հրաժարվել այդ պատճառով:

Աղյուսակ 2.31. Կանայք թողնում/հրաժարվում են աշխատանքից, որովհետև սեռական գույքը կողմից չի ցանկանում, որ նրանք աշխատեն

Ներկայումս գույքը ունեցող 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունը, ովքեր երբևէ հրաժարվել են կամ չեն հրաժարվել աշխատանքից, որովհետև սեռական գույքը կողմից չի ցանկացել, որ նրանք աշխատեն:

Թողել է աշխատանքը	Չի թողել աշխատանքը	Չգիտի/չի հիշում	Հրաժարվել է / պատասխան չկա	Ընդամենը	Ներկայումս գույքը ունեցող կանայք
7.4%	86.9%	2.3%	3.4%	100.0%	2,057

Այստեղ նույնպես բռնության տարբեր ձևերի միջև փոխկապակցվածությունը շատ ուժեղ է: Այսպես, երբևէ փողի պատճառով աշխատանքից թողած/հրաժարված կանանց շրջանում (քանի որ նրանց ամուսինը կամ գույքը կողմից չի ցանկացել, որ կանայք աշխատեն) ֆիզիկական բռնության ենթարկվածների տոկոսը 2.5 անգամ, սեռական բռնության դեպքում՝ 6 անգամ և հոգեբանական բռնության

դեպքում՝ 1.9 անգամ ավելի բարձր է, քան այն հարցվողների շրջանում, ովքեր *երբեք* չեն թողել/ հրաժարվել աշխատանքից, որովհետև նրանց ամուսինը կամ զուգընկերը չի ցանկացել, որ նրանք աշխատեն (համապատասխանաբար՝ 15.0%-ը՝ 5.9%-ի դիմաց, 13.1%-ը՝ 2.2%-ի դիմաց և 41.8%-ը՝ 22.0%-ի դիմաց):

Չնայած շահութաբեր աշխատանք ունեցող կանանց հիմնական մասը *չի հրաժարվում* աշխատանքից, նույնիսկ եթե զուգընկերը չի ուզում, որ կինն աշխատի, *հարկադրված չէ* վաստակած ողջ գումարը կամ մի մասը տալ զուգընկերոջը և *ինքնուրույն որոշում է*, թե ինչպես ծախսել այդ գումարը, այդուհանդերձ հետազոտության տվյալները հստակ ցույց են տալիս, որ կանանց հիմնական մասը *չունի* բավարար տնտեսական եկամուտներ՝ տնտեսական անվտանգության, ինքն իր վրա հույս դնելու և տնտեսական անկախության համար՝ ձեռնարկատիրության, աշխատանքի և սեփականության միջոցով:

ԳԼՈՒԽ 3. ՈՉ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 15 ՏԱՐԵԿԱՆԻՑ ՄԿՍԱԾ

Սեռական զուգընկերոջ կողմից իրականացված բռնությունից բացի, հետազոտության ընթացքում նաև տվյալներ են հավաքագրվել զուգընկեր չհանդիսացող այլ տղամարդկանց կողմից բռնությունների վերաբերյալ:

Չնայած կանայք ավելի շատ վտանգված են իրենց սեռական զուգընկերների, քան այլ անձանց կողմից բռնության ենթարկվելու առումով, զուգընկեր չհանդիսացող այլ անձանց կողմից բռնությունը նույնպես տարածված է: Ոչ զուգընկերների կողմից բռնությունը վերաբերում է հարազատի, ընկերոջ, ծանոթի, հարևանի, գործընկերոջ կամ օտարականի կողմից բռնության դրսևորմանը: Ոչ զուգընկերների կողմից թե՛ ֆիզիկական և թե՛ հատկապես սեռական բռնության տարածվածությունը դժվար է հաստատել, քանի որ շատ հասարակություններում սեռական բռնությունը շարունակում է մնալ կանանց և, հաճախ նաև, նրանց ընտանիքների համար խորապես անթափ խնդիր: Բռնաբարությունների մասին ոստիկանական հաղորդագրություններից ստացված վիճակագրական տվյալները, օրինակ, անհուսալի են՝ թերհաղորդվածության պատճառով:

Հանրության մեջ բավականին տարածված է այն կարծրատիպը, որ կանայք ավելի ենթակա են բռնության օտարականների, քան իրենց զուգընկերների կամ ծանոթ մարդկանց կողմից: Այս հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ դա այդպես չէ: Չնայած վերջնական վիճակագրությունը թերի է երևույթը թաքցնելու պատճառով, սակայն, այնուամենայնիվ, գոյություն ունեցող տվյալները մատնանշում են, որ սեռական զուգընկերոջ կողմից բռնությունն ավելի տարածված է, քան՝ ոչ զուգընկերների կողմից:

Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 3.1-ում ամփոփված տվյալները, կանանց ընդամենը 2.3%-ն է ասել, որ ենթարկվել է ֆիզիկական բռնության ամուսին/զուգընկեր չհանդիսացող այլ անձի կողմից:

Աղյուսակ 3.1. Ոչ զուգընկերների կողմից ֆիզիկական բռնության տարածվածությունը 15 տարեկանից հետո

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց մասնաբաժինը, ովքեր երբևէ ենթարկվել են կամ չեն ենթարկվել ֆիզիկական բռնության զուգընկեր չհանդիսացող այլ անձի կողմից:

Ընդամենը	100.0%
Ոչ ոք	97.7 %
Հայր/խորթ հայր	1.0 %
Ընտանիքի այլ արական սեռի ներկայացուցիչ	0.3 %
Ընտանիքի այլ իգական սեռի ներկայացուցիչ	0.8 %
Ուսուցիչ	0.1 %
Ոստիկան/զինվոր	0.0 %
Ընտանիքի արական սեռի ընկեր	0.0 %
Ընտանիքի իգական սեռի ընկեր	0.0 %
Միրած տղա	0.1 %
Օտարական	0.0 %
Որևէ մեկն աշխատավայրում/կրթական հաստատությունում	0.0 %
Այլ	0.0 %
Կանանց թիվը	2,749

Հիմնվելով այս տվյալների վրա՝ կարելի է եզրակացնել, որ ոչ զուգընկերների կողմից կանանց

նկատմամբ գործադրված բռնությունը, ըստ էության, գոյություն չունի Հայաստանում: Հոր/խորթ հոր և ընտանիքի այլ արական կամ իգական սեռի ներկայացուցչի կողմից ֆիզիկական չարաշահումը չի համարվում «բռնություն», այլ ավելի շուտ ընդունվում է որպես «կարգապահական-ողդիչ» միջոցառում: Ամեն դեպքում, ընտանեկան միջավայրում ֆիզիկական բռնության դեպքերը կազմում են 2.1% (կամ, ըստ էության, 2.2%)՝ ընդհանուր 2.3%-ից, քանի որ սիրած տղային կարելի է համարել եթե ոչ ընտանիքի ներկայացուցիչ, ապա ընտանիքին շատ մոտ անձ: Այլ կերպ ասած, կանայք երբեմն (ընդ որում՝ ծայրահեղ հազվադեպ) ֆիզիկական բռնության են ենթարկվում ուսուցիչների կողմից: Այս «իդեալական» հասարակությունում կանայք բռնության չեն ենթարկվում օտարականների, գործընկերների, ընտանիքի ընկերների, ուսուցիչների և այլոց կողմից: Միանգամայն պարզ է, որ այս տվյալներն արժանահավատ չեն: Կանայք անկեղծ չեն պատասխանել այս հարցին: Հարցման ձևաչափի պայմաններում անանունության ապահովումը հնարավոր չէր: Հանգիստ կարելի է ենթադրել, որ ավելի շատ կանայք կնշեին իրենց նկատմամբ ֆիզիկական բռնության մասին, եթե անանուն լրացնեին հարցաթերթիկը:

Նվազ հուսալի են սեռական բռնության հետ կապված տվյալները: Նմանօրինակ հետազոտությունների արդյունքում պարզվում է, որ հայ կանայք չեն խոստովանում սեռական բռնության ենթարկված լինելու մասին:

Աղյուսակ 3.2-ում ամփոփված տվյալներից հետևում է, որ միայն սիրած տղաներն են կանանց կամքին հակառակ նրանց ստիպել իրենց հետ սեռական հարաբերություն ունենալ կամ կատարել սեռական բնույթի գործողություն:

Աղյուսակ 3.2. Ոչ գուզընկերների կողմից սեռական բռնության տարածվածությունը 15 տարեկանից հետո

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց մասնաբաժինը, ովքեր երբևէ ենթարկվել են կամ չեն ենթարկվել սեռական բռնության գուզընկեր չհանդիսացող այլ անձի կողմից:

Ընդամենը	100.0%
Ոչ ոք	99.9 %
Հայր/խորթ հայր	0.0 %
Ընտանիքի այլ արական սեռի ներկայացուցիչ	0.0 %
Ընտանիքի այլ իգական սեռի ներկայացուցիչ	0.0 %
Ուսուցիչ	0.0 %
Ուսուցիչ/գիտնական	0.0 %
Ընտանիքի արական սեռի ընկեր	0.0 %
Ընտանիքի իգական սեռի ընկեր	0.0 %
Միրած տղա	0.1 %
Օտարական	0.0 %
Որևէ մեկն աշխատավայրում/կրթական հաստատությունում	0.0 %
Այլ	0.0 %
Կանանց թիվը	2,749

Միրած տղան, ըստ էության, գուզընկեր է: Այսպիսով, հիմնվելով միայն հետազոտության արդյունքների վրա, պետք է եզրակացվեր, որ երկրում սեռական բռնություն բացարձակապես չկա: Մակայն այս եզրակացությունը չի համապատասխանում վիճակագրական և պաշտոնական տվյալներին, որոնք հավաքագրված են բժիշկների և հետազոտողների կողմից:

Ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի, 2008թ. գրանցվել, հետաքննվել և դատարան է հանձնվել ոչ գուզընկերների կողմից կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության գործադրման առնվազն 130 քրեական գործ: Այս դեպքերը ներառում էին սպանություններ կամ սպանության փոր-

ձեր, խոշտանգումներ, առևանգումներ, դաժան և չափավոր վնասվածքներ, թրաֆիքինգ, ծեծ և այլն: Ինչ վերաբերում է սեռական բռնություններին, գրանցվել է առնվազն 25 դեպք, այդ թվում՝ բռնաբարություններ (15), բռնաբարության փորձեր (4), սեռական բռնության գործողություններ (3) և սեռական ոտնձգություններ (3):

Թեկուզև ոստիկանության կողմից հավաքագրված տվյալները չեն ներկայացնում ընդհանուր պատկերը (քանի որ, փորձագետների կարծիքով, առկա են վատ փաստագրված կամ չհաղորդված դեպքեր), այնուամենայնիվ դրանք մատնանշում են, որ խնդիրը գոյություն ունի:

Այսպիսով, վերոնշյալ հետազոտության արդյունքները հավաստի չեն: Հայաստանում ոչ զուգընկերների կողմից կանանց նկատմամբ ֆիզիկական և սեռական բռնության ծավալների ճշգրիտ գնահատման նպատակով անհրաժեշտ է իրականացնել այլ ուսումնասիրություններ, այդ թվում նաև միանգամայն անանուն հարցումներ և որակական հետազոտություններ:

ԳԼՈՒԽ 4. ՄԱՆԿԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՏԻՊՈՂԱԲԱՐ ԱՌԱՋԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Սեռական բռնությունը կարևոր սոցիալական և առողջապահական խնդիր է, որը ներառում է բռնության գործադրմամբ սեռական հարաբերության փորձ կամ գործողություն, անցանկալի սեռական կապ և սեռական բնույթի մեկնաբանություններ կամ ոտնձգություններ որևէ անձի կողմից՝ անկախ գոհի հետ վերջինի ունեցած հարաբերություններից⁶⁵: Ամբողջ աշխարհում կատարված հետազոտությունները փաստագրում են, որ կանանց 7%-36%-ը նշում են մանկական տարիքում սեռական ոտնձգությունների որևէ տեսակի ենթարկվելու մասին⁶⁶: Դեռ ավելին, շատ կանայք առաջին անգամ սեռական հարաբերություն են ունեցել ստիպողաբար կամ անցանկալի հանգամանքներում: 1990-ականներից սկսած, միջազգային հետազոտությունները ցույց են տալիս, որ հարցումներին մասնակցած սեռական փորձ ունեցող երիտասարդների 7%-47%-ը նշում է, որ իր առաջին սեռական հարաբերությունը ստիպողական բնույթ է կրել⁶⁷: Երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների ուսումնասիրության արդյունքները հաճախ համադրելի չեն՝ զանազան հետազոտություններում երեխայի սեռական բռնության ոչ ստանդարտ սահմանումների, «մանկությունը» և «պատանեկությունը» սահմանելիս տարբեր տարիքային կատեգորիաների կիրառման և հետազոտվող խմբերի տարբերությունների պատճառով:

Ներկա հետազոտության շրջանակներում նույնպես փորձ է արվել տվյալներ հավաքագրել մանկական տարիքում սեռական ոտնձգությունների և առաջին ստիպողական սեռական հարաբերության վերաբերյալ:

ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՆՁԵՎ 15 ՏԱՐԵԿԱՆ ԴԱՌՆԱԼԸ

Քանի որ վաղ սեռական բռնությունը գերնորբ խնդիր է, որը դժվար է հետազոտել հարցման միջոցով, ուստի այս թեմայով հարցադրումներում կիրառվել է երկու մոտեցում:

Կանանց նախ և առաջ հարց է ուղղվել, թե մինչև 15 տարեկանը արդյո՞ք երբևէ որևէ մեկը նրանց սեռական իմաստով ձեռք է տվել կամ ստիպել է սեռական բնույթի որևէ բան անել իրենց կամքին հակառակ: Այս մոտեցումն ամբողջապես անարդյունավետ էր, նույնիսկ անօգուտ, քանի որ *պատասխան չկա*-ն հստակ ավելի նախընտրելի է, քան նման նուրբ հարցի վերաբերյալ ոչ արժանահավատ տվյալները:

Աղյուսակ 4.1-ի տվյալներն արտաքուստ գնահատելը կհանգեցնեք սխալ և իրականում ոչ հիմնավոր եզրակացության, թե մանկական տարիքում սեռական բռնությունը երկրում չլաված երևույթ է: Ստորև ներկայացված աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ հարցմանը մասնակցած կանանց ընդամենը 0.1%-ն է նշել, որ մինչև 15 տարեկանը իրենց սեռական իմաստով ձեռք են տվել կամ ստիպել են սեռական բնույթի որևէ բան անել իրենց կամքին հակառակ: Քանի որ նույնիսկ այդ կանայք մատնանշել են, որ բռնաբարն իրենց սիրած մարդն է եղել, ում կարելի է ընկալել որպես սեռական գուզընկեր, ապա իսկապես կթվար, որ տվյալները վկայում են մանկական տարիքում ոչ գուզընկերոջ կողմից բռնության լիովին բացակայության մասին:

⁶⁵ Բազիլ Բ. և Լ. Սալթզման: (2002թ.): *Սեռական բռնության հսկողություն. միջինասլ սահմանումներ և առաջարկվող «տվյալների տարրեր»: Տարբերակ 1.0*: Ատլանտա, Ջորջիա, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ, Վնասվածքի կանխարգելման և վերահսկման ազգային կենտրոն:

⁶⁶ Չեն Ջ., Դունն Մ. և Հան Փ.: (2006թ.): «Երեխայի նկատմամբ սեռական բռնությունը Հենան գավառում, Չինաստան. վիատության, ինքնասպանության և վնասակար սովորությունների հետ առնչությունը դեռահաս աղջիկների շրջանում»:
Դեռահասների առողջության հանդես, 38: 544-549:

⁶⁷ Հեյզ Լ., Էլսբերգ Մ. և Գոտտենյոլլեր Մ.: (դեկտեմբեր, 1999թ.): *Կանանց նկատմամբ բռնության վերացումը*: (Բնակչության վերաբերյալ գեկույցներ, սերիա L. No. 11): Բալթիմոր, Ջոնս Հոփկինզ համալսարանին կից Հանրային առողջության դպրոցի Բնակչության տեղեկատվության ծրագիր, Թակումա Փարկ, Առողջության և գենդերային հավասարության կենտրոն: Vol. XXVII, No. 4: 43:

Աղյուսակ 4.1. Մինչև 15 տարեկան դառնալը ոչ զուգընկերոջ կողմից սեռական ոտնձգությունների տարածվածությունը

Ընտրանքում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց մասնաբաժինը, ովքեր մինչև 15 տարեկան դառնալը երբևէ ենթարկվել են կամ չեն ենթարկվել սեռական ոտնձգությունների զուգընկեր չհանդիսացող որևէ այլ անձի կողմից:

Ընդամենը	100.0%
Ոչ ոք	99.9 %
Հայր/խորթ հայր	0.0 %
Ընտանիքի այլ արական սեռի ներկայացուցիչ	0.0 %
Ընտանիքի այլ իգական սեռի ներկայացուցիչ	0.0 %
Ուսուցիչ	0.0 %
Ոստիկան/զինվոր	0.0 %
Ընտանիքի արական սեռի ընկեր	0.0 %
Ընտանիքի իգական սեռի ընկեր	0.0 %
Միրած տղա	0.1 %
Օտարական	0.0 %
Որևէ մեկն աշխատավայրում/կրթական հաստատությունում	0.0 %
Այլ	0.0 %
Կանանց թիվը	2,749

Պարզ է, որ կանայք ցանկություն չեն ունեցել դեմ առ դեմ հարցազրույցի ժամանակ բացահայտել նման միջադեպեր, որոնք կարող են տեղի ունեցած լինել առնվազն նրանցից մի քանիսի հետ՝ մինչև 15 տարեկան դառնալը: Նրանցից մի քանիսի համար դրանք գուցե ցավալի և տհաճ հիշողություններ են, որ ցանկություն չունեն քննարկելու: Նման փորձառություն ունեցած կանանց հիմնական մասի համար այս խնդրի քննարկումն այնքան էլ «ցավալի չէր», որ նրանք չուզենային դրա մասին խոսել: Պարզապես զգում էին, որ մշակութային և սոցիալական առումով այս փորձառությունը քննարկելն ընդունելի չէ, քանի որ չգիտեին, թե ինչ հետագա հարցեր կարող են ուղղվել իրենց: Մասնագետները նույնպես նշում են, որ հաճախ հարցազրույցի ընթացքում կինը մտահոգվում է, թե կարող է ակամա ներքաշել իր ընտանիքի անդամներին կամ սիրելի որևէ մեկին:

Մի բան ակնհայտ է: Աղյուսակ 4.1-ում ամփոփված հետազոտության տվյալները չի կարելի ընդունել առաջին հայացքից: Տրամաբանական չէր լինի համարել, որ մանկական տարիքում ոչ զուգընկերոջ կողմից սեռական բռնություն առկա չէ: Այս պնդումը հերքվում է, որքան էլ որ սուղ չլինեն պաշտոնական վիճակագրության, հետազոտությունների և այլնի միջոցով ձեռք բերված տեղեկությունները և տվյալները:

Այսպես, ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի, 2008թ.-ին տեղի է ունեցել անչափա-հասների նկատմամբ սեռական ոտնձգությունների առնվազն 27 դեպք:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կից երեխայի խնամքի և պաշտպա-նության գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում, ինչպես նաև ցերեկային խնամքի համայն-քային երկու կենտրոններում 2007-2008թթ. իրականացված հետազոտության արդյունքում բացա-հայտվել է, որ 580 երեխաներից մոտավորապես 1.7%-ը սեռական ոտնձգությունների էր ենթարկվել իր ընտանիքում (30.0%-ը՝ հոգեբանական, և 29.0%-ը՝ ֆիզիկական բռնության):

Դպրոցական տարիքի երեխաների շրջանում առողջության հարցերի հետազոտությունը, որը Հա-յաստանում 2005թ. իրականացվել է Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի համատեղ ջանքերով, հայտնաբերել է, որ աղջիկների առնվազն 1.4%-ը ստիպողա-կան սեռական հարաբերություն է ունեցել: Անհրաժեշտ է նշել նաև, որ այս աղջիկների 34.3%-ը չի

պատասխանել այդ հարցին, ինչը ցույց է տալիս, որ անհարմար են զգացել նման տեղեկություններ տրամադրել նույնիսկ անանուն հարցման դեպքում:

Այս թեմային առնչվող չբացահայտման խնդիրները հաղթահարելու նպատակով, որը շատ հարցվողների կողմից դեռևս դիտվում է որպես արգելված թեմա, մինևույն հարցը մեկ անգամ ևս ուղղվել է հարցազրույցի վերջում, բայց այլ կերպ: Կանանց խնդրել են իրենց պատասխանը նշել «այո» և «ոչ» պատասխանների պատկերներով քարտերի վրա (աղջկա ուրախ կամ տխուր դեմքով): Այնուհետև նրանք քարտը ծալել և դրել են ծրարի մեջ՝ այդպիսով իրենց պատասխանը հարցազրույցավարից թաքցնելով:

Ինչպես վկայում են ստորև ներկայացված աղյուսակի տվյալները, կանաց 9.8%-ը, ով հարցազրույցի սկզբում պնդել է, որ սեռական ոտնձգությունների չի ենթարկվել մանկական տարիքում, ընդունել է, որ մինչև 15 տարեկանը ենթարկվել է սեռական ոտնձգությունների:

Աղյուսակ 4.2. Մինչև 15 տարեկան դառնալը ոչ զուգընկերոջ կողմից սեռական ոտնձգությունների տարածվածությունն ըստ տխուր կամ ուրախ դեմքով կատարված նշումների

Ընդհանրում ընդգրկված 15-59 տարեկան այն կանանց մասնաբաժինը, ովքեր մինչև 15 տարեկան դառնալը երբևէ ենթարկվել են կամ չեն ենթարկվել սեռական ոտնձգությունների զուգընկեր չհանդիսացող որևէ այլ անձի կողմից (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

		Տխուր	Ուրախ	Կանանց թիվը
Տարիք	15-24	4.2	95.8	297
	15-19	4.3	95.7	128
	20-24	4.1	95.9	169
	25-34	8.2	91.8	518
	35-44	9.1	90.9	705
	45-59	10.9	89.1	1,229
Բնակության վայր	Քաղաքային	9.9	90.1	2,011
	Երևան	11.5	88.5	792
	Այլ քաղաքային	9.0	91.0	1,219
	Գյուղական	7.1	92.9	738
Ամուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած	9.5	90.5	382
	Ներկայումս ամուսնացած	8.0	92.0	2,082
	Նախկինում ամուսնացած	17.6	82.4	285
Երեխաների թիվը	0	9.3	90.7	470
	1-2	8.8	91.2	1,495
	3+	9.8	90.2	784
Կրթություն	Կրթություն չի ստացել	8
	Ընդհանուր տարրական	17.2	82.8	118
	Ընդհանուր միջնակարգ	10.3	89.7	1,104
	Միջին մասնագիտական	8.1	91.9	881
	Բարձրագույն	7.3	92.7	638
Զբաղվածություն	Չաշխատող	9.7	90.3	1,712
	Աշխատող	7.8	92.2	873
	Սեզոնային աշխատանք	9.9	90.1	149
	Այլ	15
Ընդամենը		9.2	90.8	2,749

Անհրաժեշտ է նշել, որ այս խնդիրը ներգործել է բոլոր կանանց վրա: Այլ կերպ ասած, անկախ իր սոցիալական ծագումից, բնակության վայրից և այլ բնութագրիչներից՝ որևէ աղջիկ չի կարող պաշտպանված լինել նմանօրինակ ոտնձգություններից: Մակայն սոցիալական միջավայրը կարևոր է: Մանկական տարիքում սեռական ոտնձգությունների ենթարկված գոհերի տոկոսը 2.5 անգամ բարձր է միայն տարրական կրթություն ստացած կանանց շրջանում՝ ի տարբերություն բարձրագույն կրթությամբ կանանց: Վիճակագրական և այլ տվյալները ցույց են տալիս, որ անչափահասների մեծամասնությունը, ովքեր թողնում են իրենց ուսումը տարրական կրթություն ստանալուց հետո, սերում են սոցիալ-տնտեսական ցածր կարգավիճակ ունեցող ընտանիքներից:

Թեև մանկական տարիքում սեռական ոտնձգությունների ենթարկվելու մասին հաղորդող կանանց տոկոսը բարձր է քաղաքային բնակավայրերում (մասնավորապես՝ Երևանում), այս երևույթն, այնուամենայնիվ, հազվադեպ բնույթ չի կրում նաև գյուղական բնակավայրերում:

Տվյալները բացահայտում են մի հետաքրքիր միտում: Եթե ենթադրենք, որ տարբեր խմբերի շրջանում բացահայտման ցուցանիշները գրեթե նույնն են (ինչը պարտադիր պայման չէ), ապա կթվա, որ խնդիրը շատ ավելի խորն է եղել անցյալում և ներկայումս ավելի քիչ է տարածված: Եթե 45-59 տարեկան կանանց 10.9%-ը և 35-44 տարեկան կանանց 9.1%-ն են նշել, որ սեռական ոտնձգությունների են ենթարկվել մանկական տարիքում, ապա այս ցուցանիշը նվազում է մինչև 8.2%՝ 25-34 տարեկանների, և 4.2%՝ 15-24 տարեկանների դեպքում:

Այնուամենայնիվ, խնդիրը շարունակում է գոյություն ունենալ, և ավելի շատ ժամանակ ու հետազոտություններ են պահանջվում նրա իրական ծավալները ճշտելու և արդյունավետ լուծումներ գտնելու համար:

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կանանց նաև հարց է առաջադրվել իրենց առաջին սեռական հարաբերության վերաբերյալ:

Աղյուսակ 4.3-ը հստակ ցույց է տալիս, որ ընտրանքի կանանց գերակշիռ մեծամասնությունը (94.9%) առաջին անգամ ցանկացել է սեռական հարաբերություն ունենալ, 2.1%-ը չի ցանկացել, բայց դա տեղի է ունեցել:

Աղյուսակ 4.3. Առաջին սեռական հարաբերության պատկերը

Սեռական փորձ ունեցող 15-59 տարեկան այն կանանց մասնաբաժինը, ովքեր իրենց առաջին սեռական փորձը նկարագրում են հետևյալ ձևով («...» 25-ից պակաս դեպքերի համար):

		Ուզել է սեռական հարաբերություն ունենալ	Չի ուզել, բայց ունեցել է սեռական հարաբերություն	Ստիպել են սեռական հարաբերություն ունենալ	Չգիտի/չի հիշում	Հրաժարվել է/պատասխան չկա	Ընդամենը %	Կանանց թիվը (ովքեր սեռական հարաբերություն են ունեցել)
Տարիք	15-24	95.1	0.0	0.0	0.0	4.9	100.0	107
	15-19		3
	20-24	95.0	0.0	0.0	0.0	5.0	100.0	104
	25-34	96.0	1.7	0.0	0.5	1.8	100.0	451
	35-44	95.2	1.7	0.0	0.7	2.4	100.0	656
	45-59	94.2	2.6	0.1	0.4	2.7	100.0	1,153
Բնակության վայր	Քաղաքային	94.8	2.4	0.0	0.4	2.4	100.0	1,710
	Երևան	92.4	3.1	0.0	0.2	4.3	100.0	668
	Այլ քաղաքային	96.5	1.9	0.0	0.5	1.1	100.0	1,042
	Գյուղական	95.0	1.2	0.1	0.7	3.0	100.0	657
Անուանական կարգավիճակ	Երբևէ չանունացած							
	Ներկայումս անունացած	95.3	2.0	0.0	0.6	2.1	100.0	2,082
	Նախկինում անունացած	91.8	2.4	0.0	0.0	5.8	100.0	285
Երեխաների թիվը	0	84.3	5.2	0.0	0.0	10.5	100.0	88
	1-2	95.3	2.5	0.0	0.4	1.8	100.0	1,495
	3+	95.4	0.9	0.0	0.6	3.1	100.0	784
Կրթություն	Կրթություն չի ստացել		4
	Ընդհանուր տարրական	93.6	1.9	0.0	0.0	4.5	100.0	101
	Ընդհանուր միջնակարգ	95.3	1.8	0.0	0.6	2.3	100.0	962
	Միջին մասնագիտական	95.5	1.9	0.1	0.3	2.2	100.0	823
	Բարձրագույն	93.3	2.9	0.0	0.6	3.2	100.0	477
Զբաղվածություն	Չաշխատող	95.5	1.4	0.0	0.7	2.4	100.0	1,467
	Աշխատող	93.8	3.3	0.1	0.1	2.7	100.0	742
	Սեզոնային աշխատանք	93.8	2.5	0.0	0.0	3.7	100.0	143
	Այլ		15
Ընդամենը		94.9	2.1	0.0	0.5	2.5	100.0%	2,367

Իհարկե, հնարավոր է, որ հարցմանը մասնակցած կանանց մեծամասնությունը ցանկացել է սեռական հարաբերություն ունենալ հենց առաջին սեռական փորձի ժամանակ, այնուամենայնիվ «ստիպել են սեռական հարաբերություն ունենալ» պատասխանի դեպքում արձանագրված 0 տոկոսը թվում է անհավանական և անտրամաբանական: Բացի այդ, այս զեկույցում ավելի վաղ ներկայացված ակնհայտ բացատրությունը, որ դեմ առ դեմ հարցազրույցի ընթացքում քննարկելու պարագայում կանայք կարող են սեռական բռնությունը մշակութային և սոցիալական տեսանկյունից անհարմար

համարել, վերաբերում է նաև ստիպողական սեռական հարաբերությանը: Նրանք կարող են համարել, որ այս փաստի ընդունումը կարող է վնաս հասցնել իրենց բարի համբավին: Տրամաբանության այս գիծը հանգեցրել է նրան, որ ստիպողական սեռական հարաբերություն ունեցած հարցվողներն այլ պատասխան են ընտրել: Հնարավոր է, որ նրանք նախընտրել են ասել, որ չեն հիշում (տվյալ հարցին պատասխանած կանանց 0.5%-ը հենց այս տարբերակն է ընտրել), կամ ընդհանրապես պատասխան չտալ (2.5%):

Անհրաժեշտ է նշել, որ հիմնականում հարցվածների տարբեր ենթախմբերի միջև կարծիքների տարբերություն չկա կամ շատ փոքր է, հատկապես «Դուք ուզո՞ւմ էիք սեռական հարաբերություն ունենալ» հարցի պատասխանների դեպքում: Սակայն առկա է մի էական բացառություն: Այս դեպքում երեխաների թիվն ակնհայտորեն կարևոր գործոն է: Որքան ավելի շատ երեխաներ ունի կինը, այնքան ավելի շատ է հավանականությունը, որ նա ցանկացել է սեռական հարաբերություն ունենալ առաջին անգամ, և ավելի պակաս է հավանականությունը, որ չի ցանկացել, բայց դա տեղի է ունեցել: Հակադրությունն ավելի ցայտուն է երեխա չունեցող և երեք և ավելի երեխա ունեցող կանանց միջև: Այս հետազոտության շրջանակներում հնարավոր չէ բացատրություն գտնել, քանի որ հարցվողներին չեն ուղղվել պատճառների և այլ հանգամանքների վերաբերյալ հարցեր:

Ավելի պակաս ակնառու է քաղաքաբնակների և գյուղաբնակների միջև տարբերությունը՝ հիմնականում երևանաբնակների շնորհիվ: Իրենց կամքով առաջին անգամ սեռական հարաբերություն ունեցողների տոկոսն ավելի ցածր է, իսկ ցանկություն չունեցողներինը ավելի բարձր՝ այլ քաղաքային և հատկապես գյուղական բնակավայրերի կանանց շրջանում:

Անհրաժեշտ է նաև նշել, որ *կրթական գործոնը*, որը շատ կարևոր է մնացած այլ դեպքերում, այստեղ, ըստ էության, որևէ նշանակություն չունի:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հարցմանը մասնակցած երբևէ սեռական կյանքով ապրած կանանց մեծամասնությունը կարողացել է վերահսկել առաջին սեռական հարաբերության հանգամանքները և/կամ առաջին անգամ սեռական հարաբերություն է ունեցել սոցիալական և մշակութային առումով ընդունելի իրավիճակներում:

ԳԼՈՒԽ 5. ՍԵՌԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՆՈՋ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Առողջական խնդիրները, մասնավորապես առողջական լավ կարգավիճակը ընտանիքի բարեկեցության գրավականն է: Կենսաբանական առանձնահատկություններով պայմանավորված՝ կնոջ կյանքի միջին տևողությունը տղամարդկանց համեմատությամբ 6-7 տարի ավելի է: Հայաստանում նույնպես պահպանվում է այս օրինաչափությունը: Գենդերային տեսանկյունից այս տարբերությունը մասամբ բացատրվում է կենսաբանական գործոնով՝ ավելի շատ տղաներ են ծնվում, քան աղջիկներ, բայց կանայք ապրում են ավելի երկար, քան տղամարդիկ: Այնուամենայնիվ, այդ տարբերության մակարդակն էականորեն կախված է երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակից:

ԿԱՆԱՆՑ ՄՏԱՎՈՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ

Այս հետազոտության շրջանակներում, հիմնվելով ստորև ներկայացված տվյալների վրա, կնոջ առողջությունը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից, ինչպիսին են *առողջական վիճակը, ինքնազնահատարականը*, ներառյալ ֆիզիկական և մտավոր առողջության հարցերը՝ *խմելը, ծխելը, դեղորայք օգտագործելը*, ինչպես նաև առողջապահական ծառայություններից *օգտվելը* կամ դրանցից *օգտվելու խոչընդոտները*: Այս հարցերին անդրադարձ է կատարվել նաև սեռական գուգընկերոջ կողմից բռնության և կնոջ ֆիզիկական և մտավոր առողջության միջև կապի տեսանկյունից:

Կանանց կողմից իրենց ֆիզիկական առողջության գնահատականը

✓ Ընդհանուր առողջական վիճակի բնութագրումը

Աղյուսակ 5.1. Ընդհանուր առողջական վիճակը

Ընտրության 15-59 տարեկան կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր գնահատել են իրենց առողջական վիճակը (“...” 25-ից սակաս ղեպերի համար):

		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	Վատ	Ընդամենը %	Կանանց թիվը (բոլորը)
Տարիք	15-24	38.5	50.3	9.5	1.7	0.0	100.0	297
	15-19	47.5	44.6	7.4	0.5	0.0	100.0	128
	20-24	31.7	54.6	11.1	2.6	0.0	100.0	169
	25-34	14.2	58.8	21.7	5.0	0.3	100.0	518
	35-44	7.4	42.1	37.3	12.0	1.2	100.0	705
	45-59	4.3	29.1	43.0	20.8	2.8	100.0	1,229
Բնակության վայր	Քաղաքային	10.3	39.6	34.2	14.3	1.6	100.0	2,011
	Երևան	8.6	43.1	35.6	11.2	1.5	100.0	792
	Այլ քաղաքային	11.5	37.2	33.3	16.3	1.7	100.0	1,219
	Գյուղական	11.5	42.3	33.2	11.4	1.6	100.0	738
Ամուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած	28.2	51.1	17.1	3.3	0.3	100.0	382
	Ներկայումս ամուսնացած	8.7	40.4	35.9	13.8	1.2	100.0	2,082
	Նախկինում ամուսնացած	1.0	25.6	41.8	25.1	6.5	100.0	285
Երեխաների թիվը	0	25.3	51.3	17.6	4.6	1.2	100.0	470
	1-2	8.4	40.8	36.0	13.0	1.8	100.0	1,495
	3+	6.1	32.7	39.8	19.8	1.6	100.0	784
Կրթություն	Կրթություն չի ստացել		8
	Ընդհանուր տարրական	8.3	24.3	35.4	31.4	0.6	100.0	118
	Ընդհանուր միջնակարգ	11.2	36.8	36.0	13.9	2.1	100.0	1,104
	Միջին մասնագիտական	9.4	40.6	32.6	15.2	2.2	100.0	881
	Բարձրագույն	11.9	48.9	32.1	7.1	0.0	100.0	638
Զբաղվածություն	Չաշխատող	11.9	37.6	34.4	14.6	1.5	100.0	1,712
	Աշխատող	9.0	47.1	31.9	10.1	1.9	100.0	873
	Սեզոնային աշխատանք	6.3	32.4	39.0	21.5	0.8	100.0	149
	Այլ		15
Ընդամենը		10.6	40.3	33.9	13.5	1.7	100.0%	2,749

Այն հարցին, թե ինչպես կարող են բնութագրել իրենց ընդհանուր առողջական վիճակը, հարցմանը մասնակցած կանանց 10.6%-ը ել է «գերազանց», 15.2%-ը՝ «վատ» (13.5%-ը) կամ «շատ վատ» (1.7%), ընդ որում՝ քաղաքաբնակների ղեպքում այդ ցուցանիշն ավելի բարձր է (15.9%), քան գյուղաբնակների մոտ (13.0%): Իրենց ընդհանուր առողջական վիճակը «վատ» կամ «շատ վատ» գնահատող նախկինում ամուսնացած կանանց տոկոսը երկու անգամ բարձր է ներկայումս ամուսնացածների և ինն անգամ՝ չամուսնացած կանանց ցուցանիշների համեմատությամբ: Կրթական մակարդակը նույն-

պես նշանակալի տարբերությունների գործոն է. որքան բարձր է կրթության մակարդակը, այնքան ցածր է առողջական վիճակի «վատ» գնահատականը (բարձրագույն կրթությամբ կանանց 7.1%-ը և միջնակարգ կրթությամբ կանանց 16.0%-ն այսպես են բնութագրում իրենց ընդհանուր առողջական վիճակը): Առողջական վիճակը «վատ» գնահատած կանանց թիվն աճում է նաև երեխաների քանակությանը զուգահեռ (երեխա չունեցող կանանց 5.8%-ը, մեկ կամ երկու երեխա ունեցող կանանց 14.8%-ը և երեք և ավելի երեխա ունեցողների 21.4%-ը):

✓ **Առողջությունը և քայլելու կարողությունը վերջին 4 շաբաթների ընթացքում**

Կանանց 5.2%-ը նշել է, որ վերջին 4 շաբաթների ընթացքում ունեցել է առողջական շատ խնդիրներ: Ընդ որում, այս ժամանակահատվածում առողջական «շատ խնդիրներ» գնահատականը (մասնավորապես քայլելու կարողության հետ կապված) գրեթե երկու անգամ ավելի բարձր է ներկայում ամուսնացած (4.6%) և շուրջ 5 անգամ ավելի՝ նախկինում ամուսնացած կանանց (13.4%), քան երբևէ չամուսնացած կանանց (2.6%) շրջանում:

Առողջական շատ խնդիրներ (ինչն արտացոլվում է նրանց քայլելու կարողությամբ) ունեցող կանանց տոկոսը գրեթե երկու անգամ ավելի ցածր է գյուղական տարածքներում (3.2%), քան քաղաքային կանանց (6.0%) դեպքում:

«Շատ խնդիրներ» պատասխանի ամենացածր գնահատականը գրանցվել է բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում (1.7%): Հարկ է նշել, որ վերջին 4 շաբաթների ընթացքում նման շատ խնդիրներ ունեցող հարցվողների տոկոսն ավելի բարձր է չաշխատող (5.7%), քան աշխատող կանանց շրջանում (4.6%): Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցած կանանցից յուրաքանչյուր հինգերորդը (21.9%) նշել է, որ ունի որոշ խնդիրներ կամ շատ խնդիրներ:

✓ **Ցավեր կամ անհանգստություն վերջին 4 շաբաթների ընթացքում**

Հարցմանը մասնակցած 2749 կանանցից գրեթե յուրաքանչյուր երկրորդը նշել է, որ վերջին 4 շաբաթների ընթացքում ցավեր կամ անհանգստություն չի ունեցել: Ընդ որում, նման լավատեսական կարծիք հայտնած կանանց տոկոսը կտրուկ նվազել է երիտասարդներից դեպի ավելի տարեց կանանց ենթախումբ (15-24 տարեկանների ենթախումբում 88.9%-ից մինչև 45-59 տարեկանների՝ 30.7%): Քաղաքային և գյուղական բնակավայրերի կտրվածքով այս ցուցանիշի էական տարբերություն չի գրանցվել:

Հարցման մասնակիցների 5.4%-ը նշել է, որ վերջին 4 շաբաթների ընթացքում ժամանակահատվածում ունեցել է անտանելի ցավ կամ անհանգստություն: Այս կատեգորիայում ամուսնացած կանանց տոկոսը 9 անգամ ավելի բարձր է (5.4%), քան չամուսնացածներինը (0.6%): Խնդիրն ուղիղ փոխկապակցվում է երեխաների թվի հետ (1.1%՝ երեխա չունեցող և 7.4%՝ երեք և ավելի երեխա ունեցող կանայք) և հակադարձ՝ կրթական մակարդակի հետ (միջնակարգ կրթությամբ հարցվողներ՝ 5.3% և բարձրագույն՝ 2.3%): Ինչ վերաբերում է «գրադվածության» գործոնին, ապա ցուցանիշն ավելի բարձր է չաշխատող և սեզոնային աշխատանք կատարող կանանց շրջանում (համապատասխանաբար՝ 5.7% և 6.9%):

✓ **Հիշողության հետ կապված խնդիրներ վերջին 4 շաբաթների ընթացքում**

Հարցմանը մասնակից կանանց 75.4%-ը նշել է, որ հիշողության հետ կապված որևէ խնդիր չի ունեցել վերջին 4 շաբաթների ընթացքում, իսկ հարցվողների 1.5%-ն արձանագրել է հիշողության հետ կապված շատ կամ չափազանց շատ խնդիրներ: Այս կատեգորիայում առավել խոցելի են 45-59 տարեկան կանայք (2.8%), քաղաքային կանայք (1.8%՝ գյուղաբնակների 0.8%-ի դիմաց) և նախկինում ամուսնացած կանայք (4.1%՝ ներկայում ամուսնացած կանանց 1.5%-ի դիմաց): «Երեխաների թվի» և «գրադվածության» գործոններն ազդեցություն չեն ունեցել այս ցուցանիշի վրա:

Ինչ վերաբերում է «կրթական մակարդակի» գործոնին, ապա հիշողության հետ կապված շատ կամ չափազանց շատ խնդիրների ամենացածր տոկոսը գրանցվել է միջնակարգ և բարձրագույն կրթություն ստացած կանանց շրջանում (համապատասխանաբար՝ 0.6% և 0.7%):

Դեղորայքի օգտագործումը վերջին 4 շաբաթների ընթացքում

✓ **Դեղորայքն ընդունվել է հանգստանալու կամ քնելու նպատակով**

Ըստ հետազոտության տվյալների, վերջին 4 շաբաթների ընթացքում կանանց 88.2%-ը հանգստանալու կամ քնելու նպատակով դեղորայք չի ընդունել: Հարցման մասնակիցների 8.5%-ը նման դեղորայք ընդունել է մեկ կամ երկու անգամ, 2.2%-ը՝ մի քանի անգամ և միայն 1.1%-ը՝ հաճախ: Ընդ որում, նման դեղորայք ընդունող քաղաքաբնակ կանանց տոկոսը (13.2%) 1.7 անգամ ավել է գյուղաբնակ կանանց նույն ցուցանիշի համեմատությամբ (8.0%): Երևանաբնակների շրջանում այն նույնիսկ ավելի բարձր է (14.9%): Ինչ վերաբերում է ամուսնական կարգավիճակին, ապա նման դեղորայք օգտագործողների տոկոսը բարձր է նախկինում ամուսնացած կանանց շրջանում (19.1%), իսկ «կրթության» գործոնով ամենացածր ցուցանիշը գրանցվել է բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում (5.5%): «Երեխաների թվի» և «զբաղվածության» գործոնները չեն ազդում կանանց կողմից նման դեղորայքի օգտագործման վրա:

✓ **Ցավագրկման նպատակով օգտագործված դեղորայք**

Հարցմանը մասնակցած կանանցից գրեթե յուրաքանչյուր երկրորդը (հարցվողների 43.8%-ը) վերջին 4 շաբաթների ընթացքում օգտագործել է ցավագրկող դեղամիջոց: Ընդ որում, հարցվողների 27.4%-ն այն օգտագործել է հազիվ մեկ կամ երկու անգամ, 10.1%-ը՝ մի քանի անգամ, իսկ 6.3%-ը՝ հաճախ: Ցավագրկողների օգտագործումն ուղիղ փոխկապակցվում է տարիքի հետ. եթե 15-24 տարեկան կանանց ենթախմբում նման դեղամիջոցներ ընդունել է հարցվողների միայն 12.7%-ը, ապա 45-59 տարեկանների ենթախմբում այդ ցուցանիշը կազմում է 54.0%:

Ինչ վերաբերում է ամուսնական կարգավիճակին, ապա նման դեղամիջոցներ օգտագործող ամուսնացած կանանց տոկոսը 3 անգամ ավելի բարձր է, քան երբևէ չամուսնացածներինը (47.5%-ը՝ 16.2%-ի դիմաց): Եթե ցավագրկող դեղորայք օգտագործող քաղաքաբնակ և գյուղաբնակ կանանց միջև էական տարբերություններ չեն գրանցվել, ապա իրավիճակն այլ է կրթական մակարդակի դեպքում. նման դեղամիջոցներ օգտագործող կանանց տոկոսը 1.5 անգամ ավելի ցածր է բարձրագույնավարտ կանանց շրջանում (5.0%)՝ ի տարբերություն միջնակարգ կրթությամբ կանանց (7.2%): Ցավագրկողների օգտագործումն ուղիղ փոխկապակցվում է հարցվողների երեխաների քանակին (երեխա չունեցող կանանց 1.7%-ը՝ 3 կամ ավելի երեխա ունեցողների 7.7%-ի դիմաց): «Զբաղվածության» գործոնը ցավագրկողների օգտագործման մեջ էական տարբերություններ չի հայտ չի բերում:

✓ **Դեղորայքի օգտագործում ընկճված կամ ճնշված չզգալու համար**

Հարցմանը նախորդած 4 շաբաթների ընթացքում կանանց 5.1%-ն առնվազն մեկ անգամ օգտագործել է հակադեպրեսանտ: Ինչպես նախորդ երկու դեղորայքի դեպքում, հակադեպրեսանտների օգտագործումը տարիքի հետ աճում է: Ըստ երեխաների թվի, կրթության մակարդակի և զբաղվածության գործոնների՝ հակադեպրեսանտների օգտագործման էական տարբերություններ չկան: Մյուս կողմից նշանակալի տարբերություններ են դիտվում գյուղական և քաղաքային բնակավայրերի ներկայացուցիչների միջև (համապատասխանաբար՝ 3.3% և 5.7%):

Վերջին 4 շաբաթների ընթացքում ի հայտ եկած ընդհանուր առողջական խնդիրներ

Այս հարցի նպատակն էր սահմանել հարցմանը նախորդած 4 շաբաթների ընթացքում կանանց մոտ արձանագրված կոնկրետ առողջական խնդիրների առկայությունը, ներառյալ՝ հաճախակի գլխացավեր, վատ ախորժակ, անքնություն, ձեռքերի դող, վախի զգացում, անընդհատ հոգնածություն և այլն, այսինքն՝ առավելապես հոգեառաջնային բնույթի ախտանիշներ:

Տվյալների համաձայն՝ հարցմանը մասնակցած 2749 կանանց 65.7%-ը մատնանշել է վերոնշյալ ախտանիշներից գոնե մեկը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս առանձին ախտանիշների հետևյալ պատկերը՝ հարցման մասնակիցների 48.8%-ը նշել է, որ ունի հաճախակի գլխացավեր, 12.3%-ը՝ վատ ախորժակ, 28.5%-ը վատ է քնում, 12.7%-ը վախի զգացում է ունենում, 13.2%-ի ձեռքերը դողում են, 27.5%-ը լարված է, 11.9%-ն ունի մարսողական խնդիրներ, 7.9%-ը՝ հստակ մտածելու դժվարություն, 9.0%-ը դժբախտ է, 12.5%-ը սովորականից ավելի շատ է լաց լինում, 12.4%-ն ամենօրյա գործերից հաճույք չի ստանում, 8.6%-ը դժվարանում է որոշումներ կայացնել, 7.7%-ը կարծում է, որ տուժում է իր

ամենօրյա աշխատանքը, 11.5%-ը չի կարողանում օգտակար լինել կյանքում, 13.7%-ը կորցրել է հետաքրքրությունն այն ամենի հանդեպ, ինչից սովորաբար հաճույք է ստացել, 3.1%-ն իրեն ոչ պիտանի մարդ է զգում, 1.9%-ը կյանքին վերջ տալու միտք է ունեցել, 19.2%-ն անընդհատ հոգնածություն է զգում, 11.9%-ը ստամոքսում անհանգստություն է զգում, իսկ 27.6%-ը շուտ հոգնում է: Անհրաժեշտ է նշել, որ որքան ավելի մեծ է կանանց տարիքը, այնքան մեծ է նշված ախտանիշների տոկոսը:

Ինչ վերաբերում է հիմնական ախտանիշներին, տարբերությունը գյուղաբնակ և քաղաքաբնակ կանանց միջև մեծ չէ: Սակայն Երևանում բնակվող կանանց մոտ այս ախտանիշները զգալիորեն ավելի մեծ տոկոս են կազմում, մասնավորապես՝ գլխացավերի (50.3%), նյարդայնության և լարվածության (32.7%), անընդհատ հոգնած զգալու (22.7%), սովորականից ավելի հաճախ լաց լինելու (14.8%) և հստակ մտածելու դժվարություն ունենալու (9.2%) ախտանիշների պարագայում: Բոլոր ախտանիշների առումով ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է նախկինում ամուսնացած կանանց շրջանում. նրանց 70.0%-ը նշել է գլխացավերի, 47.5%-ը՝ անքնության և 43.4%-ը՝ նյարդայնացած կամ լարված և անընդհատ հոգնած զգալու մասին: Հիմնական ախտանիշները հաճախանում են նաև «երեխաների թվի» ավելացմանը զուգընթաց: Երեք և ավելի երեխա ունեցող հարցվողների 78.2%-ը նշել է գոնե մեկ ախտանիշ: Սյուս կողմից, այդ ախտանիշները հակադարձ փոխկապակցվում են կրթության մակարդակին: Եթե տարրական կրթությամբ հարցվողների 79.4%-ը նշել է որևէ մեկ ախտանիշ, ապա բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում այդ ցուցանիշը զգալիորեն ցածր է (56.0%): Ինչ վերաբերում է «զբաղվածության գործոնին», ապա այդ ախտանիշների առումով աշխատող և չաշխատող կանանց միջև տարբերությունը մեծ չէ, մինչդեռ տոկոսային հարաբերությունը շատ ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր սեզոնային աշխատանք ունեն (72.9%):

Ինքնասպանության մասին մտքեր կամ փորձեր

Հարցմանը մասնակցած 2749 կանանց 1.6%-ը երբևէ կյանքին վերջ տալու միտք է ունեցել, իսկ նրանցից յուրաքանչյուր երրորդը (31.4%) իսկապես ինքնասպանության փորձ է կատարել: 35-44 տարեկան կանայք և նախկինում ամուսնացած կանայք ավելի են հակված մտածելու իրենց կյանքին վերջ տալու մասին (համապատասխանաբար՝ 3.1% և 2.9%): 15-19 տարեկան առավել կրտսեր ենթախմբում միայն 1.0%-ն է երբևէ մտածել իր կյանքին վերջ տալու մասին, սակայն նրանցից ոչ ոք ինքնասպանության փորձ չի կատարել:

Երբևէ իրենց կյանքին վերջ տալու մասին մտքեր ունեցած և նրանց մեջ ինքնասպանության փորձ կատարած կանանց տոկոսն ավելի բարձր է քաղաքաբնակների շրջանում՝ գյուղաբնակների համեմատությամբ (համապատասխանաբար՝ 1.7%-ը՝ 1.5%-ի դիմաց և 38.9%-ը՝ 10.5%-ի դիմաց): Այդ ցուցանիշը էլ ավելի բարձր է Երևանի բնակիչների շրջանում: Այստեղ կյանքին վերջ տալու մտքեր ունեցած կանանցից յուրաքանչյուր երրորդը (33.3%) իսկապես ինքնասպան լինելու փորձ է կատարել: Ինքնասպանության փորձ կատարած կանանց տոկոսը հարաբերականորեն բարձր է նաև ներկայում ամուսնացած (30.6%) և նախկինում ամուսնացած (60.0%) կանանց շրջանում՝ չամուսնացած կանանց համեմատությամբ (0%), այսինքն՝ իրենց կյանքին վերջ տալու միտք ունեցող յուրաքանչյուր երկրորդ և երրորդ կինը՝ համապատասխանաբար:

Ինչ վերաբերում է կրթական մակարդակին, ապա պատկերը հետևյալն է՝ երբևէ իրենց կյանքին վերջ տալու մասին մտածած և ինքնասպանության փորձ կատարած հարցվողների տոկոսն ավելի բարձր է բարձրագույն կրթություն ունեցողների, քան ընդհանուր միջնակարգ կրթությամբ կանանց շրջանում (համապատասխանաբար՝ 2.1%-ը՝ 1.4%-ի դիմաց և 53.8%-ը՝ 31.1%-ի դիմաց): Այլ կերպ ասած, բարձրագույն կրթությամբ յուրաքանչյուր երկրորդ կինը, որ երբևէ մտածել է վերջ տալ իր կյանքին, ինքնասպանության փորձ է կատարել:

«Զբաղվածության» գործոնի պարագայում միտումը նման է թե՛ կյանքին վերջ տալու մասին մտածելու և թե՛ ինքնասպանության փորձ կատարելու դեպքերի համար: Սեփական կյանքին վերջ տալու մասին մտածած և ինքնասպանության փորձ կատարած կանանց տոկոսն ավելի բարձր է աշխատող (համապատասխանաբար՝ 2.6% և 40.4%), քան չաշխատող (համապատասխանաբար՝ 1.2% և 26.0%)

կանանց շրջանում:

Ինչ վերաբերում է «երեխաների թվի» գործոնին, ապա միտումը համանման չէ կյանքին վերջ տալու մասին մտածելու և ինքնասպանության փորձ կատարելու դեպքերի համար: Չնայած որ իրենց կյանքին վերջ տալու միտք ունեցողների տոկոսն ամենացածրն է երեք և ավելի երեխա ունեցող կանանց շրջանում (0.9%), այնուամենայնիվ այստեղ ինքնասպանության փորձ կատարածների տոկոսն ամենաբարձրն է գրանցվել (22.7%):


Վնասակար սովորույթների տարածվածությունը

✓ Ծխելը

Հարցվողների 3.8%-ը դրական է պատասխանել «Դուք հիմա ծխո՞ւմ եք» հարցին, 1.6%-ը ծխում է ամեն օր: Հնարավոր է, որ հարցվողներից ոմանք չուզենային հայտնել իրենց ծխելու մասին, հաշվի առնելով կանանց ծխելու նկատմամբ լայն հասարակության բացասական վերաբերմունքը:

Կանանց ծխելու վերաբերյալ այլ հետազոտություններ միտված են ենթադրելու, որ ծխելն ավելի տարածված է կանանց շրջանում, քան ցույց են տալիս սույն հետազոտության արդյունքները: (Համաձայն ՀՃԱՀ 2005թ. տվյալների, կանանց 2.0%-ը ծխում է ամեն օր: Ցուցանիշն ավելի բարձր է (3%-4%), երբ տվյալները բաշխվում են ըստ կենսագրական բնութագրիչների:

Գծապատկեր 5.1. Կանանց շրջանում ծխելու վերաբերյալ տվյալներն ըստ կենսագրական բնութագրիչների՝



Ծխելու ամենացածր տոկոսը գրանցվել է տարիքային ամենաերիտասարդ ենթախմբի՝ 15-19 տարեկանների (0.8%), գյուղաբնակների (1.4%) և երեք ու ավելի երեխա ունեցող կանանց (1.8%) շրջանում: Ի հակադրություն ներկայում ծխող կանանց տոկոսի (հարցվողների 1.6%-ը ծխում է ամեն օր, իսկ 2.2%-ը՝ երբեմն), ներկայում չծխող, բայց նախկինում երբևէ ծխած կանանց տոկոսը շատ ավելի ցածր է (հարցվողների 0.1%-ը, ովքեր ներկայում չեն ծխում, նախկինում ծխել են ամեն օր, և 1.5%-ը՝ երբեմն): Այս վիճակագրությունը ցույց է տալիս, որ ծխելը աստիճանաբար ավելի է տարածվել կանանց շրջանում, և ծխողների տոկոսը ներկա սերնդի ներկայացուցիչների շրջանում մոտ 2.5 անգամ ավելի մեծ է նախկին սերնդի համեմատությամբ (հարցմանը մասնակցած կանանց 3.8%-ը ներկայում ծխում է, մինչդեռ անցյալում ծխել է հարցվողների 1.6%-ը):

✓ Ոգելից խմիչքի օգտագործումը

«Որքան հաճախ եք ոգելից խմիչք օգտագործում» հարցին կանանց 71.5%-ը պատասխանել է, որ բոլորովին չի օգտագործում, 0.3%-ը՝ խմում է գրեթե ամեն օր, 0.4%-ը՝ շաբաթը մեկ կամ երկու անգամ,

4.6%-ը՝ ամիսը 1-3 անգամ, մինչդեռ կանանց 20.8%-ը հայտնել է, որ ոգելից խմիչք օգտագործում է միայն երբեմն (ամիսը մեկ անգամից պակաս): Փաստորեն, յուրաքանչյուր չորրորդ կին տարբեր հաճախականությամբ օգտագործում է ոգելից խմիչք: Հարցվողների 5.3%-ը ոգելից խմիչք է օգտագործում ամիսը 1-3 անգամ կամ ավելի հաճախ (այսուհետև՝ «հաճախ»): Ըստ կենսագրական բնութագրիչների՝ տվյալները ցույց են տալիս, որ

- Ոգելից խմիչք օգտագործողների տոկոսն ամենաբարձրն է 35-44 տարեկանների ենթախմբում (6.8%), նախկինում ամուսնացած (8.3%), բարձրագույն կրթությամբ (6.5%) և աշխատող կանանց (7.1%) շրջանում:
- Ոգելից խմիչքի օգտագործման ամենացածր տոկոսը գրանցվել է ամենաերիտասարդ կանանց տարիքային ենթախմբում՝ 15-19 տարեկան (0.5%), և գյուղաբնակների շրջանում (4.1%):

Հարցմանը նախորդած 12 ամիսներին խմելու հետ կապված առողջական խնդիրներ է ունեցել կանանց 3.0%-ը, 2.6%-ը հայտնել է դրամական խնդիրներ ունենալու մասին, մինչդեռ միայն 0.3%-ն է նշել, որ ոգելից խմիչք օգտագործելու պատճառով կոնֆլիկտներ է ունեցել ընտանիքի և ընկերների հետ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ոգելից խմիչքի օգտագործումը կանանց կողմից Հայաստանում սոցիալական լուրջ խնդիր չէ, և դա համապատասխանում է կանանց կողմից ոգելից խմիչքի օգտագործման նկատմամբ հայ հասարակության ավանդական բացասական կեցվածքին:

ՄԵՌԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ՎԱՐՔԱԳԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՆՈՋ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Սույն հետազոտության շրջանակներում նպատակ է դրվել ոչ միայն գնահատել կնոջ առողջական խնդիրները և պարզել բռնության տեսակների տարածվածությունը, այլև բացահայտել սեռական զուգընկերոջ վարքագծի, մասնավորապես՝ բռնության դրսևորումների հնարավոր ազդեցությունը կնոջ ֆիզիկական և/կամ մտավոր առողջության վրա:

Կարևորվել է այս ազդեցության վերաբերյալ կանանց ինքնագնահատականի պարզաբանումը: Հետազոտության տվյալները ցույց են տվել որ սեռական զուգընկերոջ կողմից բռնության որևէ տեսակի ենթարկված կանանց գրեթե կեսը (51.5%) նշում են, որ իրենց սեռական զուգընկերոջ վարքագիծը ոչ մի ազդեցություն չի թողել իրենց ֆիզիկական կամ մտավոր առողջության վրա, մինչդեռ շուրջ մեկ երրորդը (27.8%) նշում է, որ այդ ազդեցությունը փոքր է եղել, իսկ 13.1%-ը համարում է, որ առողջության վրա նման վարքագծի ազդեցությունը շատ մեծ է: Անհրաժեշտ է նշել, որ որքան բարձր է հարցվողի կրթական մակարդակը, այնքան իրենց առողջության վրա սեռական զուգընկերոջ վարքագծի բացասական ազդեցության գնահատականն ավելի մեծ է (այսպես մտածող բարձրագույն կրթությամբ կանայք կազմում են 31.2%, իսկ ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները՝ 7.7%): Իրենց ֆիզիկական կամ մտավոր առողջության վրա սեռական զուգընկերոջ վարքագծի ունեցած ազդեցության մասին նշողների տոկոսն առավել ցածր է գյուղաբնակ (11.9%) և չափաատող կանանց (7.1%) շրջանում:


ԲՈՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՆՈՋ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ՄՏԱՎՈՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ֆիզիկական առողջության գնահատականը խիստ տարբերվում է սեռական զուգընկերոջ կողմից բռնության ենթարկված և չենթարկված կանանց միջև:

✓ **Ինքնագագացողության գնահատականը.** իրենց առողջությունը որպես «զերազանց» կամ «լավ» գնահատած հարցվողների տոկոսը զգալիորեն ցածր է սեռական զուգընկերոջ կողմից բռնության ենթարկված կանանց շրջանում՝ բռնության չենթարկվածների համեմատությամբ: Ընդ որում, տարբերությունը կազմում է մոտ 1.3 անգամ հոգեբանական բռնության (35.8%՝ 50.0%-ի դիմաց) և գրեթե 2 անգամ՝ ֆիզիկական և սեռական բռնության պարագայում (համապատասխանաբար՝ 23.8%-ը 48.6%-ի դիմաց և 25.4% 47.1%-ի դիմաց): Իրավիճակը միանգամայն հակառակն է «վատ» և «շատ

վատ» գնահատականի դեպքում: Բռնության վերոնշյալ երեք տեսակներից գոնե մեկին ենթարկված կանանց շրջանում իրենց առողջական վիճակն այդպես գնահատող հարցվողների տոկոսը գրեթե 2 անգամ գերազանցում է բռնության չենթարկվածների ցուցանիշը: Հոգեբանական բռնության դեպքում այն կազմում է 25.4% 14.1%-ի դիմաց, ֆիզիկականի դեպքում՝ 29.1%՝ 15.8%-ի դիմաց և սեռականի դեպքում՝ 29.2%՝ 16.5%-ի դիմաց:

Գծապատկեր 5.2. Ինքնազգացողության գնահատականը սեռական զուգընկերոջ կողմից բռնության ենթարկված կանանց կողմից




✓ **Ֆիզիկական առողջություն.** կնոջ ֆիզիկական առողջությունը բնութագրող տարրեր ցուցիչների պարագայում նույնպես վերոնշյալ փոխկապակցվածությունն ակնհայտ է: Մասնավորապես, քայլել չկարողանալու հետ կապված խնդիրների մասին ավելի շատ նշում են այն կանայք, ովքեր ենթարկվել են հոգեբանական և ֆիզիկական բռնության՝ ի տարբերություն բռնության չենթարկվածների (համապատասխանաբար՝ 8.8%՝ 4.6%-ի դիմաց և 10.0%՝ 5.2%-ի դիմաց): Սեռական բռնության գործոնի հետ որևէ կապ չկա (5.1%՝ 5.6%-ի դիմաց): Հարցմանը նախորդած 4 շաբաթների ընթացքում քոր կամ հեշտոցային արտադրություն ունեցող հարցվողների տոկոսը բարձր է այն կանանց շրջանում, ովքեր ենթարկվել են սեռական բռնության՝ համեմատած սեռական բռնության չենթարկվածների հետ (համապատասխանաբար՝ 8.9%՝ 5.9%-ի դիմաց և 23.8%՝ 13.5%-ի դիմաց):

✓ **Դեղորայքի** օգտագործում. Կանանց կողմից դեղամիջոցների օգտագործումը կարևոր է բռնության հետևանքները գնահատելու համար: Բավական հաճախ (այսինքն՝ «մի քանի անգամ» կամ «շատ անգամ») քնաբեր դեղամիջոցներ օգտագործող հարցվողների տոկոսն ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր ենթարկվել են հոգեբանական (5.3%) կամ ֆիզիկական բռնության (8.6%), քան բռնության չենթարկվածների շրջանում (համապատասխանաբար՝ 3.0% և 3.1%):

• Տարբերությունները շատ ավելի ցայտուն են *ցավազրկող դեղամիջոցների* օգտագործման դեպքում: Այսպես, հարցման մասնակիցներից բավական հաճախ ցավազրկող դեղեր օգտագործողների ցուցանիշն ակնհայտորեն ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր ենթարկվել են հոգեբանական (26.6%) կամ ֆիզիկական բռնության (30.8%), բռնության չենթարկվածների համեմատությամբ (համապատասխանաբար՝ 15.6% և 17.1%):

• Երկու դեպքում էլ (այսինքն՝ քնաբեր և ցավազրկող դեղորայքի օգտագործման) տարբերությունն առավել ակնհայտ է ֆիզիկական բռնության ենթարկված լինելու պարագայում:

Գծապատկեր 5.3. Դեղորայքի գործածությունը (%)




✓ **Առողջական վիճակով պայմանավորված տարբեր ախտանիշների վրա ազդող ցուցիչների արժեքները** նույնպես ուղիղ փոխկապակցվում են բռնության հետ: Այսպես, հարցմանը նախորդած 4 շաբաթների ընթացքում գլխացավ ունեցած ների տոկոսը 1.2-1.3 անգամ ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր ենթարկվել են բռնության երեք տեսակներից մեկին կամ մի քանիսին՝ բռնության չենթարկված կանանց համեմատությամբ: Այդ ժամանակահատվածում վատ ախորժակ ունեցած հարցվողների տոկոսը 1.6-2.4 անգամ ավելի բարձր է բռնության ենթարկված կանանց դեպքում՝ ի տարբերություն բռնության չենթարկվածների (հոգեբանական գործոնի դեպքում 19.3%՝ 11.7%-ի դիմաց, ֆիզիկականի՝ 25.2%՝ 12.4%-ի դիմաց, և սեռական բռնության՝ 31.6%՝ 12.9%-ի դիմաց):

Հարցմանը նախորդած 4 շաբաթների ընթացքում վատ քնելու մասին հաղորդած հարցվողների տոկոսը 1.6-1.8 անգամ ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր ենթարկվել են բռնության որևէ տեսակի՝ բռնության չենթարկված կանանց համեմատությամբ:

Ձեռքերի դողը բռնության որևէ տեսակի ենթարկված կանանց շրջանում 1.5-1.6 անգամ ավելի հաճախ է նկարագրվում, քան բռնության չենթարկված կանանց մոտ:

Գծապատկեր 5.4. Հոգեկան և ֆիզիկական առողջությունը (%)



✓

✓ **Մտավոր առողջության** վրա ներգործող ցուցիչների արժեքների տարբերությունը բռնության ենթարկված և չենթարկված կանանց միջև շատ ավելի ակնառու է և մեծ:

Մասնավորապես, վերջին 4 շաբաթների ընթացքում վախի զգացում ունենալու մասին հաղորդած հարցվողների տոկոսը 2 անգամ ավելի մեծ է հոգեբանական բռնության ենթարկված կանանց շրջանում՝ բռնության չենթարկվածների համեմատությամբ (21.8%-ը՝ 10.6%-ի դիմաց), ֆիզիկական բռնության դեպքում՝ 3 անգամ (համապատասխանաբար՝ 34.3%- և 11.4%) և սեռական բռնության դեպքում՝ 2.4 անգամ (համապատասխանաբար՝ 30.4%- և 12.8%):

Հարցմանը նախորդած 4 շաբաթների ընթացքում *հարակ միտածելու* հետ կապված խնդիրների մասին նշած հարցվողների տոկոսը 2.4-2.8 անգամ ավելի բարձր է ֆիզիկական և/կամ հոգեբանական բռնության ենթարկված կանանց շրջանում՝ բռնության չենթարկված կանանց համեմատությամբ:

Այս ժամանակահատվածում *դժբախտ զգալու* հետ կապված տարբերությունները էլ ավելի մեծ են բռնության բոլոր տեսակների դեպքում, այսինքն՝ հոգեբանական, ֆիզիկական և սեռական (համապատասխանաբար՝ 2.7, 3.3 և 3.8 անգամ):


Հարցմանը նախորդած 4 շաբաթների ընթացքում *սովորականից ավելի հաճախ լաց լինելու* մասին նշած հարցվողների տոկոսը միջինը 2 անգամ բարձր է բռնության որևէ տեսակի ենթարկված կանանց շրջանում՝ բռնության չենթարկվածների համեմատությամբ:

Պատկերն ըստ էության նույնն է այնպիսի ախտանիշների դեպքում, ինչպիսին են՝ *չի կարողանում օգրակար լինել կյանքում, ամենօրյա գործերից հաճույք չի սրանում, իրեն անսպիրան մարդ է զգում և կորցրել է հետաքրքրությունն այն ամենի հանդեպ, որ սովորաբար հաճույք էր պատճառում իրեն:*

Ինքնասպանության մասին մտքեր կամ փորձեր

Ինքնասպանության մասին մտքերը կամ փորձերը մտավոր առողջության վրա բռնության գործոնի ամենաձանր դրսևորումներն են:

Գծապատկեր 5.5. Ինքնասպանության և բռնության կապը (%)



Այս հետազոտության շրջանակում ձեռք բերված տվյալները ցույց են տալիս, որ *նախորդ 4 շաբաթների ընթացքում* որոշ կանայք, ովքեր ենթարկվել են բռնության որևէ տեսակի, մտածել են իրենց կյանքին վերջ տալու մասին: Այս կանանց տոկոսը հոգեբանական բռնության դեպքում կազմում է 4.1%, ֆիզիկական՝ 9.0% և սեռական՝ 15.2%, որոնք համապատասխանաբար՝ 2.7, 6.4 և 8.9 անգամ բարձր են բռնության նշված տեսակներին չենթարկված կանանց համեմատությամբ: Տարբերությունները շատ ավելի մեծ են *երբևէ կյանքին վերջ տալու մասին միտած* կանանց դեպքում: *Երբևէ*

իրենց կյանքին վերջ տալու մասին միտք ունեցածների ցուցանիշները համապատասխանաբար 3.9, 9 և 15 անգամ ավելի բարձր են հոգեբանական, ֆիզիկական և/կամ սեռական բնության ենթարկված կանանց շրջանում՝ բնության չենթարկված կանանց համեմատությամբ:

Իրենց կյանքին վերջ տալու մասին մտքեր ունեցած կանանցից ոմանք երբևէ *ինքնասպանության փորձ են կատարել*: Մասնավորապես, իրենց կյանքին վերջ տալու մտքեր ունեցած կանանց շրջանում հոգեբանական բնության ենթարկվածների 51.7%-ը, ֆիզիկական՝ 62.5%-ը և սեռական բնության՝ 70.6%-ն ինքնասպանության փորձ են կատարել: Այսպիսով, ակնհայտ է, որ սեռական բնությունն ամենաձանր ազդեցությունն ունի կնոջ մտավոր առողջության վրա:

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ բնության *ենթարկված* և *չենթարկված* կանանց միջև տարբերությունն արտահայտված է նաև վնասակար սովորությունների պարագայում: Հետևաբար, ամեն օր ծխող հարցվողների տոկոսը 2,4 անգամ ավելի բարձր է հոգեբանական, 6.9 անգամ՝ ֆիզիկական, և 8.8 անգամ՝ սեռական բնության ենթարկված կանանց շրջանում, քան չենթարկվածների:

Ըստ ստացված տվյալների՝ ոգելից խմիչքի օգտագործման և բնության միջև վիճակագրորեն հավաստի փոխկապակցվածություն չի բացահայտվել, այս ցուցիչի առնչությամբ ստացված տվյալների թվային փոքր արժեքների պատճառով:

Այսպիսով, սույն հետազոտության շրջանակներում ստացված տվյալները հստակ ցույց են տալիս, որ կանանց ֆիզիկական և մտավոր առողջությունը ներկայացնող հիմնական ցուցանիշներն ուղիղ փոխկապակցվում են բնության գործոնի հետև փաստում են սեռական գույքնկերոջ կողմից բնության տարբեր դրսևորումների ծանր ազդեցության մասին կնոջ մտավոր և ֆիզիկական առողջության վրա:

ԳԼՈՒԽ 6. ՍԵՌԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՆՈՋ ՍԵՌԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Վերարտադրողական առողջությունը շատ կարևոր է առողջ մանկածնության ապահովման և հետևաբար առողջ սերնդի վերարտադրության համար, ինչը հասարակության զարգացման և բարգավաճման գրավականն է: Բնակչության վերարտադրողական վարքագծի ուսումնասիրությունը կարևոր է ինչպես հետագա պտղաբերության կանխատեսման, այնպես էլ ընտանիքի պլանավորման ծառայությունների պոտենցիալ գնահատման տեսանկյունից:

ԿՆՈՋ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ/ՍԵՌԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ

Վերարտադրողական վարքագիծ

✓ Կենդանածին երեխաների թվաքանակը

«Քանի՞ կենդանի երեխա եք ունեցել» հարցին կանանց շուրջ 51.9%-ը պատասխանել է 1 կամ 2, մինչդեռ նրանցից 23.3%-ն ունեցել է 3 և 7.9%-ը՝ 4 կամ ավելի երեխա: Երկու և ավելի երեխա ունեցողների տոկոսն ամենաբարձրն է 35-44 տարիքային ենթախմբում (64.1%): Երեք և ավելի երեխա ունեցող գյուղաբնակ կանանց տոկոսը գերազանցում է քաղաքաբնակների այդ ցուցանիշը (45.5%-ը՝ 26.0%-ի դիմաց). նույնքան երեխաներ ունեցող կանանց նվազագույն տոկոսը գրանցվել է Երևանում (21.8%): Ներկայում ամուսնացած կանանց 3.0%-ն ընդհանրապես երեխա չունի: Երեխա չունի նաև բարձրագույն կրթությամբ կանանցից գրեթե յուրաքանչյուր երրորդը (29.4%): Երեք և ավելի երեխա ունեցողների տոկոսը բարձր է չաշխատող կանանց շրջանում՝ աշխատող կանանց համեմատությամբ (համապատասխանաբար՝ 31.7% և 27.0%):

✓ Հղիության փաստն այն կանանց դեպքում, ովքեր երբևէ չեն ծննդաբերել

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երբևէ չծննդաբերած կանանց 95.8%-ն ընդհանրապես հղիություն չի ունեցել: Թեև այս խմբի կանանց 3.8%-ը նշել են հղիության մասին, սակայն այն չի ավարտվել ծննդաբերությամբ: Հարցվողների շրջանում չծննդաբերած կանանցից երբևէ հղի չի եղել չամուսնացած 15-19 տարեկանների 100.0%-ը և ներկայում ամուսնացած կանանց 74.3%-ը, մինչդեռ 23.2%-ը ներկայում ամուսնացած կանայք են, ովքեր դեռևս չեն ծննդաբերել, ընդ որում՝ վերջինները կազմում են ամբողջ ընտրանքի մոտավորապես 2.0%-ը:

✓ Ներկայումս կենդանի երեխաներ

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ կենդանի երեխա ունեցողների շրջանում ընդհանուր առմամբ գյուղաբնակ կանայք ավելի շատ երեխաներ ունեն, քան քաղաքաբնակները: Եթե այս խմբում քաղաքաբնակ կանանցից յուրաքանչյուր երրորդը (31.3%) ունի երեք և ավելի երեխա, ապա գյուղաբնակ կանանց շրջանում նույնքան երեխա ունի յուրաքանչյուր երկրորդը (49.5%):

Այս կատեգորիայում գտնվող կանանց համար կրթության մակարդակը հակադարձ փոխկապակցվում է երեխաների թվաքանակի հետ: Եթե բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում երեք և ավելի երեխա ունեցողները կազմում են 21.1%, ապա միջնակարգ կրթությամբ կանանց շրջանում այդ ցուցանիշը կազմում է 40.7%:

Ընդհանուր առմամբ, այս կատեգորիայում հարցվող կանանց 34.4%-ը ներկայում ունի երեք կամ ավելի երեխա, 48.7%-ը՝ երկու, իսկ 16.7%-ը՝ մեկ երեխա, մինչդեռ 0.2%-ը երեխաներ չունի:

✓ «Կորցրած» երեխաներ

«Երբևէ կորցրել էք երեխա՞՝ Կողմ կամ աղջիկ» հարցին, կենդանի երեխա ծննդաբերած կանանց 6.7%-ը տվել է դրական պատասխան ընդ որում՝ քաղաքարևակ կանանց կորուստներն ավելի քիչ են (6.1%), քան՝ գյուղարևակների (8.1%): Երեխաների առավելագույն կորուստ գրանցվել է նախկինում ամուսնացած կանանց շրջանում (9.8%):

Կրթական ցենզի աճին զուգահեռ նվազում է նաև երեխաների կորուստը: Այսպես, եթե երբևէ երեխա կորցրել է բարձրագույն կրթությամբ կանանց 6.4%-ը, ապա ընդհանուր միջնակարգ կրթությամբ կանանց շրջանում այդ ցուցանիշը կազմել է 7.4%, իսկ ընդհանուր տարրական կրթությամբ կանանց դեպքում՝ 11.1%:

«Քանի՞ որդի և/կամ դուստր է մահացել» հարցին կենդանի երեխա ունեցած և այնուհետև կորցրած կանանց 48.0%-ը պատասխանել է, որ կորցրել է տղա, իսկ 62.0%-ը՝ աղջիկ: Նկատի առնելով, որ աղջիկների և տղաների մահացության հարաբերակցության պարագայում կենսաբանական հավասարակշռությունը ճիշտ հակառակն է, կարելի է եզրակացնել, որ աղջիկ երեխաների նկատմամբ խնամքի առումով ցուցաբերվել է խտրական վերաբերմունք:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ երեխա(ներ) կորցրած հարցվողների տոկոսն ավելի բարձր է աշխատող կանանց շրջանում (7.9%)՝ չաշխատողների համեմատությամբ (6.0%): Ըստ էության, աշխատող կանանց դեպքում երեխաների մահացության ռիսկն ավելի մեծ է չաշխատողների համեմատությամբ:

Ինչ վերաբերում է կրթության գործոնին, ապա հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ վերոնշյալ կանանց կատեգորիայի համար կրթական մակարդակը հակադարձ փոխկապակցվում է նրանց երեխա կորցնելու հավանականության հետ: Այսպիսով, եթե կենդանի երեխա ծննդաբերած և այնուհետև կորցրած տարրական կրթությամբ կանայք կազմում են 11.1%, ապա միջնակարգ և բարձրագույն կրթությամբ կանանց դեպքում այդ ցուցանիշը համապատասխանաբար՝ 7.4% և 6.4% է:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս նաև, թե քանի տղաներ և աղջիկներ են մահացել: Երեխա կորցրած կանանց 7.7%-ը կորցրել է երկու կամ ավելի տղա, իսկ 8.7%-ը՝ երկու կամ ավելի աղջիկ:

Երեխաների հայրերը և ֆինանսական օգնությունը

Աղյուսակ 6.1. Երեխաների կենսաբանական հայրերը

Ընտանիքի 15-59 տարեկան կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր հղի են եղել, ունեցել են կենդանի ծնունդ և պատասխանել են իրենց երեխաների կենսաբանական հայրերի մասին հարցին (“...” 25-ից պակաս դեպքերի համար):

	Գործոն/կենսագրական տվյալներ	1 հայր	1-ից ավելի հայրեր	Կենդանի ծնունդ չի ունեցել	Հրաժարվել է պատասխանել	Ընդամենը%	Կանանց թիվը (ովքեր հղի են եղել և ծննդաբերել են կենդանի երեխա)
Տարիք	15-24	94.8	0.0	5.2	0.0	100.0	94
	15-19		3
	20-24	94.7	0.0	5.3	0.0	100.0	90
	25-34	99.2	0.3	0.5	0.0	100.0	434
	35-44	97.9	1.5	0.6	0.0	100.0	644
	45-59	97.3	2.3	0.2	0.2	100.0	1,130
Բնակություն	Քաղաքային	97.5	1.8	0.6	0.1	100.0	1,662
	Երևան	97.2	1.7	0.8	0.3	100.0	642
	Այլ քաղաքային	97.6	1.9	0.5	0.0	100.0	1,020
	Գյուղական	98.3	0.9	0.7	0.1	100.0	640
Ամուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած						
	Ներկայում ամուսնացած	97.9	1.5	0.5	0.1	100.0	2,034
	Նախկինում ամուսնացած	96.2	1.8	1.6	0.4	100.0	268
Երեխաների թիվը	0		23
	1-2	97.9	1.9	0.0	0.2	100.0	1,495
	3+	99.0	1.0	0.0	0.0	100.0	784
Կրթություն	Կրթություն չի ստացել		4
	Ընդհանուր տարրական	98.6	0.7	0.0	0.7	100.0	97
	Ընդհանուր միջնակարգ	97.8	1.9	0.3	0.0	100.0	948
	Միջին մասնագիտական	98.6	0.9	0.5	0.0	100.0	795
	Բարձրագույն	95.7	2.2	1.7	0.4	100.0	458
Ջրավաճառություն	Գործազուրկ	97.9	1.6	0.5	0.0	100.0	1,433
	Աշխատում է	97.4	1.5	1.0	0.1	100.0	716
	Սեզոնային աշխատանք	97.6	1.1	0.6	0.7	100.0	140
	Այլ		13
Ընդամենը		97.7	1.6	0.6	0.1	100.0%	2,302

Այն հարցին, թե բոլոր երեխաների կենսաբանական հայրը նու՞յնն է, թե՞ տարբեր, երեխա ունեցող կանանց 97.7%-ը պատասխանել է, որ իրենց երեխաների հայրը նույնն է, և միայն 1.6%-ը նշել է՝ տարբեր: Պետք է նկատել, որ այս կանանց ցուցանիշը երկու անգամ ավելի բարձր է քաղաքաբնակների (1.8%), քան գյուղաբնակների (0.9%) շրջանում: Այս կատեգորիայում բարձրագույն կրթությամբ կանանց տոկոսն ավելի բարձր է (2.2%) միջնակարգ կրթությամբ կանանց համեմատությամբ (1.9%):

Տարիքային գործոնի առումով առավել բարձր ցուցանիշ է գրանցվել 45-59 տարեկան կանանց ենթախմբում (2.3%):

Աղյուսակ 6.2. Ֆինանսական աջակցություն հորից (հայրերից)

Ընտրանքի 15-59 տարեկան կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր ունեցել են կենդանի ծնունդ և պարասխանել են իրենց երեխաների հորից (հայրերից) ֆինանսական աջակցության մասին հարցին («...» 25-ից պակաս դեպքերի համար):

	Գործոն/ կենսագրական տվյալներ	Ոչ ոք	Ոմանք	Բոլորը	Հայտնի չէ	Չգիտեմ/ չեմ հիշում	Հրաժարվել է պատասխանել	Ընդամենը %	Կանանց թիվը (ովքեր ծննդաբերել են կենդանի երեխա)
Տարիք	15-24	11.2	0.8	83.0	5.0	0.0	0.0	100.0	89
	15-19		3
	20-24	9.8	0.8	84.1	5.3	0.0	0.0	100.0	85
	25-34	12.1	0.3	86.3	0.9	0.0	0.4	100.0	432
	35-44	13.4	4.7	80.1	0.8	0.1	0.9	100.0	640
	45-59	21.9	9.5	61.4	5.6	0.1	1.5	100.0	1,127
Բնակություն	Քաղաքային	19.5	5.5	70.1	4.0	0.0	0.9	100.0	1,652
	Երևան	23.3	5.1	69.3	1.9	0.0	0.4	100.0	636
	Այլ քաղաքային	17.2	5.8	70.5	5.4	0.0	1.1	100.0	1,016
	Գյուղական	11.3	7.5	77.7	1.7	0.2	1.6	100.0	636
Ամուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած								
	Ներկայում ամուսնացած	12.5	6.5	79.6	1.1	0.1	0.2	100.0	2,025
	Նախկինում ամուսնացած	54.1	2.7	15.0	20.9	0.0	7.3	100.0	263
Երեխաների թիվը	0		10
	1-2	17.8	3.4	74.6	3.7	0.0	0.5	100.0	1,494
	3+	16.3	11.2	68.4	2.1	0.1	1.9	100.0	784
Կրթություն	Կրթություն չի ստացել		4
	Ընդհանուր տարրական	12.0	18.3	61.0	6.9	0.7	1.1	100.0	97
	Ընդհանուր միջնակարգ	18.1	5.2	72.5	2.5	0.1	1.6	100.0	945
	Միջին մասնագիտական	17.3	7.3	71.3	3.7	0.0	0.4	100.0	792
	Բարձրագույն	16.7	3.2	75.3	3.9	0.0	0.9	100.0	450
Զբաղվածություն	Գործազուրկ	16.4	6.8	74.5	2.1	0.0	0.2	100.0	1,427
	Աշխատում է	20.1	3.9	68.0	5.1	0.2	2.7	100.0	709
	Սեզոնային աշխատանք	11.2	9.1	70.9	7.8	0.0	1.0	100.0	139
	Այլ		13
Ընդամենը		17.2	6.1	72.2	3.4	0.1	1.0	100.0%	2,288

Աղյուսակ 6.2-ում ամփոփված են տվյալներ, թե քանի երեխա է ֆինանսական օգնություն ստացել իր հորից: Երեխա ունեցող կանանց 72.2%-ը պատասխանել է՝ «բոլոր երեխաները», իսկ 17.2%-ը՝ «ոչ մի երեխա»: Կարևոր է նշել, որ «բոլոր երեխաների» պարագայում իրենց հորից ֆինանսական օգ-

նություն ստացող երեխաների տոկոսն ավելի բարձր է գյուղական (77.7%), քան՝ քաղաքային (70.1%) բնակավայրերում: Իրենց հորից ֆինանսական օգնություն ստացող երեխաների առավել ցածր ցուցանիշ է գրանցվել նախկինում ամուսնացած կանանց երեխաների շրջանում (15.0%): Այս կատեգորիայում յուրաքանչյուր երկրորդ կին (54.1%) երեխայի հորից ֆինանսական օգնություն չի ստանում: Կրթության գործոնն, ըստ էության, այս առումով նշանակություն չունի:

Ծնելիություն

✓ Բազմապտուղ հղիություններ

Հարցվողներից միայն մեկն է նշել, որ իր հղիությունն ավարտվել է երեք երեխայի ծննդով:

Երկվորյակ ծննդաբերած կանանց 58.3%-ը հղի է եղել մեկ անգամ, իսկ 30.1%-ը՝ երկու անգամ: Այս խմբում կանանց տոկոսը, ովքեր հղի են եղել երեք կամ չորս անգամ, համապատասխանաբար կազմում է 5.1% և 3.1%: Կենսագրական բնութագրիչներն այս առումով էական ազդեցություն չունեն:

✓ Հղիություններ, որոնք չեն ավարտվել կենդանածնությամբ

Մրանք այն հղիություններն են, որոնք ավարտվել են վիժումով, մեռելածնությամբ կամ հղիության արհեստական ընդհատումով: Հարցմանը մասնակցած կանանցից գրեթե յուրաքանչյուր երկրորդը (58.4%), ով երբևէ հղի է եղել, նշում է վերոնշյալ դեպքերից առնվազն մեկը, որի պատճառով իր հղիությունը չի ավարտվել կենդանի ծնունդով:

Աղյուսակ 6.3. Վիժումներ, մեռելաձնություն և հղիության արհեստական ընդհատումներ

Ընտրանքի 15-59 տարեկան կանանց տղկուսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ուլքեր հղի են եղել և ում հղիությունը ավարտվել է վիժումով, մեռելաձնությամբ կամ արհեստական ընդհատումով (“...” 25-ից սակաս դեպքերի համար):

	Գործոն/Կենսագրական տվյալներ	Հղիությունն ավարտվել է վիժումով	Հղիությունն ավարտվել է մեռելաձնությամբ	Հղիությունն ավարտվել է ընդհատումով	Անվազն մի պատճառ նշած կանանց տոկոսը	Ընդամենը %	Կանանց թիվը (երբևէ հղիություն ունեցած)
Տարիք	15-24	18.1	2.0	10.6	28.6	100.0	85
	15-19		3
	20-24	18.3	2.1	11.0	29.2	100.0	82
	25-34	15.6	0.9	31.2	43.7	100.0	430
	35-44	11.3	3.6	56.0	62.2	100.0	639
	45-59	16.4	3.6	55.8	64.1	100.0	1,129
Բնակություն	Քաղաքային	15.0	3.1	48.6	58.1	100.0	1,648
	Երևան	18.1	3.3	43.3	53.0	100.0	633
	Այլ քաղաքային	13.1	2.9	51.9	61.3	100.0	1,015
	Գյուղական	14.6	3.0	52.0	59.3	100.0	635
Ամուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած						
	Ներկայում ամուսնացած	14.5	3.2	50.2	58.6	100.0	2,019
	Նախկինում ամուսնացած	18.1	1.9	44.3	56.9	100.0	264
Երեխաների թիվը	0		5
	1-2	13.6	3.5	42.0	51.7	100.0	1,495
	3+	15.6	2.2	63.5	69.1	100.0	784
Կրթություն	Կրթություն չի ստացել		4
	Ընդհանուր տարրական	12.3	2.2	59.8	64.8	100.0	97
	Ընդհանուր միջնակարգ	14.5	3.6	51.5	59.5	100.0	944
	Միջին մասնագիտական	16.4	2.3	49.0	59.9	100.0	788
	Բարձրագույն	13.8	3.5	44.4	52.5	100.0	450
Զբաղվածություն	Գործազուրկ	15.1	3.3	48.5	58.0	100.0	1,424
	Աշխատում է	13.6	2.7	48.9	56.4	100.0	708
	Սեզոնային աշխատանք	19.5	2.9	66.2	74.6	100.0	139
	Այլ		13
Ընդամենը		14.9	3.1	49.5	58.4	100.0%	2,283

Ընդ որում, նրանց գրեթե կեսը (49.5%) նշել է, որ իր վերարտադրողական կյանքի ընթացքում ունեցել է հղիության ընդհատում. 14.9%-ի մոտ տեղի է ունեցել վիժում, իսկ 3.1%-ը նշել է, որ հղիությունն ավարտվել է մեռելաձնությամբ: Մեռելաձնության առավելագույն ցուցանիշը գրանցվել է երեխա չունեցող կանանց շրջանում (12.8%): Ինչ վերաբերում է հղիության արհեստական ընդհատումներին, ապա դրանք առավել բարձր տոկոս են կազմում 35-44 (56.0%) և 45-59 տարեկան (55.8%), երեք և

ավելի երեխա ունեցող (63.5%) և սեզոնային աշխատանք կատարող (66.2%) կանանց շրջանում:

Հղիության արհեստական ընդհատման հարաբերականորեն բարձր տոկոս է գրանցվել գյուղաբնակ (52.0%) և ընդհանուր տարրական կրթությամբ (59.8%) կանանց շրջանում: Այդ ցուցանիշն ավելի ցածր է բարձրագույն կրթությամբ կանանց խմբում (44.4%): Հղիության արհեստական ընդհատման նվազագույն տոկոսը գրանցվել է կանանց 20-24 տարեկանների ենթախմբում (11.0%):

✓ Վիժումներ

Վիժում ունեցած կանանց 21.2%-ը նշել է, որ ունեցել է երկու, իսկ 6.8%-ը՝ երեք կամ ավելի վիժումներ:

✓ Մեղեղաձուլություն

Մահացած պտուղ արձանագրած կանանց 12.6%-ը նշել է, որ իր կյանքում դա կրկնվել է երկու անգամ: Մեղեղաձուլության երկու դեպք նշող կանանց ամենաբարձր տոկոսը գրանցվել է կանանց 35-44 տարիքային ենթախմբում (16.2%), ինչպես նաև երեք և ավելի երեխա ունեցած կանանց շրջանում (18.3%): Այս ցուցանիշը երկու անգամ ավելի բարձր է քաղաքաբնակ կանանց խմբում (14.6%)՝ գյուղաբնակ կանանց համեմատությամբ (7.2%):

✓ Հղիության արհեստական ընդհատումների հաճախականությունը

Հղիության արհեստական ընդհատում նշած կանանց 19.4%-ն ընդհատում է ունեցել մեկ, 27.9%-ը՝ երկու, 14.9%-ը՝ երեք, իսկ 10.9%-ը՝ չորս անգամ: Այս խմբի կանանց 22.8%-ը հղիության արհեստական ընդհատում են ունեցել 5-10 անգամ, 3.2%-ը՝ 11-20 և 0.8%-ը՝ 21 և ավելի անգամ: Վերարտադրողական տարիքում 5-10 անգամ հղիության արհեստական ընդհատում ունեցած հարցվողների առավելագույն տոկոսը գրանցվել է ընդհանուր տարրական կրթությամբ և երեք ու ավելի երեխա ունեցող կանանց շրջանում (համապատասխանաբար՝ 31.8% և 29.7%): Բնակության վայրի գործոնն այս առումով էական նշանակություն չունի. 5-10 անգամ հղիության արհեստական ընդհատում ունեցած հարցվողների 20.8%-ը կազմում են գյուղաբնակ և 23.3%-ը՝ քաղաքաբնակ կանայք (Երևանի դեպքում այս ցուցանիշն ավելի ցածր է՝ 18.2%): Տարբերություններն ավելի ցայտուն են կրթական գործոնի պարագայում՝ 5-10 արհեստական ընդհատում ունեցած բարձրագույն կրթությամբ կանանց տոկոսը էականորեն ցածր է տարրական կրթությամբ կանանց ունեցած արհեստական ընդհատումների համեմատությամբ (համապատասխանաբար՝ 24.4% և 31.8%):

Վերարտադրողականության ներկա իրավիճակը

Ընտրանքում ընդգրկված կանանց միայն 1.1%-ն է դրական պատասխանել այն հարցին, թե արդյոք հղի են հարցման պահին: Հղի կանանց առավելագույն տոկոսը գրանցվել է 20-24 տարեկանների շրջանում (6.7%), ինչը զարմանալի չէ, քանի որ դա վերարտադրողականության առումով առավել ակտիվ տարիքն է և նաև համընկնում է երկրում առաջին ամուսնության և առաջին երեխան ունենալու միջին ցուցանիշին:

• Հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործումը

ա. Հղիության կանխարգելման որևէ միջոցի օգտագործումը

Հետազոտության արդյունքների համաձայն, հղիությունից խուսափելու նպատակով կանանց 45.8%-ն օգտագործում է որևէ միջոց, 38.0%-ը՝ չի օգտագործում, իսկ 13.9%-ը նշել է, որ սեռական կյանքով չի ապրում: Այսպիսով, ընտրանքի գրեթե յուրաքանչյուր երկրորդ կինը փորձել է հետաձգել հղիությունը կամ խուսափել դրանից:


բ. Հակաբեղմնավորիչների օգտագործման ներկա իրավիճակը

Համաձայն հետազոտության արդյունքների, երբևէ հակաբեղմնավորիչ միջոց օգտագործած կանանց 53.4%-ը հարցման ժամանակահատվածում որևէ հակաբեղմնավորիչ չէր օգտագործում: Նշված խմբում հակաբեղմնավորիչ միջոցներ օգտագործել է ամուսնացած կանանց 57.1%-ը: Այս ցուցանիշը մոտ է Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի 2005թ. հետազոտության տվյալներին (53.1%): Այդ խմբում ամենաբարձր տոկոսը գրանցվել է 20-24 տարեկան կանանց շրջանում (85.0%): Հարկ է նշել, որ այս կատեգորիայում ավելի բարձր ցուցանիշ է գրանցվել գյուղաբնակ

կանանց շրջանում՝ քաղաքաբնակների համեմատությամբ (համապատասխանաբար՝ 63.8% և 49.1%), իսկ ամենացածրը՝ Երևանի բնակիչների շրջանում (44.3%): Ջարմանալի է, որ բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում այդ ցուցանիշն ավելի ցածր է (51.4%), քան՝ ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների (56.0%): Այս առումով տարբերություն չի գրանցվել աշխատող կամ չաշխատող կանանց միջև (52.6% յուրաքանչյուր խմբի դեպքում): Այնուամենայնիվ, ցուցանիշն ավելի բարձր է սեզոնային աշխատանք կատարող կանանց շրջանում (63.6%):

Գծապատկեր 6.1. Հակաբեղմնավորիչ միջոցներ

«Ինչ հիմնական մեթոդ էք այժմ կիրառում» հարցին, կանայք, ում ամուսինները և/կամ իրենք ներկայում օգտագործում են հակաբեղմնավորիչ միջոցներ, փվել են հետևյալ պատասխանները:



Հարկ է նշել, որ այնպիսի անարդյունավետ մեթոդ, ինչպիսին ընդհատված սեռական հարաբերությունն է, կիրառվում է նշված կատեգորիայի յուրաքանչյուր չորրորդ կնոջ կողմից: Պատկերն էապես փոխվում է, երբ տվյալները բաշխվում են ըստ կենսագրական բնութագրիչների: Այսպես, հաբերի օգտագործման ամենաբարձր տոկոսը գրանցվել է Երևանի բնակիչների շրջանում (16.9%), մինչդեռ ներարգանդային պարույրի կիրառման առավելագույն ցուցանիշը գրանցվել է գյուղաբնակների (37.5%), իսկ օրացուցային մեթոդի դեպքում՝ սեզոնային աշխատանք ունեցող (15.6%) և 20-24 տարեկան կանանց (16.9%) շրջանում: Պահպանակների օգտագործման ամենաբարձր տոկոսը գրանցվել է Երևանի բնակիչների շրջանում (25.0%), ներարգանդային պարույրն այս խմբում երկրորդ ամենատարածված մեթոդն է (18.4%), իսկ երրորդ տեղում դեղահաբերի օգտագործումն է (16.9%):

Ընդհատված սեռական հարաբերություն նշողների առավելագույն տոկոսը գրանցվել է 45-59 տարեկան (30.4%) և երեք ու ավելի երեխա ունեցող (30.8%) կանանց շրջանում:

Ամուսնացած կանայք նախընտրում են ներարգանդային պարույրի (31.4%) և ընդհատված սեռական հարաբերության (25.4%) մեթոդները, մինչդեռ նախկինում ամուսնացած կանայք նախընտրում են հաբեր (22.4%) և ներարգանդային պարույր (16.7%):

Վերոնշյալ կատեգորիայում բարձրագույն կրթությամբ կանայք հիմնականում օգտագործում են ներարգանդային պարույր (24.8%), պահպանակներ (24.6%) և ընդհատված սեռական հարաբերություն (22.0%):

Ինչ վերաբերում է հակաբեղմնավորիչների օգտագործմանը, ապա գրեթե տարբերություն չկա աշխատող և չաշխատող կանանց միջև (ըստ հետազոտության արդյունքների՝ նրանց համար առավել մատչելի է ներարգանդային պարույրը, այնուհետև ընդհատված սեռական հարաբերությունը և երրորդ՝ պահպանակները):

Ընդհանուր առմամբ կանանց այս ենթախմբում յուրաքանչյուր երրորդը (31.2%) կիրառում է ներարգանդային պարույր, իսկ յուրաքանչյուր հինգերորդը կամ վեցերորդը՝ պահպանակներ: Նկատի առ-

ներով այն փաստը, որ ընդհատված սեռական հարաբերությունը հիմնականում կիրառվում է օրացուցային մեթոդի հետ միասին, արդյունքում ստացվում է, որ հակաբեղմնավորիչ մեթոդ կիրառող յուրաքանչյուր երրորդ կինը (կամ նրանց ամուսինները) (36.4%) օգտագործում է հակաբեղմնավորման ոչ ժամանակակից և ոչ արդյունավետ մեթոդներ: Ի դեպ, այս տվյալները համընկնում են ՀԺԱՀ 2005թ.-ի տվյալներին: Այդ հետազոտությունը նույնպես փաստում է, որ ձախողված հակաբեղմնավորիչ մեթոդներից (այսինքն՝ մեթոդի կիրառման արդյունքում պատահական հղիության փաստ է արձանագրվում) օրացուցային և ընդհատված սեռական հարաբերության մեթոդներն առաջինն են ցուցակում:

Այն հարցին, թե սեռական գուգընկերը տեղյակ է, որ կինը կիրառում է հակաբեղմնավորիչ մեթոդ, հակաբեղմնավորիչ միջոցներից օգտվող կանանց 91.4%-ը դրական պատասխան է տվել: Այս ենթախմբի կանանց միայն 1.7%-ն է հստակ բացասական պատասխան տվել, մինչդեռ 6.9%-ը չեն հիշել կամ հրաժարվել են պատասխանել: Այսպիսով, հարցվածների այս խմբում, ում սեռական գուգընկերը տեղյակ չէ կնոջ կողմից հակաբեղմնավորիչ մեթոդի կիրառման մասին, ամենաբարձր տոկոսը գրանցվել է 20-24 տարեկան (3.9%), Երևանում բնակվող (3.8%), նախկինում ամուսնացած (4.5%) և սեզոնային աշխատանք կատարող (4.7%) կանանց շրջանում:

Այն հարցին, թե սեռական գուգընկերը երբևէ հրաժարվել է կամ փորձել է արգելել հակաբեղմնավորիչ մեթոդներ կիրառել հղիությունից խուսափելու նպատակով, երբևէ գուգընկեր ունեցած կանանց 3.1%-ը դրական պատասխան է տվել: Նման պատասխան տված հարցվողների առավել բարձր տոկոս է գրանցվել 35-44 տարեկան (4.7%), Երևանից դուրս այլ քաղաքային տարածքներում բնակվող (3.3%) և նախկինում ամուսնացած (5.3%) կանանց շրջանում: Ըստ կենսագրական բնութագրիչների էական տարբերություններ չեն գրանցվել:

Կանանց, ում գուգընկերը հրաժարվել կամ արգելել է կիրառել որևէ մեթոդ, 75.5%-ը նշել է, որ գուգընկերը բացահայտ արտահայտել է իր անհամաձայնությունը:

ա. Պահպանակների կիրառումը

- Երբևէ գուգընկեր ունեցած կանանց 25.6%-ը նշել է, որ երբևէ պահպանակ կիրառել է:
- Ներկայում հակաբեղմնավորիչ մեթոդներ կիրառող կանանց 17.8%-ը պահպանակ է օգտագործում:

Երբևէ պահպանակ օգտագործած կանանց 32.8%-ը նշում է, որ իր սեռական գուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ է օգտագործել: Այդ ենթախմբում հատկապես բարձր տոկոս են կազմում այն հարցվողները, ովքեր բնակվում են քաղաքային բնակավայրերում (35.9%, որը էլ ավելի բարձր է երևանաբնակների շրջանում 36.1%), 20-24 և 25-34 տարեկան կանայք (համապատասխանաբար՝ 66.0% և 37.6%) և բարձրագույն կրթությամբ կանայք (40.7%): Կարելի է եզրակացնել, որ ավելի երիտասարդ կանայք, քաղաքային բնակիչները և բարձրագույն կրթությամբ կանայք ավելի են հակված ապահով սեռական հարաբերությունների (ինչը, *inter alia*, պաշտպանում է նաև սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններից): Այդ ցուցանիշը զգալիորեն ավելի ցածր է գյուղաբնակ կանանց շրջանում (24.8%): Անհրաժեշտ է նշել, որ սեզոնային աշխատանքով զբաղվող յուրաքանչյուր երկրորդ կին (55.7%) պահպանակ չի օգտագործել իր վերջին սեռական հարաբերության ժամանակ:

Երբևէ գուգընկեր ունեցած կանանց միայն 14.8%-ն է նշում, որ իր սեռական գուգընկերոջը երբևէ խնդրել է պահպանակ օգտագործել: Նման մոտեցմանն առավել հակված են բարձրագույն կրթությամբ (18.5%) և 25-34 տարեկան (19.5%) կանայք: Առավել ցածր տոկոս է գրանցվել գյուղաբնակ (13.3%) և 20-24 տարեկան (13.1%) կանանց շրջանում:

բ. Պահպանակ օգտագործելու խնդրանքի մերժումը

Երբևէ գուգընկեր ունեցած կանանց 9.4%-ը նշել է, որ սեռական գուգընկերը մերժել է պահպանակ օգտագործելու իր խնդրանքը: Նման մերժում ստացած հարցվողների տոկոսն ավելի բարձր է բարձ-

րագույն կրթությամբ (10.5%), գյուղաբնակ (11.9%) և 35-44 տարեկան (12.1%) կանանց շրջանում, մինչդեռ ամենացածր ցուցանիշը գրանցվել է 20-24 տարեկան կանանց շրջանում (2.8%):

Կանանց 71.1%-ը, ում զուգընկերը հրաժարվել է պահպանակ օգտագործել, նշել է, որ իր զուգընկերը չի ընդունում պահպանակի օգտագործումը, մինչդեռ 2.3%-ի դեպքում զուգընկերը բղավել կամ բարկացել է: Այս խմբի կանանց 36.8%-ի զուգընկերն ասել է, որ պահպանակի անհրաժեշտություն չկա, իսկ 1.6%-ը ծիծաղել է կնոջ վրա և խնդրանքը լուրջ չի ընդունել:

Կնոջ սեռական առողջությունը

Այս հետազոտության շրջանակներում կանանց վերարտադրողական առողջությանն առնչվող խնդիրները սահմանափակվել են բորբոքային հիվանդություններով պայմանավորված քորի և հեշտոցային արտադրության մասին հարցադրումներով, որոնք միևնույն ժամանակ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների թեկուզև անուղղակի ցուցանիշներ են:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների 13.4%-ը հարցմանը նախորդած 4 շաբաթների ընթացքում ունեցել է առնվազն մեկ ախտանիշ՝ կանանց 12.2%-ը նշել է հեշտոցային արտադրության, իսկ 5.3%-ը՝ քորի մասին: Ըստ կենսագրական բնութագրիչների՝ տարբերությունները զգալի են: Այսպես, քորի մասին նշած հարցվողների ամենաբարձր տոկոսը գրանցվել է 25-34 տարեկան (6.4%), գյուղաբնակ (7.0%), երեք և ավելի երեխա ունեցող (7.6%), նախկինում ամուսնացած (8.6%) և սեզոնային աշխատանքով զբաղվող (8.5%) կանանց շրջանում:

Կրթության գործոնը հակադարձ փոխկապակցության մեջ է քորի առկայության հետ. միջնակարգ կրթությամբ կանանց այդ ցուցանիշն ավելի քան երեք անգամ գերազանցում է բարձրագույն կրթությամբ կանանց ցուցանիշը (համապատասխանաբար՝ 7.6% և 2.3%): Ամենաբարձր տոկոսը գրանցվել է ընդհանուր տարրական կրթությամբ կանանց շրջանում (13.3%):

Ըստ կենսագրական բնութագրիչների՝ հեշտոցային արտադրության հաճախականությունը բավականին բարձր է գրեթե միևնույն ենթախմբերում: Հեշտոցային արտադրություն նշող հարցվողների տոկոսն ամենաբարձրն է 35-44 տարեկան (15.2%), գյուղաբնակ (17.5%), ներկայում ամուսնացած (14.0%), երեք և ավելի երեխա ունեցող (15.3%) կանանց շրջանում: Հեշտոցային արտադրության մասին նշած կանանց ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է սեզոնային աշխատանքով զբաղվող (18.0%) կանանց շրջանում՝ աշխատող և չաշխատող կանանց համեմատությամբ: Ինչ վերաբերում է կրթական գործոնին, ապա որքան բարձր է հարցվողների կրթական մակարդակը, այնքան ցածր է այս ախտանիշի հավանականությունը (ախտանիշի մասին նշել է տարրական կրթությամբ կանանց 23.9%-ը և բարձրագույն կրթությամբ կանանց ընդամենը 7.7%-ը):

ԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ/ՍԵՌԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Բռնության գործոնի դերն էական է կանանց վերարտադրողական վարքագծի և առողջության գնահատականի առումով: Հետևաբար, օգտակար է հետազոտության շրջանակներում ստացված տվյալների հիման վրա գնահատել հոգեբանական, ֆիզիկական և սեռական բռնության ներգործությունը:

Երեխաների մահացության վրա բռնության ազդեցության գնահատականը

ՍԶԲ ազդեցությունը երեխաների մահացության վրա միանշանակ չէ: Այսպես, եթե հոգեբանական բռնության ենթարկված հարցվողների շրջանում երեխա կորցրած կանանց տոկոսը 1.5 անգամ գերազանցում է բռնության չենթարկված կանանց այդ ցուցանիշը (համապատասխանաբար՝ 8.7% և 6.0%), ապա ֆիզիկական բռնության դեպքում իրավիճակը ճիշտ հակառակն է (համապատասխանաբար՝ 5.3% և 6.8%), իսկ սեռական բռնության դեպքում տարբերությունը չնչին է (համապատասխանաբար՝ 7.6% և 6.7%):

Հղիությունը, ծնելիությունը և բռնությունը

Բռնության ազդեցության տեսանկյունից հղիության ելքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե վիժումների առնչությամբ բռնության գործոնն էական չէ, ապա մեռելաձեռության առումով՝ մահացած պտղի դեպքերի տոկոսը զգալիորեն մեծ է ֆիզիկական և հոգեբանական բռնության ենթարկված կանանց շրջանում (համապատասխանաբար՝ 5 և 3.3 անգամ): Մակայն այդ տարբերությունը նշանակալի չէ սեռական բռնության ենթարկված կանանց շրջանում:


Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ արհեստական ընդհատումով ավարտված հղիությունների միջին ցուցանիշը 1.5 անգամ ավելի բարձր է բռնության զոհ դարձած կանանց շրջանում: Սա վերաբերում է բռնության բոլոր երեք տեսակներին՝ չնչին տարբերություններով (այսպես՝ հոգեբանական բռնության դեպքում՝ 1.6, ֆիզիկականի դեպքում՝ 1.4, և սեռականի դեպքում՝ 1.3 անգամ):

Վերարտադրողական վարքագիծ

✓ Հակաբեղմնավորիչների ներկա գործածումը և բռնությունը

Օգտակար է նաև գնահատել բռնության դերը վերարտադրողական վարքագծի, մասնավորապես հակաբեղմնավորիչ մեթոդների օգտագործման տեսանկյունից: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բռնության զոհ դարձած կանանց շրջանում հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործման տոկոսն ավելի ցածր է բռնության չենթարկվածների համեմատությամբ: Տարբերությունը հատկապես նկատելի է հոգեբանական (1.2 անգամ՝ 46.4%-ը 56.3%-ի դիմաց) և ֆիզիկական (1.4 անգամ՝ 38.4%-ը 55.4%-ի դիմաց) բռնության դեպքում:

Գծապատկեր 6.2. Հակաբեղմնավորիչների օգտագործումը և հղիության արհեստական ընդհատումները (%)



ա. Հակաբեղմնավորիչ միջոցների գործածությունից հրաժարումը կամ արգելումը սեռական զուգընկերոջ կողմից


Զուգընկերոջ կողմից հակաբեղմնավորիչ միջոցների գործածության հրաժարումը կամ արգելումը տարածված երևույթ է ՄԶԲ զոհ դարձած կանանց շրջանում: Այսպես, հոգեբանական բռնության դեպքում այն 1.5 անգամ ավելի հաճախ է հանդիպում բռնության չենթարկված կանանց համեմատությամբ (8.7% 6.0%-ի դիմաց): Ֆիզիկական բռնության դեպքում տարբերությունն ավելի մեծ է (4.8%՝ 3.0%-ի դիմաց): Զուգընկերոջ կողմից հրաժարման կամ արգելման առավել տարածված դրսևորումներն են եղել «բղավեց/բարկացավ», «սպառնաց ծեծել», «սպառնաց հեռանալ/կնոջը տանից դուրս անել», «ծեծեց ինձ/հարձակվեց վրաս» և այլն: Ընդ որում, վերոնշյալ դրսևորումներից որևէ մեկի մասին հայտնած կանանց միջին ցուցանիշը բռնության բոլոր տեսակներին ենթարկված կանանց խմբերում 1.5 անգամ ավելի բարձր է երբևէ բռնության չենթարկվածների համեմատությամբ (հոգե-

բանական բռնության դեպքում՝ 1.5, ֆիզիկականի դեպքում՝ 1.6, և սեռականի դեպքում՝ 1.3 անգամ):

բ. Տղամարդկանց կողմից պահպանակի օգտագործումը

Բռնության գործոնի տեսանկյունից էական տարբերություններ են առկա նաև տղամարդկանց կողմից պահպանակի օգտագործման առումով: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բռնության հակված տղամարդիկ շատ ավելի հաճախ են հրաժարվում պահպանակի օգտագործումից: Հարկ է նշել, որ հրաժարման դեպքերը հոգեբանական բռնության դեպքում՝ 1.8, ֆիզիկականի դեպքում՝ 2.8, իսկ սեռականի դեպքում՝ 3 անգամ ավելի են բռնության չենթարկված կանանց զուգընկերների համեմատությամբ: Ակնհայտ է, որ վերջին դեպքում բռնությունը զուգակցվում է անապահով սեռական հարաբերության հետ, ինչն էապես բարձրացնում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների տարածման ռիսկը: Այս եզրակացությունը հաստատվում է այն փաստով, որ ՄՃՓՀ-ի ախտանիշներն ավելի տարածված են այն կանանց շրջանում, ովքեր ենթարկվել են սեռական բռնության:

Գծապատկեր 6.3. Պահպանակի գործածությունը և սեռավարակները (%)



ԵՐԵՄԱՆԵՐԸ, ՀՂԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ

Այս բաժնում առաջադրված հարցերի նպատակն է անդրադառնալ *ընտանեկան հարաբերություններին*՝ կապված երեխաների, նրանց թվաքանակի և սեռի հետ, այդ հարցերի նկատմամբ *սեռական զուգընկերոջ վերաբերմունքին*, ինչպես նաև հղիության ընթացքում բուժօգնության ու կանանց վնասակար սովորությունների հետ փոխկապակցված հարցերին: Այս բաժնում ներկայացված են նաև ընտրանքում ընդգրկված կանանց 5-12 տարեկան երեխաների հոգետնատիկ առողջության և վարքագծային սովորությունների վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև քննարկվում են այնպիսի իրավիճակներ, որոնք կարող են մտահոգիչ լինել մոր հոգեկան առողջության և ներընտանեկան խնդիրների հետ կապված: Բաժինը անդրադառնում է նաև կնոջ վերջին հղիության ընթացքում նախաձննդյան հսկողության և հղիության հարկադրված ընդհատման հետ կապված հարցերին ու դրանց նկատմամբ սեռական զուգընկերոջ վերաբերմունքին:

Երեխաներն ըստ սեռի

«Վերջին երեխան աղջիկ է, թե՛ տղա» հարցին կենդանածին երեխաներ ունեցած կանանց 59.2%-ը պատասխանել է, որ վերջին երեխան տղա է եղել: Պետք է նշել, որ եթե 15-24 տարիքային խմբում տղա/աղջիկ հարաբերակցությունը 1:2 է (համապատասխանաբար՝ 34.2% և 65.8%), ապա 25-34 տարիքային խմբում՝ 2:1 (համապատասխանաբար՝ 62.1% և 37.9%): Այսպիսով կարելի է ենթադրել, որ

երթե կինն ունի մեկից ավելի երեխա, ապա նոր ծնված երեխաների շրջանում տղաների թիվն աստիճանաբար գերակշռում է: Այս եզրակացությունն ապացուցվում է այն փաստով, որ խնդրո առարկա ենթախմբի կանանց շրջանում, ովքեր ունեն երեք երեխա, տղա/աղջիկ հարաբերակցությունը կազմում է 64.1%:35.98%: Հետևաբար ենթադրվում է, որ Հայաստանում այնուամենայնիվ առկա է սեռընտիր վիժեցման խնդիրը:

«Վերջին երեխան կենդանի է, թե՛ ոչ» հարցին այս խմբի կանանց 98.8%-ը տվել է դրական պատասխան: Կորուստներն ավելի շատ են նախկինում ամուսնացած կանանց մոտ (5.3%): *Գյուղաբնակ-քաղաքաբնակ* կտրվածքով տվյալները ցույց են տալիս, որ քաղաքաբնակ կանայք ավելի քիչ երեխաներ են կորցրել (1.0%, իսկ Երևանում այդ ցուցանիշն ավելի ցածր է և կազմում է 0.2%), քան գյուղաբնակները (1.8%): Աշխատող կանանց դեպքում նույնպես կորուստները հարաբերականորեն բարձր են (1.6%):

Մինչև 5 տարեկան երեխաներ. վերջին հղիության ընթացքը

Միննույն կատեգորիայում, այսինքն՝ կենդանի երեխաներ ունեցած կանանց շրջանում հարցվողների 13.7%-ն ունի մինչև 5 տարեկան երեխաներ: Հետաքրքիր է, որ բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում այս ցուցանիշն ավելի բարձր է, քան միջնակարգ կրթությամբ կանանց դեպքում (13.4%):

- Այն հարցին, թե արդյո՞ք վերջին հղիությունը ցանկալի էր, թե՛ ոչ, առավելագույնը 5 տարի առաջ ծննդաբերած կանանց 91.5%-ը տվել է դրական պատասխան, մինչդեռ 4.6%-ը պատասխանել է, որ կնախընտրել ավելի ուշ, կամ՝ երեխաներ չէր ուզում ունենալ: Այս կատեգորիայում երեխա ունենալու ցանկություն չունեցող կանանց տոկոսն ամենաբարձրն է երեք և ավելի երեխա ունեցող (4.7%) և գյուղաբնակ կանանց (2.8%) շրջանում՝ քաղաքաբնակների համեմատությամբ (ընդամենը 0.3%): Փաստորեն տվյալները ցույց են տալիս, որ քաղաքաբնակ կանայք ավելի իրազեկ են ընտանիքի պլանավորման մեթոդներին:
- Վերջին հղիության նկատմամբ սեռական զուգընկերոջ վերաբերմունքը գրեթե նույնն է, ինչ որ այս ենթախմբի կանանց դեպքում: Առավելագույնը 5 տարի առաջ ծննդաբերած կանանց սեռական զուգընկերների 90.8%-ը նույնպես դրական է արտահայտվել կնոջ հղիության փաստի վերաբերյալ, և միայն 4.7%-ն է ցանկացել երեխա ունենալ ավելի ուշ կամ երեխա չէր ուզում ունենալ (կանանց դեպքում՝ 4.6%):
- Ըստ կենսագրական բնութագրիչների էական տարբերություններ չեն բացահայտվում: Ըստ էության, միտումները նույնն են, ինչպես նախորդ հարցի դեպքում, բացառությամբ քաղաքաբնակ կանանց զուգընկերների, ովքեր ավելի շատ են նշել հղիության ոչ ցանկալի լինելը (1.5%-ով ավելի, քան իրենց կանայք):
- Հղիության նախաձննդյան հսկողության վերաբերյալ հարցին հետազոտությանը մասնակցած առավելագույնը հինգ տարի առաջ ծննդաբերած կանանց 62.8%-ը պատասխանել է, որ այցելել է մանկաբարձ-գինեկոլոգին, 48.3%-ը՝ ընդհանուր բժշկին և 12.8%-ը՝ միայն մանկաբարձուհուն, մինչդեռ 1.6%-ը՝ որևէ բժշկի չի այցելել: Այս ցուցանիշը հատկապես բարձր է գյուղաբնակ (2.9%), երեք և ավելի երեխա ունեցող (3.1%) կանանց շրջանում:
- Ընդհանուր առմամբ, այս ենթախմբի կանանց 98.4%-ն առնվազն մեկ անգամ այցելել է բժշկի, իսկ բարձրագույն կրթությամբ բոլոր կանայք հղիության ընթացքում այցելել են որևէ բուժաշխատողի:
- Այն հարցին, թե ինչպես է սեռական զուգընկերը վերաբերվել իրենց նախաձննդյան այցերին, այս ենթախմբի կանանց 95.8%-ը պատասխանել է, որ իր զուգընկերը նպաստել է, 2.4%-ը՝ չի հետաքրքրվել, իսկ 0.4%-ը՝ դեմ է եղել: Հետաքրքիր է, որ զուգընկերոջ անհամաձայնության մասին ավելի շատ նշել են բարձրագույն կրթությամբ և աշխատող կանայք (համապատասխանաբար՝ 1.7% և 1.3%), չնայած իրականում բոլոր այս կանայք հաճախել են բուժհաստատություններ:

Այն հարցին, թե կնոջ հղիության ընթացքում զուգընկերը նախընտրում էր որդի, դուստր, թե սե-

որ նրա համար նշանակություն չունեն, այս ենթախմբի կանանց 44.1%-ը պատասխանել է՝ «որդի», 11.9%-ը՝ «դուստր», իսկ 43.8%-ի համար սեռի գործոնն էական չի եղել: Ըստ կենսագրական բնութագրիչների՝ պատասխաններն էականորեն չեն տարբերվում միմյանցից, սակայն դիտվել է մի օրինակափոխություն՝ որքան բարձր է կնոջ կրթական ցենզը, այնքան զուգընկերոջ վերաբերմունքը սեռի նկատմամբ պակաս խտրական է:

Աղյուսակ 6.4. Զուգընկերոջ նախընտրությունը երեխայի սեռի հարցում

Ընտրանքի 15-59 տարեկան, առավելագույնը 5 տարի առաջ ծննդաբերած կանանց փոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ում զուգընկերները ունեցել են նախընտրություն երեխայի սեռի հարցում (“...” 25-ից պակաս դեպքերի համար), (“[]” 25-49 դեպքերի համար):

	Գործոն/ կենսագրական տվյալներ	Որդի	Դուստր	Նշանա- կություն չունեն	Զգիտեմ/ չեմ հիշում	Հրաժար- վել է պա- տասխա- նել	Ընդամե- նը%	Կանանց թիվը (ծննդաբերել են առավելագույնը 5 տարի առաջ)
Տարիք	15-24	44.5	5.9	48.7	0.9	0.0	100.0	79
	15-19		4
	20-24	47.1	5.1	46.8	1.0	0.0	100.0	75
	25-34	44.9	13.2	41.7	0.0	0.2	100.0	212
	35-44	[62.5]	[22.3]	[15.2]	[0.0]	[0.0]	100.0	31
	45-59							
Բնակություն	Քաղաքային	45.1	15.5	39.2	0.0	0.2	100.0	207
	Երևան	47.4	19.4	33.2	0.0	0.0	100.0	120
	Այլ քաղաքային	41.9	10.1	47.6	0.0	0.4	100.0	87
	Գյուղական	48.9	6.5	44.0	0.6	0.0	100.0	115
Ամուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած							
	Ներկայում ամուսնացած	46.3	12.5	40.9	0.2	0.1	100.0	317
	Նախկինում ամուսնացած		5
Երեխանե- րի թիվը	0							
	1-2	43.6	12.8	43.3	0.3	0.0	100.0	262
	3+	59.1	9.9	30.5	0.0	0.5	100.0	60
Կրթություն	Կրթություն չի ստացել		2
	Ընդհանուր տարրական		9
	Ընդհանուր միջնակարգ	47.2	10.7	41.8	0.0	0.3	100.0	132
	Միջին մասնագիտական	53.5	13.0	32.7	0.8	0.0	100.0	92
	Բարձրագույն	39.1	14.4	46.5	0.0	0.0	100.0	87
Զբաղվածու- թյուն	Գործազուրկ	46.2	12.4	41.1	0.3	0.0	100.0	248
	Աշխատում է	47.4	13.7	38.9	0.0	0.0	100.0	64
	Սեզոնային աշխատանք		8
	Այլ		2
Ընդամենը		46.5	12.3	40.9	0.2	0.1	100.0%	322

Վնասակար սովորությունները հղիության ժամանակ

Ոգելից խմիչքի օգտագործումը. այս ենթախմբի կանանց 97.7%-ը նշել է, որ հղիության ընթացքում ոգելից խմիչք չի օգտագործել: Հղիության ընթացքում ոգելից խմիչք օգտագործած կանանց տոկոսը հարաբերականորեն բարձր է աշխատող և ընդհանուր միջնակարգ կրթությամբ (համապատասխանաբար՝ 6.4% և 3.5%) և 25-34 տարեկան (2.8%) կանանց շրջանում:

«Արդյո՞ք ծխել եք հղիության ընթացքում» հարցին դրական է պատասխանել այս խմբի կանանց միայն 1.3%-ը: Հղիության ընթացքում ծխախոտ օգտագործած կանանց տոկոսը բարձր է 35-44 տարեկանների (4.8%) և Երևանի բնակիչների (2.4%) շրջանում: Ըստ մյուս կենսագրական բնութագրիչների էական տարբերություններ չկան:

Հետծննդյան շրջան

Վերոնշյալ խմբում յուրաքանչյուր երկրորդ կին (48.4%) ծննդաբերությունից հետո 6 շաբաթների ընթացքում այցելել է հետծննդյան ստուգումների: Այս կատեգորիայում ստուգումների չայցելած կանանց համեմատաբար բարձր մասնաբաժին են կազմում 15-24 տարեկան (60.4%), գյուղաբնակ (56.6%) և չաշխատող (54.4%) կանայք:

«Արդյո՞ք երեխային ծավելյուց կշռել են» հարցին այդ խմբի բոլոր կանայք տվել են դրական պատասխան: Ընդ որում, կանանց 6.8%-ը նշել է, որ նորածինների մոտ գրանցվել է ծննդյան ցածր քաշ (այսինքն՝ 2.5 կիլոգրամից պակաս): Այս տվյալները գրեթե համընկնում են պաշտոնական վիճակագրության վերջին տարիների միջին ցուցանիշին:

5-12 տարեկան երեխաները և նրանց թվաքանակը

«5-12 տարեկան երեխաներ ունե՞ք» հարցին հետազոտությանը մասնակցած և կենդանի երեխա ունեցած կանանց յուրաքանչյուր չորրորդը (25.9%) տվել է դրական պատասխան: Կենսաբանորեն օրինաչափ է, որ այս կանանց թիվն առավելագույնն է 25-34 տարիքային խմբում: Այս տվյալների վերաբերյալ այլ օրինաչափություններ բացահայտված չեն:

5-12 տարեկան երեխաների թվաքանակը

Հարցմանը մասնակցած 5-12 տարեկան երեխա ունեցող կանանց 63.6%-ն ունի միայն մեկ, 32.1%-ը՝ երկու, իսկ 3.7%-ը՝ երեք և ավելի երեխա: Ըստ կենսագրական բնութագրիչների այս տվյալներն էականորեն չեն տարբերվում միմյանցից:

«Քանի՞սն են տղաս» հարցին կանանց 86.3%-ը պատասխանել է՝ «մեկ», 13.7%-ը՝ «երկու և ավելի» տղա: Այս խմբում գերակշռում են նախկինում ամուսնացած կանայք (28.8%):

Ինչ վերաբերում է աղջիկների թվաքանակին, ապա իրավիճակը գրեթե համանման է. այս տարիքի իգական սեռի երեխաներ ունեցող կանանց 79.4%-ը նշել է՝ մեկ, 19.4%-ը՝ երկու, և 1.0%-ը՝ երեք և ավելի աղջիկ:

«Այդ երեխաներից (5-12 տարեկան) քանի՞սն են ներկայումս ասպրում Ձեզ հետք» հարցին արական սեռի երեխաներ ունեցող հարցմանը մասնակցած կանանց 86.4%-ը պատասխանել է՝ «մեկ», 13.7%-ը՝ «երկու և ավելի» տղա, իսկ այս տարիքի իգական սեռի երեխաներ ունեցող կանանց 79.4%-ը պատասխանել է՝ «մեկ», 20.6%-ը՝ «երկու և ավելի» աղջիկ:

Երեխաների հոգեսոմատիկ առողջական վիճակը

Այն հարցին, թե արդյո՞ք երեխաներից որևէ մեկի մոտ եղել են հոգեսոմատիկ ախտանիշներ, 5-12 տարեկան երեխա ունեցող կանանց 7.0%-ը պատասխանել է, որ երեխան ունենում է մղձավանջ, 6.1%-ի դեպքում՝ գիշերամիզություն, իսկ 2.2%-ի դեպքում՝ ծծում է բուրբ մատը: Այս կանանց 28.5%-ը նշել է, որ իր երեխան ինքնամիտի է, իսկ 10.4%-ը՝ հակառակը՝ ագրեսիվ:

Ըստ էության, այս խմբից յուրաքանչյուր երրորդ կին մատնանշել է վերոնշյալ ախտանիշներից

առնվազն մեկը: Սա նշանակում է, որ այս երեխաներն ունեն նյարդային համակարգի հետ կապված և վարքագծային խնդիրներ: Կարևոր է նաև, որ եթե գյուղական տարածքներում երեխաներն ավելի ագրեսիվ են (10.8%՝ 10.2%-ի դիմաց, և 5.1% Երևանում), ապա քաղաքային բնակավայրերում երեխաներն առավել ինքնամփոփ են (29.6%՝ 26.1%-ի դիմաց): Հետաքրքիր է, որ չաշխատող կանանց երեխաներն ավելի հակված են ունենալ այս հինգ ախտանիշներից որևէ մեկը, քան աշխատող մայրերի երեխաները (43.4%՝ 26.5%-ի դիմաց): Երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներում այս խնդիրներն ավելի շատ են (համապատասխանաբար՝ 42.9% և 34.0%): Գրեթե նույն ցուցանիշն է արձանագրվել 35-44 տարեկան կանանց երեխաների շրջանում (40.0%): Այս ցուցանիշն առավելագույնն է նախկինում ամուսնացած կանանց պարագայում (53.5%):

Տնից փախչող և դպրոց չհաճախող երեխաները

5-12 տարեկան տղա երեխա ունեցող կանանց 0.8%-ի երեխաները տանից փախել են: Նման երեխաների տոկոսն ավելի բարձր է գյուղական, քան՝ քաղաքային բնակավայրերում (1.9%՝ 0.4%-ի դիմաց):

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ միննույն ենթախմբի 5-12 տարեկան աղջիկ երեխաների տոկոսը, ովքեր փախել են տանից, ավելի բարձր է տղաների համեմատությամբ (2.0%՝ 0.8%-ի դիմաց): Նման աղջիկների մասնաբաժինն ավելի բարձր է քաղաքային, քան՝ գյուղական բնակավայրերում (համապատասխանաբար՝ 2.2% և 1.4%): Այդ ցուցանիշը հարաբերականորեն ցածր է բարձրագույն կրթությամբ կանանց (1.5%), և էլ ավելի բարձր՝ երեք և ավելի երեխա ունեցող (2.3%) և 35-44 տարեկան կանանց (3.2%) աղջիկ երեխաների շրջանում: Նախկինում ամուսնացած կանանց աղջիկներն ամենաշատն են փախչում տանից (5.1%): Կնոջ զբաղվածությունն այս դեպքում էական գործոն չէ:

5-12 տարեկան երեխաներ ունեցող կանանց հարցրել են, թե իրենց երեխաներից քանիսն են դպրոցում սովորում: Այս կանանց 50.9%-ը նշել է, որ դպրոցում սովորում է 1 տղա, իսկ 8.2%-ը՝ երկու և ավելի տղա: Խմբում 37.1%-ն ունեն դպրոցում սովորող մեկ, իսկ 11.0%-ը՝ երկու և ավելի աղջիկ: Ըստ հարցվողների կենսագրական բնութագրիչների, այս կանանց պատասխաններում էական տարբերություններ չեն գրանցվել:

5-12 տարեկան դպրոցում սովորող երեխա ունեցող կանանց 0.7%-ը նշել է, որ իր երեխան(երը) մնացել է(են) նույն դասարանում: Ընդ որում, որքան շատ են ընտանիքում երեխաները, այնքան ավելի մեծ է ուսումը ձախողելու հավանականությունը (այս կատեգորիայի մեկ կամ երկու երեխա ունեցող կանանց 0.4%-ը նշել է, որ իր երեխան(երը) մնացել է(են) նույն դասարանում՝ ի տարբերություն երեք և ավելի երեխա ունեցող կանանց 1.0%-ի: Նույն դասարանում մնալու հավանականությունը հակադարձ փոխկապակցվում է մայրերի կրթական ցենզի հետ (ընդհանուր տարրական կրթություն՝ 4.0%, ընդհանուր միջնակարգ կրթություն՝ 0.5% և բարձրագույն կրթություն՝ 0%):

Այս խմբի կանանց միայն 0.8%-ն է մատնանշել, որ իր երեխան միառժամանակ դադարել է դպրոց հաճախել կամ դուրս է մնացել դպրոցից: Ինչ վերաբերում է հարցվողների կենսագրական բնութագրիչներին, ապա այս կանանց պատասխաններում էական տարբերություններ չեն գրանցվել, չնայած որ սոցիալական գործոնը և կանանց կրթական ցենզը որոշակի ազդեցություն ունեն այս ցուցիչի վրա (ինչպես նախորդ դեպքում):

Հղիության հարկադրված ընդհատում և նախածննդյան խնամք

Երբ միննույն ենթախմբի կանանց հարցրել են, թե արդյո՞ք իրենց երբևէ ստիպել են ընդհատել հղիությունը, նրանց ընդամենը 2.6%-ն է դրական պատասխան տվել: Ընդ որում, ցուցանիշը զգալիորեն ցածր է գյուղաբնակ կանանց շրջանում՝ քաղաքաբնակների համեմատությամբ (1.0%՝ 3.3%-ի դիմաց): Այդ ենթախմբում տոկոսը բարձր է երեք և ավելի երեխա ունեցող (5.2%), չաշխատող (4.3%) և Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում ապրող (4.3%) կանանց շրջանում: Անհրաժեշտ է նշել, որ բարձրագույն կրթությամբ ոչ մի կին ստիպողաբար չի ընդհատել հղիությունը (Աղյուսակ 6.5):

Աղյուսակ 6.5. Հղիության հարկադրված ընդհատում

Ընտրանքի 15-59 տարեկան կանանց տղային բաշխվածությունն ըստ կենսագրական ընտանիքի, ովքեր ունեն իրենց հետ բնակվող և դպրոց հաճախող 5-12 տարեկան երեխաներ և ում հարկադրել են կամ չեն հարկադրել ընդհատել հղիությունը (“...” 25-ից պակաս դեպքերի համար), (“[]” 25-49 դեպքերի համար):

	Գործոն/կենսագրական տվյալներ	Այո	Ոչ	Հրաժարել է պատասխանել	Ընդամենը %	Կանանց թիվը (5-12 տարեկան և դպրոց հաճախող երեխա ունեցողներ)
Տարիք	15-24		2
	15-19		2
	20-24	1.6	97.9	0.5	100.0	268
	25-34	3.0	97.0	0.0	100.0	205
	35-44	[0.0]	[97.6]	[2.4]	[100.0]	46
	45-59					
Բնակություն	Քաղաքային	2.7	96.6	0.7	100.0	328
	Երևան	1.9	97.4	0.7	100.0	178
	Այլ քաղաքային	3.7	95.5	0.8	100.0	150
	Գյուղական	0.9	99.1	0.0	100.0	193
Ամուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած	2.2	97.6	0.2	100.0	486
	Ներկայում ամուսնացած	[0.0]	[96.5]	[3.5]	100.0	35
	Նախկինում ամուսնացած				[100.0]	
Երեխաների թիվը	0	1.4	98.3	0.3	100.0	347
	1-2	3.4	96.0	0.6	100.0	174
	3+				100.0	
Կրթություն	Կրթություն չի ստացել		2
	Ընդհանուր տարրական		20
	Ընդհանուր միջնակարգ	2.7	97.3	0.0	100.0	223
	Միջին մասնագիտական	2.8	96.5	0.7	100.0	165
	Բարձրագույն	0.0	100.0	0.0	100.0	111
Զբաղվածություն	Գործազուրկ	3.2	96.8	0.0	100.0	327
	Աշխատում է	0.0	99.2	0.8	100.0	159
	Սեզոնային աշխատանք	[0.0]	[96.3]	[3.7]	[100.0]	30
	Այլ		5
Ընդամենը		2.0	97.5	0.5	100.0%	521

Այն հարցին, թե արդյո՞ք հղիության ընթացքում նախաձննդյան կլինիկաներ այցելելու հետ կապված դժվարություններ են եղել, 5-12 տարեկան երեխա ունեցող կանանց 10.5%-ը դրական է պատասխանել: Հատկանշական է, որ ցուցանիշն ավելի բարձր է Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում ապրող (12.4%) և ներկայում ամուսնացած (11.2%) կանանց շրջանում: Տոկոսը զգալիորեն ցածր է Երևանում բնակվող (7.6%) և բարձրագույն կրթությամբ (9.3%) կանանց շրջանում:

«Որո՞նք էին այդ խոչընդոտները» հարցին այդ դժվարություններն ունեցած կանանց 21.4%-ը մատնանշել է համայնքում բժշկի բացակայության հանգամանքը, 5.1%-ը՝ բժշկի տղամարդ լինելու փաս-

տը, 7.4%-ը՝ փոխադրամիջոցի հետ կապված դժվարությունները և 7.9%-ը՝ ամուսնու կամ սկեպոսը դեմ լինելու հանգամանքը: Այս կանանցից յուրաքանչյուր երրորդը (28.9%) նշել է, որ նախաձեռնության ստուգման կարիք չկար:

«Դուք կանոնավոր հաճախել էք գինեկոլոգիական ստուգումների» հարցին այս ենթախմբի կանանց 10.8%-ը բացասական պատասխան է տվել: Նույն խմբի կանանց 57.5%-ը, ովքեր չեն հաճախել կանոնավոր գինեկոլոգիական ստուգումների, նշել է, որ գինեկոլոգիական ստուգումների կարիք չկար: Ըստ էության, այս խմբի յուրաքանչյուր երկրորդ կին գինեկոլոգիական կանոնավոր ստուգումները չի կարևորում: Հարցվածների 2.7%-ը նշել է, որ ամուսինը դեմ է եղել, իսկ 5.9%-ը պատճառաբանել է փոխադրամիջոցի բացակայությամբ:

ԵՐԵՆԱՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՅՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայրերի հոգեւտմատիկ վիճակի և նրանց երեխաների առողջական կարգավիճակի միջև պատճառահետևանքային կապը լավ հայտնի է: Այս համատեքստում, այնուամենայնիվ, գենդերային բոնության դերի պարզաբանումը կարևոր նշանակություն է ձեռք բերում:


Նախապատվությունը ըստ երեխայի սեռային պատկանելիության

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բոնության հակում ունեցող տղամարդիկ միջինը 1.5 անգամ ավելի են նախընտրում տղա զավակ ունենալ, քան կանանց նկատմամբ բոնության հակում չունեցող սեռական գույքըներները: Ընդ որում, տղա զավակ նախընտրող տղամարդկանց շրջանում այդ ցուցանիշները կազմում են՝ հոգեբանական բոնության դեպքում 56.8%՝ 42.0%-ի դիմաց, ֆիզիկականի դեպքում՝ 60.0%՝ 43.4%-ի դիմաց, և սեռականի դեպքում՝ 75.0%՝ 43.4%-ի դիմաց:

Բոնության ենթարկված մայրերի երեխաների հոգեկան առողջությունը

Երեխաների հոգեկան առողջությանը վերաբերող հարցերի պատասխաններից հետևում է, որ բոնության ենթարկված կանանց երեխաներն այդ առումով ավելի խոցելի են, և նրանց հարաբերականորեն ավելի բարձր տոկոսի մոտ արձանագրվում են հոգեւտմատիկ խանգարումների ախտանիշներ (մղձավանջ, գիշերամիզություն, բուք մատը ծծել, ինքնամփոփություն կամ հակառակը՝ ագրեսիվություն):

Գծապատկեր 6.4. Երեխաների առողջության և մայրերի նկատմամբ հոգեբանական բոնության կապը (%)



- *Հոգեբանական բռնության* ենթարկված կանանց երեխաների մոտ շուրջ երկու անգամ ավելի հաճախ է նկատվում մղձավանջ (11.9%՝ 5.7%-ի դիմաց), երեք անգամ ավելի հաճախ ծծում են բուրբ մատը (4.5%՝ 1.5%-ի դիմաց), 1.3 անգամ ավելի հաճախ՝ գիշերամիզություն (7.5%՝ 5.7%-ի դիմաց), 1.7 անգամ ավելի ինքնամիտի են (41.8%՝ 24.6%-ի դիմաց) և 3.2 անգամ՝ ավելի ագրեսիվ (22.4%՝ 7.0%-ի դիմաց):
- *Ֆիզիկական բռնության* դեպքում տարբերությունները նույնքան ակնառու են՝ 1.9 անգամ ավելի՝ մղձավանջ (12.5%՝ 6.5%-ի դիմաց), 1.9 անգամ ավելի հաճախ ծծում են բուրբ մատը (4.1%՝ 2.2%-ի դիմաց), 2.3 անգամ ավելի՝ գիշերամիզություն (12.5%՝ 5.5%-ի դիմաց), 3 անգամ ավելի ագրեսիվ են (27.1՝ 8.9%-ի դիմաց), և միակ բացառությունն ինքնամիտի լինելն է, որի դեպքում տարբերություններն աննշան են (29.2%՝ 28.4%-ի դիմաց):
- *Սեռական բռնության* դեպքում երեխաների հոգեկան առողջության և նրանց մայրերի բռնության ենթարկված լինելու կամ չլինելու միջև փոխկապակցվածությունն ավելի բարդ է, և տարբերություններն ավելի քիչ են արտահայտված: Այս հանգամանքը թերևս տրամաբանական է, քանի որ այս տեսակի բռնությունը հավանաբար տեղի չի ունենում երեխաների ներկայությամբ: Եթե մղձավանջի դեպքում տարբերությունը չնչին է (7.7%՝ 7.1%-ի դիմաց), ապա բուրբ մատը ծծելու և գիշերամիզության հետ կապված այդ տարբերությունն ավելի մեծ է՝ համապատասխանաբար 3.7 (7.7%՝ 2.1%-ի դիմաց) և 2.7 անգամ (15.4%՝ 5.8%-ի դիմաց): Իսկ ինքնամիտի կամ ագրեսիվ լինելու առումով խնդրո առարկա գործոնների միջև ուղիղ փոխկապակցվածություն չկա:

Այնուամենայնիվ ակնհայտ է, որ բռնության ցանկացած դրսևորում ամենավատ ազդեցությունն ունի երեխաների հոգեկան առողջության և նրանց հոգեշարժական զարգացման արդյունքում նաև նրանց անհատականության, մտածելակերպի և վարքագծի ձևավորման վրա: Քանի որ բռնության վերոնշյալ երեք ձևերը հիմնականում զուգակցված են, ապա ակնհայտ է դառնում խնդրի կարևորությունը:

ԳԼՈՒԽ 7. ԿԱՆԱՆՑ ԴԻՄԱԿԱՅՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՆ Ի ՊԱՏԱՍԽԵԱՆ ՍԵՌԱԿԱՆ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ

Ինչպես նշվեց այս գեկույցում ավելի վաղ, ընտանեկան բռնությունը Հայաստանում լուրջ, թեև անբավարար հաղորդվող և մեծապես չճանաչված երևույթ է: Այս հետազոտության նպատակներից մեկն էր սահմանել սեռական զուգընկերոջ կողմից բռնության շրջանակն ու մասշտաբները՝ ցույց տալու, որ այս խնդիրը գոյություն ունի և դրան անհրաժեշտ է անդրադառնալ հետևողական և համապարփակ ձևով:

Արդյունավետ, ուղղորդված և նախահարձակ լինելու համար Կառավարության քաղաքականությունը, որը դեռևս չի ձևակերպվել և իրականացվել, պետք է հիմնված լինի ոչ միայն ներընտանեկան բռնության ձևերին, հիմնական պատճառներին և ազդեցություններին, այլև կանանց համար դրանց ունեցած հետևանքներին, ինչպես նաև կանանց հակազդեցությանն այդ բռնությանը, նրանց գործողությունների կամ չգործելու հիմքում ընկած պատճառներին և նրանց կողմից կիրառվող ռազմավարություններին, եթե դրանք կիրառվում են, նկատի առնելով ներկա սոցիալ-տնտեսական ու մշակութային միջավայրը և օժանդակության գոյություն ունեցող ենթակառուցվածքը:

Այս հատվածը նվիրված է վերոնշյալ հարցերից մի քանիսին:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Հարցման շրջանակներում փորձ է արվել գնահատել սեռական զուգընկերոջ կողմից գործադրված բռնության առողջապահական, տնտեսական, սոցիալական և հոգեբանական հետևանքները կանանց համար, այնպես, ինչպես բռնության ենթարկված կանայք տեսնում են դրանք:

Աղյուսակ 7.1-ում ներկայացված են տվյալներ, թե կանայք ինչպես են գնահատում իրենց առողջության վրա սեռական զուգընկերոջ գործադրած բռնության ունեցած հետևանքները:

Աղյուսակ 7.1. Ատողջության վրա սեռական գույքըներոջ կողմից բռնության հետևանքներն ըստ հարցվողների գնահատականի

Երբևէ գույքըներ ունեցած և բռնության ենթարկված 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր կարծում են, որ սեռական գույքըներոջ գործադրած բռնությունը կարող է ազդեցություն չունենալ, կամ ունենալ քիչ կամ շատ ազդեցություն իրենց ատողջության վրա (“...” 25-ից պակաս դեպքերի համար), (“[]” 25-49 դեպքերի համար):

		Ոչ մի ազդեցություն	Քիչ	Շատ	Զգիտի/չի հիշում	Հրաժարվել է/պատասխան չկա	Ընդամենը, %	Կանանց թիվը
Տարիք	15-24	78.5	0.0	21.5	0.0	0.0		3
	15-19	0.0	0.0	100.0	0.0	0.0		1
	20-24	100.0	0.0	0.0	0.0	0.0		2
	25-34	[45.0]	[22.7]	[15.1]	[12.3]	[4.9]	[100.0]	26
	35-44	58.0	20.9	14.3	5.0	1.8	100.0	75
	45-59	48.2	33.9	11.7	4.8	1.4	100.0	122
Բնակության վայր	Քաղաքային	48.2	30.7	13.7	5.4	2.0	100.0	149
	Երևան	62.8	19.0	11.7	3.3	3.2	100.0	51
	Այլ քաղաքային	40.6	36.8	14.7	6.5	1.4	100.0	98
	Գյուղական	57.9	22.3	11.9	6.2	1.7	100.0	77
Անուսնական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած							
	Ներկայումս ամուսնացած	57.3	23.9	11.4	4.9	2.6	100.0	166
	Նախկինում ամուսնացած	35.5	38.9	17.9	7.7	0.0	100.0	60
Երեխաների թիվը	0		8
	1-2	48.8	31.5	13.8	3.6	2.1	100.0	139
	3+	51.6	23.9	13.0	9.8	1.7	100.0	79
Կրթություն	Կրթություն չի ստացել							
	Ընդհանուր տարրական		18
	Ընդհանուր միջնակարգ	54.5	29.6	7.7	6.4	1.8	100.0	113
	Միջին մասնագիտական	58.9	26.7	6.0	5.6	2.8	100.0	63
	Բարձրագույն	[37.3]	[26.4]	[31.2]	[3.3]	[1.8]	[100.0]	32
Ջրով ավազում	Չաշխատող	52.9	31.0	7.1	5.9	3.2	100.0	117
	Աշխատող	48.6	24.1	22.2	4.3	0.8	100.0	68
	Սեզոնային աշխատանք	[52.7]	[25.7]	[14.1]	[7.5]	[0.0]	[100.0]	40
	Այլ	1
Ընդամենը		51.5	27.8	13.1	5.7	1.9	100.0%	226

Այս կատեգորիայի հարցվողների կեսից փոքր-ինչ ավելին մասնանշել է, որ իր գույքըներոջ բռնի վարքագիծը ոչ մի ազդեցություն չի ունեցել իր ատողջության վրա: Կարելի է եզրակացնել, որ այս կանայք ենթարկվել են բռնության «մեղմ» կամ «չափավոր» ձևերի: Միևնույն ժամանակ, այս հարցին պատասխանած կանանց 40.9%-ը հստակ նշել է, որ սեռական գույքըներոջ կողմից բռնություն

ունեցել է (քիչ կամ շատ) ազդեցություն իր առողջության վրա: Այս ցուցանիշը նույնիսկ ավելի բարձր է նշված կանանց առանձին ենթախմբերում: Նման ազդեցության մասին են նշում նախկինում գուգրնկեր ունեցած կանանց 56.8%-ը և տարրական կրթությամբ կանանց 56.8%-ը: Այսպիսով, ամենայն հավանականությամբ նրանք ենթարկվել են բռնության դաժան ձևերի, որոնք ավելի հարատև ազդեցություն են ունեցել նրանց ֆիզիկական և մտավոր առողջության վրա:

Ընտանեկան բռնությունը նույնպես սոցիալ-տնտեսական հարթություն ունի: Ինչպես վկայում են Աղյուսակ 7.2-ում տեղ գտած տվյալները, ներքնտանեկան բռնության գոհերի մոտ մեկ երրորդը նշել է, որ իր գուգրնկերոջ վարքագիծը խանգարել է իր աշխատանքին կամ այլ եկամուտ բերող գործունեությանը:

Աղյուսակ 7.2. Սեռական գուգրնկերոջ բռնի վարքագծի պատճառով կանանց աշխատանքի կամ եկամուտ բերող այլ գործունեության խաթարումը (ըստ հարցվողների գնահատման)

Երբևէ գուգրնկեր ունեցած և սեռական գուգրնկերոջ կողմից բռնության ենթարկված 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունը, ովքեր կարծում են, որ գուգրնկերոջ բռնի վարքագիծը խանգարել է կամ չի խանգարել իրենց աշխատանքին կամ այլ եկամուտ բերող գործունեությանը (հանրագումարը գերազանցում է հարյուր տոկոսը, քանի որ մի քանի պատասխան ընտրելու հնարավորություն էր տրված):

	Չկա մ (աշխատանք չունի)	Աշխատանքին չի խանգարել	Զուգրնկերը խանգարել է աշխատանքին	Չի կարողացել կենտրոնանալ	Չի կարողացել աշխատել/հիվանդություն արձակուրդ	Կորցրել է վստահություն իր կարողությունների հանդեպ	Այլ	Կանանց թիվը, 100 %
Ընդամենը, %	32.2	45.5	5.2	14.7	1.4	8.4	1.4	217

Եթե այս խմբի ընդամենը 5.2%-ն է ասել, որ իր գուգրնկերն ուղղակիորեն ազդել է իր աշխատանքի վրա, այնուամենայնիվ հարցվողների 25.9%-ի դեպքում ազդեցությունը պակաս վստասկար և ցավալի հետևանքներ չի ունեցել:

Տվյալները հակված են մատնանշելու, որ տնտեսական գործունեության ընդհատումը նաև ֆիզիկական և հոգեկան առողջությանն առնչվող հետևանքներ ունի: Այսպես, այս խմբի կանանց առնվազն 1.4%-ը ստիպված է եղել անաշխատունակության արձակուրդ վերցնել, առնվազն 14.7%-ը չի կարողացել կենտրոնանալ, իսկ 8.4%-ը կորցրել է վստահությունն իր կարողությունների հանդեպ:

Հարցման արդյունքները հստակ նշանակություն ունեն թե՛ այս ոլորտի մասնագետների և թե՛ քաղաքականություն մշակողների համար՝ առավել ուղղորդված միջամտությունների և ավելի արդյունավետ կանխարգելիչ միջոցառումների մշակման համար:

ԱՐՁԱԳԱՆՔ ԲՈՆՈՒԹՅԱՆ՝ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Այս հետազոտության նպատակներից մեկն էր պարզել, թե ինչ հաճախականությամբ է ֆիզիկական բռնության ենթարկված կինը հակադարձել բռնությանը (եթե հակադարձել է) և որոնք են եղել հետևանքները:

Աղյուսակ 7.3-ում ամփոփված են տվյալներ՝ գուգրնկերոջ խփելու պարագայում կանանց կողմից հակահարվածի տարածվածության և հաճախականության վերաբերյալ:

Աղյուսակ 7.3. Հարցվողների հակադարձումը սեռական զուգրնկերոջ խփելու դեպքում

Երբևէ զուգրնկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր բռնության են ենթարկվել սեռական զուգրնկերոջ կողմից և հակադարձել են կամ չեն հակադարձել (“...” 25-ից պակաս դեպքերի համար), (“[]” 25-49 դեպքերի համար):

		Երբևէ	Մեկ կամ երկու անգամ	Մի քանի անգամ	Չստ անգամ/գրեթե միշտ	Չգիտի/չի հիշում	Հրաժարվել է/պատասխան չկա	Ընդամենը %	Կանանց թիվը
Տարիք	15-24		3
	15-19		1
	20-24		2
	25-34	[69.8]	[29.9]	[0]	[0]	[0]	[0.3]	[100.0]	26
	35-44	84.1	11.8	1.7	0	2.4	0	100.0	75
	45-59	71.1	19.3	0.3	1.6	3	4.7	100.0	122
Բնակության վայր	Քաղաքային	68.5	24.7	0.6	0.8	3.2	2.2	100.0	149
	Երևան	76.8	14	0	0	9.2	0	100.0	51
	Այլ քաղաքային	64	30.4	0.8	1.3	0.1	3.4	100.0	98
	Գյուղական	89.5	4.3	1.1	0.9	0.9	3.3	100.0	77
Ամուսնական կարգավիճակ	Ներկայումս ամուսնացած	78.4	14.1	0.7	1.2	2.5	3.1	100.0	166
	Նախկինում ամուսնացած	67.8	28.1	0.8	0	2.2	1.1	100.0	60
Երեխաների թիվը	0		8
	1-2	71.1	23.8	0	1.4	3.1	0.6	100.0	139
	3+	81.3	8.8	2	0	1.6	6.3	100.0	79
Կրթություն	Ընդհանուր տարրական		18
	Ընդհանուր միջնակարգ	74.8	21.1	1	1.1	0.6	1.4	100.0	113
	Միջին մասնագիտական	77.1	15.8	0	1.2	5.9	0	100.0	63
	Բարձրագույն	[75]	[20.1]	[1.4]	[0]	[3.5]	[0]	[100.0]	32
Զբաղվածություն	Չաշխատող	75.2	22.2	0.4	1.1	1.1	0	100.0	117
	Աշխատող	74.3	14.1	0.4	1.1	6.3	3.8	100.0	68
	Սեզոնային աշխատանք	79.6	10.2	2.1	0	0	8.1	[100.0]	40
	Այլ	1
Ընդամենը		75.5	17.8	0.7	0.9	2.5	2.6	100.0%	226

Աղյուսակի տվյալները ցույց է տալիս, որ այս ենթախմբի հարցվողների երեք քառորդը երբեք հակահարված չի հասցնում, երբ զուգրնկերն իր նկատմամբ ֆիզիկական բռնություն է կիրառում: Բռնության ենթարկված հինգ կանանցից մոտավորապես մեկն է միայն, որ պատասխան բռնության է դիմում, երբ զուգրնկերը խփում է իրեն, և իսկ գերակշռող մեծամասնությունը (17.8% նշված ենթախմբում) հակահարված է տվել միայն մեկ կամ երկու անգամ, և միայն 2%-ն է այդպես վարվել մի քանի կամ շատ անգամ:

Կարևոր է նշել, որ չնայած գրեթե բոլոր ստանդարտ գործոնները (հարցվողների կենսագրական բնութագրիչները), որոնք կիրառվել են հարցման ընթացքում, կարող են համարվել բավականին

ճշգրիտ կանխորոշիչներ՝ թե արդյոք բռնության ենթարկված կինն ինքն էլ կղիմի բռնության (և եթե այո, ապա ինչ հաճախականությամբ), այնուամենայնիվ միայն *ամուսնական կարգավիճակն* է, որ ունի հստակ միատեսակ ազդեցություն: Այլ կերպ ասած, նախկինում ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր հակահարված են հասցրել, ըստ էության, երկու անգամ ավելի բարձր է, քան ներկայումս ամուսնացած կանանց դեպքում (28.1%՝ 14.1%-ի դիմաց): Տվյալները հիմնավորում են ավելի վաղ կատարված եզրակացությունը, որ սեռական զուգընկերոջ կողմից գործադրված բռնությունը կարող է ամուսնալուծության էական գործոն դառնալ: Դրանք նաև հակված են ցույց տալու, որ կանայք, ովքեր ավելի հաճախ են հակահարված հասցրել (կամ ընդհանրապես հակահարված հասցրել են), կարող են ենթարկված լինել ֆիզիկական բռնության առավել ծայրահեղ ձևերի (և ավելի հաճախ) և/կամ նման կանանց զուգընկերները ցանկություն չեն ունեցել շարունակել հարաբերությունները նրանց հետ:

Հետաքրքիր զարգացում է արտացոլված *երեխաների թվի* գործոնի հետ կապված: Երեխա չունեցող կանայք ընդհանրապես հակահարված չեն հասցրել: Կարելի է առաջ քաշել մի կանխավարկած, որի ստուգման համար հետագա հետազոտություններ են պահանջվում: Հավանաբար սրանք հիմնականում այն կանայք են, ովքեր հարաբերականորեն նոր են հարաբերություններ հաստատել զուգընկերոջ հետ և բռնության հաստատված օրինաչափությունը դեռ չի գործել և, հավանաբար, նրանք ենթարկվել են ֆիզիկական բռնության ավելի «չափավոր» ձևերի: Երեք և ավելի երեխա ունեցող տասը կանանցից (այս ենթախմբում) միայն մեկն է մեկ, երկու կամ մի քանի անգամ հակահարված հասցրել (10.8%): Թվում է՝ այս կատեգորիայի գերակշիռ մեծամասնությունը հաշտվել է իր ճակատագրի հետ: Հակահարված հասցրած կանանց ամենաբարձր տոկոսը (25.2%) գրանցվել է այն հարցվողների շրջանում, ովքեր մեկ կամ երկու երեխա ունեն: Այս կամ այն պատճառով այս կատեգորիայի կանայք առավել վճռական են իրենց պաշտպանելու անհրաժեշտության դեպքում ուժ գործադրելու առումով:

Ինչ վերաբերում է *տարիքի* գործոնին, տվյալները հստակ ցույց են տալիս, որ 25-34 տարեկան կանայք ավելի պատրաստակամ են հակահարված հասցնել (29.9%), քան 34-44 տարեկան (13.5%) կամ նույնիսկ 45-59 տարեկան (21.2%) կանայք: Կարող է թվալ, որ որոշակի հասարակական փոփոխություններ են տեղի ունեցել անցած մի քանի տարվա ընթացքում: Հնարավոր բացատրություններից մեկն այն է, որ եթե բռնությունն ընդհանուր առմամբ վերելք է ապրում հայ հասարակությունում, գուցե դա նաև արտահայտվում է ընտանեկան հարաբերություններում՝ ստիպելով մեծ թվով երիտասարդ կանանց հակահարվածի դիմել: Մեկ այլ բացատրություն էլ (որը չի բացառում առաջին բացատրությունը) այն է, որ գենդերային համաձայնությունը փոխվել է հայ հասարակությունում, և ավելի քիչ թվով երիտասարդ կանայք են հակված թույլ տալու սեռական զուգընկերոջն անպատիժ ձևով բռնանալ իրենց վրա:


Շատ ավելի դժվար է բացատրել այն հսկայական տարբերությունները, որ առկա են խնդրո առարկա ենթախմբում՝ կապված *բնակչության վայրի* գործոնի հետ: Եթե սեռական զուգընկերոջ կողմից գործադրված բռնությանը հակահարված հասցնող կանանց տոկոսն ավելի ցածր է գյուղաբնակ կանանց շրջանում (6.3%)՝ քաղաքաբնակների համեմատությամբ (26.1%), ապա Երևանում (14.0%) և այլ քաղաքային բնակավայրերում (32.5%) բնակվող կանանց միջև շատ մեծ է: Հետագա ուսումնասիրություններ են անհրաժեշտ, այդ թվում նաև որակական, բացահայտելու, թե ինչու բռնարար զուգընկերոջը հակահարված հասցնող կանանց տոկոսը երկու անգամ ավելի բարձր է Հայաստանի այլ քաղաքներում, քան մայրաքաղաքում:

Շատ ավելի զարմանալի են *աշխատանքի* կարգավիճակի հետ կապված տվյալները: Պատկերը տարիմաստ է: Ըստ տվյալների, բռնի զուգընկերոջը հակահարված տվող կանանց տոկոսը մոտ 1.5 և 2 անգամ ավելի ցածր է սեզոնային աշխատանք կատարող (12.3%) և աշխատող (15.6%) կանանց շրջանում՝ չաշխատողների (23.7%) համեմատությամբ: Գուցե թվա, որ աշխատող կանայք տնտեսապես ավելի անկախ լինելով պետք է ավելի շատ հակված լինեին իրենց պաշտպանելու: Քանի որ դա այդպես չէ, ապա կարելի է հնարավոր եզրակացություն կատարել, որ այս դեպքում զբաղվածության գործոնը հավաստի չէ, և որ գործում են ինչ-որ այլ՝ ավելի ուժեղ գործոններ:

Բավականին հետաքրքիր պատկեր է ստացվում, երբ տվյալները բաշխվում են ըստ կրթական մակարդակի: Չնայած տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր տարրական կրթությամբ կանանցից ոչ մեկը հակահարված չի հասցրել, նրանց շրջանում հստակ պատասխան չտվողների (կանայք, ուլքեր հրաժարվել են պատասխանել կամ պատասխան չեն ունեցել հարցին) տոկոսն աննախադեպ բարձր է (23.2%): Կարելի է տրամաբանական ենթադրություն անել, որ հնարավոր է՝ այս կանանցից ոմանք հակահարված հասցրել են, բայց անհարմար են զգում խոստովանել: Ընդունելով, որ դա այդպես է, և միավորելով անորոշ և «չգիտեմ/չեն հիշում» պատասխանները, կարելի է առաջ քաշել մի կանխավարկած, որ որքան էլ տարօրինակ չհնչի, այս դեպքում *կրթությունը* տարբերակող գործոնն է: Այս եզրակացությունը հաստատվում է նաև այն տվյալներով, որոնք վերաբերում են «երբեք հակահարված չի հասցրել» պատասխանին, որի դեպքում գրեթե կատարյալ միօրինակություն է դրսևորվել (ցուցանիշը տատանվում է 74.8%-ից 77.1%-ի սահմաններում): Նաև հետաքրքիր է նշել, որ այս ցուցանիշն, ըստ էության, համընկնում է ենթախմբի ընդհանուր ցուցանիշի հետ (75.5%):

Գծապատկեր 7.1. Հարցվողների հակադարձման ազդեցությունը

Ընտրանքում ընդգրկված և վերոնշյալ պատասխանները տված 15-59 տարեկան կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ զուգընկերոջը հակահարված հասցնելու ազդեցության:



Տվյալները ցույց են տալիս, որ հակահարված հասցնելու արդյունքները լավագույն դեպքում կարելի է խառը համարել: Չնայած այս ենթախմբի բոլոր կանանց հակադարձումն առանձնապես արդյունավետ չէ (քանի որ հարցվողների 42.8%-ը որևէ փոփոխության մասին չի հաղորդել, իսկ 14.2%-ը նշել են, որ բռնությունն ավելի շատացել է), այնուամենայնիվ այն օգտակար է եղել չորս կանանցից մեկի համար: Հակահարված հասցնելով՝ ֆիզիկական բռնության ենթարկված կանանց 24.2%-ը կարողացել է վերջ դնել իր նկատմամբ բռնությանը, իսկ 2.3%-ը մատնանշել է, որ բռնությունը նվազել է: Ընդհանուր առմամբ հարցվողների բավականին բարձր տոկոսը (13.6%), ուլքեր չգիտեն կամ չեն հիշում, թե ինչ ազդեցություն է ունեցել իրենց կողմից բռնարար զուգընկերոջը հասցված հակահարվածը, չի բարելավում ընդհանուր պատկերը:

Ամեն դեպքում, հետագա հետազոտություններ են անհրաժեշտ այս իրավիճակի խորը և մանրամասն վերլուծության համար: Այս դաշտում մասնագետները դժվար երկրնտրանքի առջև են կանգնած: Ակնհայտորեն բռնությունը լավագույն պատասխանը չէ, և հազիվ թե կարելի լինի ակնկալել, որ մասնագետները բռնության ենթարկված կանանց խորհուրդ տան պատասխան բռնություն գործադրել իրենց զուգընկերոջ նկատմամբ: Մի կողմից, քանի դեռ ընտանեկան բռնությունը կանխարգելող արդյունավետ միջոցներ չեն մշակվել և գործարկվել, որոնք զոհերին կտրամադրեն համապարփակ օժանդակություն և պաշտպանություն, բռնարարների համար հզոր հակախթան կլինեն և ընդհանուր առմամբ կանանց նկատմամբ բռնությունն ու, մասնավորապես, զուգընկերոջ կողմից բռնությունը կդարձնեն մշակութային առումով անընդունելի, և քանի դեռ ընտանիքները չեն ազատվել բռնությունից, բռնության այս արատավոր շրջանը կշարունակի գոյություն ունենալ, քանի որ բռնության ենթարկված կանանցից ոմանք ստիպված կլինեն ինքնապաշտպանության դիմել:

ԱՐՁԱԳԱՆՔ ԲՈՒՆՈՒԹՅԱՆԸ՝ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՆ ՈՒ ԱՆՀԱՏՆԵՐԻՑ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՑԵԼԸ

Ներընտանեկան բռնության դեմ պայքարելու և զոհերին օգնելու համար անհրաժեշտ է քանդել այս երևույթի շուրջ առաջացած լռության պատը: Խնդիրը չի կարող լուծվել, եթե զոհերը չբացահայտվեն և եթե այլ անձինք, այդ թվում՝ բարեկամները, ընկերներն ու կառավարության համապատասխան մարմիններն ու համայնքի ներկայացուցիչներն անտեղյակ մնան այս խնդրին: Այս հետազոտությունը փորձել է պարզել, թե արդյոք ընտանեկան բռնության զոհերն այլ մարդկանց պատմում են իրենց զուգընկերոջ բռնի վարքի մասին, և եթե այո, ապա ում, և արդյոք նրանք օգնության համար դիմում են այլ մարմինների և անհատների, ովքեր *ի պաշտոնե* պետք է օգնեն իրենց:

Ինչպես վկայում են Աղյուսակ 7.4-ի տվյալները, այս կատեգորիայում հարցման ենթարկված կանանց գրեթե կեսը (44.0%) որևէ մեկին իր զուգընկերոջ բռնի վարքի մասին չի պատմել: Թեև սրա հիմքում ընկած պատճառները հայտնի են այլ երկրներում իրականացված հետազոտությունների և Հայաստանում ՀԿ-ների և կառավարական մարմինների հավաքագրած տվյալների շնորհիվ (ամոթի մշակույթ, հայրիշխանական նորմերի գերակշռում, հանրային կարծիքի ճնշում, վստահության պակաս, լավատեսական հույսերի պակաս և այլն), այս խնդիրը պահանջում է առավել խոր, մասնավորապես՝ որակական հետազոտություններ:

Աղյուսակ 7.4. Զուգրնկերոջ բռնի վարքի մասին այլ մարդկանց պատմելը

Երբևէ զուգրնկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր բռնության են ենթարկվել սեռական զուգրնկերոջ կողմից և ովքեր այլ մարդկանց պատմել են կամ չեն պատմել նրա բռնի վարքի մասին (“...” 25-ից պակաս դեպքերի համար), (“[]” 25-49 դեպքերի համար):

		Ոչ մեկին	Ընկերներին	Ծնողներին	Եղբորը կամ քրոջը	Քեռուն/հորեղբորը կամ հորաքրոջը/մորաքրոջը	Անուսնու/զուգրնկերոջ բնառանիին	Երեխաներին	Հարևաններին	Ոստիկանությանը	Բժշկին/ատոջապահության աշխատակցին	Իրավաբան-խորհրդատուին	ՏԻՄ	Այլ	Հե/կանանց կազմակերպությանը	Ընդամենը %	Կանանց թիվը (զուգրնկերոջ կողմից բռնության ենթարկված)
Տարիք	15-24	4
	15-19	1
	20-24	3
	25-34	[28.9]	[3.1]	[46.9]	[14.5]	[0.0]	[5.3]	[0.0]	[3.3]	[9.7]	[0.0]	[2.4]	[0.0]	[0.0]	[0]	[100.0]	27
	35-44	49.2	15.4	38.1	16.5	0.0	2.6	2.5	2.9	2.6	0.0	3.6	1.0	1.9	0	100.0	74
	45-59	43.6	15.5	41.1	13.7	2.6	7.5	7.4	7.4	2.5	1.6	0.6	0.5	0.0	0	100.0	120
Բնակության վայր	Քաղաքային	44.5	18.0	39.6	15.5	2.1	5.7	7.3	6.5	1.6	0.8	0.9	0.0	0.0	0	100.0	148
	Երևան	49.6	15.9	26.6	14.0	1.3	9.0	11.4	5.2	4.7	2.5	2.6	0.0	0	100.0	50	
	Այլ քաղաքային	42.0	19.1	46.2	16.3	2.5	4.0	5.2	7.1	0.0	0.0	0.0	0.0	0	100.0	98	
	Գյուղական	43.1	6.5	41.9	13.3	0.0	5.1	0.0	3.2	6.8	0.9	3.6	1.8	1.8	0	100.0	77
Ամուսնական կարգավիճակ	Ներկայումս ամուսնացած	51.6	12.0	35.6	11.1	0.0	3.4	2.7	1.7	2.3	0.4	1.7	0.8	0.8	0	100.0	165
	Նախկինում ամուսնացած	23.3	19.8	53.7	24.7	5.2	11.2	10.5	15.3	6.5	2.1	2.2	0.0	0.0	0	100.0	60
Երեխաների թիվը	0	9
	1-2	43.7	11.6	44.3	13.0	1.8	7.4	4.1	7.8	4.3	0.5	2.5	1.0	1.0	0	100.0	137
	3+	49.6	10.3	38.2	19.4	0.8	2.7	6.5	1.6	2.2	1.6	0.8	0.0	0.0	0	100.0	79
Կրթություն	Կրթություն չի ստացել	17
	Ընդհանուր տարրական	114
	Ընդհանուր միջնակարգ	51.3	13.2	35.9	12.8	2.2	5.5	2.2	6.9	1.9	0.0	1.2	1.2	0.6	0	100.0	114
	Միջին մասնագիտական	43.7	15.6	42.3	15.5	0.0	9.6	6.9	3.2	5.6	3.1	4.2	0.0	1.0	0	100.0	64
	Բարձրագույն	[17.8]	[21.7]	[46.9]	[17.8]	[0.0]	[0.0]	[2.1]	[5.0]	[6.4]	[0.0]	[0.0]	[0.0]	[0.0]	[0]	[100.0]	30
Զբաղվածություն	Չաշխատող	55.3	16.1	29.4	14.0	0.0	4.1	2.1	2.4	2.0	1.1	0.5	0.5	0.6	0	100.0	117
	Աշխատող	26.7	16.5	50.4	21.6	3.7	9.9	11.4	11.5	7.9	1.1	5.1	1.1	1.1	0	100.0	67
	Սեզոնային աշխատանք	[40.0]	[4.3]	[55.8]	[5.8]	[0.0]	[2.2]	[0.0]	[2.2]	[0.0]	[0.0]	[0.0]	[0.0]	[0.0]	[0]	[100.0]	40
	Այլ	1
Ընդամենը		44.0	14.1	40.4	14.8	1.4	5.5	4.8	5.3	3.4	0.9	1.8	0.6	0.6	0	100.0%	225

Եթե կանայք կիսվում են ինչ-որ մեկի հետ, ապա հիմնականում՝ ծնողների (40.1%): Այս առումով կարևոր տեղ են զբաղեցնում նաև նրանց եղբայրները և քույրերը (14.8%) և ընկերները (14.8%), չնայած շատ ավելի ցածր ցուցանիշով: Ավելի քիչ նրանք պատմում են իրենց ամուսնու ընտանիքին, հարևաններին և երեխաներին, հավանաբար երբ արդեն հնարավոր չի լինում թաքցնել բռնությունը, հատկապես երբ ֆիզիկական բռնությունը ձեռք է բերում սովորական բնույթ կամ կանայք ենթարկվում են բռնության դաժան ձևերի:

Անհրաժեշտ է նշել, որ բռնության ենթարկված կանանց միայն չնչին տոկոսն է (3.4%) բռնության մասին հայտնել ոստիկանությանը: Ակնհայտ է, որ ամոթից բացի, ետ պահող գործոն է նաև ոստիկանության նկատմամբ վստահության պակասը, որ նույնիսկ միջամտելու դեպքում ոստիկանությունը քիչ բանով կարող է օգնել:

Էլ ավելի չնչին է բժշկի (առողջապահության աշխատողի) կամ իրավաբանական խորհրդատուի հետ այս խնդիրը քննարկած կանանց մասնաբաժինը (համապատասխանաբար՝ 3.4% և 0.9%):

Ջարմանալի չէ, որ այս խմբում կանանց ընդամենը 0.6%-ն է (այսինքն՝ ըստ էության ոչ մեկը) խնդիրը քննարկել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ: Նկատի առնելով հայ հասարակության սոցիալական փոշիացումը, որին ենթարկվել է ցավալի անցումային գործընթացում առանց կանխորոշված արդյունքի, ինչպես նաև զանգվածային հիպոթեզությունն ընդհանուր և, մասնավորապես, տեղական ընտրություններից, զարմանալի չէ, որ օրինականության անբավարարությունը փոխակերպվել է վստահության պակասի:

Այլ ֆորմալ և ոչ ֆորմալ ղեկավարներ չկան: Չնայած քաղաքացիական հասարակության վերելքի և հայ հասարակության շրջանում կրոնի դերի վերականգնման մասին բոլոր խոսակցություններին, այս խմբի հարցվողներից ոչ ոք չի դիմել որևէ ՀԿ-ի (կանանց կազմակերպության) կամ քահանայի՝ ընտանեկան հարցերը քննարկելու նպատակով: Այս հանգամանքը հստակ ցույց է տալիս, որ նրանք չեն ակնկալում իրական օժանդակություն և, հավանաբար, նույնիսկ չեն վստահում նրանց ևս:

Այս խմբի կանանց շրջանում տվյալների բաշխվածությունը բացահայտում է ցայտուն տարբերություններ, որոնք կապված են տարիքի, բնակության վայրի, ամուսնական կարգավիճակի կամ այլ գործոնի հետ:

Ինչ վերաբերում է *տարիքին* առնչվող առանձնահատկություններին, ապա 25-34 տարեկանների խումբը հստակ առանձնանում է մյուսներից: Առաջին, այս տարիքային խմբում բռնության մասին այլ անձանց պատմողների թիվը 1.5 անգամ ավելի բարձր է ավելի մեծ տարիքով կանանց համեմատությամբ: Մինևնույն ժամանակ, այդ կանայք շատ ավելի դժկամորեն են պատմում դրա մասին իրենց ընկերներին (3.1%-ը՝ մոտավորապես 15.5%-ի դիմաց՝ համապատասխանաբար 35-44 և 45-59 տարեկան կանանց դեպքում), բայց ավելի շատ են կիսվում ծնողների հետ: Ամենամեծ տարբերությունը, սակայն, ոստիկանության հետ այս խնդիրը քննարկելու նրանց պատրաստակամությունն է: Ոստիկանությանը դիմած կանանց շրջանում այս խմբի ցուցանիշը մոտավորապես 4 անգամ ավելի բարձր է (9.7%)՝ 35-44 և 45-59 տարեկան կանանց համեմատությամբ (համապատասխանաբար՝ 2.6% և 2.5%): Թեկուզև սա ինքնին հետաքրքիր զարգացում է, այն չի հակասում ոստիկանության նկատմամբ վերոնշյալ անվստահությանը:

Առավել տարբերակիչ գործոն է *ամուսնական կարգավիճակը*: Նախկինում և ներկայումս ամուսնացած կանանց միջև տարբերությունները, կապված իրենց նկատմամբ գործադրված բռնության մասին այլ անձանց պատմելու կամ չպատմելու և խոսակցի ընտրության հետ, ոչ միայն մեծ են, այլև որևէ այլ գործոնի չեն համապատասխանում:

Կրթությունը նույնպես տարբերություններ է առաջ բերում: Բարձրագույն կրթությամբ կանայք ավելի քան 2.5 անգամ ավելի քիչ են հակված որևէ մեկին խնդրի մասին պատմելու (17.8%), քան միջին մասնագիտական (43.7%) և ընդհանուր միջնակարգ (51.3%) կրթություն ունեցողները: Վերջինների ավելի մեծ մասնաբաժինն է քննարկում այս հարցն ընկերների և ընտանիքի (բացառությամբ՝ քեռի-

ների, հորեղբայրների, մորաքույրների և հորաքույրների), հարևանների և նույնիսկ ոստիկանության հետ՝ կրթական ավելի ցածր ցենզ ունեցող կանանց համեմատությամբ: Ինչ վերաբերում է ոստիկանությանը դիմելուն, ապա բռնարար գուգրնկերոջ մասին ոստիկանությանը հայտնող կանանց տոկոսը բարձր չէ, և կրթության մակարդակից կախված՝ կանանց միջև տարբերություններն ակնհայտ են: Որքան ավելի կրթված է կինը, այնքան ավելի շատ է նա հակված խնդիրը քննարկելու ոստիկանության հետ: Պատճառներից մեկն այն է, որ այս կանայք ավելի լավատեղյակ են իրենց իրավունքներին և ավելի վստահ են խոսում իշխանությունների ներկայացուցիչների հետ: Չնայած անհրաժեշտ է նշել, որ բարձրագույն կրթությամբ կանանցից և ոչ մեկն այս խնդիրը բժիշկների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների, ՀԿ-ների հետ չի քննարկել: Մա այն հարցերից մեկն է, որին անհրաժեշտ է անդրադառնալ հետագա ուսումնասիրություններում՝ քաղաքականության, ինստիտուցիոնալ մեխանիզմների և միջամտությունների բարելավման նկատառումով:

Ըստ *բնակչության վայրի* գործոնի, տվյալների բաշխվածությունը ցույց է տալիս խառը, չնայած հետաքրքիր արդյունքներ: Եթե գյուղաբնակների և քաղաքաբնակների միջև տարբերությունները հիմնականում փոքր են (ընկերների, երեխաների և ոստիկանության հետ հարցը քննարկելու նկատելի բացառությամբ), ապա Երևանի և այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների միջև տարբերությունները շատ ցայտուն են: Երևանում այս կանայք ավելի քիչ են հակված պատմելու որևէ մեկին, իսկ եթե նույնիսկ պատմում են, ապա նրանց ավելի փոքր տոկոսն է հարցը քննարկում ընկերների և ընտանիքի ու հարևանների հետ, քան այլ քաղաքային բնակավայրերում բնակվող կանայք: Մակայն, ի հակադրություն վերջինների, նրանք ավելի շատ են հակված բռնի հարաբերությունների մասին խոսելու ոստիկանության, բժիշկների և իրավախորհրդատուների հետ: Այլ քաղաքային բնակավայրերի կանանցից ոչ մեկն այդպես չի վարվել:

Բռնի հարաբերությունների փաստը հեշտ թաքցվող գաղտնիք չէ: Վաղ թե ուշ ընկերները և ընտանիքը, հարևանները և նույնիսկ կառավարության գործակալությունները տեղեկանում են իրավիճակին, հատկապես երբ կանայք իրենք են դրա մասին պատմում: Ուստի հետաքրքիր է տեսնել, թե ով է (եթե որևէ մեկը) երբևէ փորձել օգնել ներընտանեկան բռնության զոհերին: Տվյալները վերլուծելիս և քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք բացառապես «զոհի» տեսանկյունն են արտահայտում, և որ բռնության ենթարկված ոչ բոլոր կանայք են պատմում բռնության մասին, հետևաբար ոչ բոլոր անհատներն ու կազմակերպություններն են տեղեկանում դրա մասին:

Աղյուսակ 7.5-ի տվյալները բավականին տխուր պատկեր են ստեղծում: Այս խմբի հարցվողների կեսից ավելին նշել է, որ որևէ մեկը երբևէ չի փորձել օգնել իրենց: Իհարկե, բնական է, որ օգնելու փորձ կատարողների ցուցակը գլխավորում են ծնողները (35.4%): Նրանց են հետևում եղբայրներն ու քույրերը (9.7%) և ընկերները (9.4%): Մի փոքր օժանդակություն է ստացվել հարևաններից, երեխաներից և գուգրնկերոջ ընտանիքից (կանանց ընդամենը 2.4%-4.0%-ն է նշել, որ նրանք փորձել են օգնել իրենց): Այլոց ջանքերը չսչին տոկոս են կազմում:

Աղյուսակ 7.5. Ուլքեր են փորձել օգնել

Երբևէ զուգրնկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ուլքեր սեռական զուգրնկերոջ կողմից ենթարկվել են բռնության և որոնց որևէ օգնություն է ցուցաբերել կամ չի ցուցաբերել ստորև թվարկված որևէ մեկը (“...” 25-ից պակաս դեպքերի համար), (“[]” 25-49 դեպքերի համար):

		Ոչ մեկը	Ընկերները	Ծնողները	Եղբայրը կամ քույրը	Քեռին/հորեղբայրը կամ մորաքույրը/ հորաքույրը	Անուսնու/զուգրնկերոջ բնույթի	Երեխաները	Հարևանները	Ոստիկանությունը	Բժիշկը/առողջապահության աշխատողը	Իրավաբան-խորհրդատու	ՀԿ/կանանց կազմակերպությունը	Այլ	Ընդամենը %	Կանանց թիվը (զուգրնկերոջ կողմից բռնության ենթարկված)
Տարիք	15-24	4
	15-19	1
	20-24	3
	25-34	[32.6]	[3.1]	[46.9]	[18.0]	[0.0]	[5.3]	[0.0]	[5.7]	[3.3]	[0.0]	[0.0]	[0.0]	[0.0]	[100.0]	27
	35-44	53.8	14.7	36.0	8.3	0.0	0.0	0.8	1.2	0.0	0.0	2.7	1.0	1.0	100.0	74
	45-59	54.4	8.1	32.4	7.9	1.4	4.9	5.3	5.4	1.9	0.6	0.0	0.5	1.8	100.0	121
Բնակության վայր	Քաղաքային	52.8	11.8	31.4	11.1	1.6	4.4	4.7	3.4	0.0	0.0	0.9	0.0	1.5	100.0	148
	Երևան	60.3	11.4	18.2	4.5	4.6	5.1	8.8	5.1	0.0	0.0	2.6	0.0	0.0	100.0	50
	Այլ քաղաքային	49.0	12.0	38.2	14.5	0.0	4.0	2.6	2.5	0.0	0.0	0.0	0.0	2.2	100.0	98
	Գյուղական	49.7	5.3	42.0	6.1	0.0	1.1	0.0	5.0	4.0	0.9	0.9	1.8	0.9	100.0	77
Ամուսնական կարգավիճակ	Ներկայումս ամուսնացած	60.6	6.9	29.9	7.7	0.0	1.6	2.7	1.7	0.8	0.4	0.4	0.8	1.7	100.0	165
	Նախկինում ամուսնացած	27.5	16.8	49.4	14.0	3.8	7.6	4.2	10.2	2.9	0.0	2.2	0.0	0.0	100.0	60
Երեխաների թիվը	0	9
	1-2	49.4	5.5	39.0	8.7	0.5	4.4	1.3	4.6	2.3	0.5	1.5	1.0	2.1	100.0	137
	3+	61.6	8.1	32.1	11.6	2.1	1.6	6.5	3.2	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	79
Կրթություն	Կրթություն չի ստացել															
	Ընդհանուր տարրական	17
	Ընդհանուր միջնակարգ	62.9	7.9	30.3	5.9	0.6	4.1	0.0	5.4	0.6	0.0	0.6	1.2	0.6	100.0	114
	Միջին մասնագիտական	47.8	10.2	34.3	11.5	1.6	4.0	4.9	2.0	2.5	1.1	2.0	0.0	3.4	100.0	64
	Բարձրագույն	[23.0]	[19.9]	[45.1]	[12.0]	[0.0]	[0.0]	[2.1]	[5.0]	[2.9]	[0.0]	[0.0]	[0.0]	[0.0]	[100.0]	30
Քրոջավանդություն	Չաշխատող	64.3	8.5	23.2	11.3	1.4	2.3	2.1	4.0	0.5	0.0	0.0	0.5	1.8	100.0	117
	Աշխատող	32.2	14.7	48.1	10.5	0.0	6.9	5.8	4.9	3.7	1.1	3.0	1.1	1.1	100.0	67
	Սեզոնային աշխատանք	47.9	4.3	47.7	2.2	0.0	0.0	0.0	2.2	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	40
	Այլ	1
Ընդամենը		51.8	9.5	35.1	9.4	1.0	3.2	3.1	4.0	1.4	0.3	0.9	0.6	1.3	100.0	225

Տվյալների բաշխվածությունը ցույց է տալիս, որ որոշ գործոններ լավ կանխորոշիչներ են, թե կանանց որ ենթախմբերին է սովորաբար օգնություն ցուցաբերվում: Այսպես, *ամուսնական կարգավիճակը* հստակ առանձնանում է: Նախկինում ամուսնացած կանանց բավականին բարձր տոկոսն է (միջինը 1.5-2 և մինչև 4 և նույնիսկ 6 անգամ) օգնություն ստացել՝ ներկայումս ամուսնացած կանանց համեմատությամբ (բժիշկների և ՀԿ-ների փոքր բացառությամբ):

Բնակության գործոնը միատեսակ ազդեցություն չունի: Եթե որոշ դեպքերում տարբերությունները շատ քիչ են, ապա մյուս դեպքերում չկա որևէ օրինաչափություն: Օրինակ, գյուղաբնակ կանանց ավելի բարձր տոկոսն օգնություն է ստանում ծնողներից, հարևաններից և ոստիկանությունից, բայց ավելի ցածր տոկոսով նրանք օգնություն են ստանում ընկերներից, այլ բարեկամներից ու անհատներից՝ քաղաքաբնակների համեմատությամբ: Բացի այդ, Երևանի և այլ քաղաքային բնակավայրերի բնակիչների միջև կան մեծ տարբերություններ, ինչն ավելի խառը պատկեր է ստեղծում:

Օգնություն ստանալու հավանականությունն ընդհանուր առմամբ դրական է փոխկապակցվում *կրթության* գործոնի հետ: Սա հատկապես ճշմարիտ է բարձրագույն կրթությամբ կանանց դեպքում: Այլ անձանց կողմից օգնություն ստանալու տոկոսը նրանց շրջանում կայուն բարձր է՝ կրթական ցածր ցենզ ունեցող կանանց համեմատությամբ (միջինը 1.5-2 կամ ավելի անգամ): Սակայն նրանք առավել քիչ են հակված օգնություն փնտրելու գույքընկերոջ ընտանիքում կամ երեխաներից:

Այս հետազոտության շրջանակներում հետազա փորձ է կատարվել բացահայտելու, թե սեռական գույքընկերոջ կողմից բռնության զոհերն արդյոք դիմում են գոյություն ունեցող հաստատություններ, որոնց հանձնագիրը (կամ գոնե հանձնագրի մի մասը) նրանց օգնելն է:

Տվյալները ցույց են տալիս, որ բռնության ենթարկված կանայք հիմնականում չեն դիմում համապատասխան հաստատություններ և այն անհատներին, ովքեր կարող են իրենց օգնել: Այսպես, նրանց ընդամենը 6.8%-ն է դիմել ընդհանուր իրավասությանդատարաններ, 3.7%-ը՝ ոստիկանություն և 3.7%-ը՝ հիվանդանոցներ կամ առողջապահական կենտրոններ:

Տվյալները կրկին հաստատում են առավել վաղ կատարված բացահայտումները, որ բռնության ենթարկված կանայք չեն դիմում կանանց իրավունքները պաշտպանող կազմակերպություններին և քահանաներին: Պարզվել է նաև, որ նրանք չեն դիմում սոցիալական ծառայություններին:

Տվյալների պակասը, տարասեռ գործոնների բազմազանությունն ու խնդրի բարդ բնույթը չեն թույլ տալիս կատարել համապարփակ եզրակացություններ: Այնուհանդերձ, պարզ է, որ պահանջվում է հետազա հետազոտություն, ինչպես նաև համապատասխան ինստիտուցիոնալ կառույցներն ու կազմակերպություններն ավելի նախահարձակ դիրք պետք է գրավեն:

ՊԱՏՃԱՌՆԵՐ՝ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՄ ՉԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Միանգամայն բնական է, որ բռնի հարաբերություններում հայտնված անձը, որն այս կամ այն պատճառով չի կարող դրանց վերջ դնել, պետք է օգնություն փնտրի: Հետազոտության արդյունքները սակայն ցույց են տալիս, որ ոչ բոլոր դեպքերում է դա այդպես: Հակառակը, ընտրանքի կանանց շատ չնչին տոկոսն է օգնություն ստանալու նպատակով դիմել համապատասխան հաստատություններ: Հիմնականում, եթե նրանք բացահայտել են բռնի հարաբերությունները, ապա դրա մասին տեղեկացրել են ընտանիքին (հիմնականում ծնողներին) և ընկերներին, և բարոյական և այլ օժանդակություն փնտրել նրանց մոտ և ոչ այլուր:

Հետազոտության ժամանակ փորձ է կատարվել պարզել, թե ինչո՞ւ բռնության ենթարկված կինը դիմում է կամ չի դիմում համապատասխան հաստատություններ կամ մեխանիզմների՝ օգնություն ստանալու նպատակով:

Ցուցանիշների փոքրության հետևանքով հաստատություններ դիմելու պատճառների վերաբերյալ տվյալները վիճակագրորեն հավաստի չեն: Սակայն դրանք ցույց են տալիս, թե ինչպես են հարցվողներն այդ պատճառները դասակարգում ըստ կարևորության: «Կինն այլևս չէր կարող հանդուրժել

բռնությունը» ցուցակում գրավում է առաջին տեղը: Ըստ կարևորության հաջորդ պատճառն այն է, որ կինը տեսել է, թե ինչպես են տառապում երեխաները: Այնուհետև հաջորդում են՝ «զուգընկերը սպառնացել է խփել երեխաներին» և «ծանր վնասվածք հասցրել կնոջը» պատճառները:

Ինչ վերաբերում է այն պատճառներին, թե ինչու կինն օգնություն չի փնտրել վերոնշյալ հաստատություններում, ապա Աղյուսակ 7.6-ում ամփոփված տվյալները հակված են ցույց տալու, որ այս խմբի կանանց կեսից ավելին ինքն էլ չգիտի, թե ինչու (կամ չի պատասխանել) չի դիմել որևէ հաստատություն օգնություն ստանալու համար: Իսկապես, միակ ամենամեծ ցուցանիշը (55.6%) գրանցվել է «չգիտեմ, պատասխան չկա» տարբերակի դեպքում: Ակնհայտ է, որ շատ կանայք երկար չեն մտածել նշված հաստատություններ դիմելու տարբերակի մասին, որի պատճառներից մեկը, *inter alia*, այնպիսի մտածելակերպի պակասն է, որ օգնություն ստանալու նպատակով նշված հաստատություններ կնոջ դիմելը լրիվ նորմալ երևույթ է:

Երկու այլ կարևոր պատճառներն են (ըստ հաջորդականության)՝ *մրահողությունը*, որ այս հաստատություններ դիմելով կինը վատ համբավ կրերի ընտանիքին (16.5%), և այն *ընկալումը*, որ բռնությունը, որին ինքը ենթարկվել է, «նորմալ է/լուրջ չէ» (12.3%):

Շատ ավելի ցածր է այն հարցվողների տոկոսը, ովքեր մատնանշել են երեխաներին կորցնելու վախը (7.8%), հետևանքների (ավելի շատ բռնության) վախը (6.5%)՝ իբրև վերոնշյալ հաստատություններից օգնություն չհայցելու պատճառներ:

Հարցվողների ընդամենը 4.3%-ն է նշել հետևյալ երկու պատճառները՝ «շփոթված էր/ամաչում էր/վախենում էր, որ չեն հավատա կամ իրեն կմեղադրեն» և «վախենում էր, որ հարաբերությանը վերջ կդնի»:

Աղյուսակ 7.6. Կնոջ՝ օգնության չդիմելու պատճառները

Երբևէ զուգրնկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց փոկոսային բաշխվածությունն ըստ կենսագրական բնութագրիչների, ովքեր սեռական զուգրնկերոջ կողմից ենթարկվել են բռնության և որևէ օգնության չեն դիմել (հանրագումարը գերազանցում է հարյուր փոկոսը, քանի որ մի քանի պատրասխան ընտրելու հնարավորություն էր տրված), (“...” 25-ից պակաս դեպքերի համար), (“[]” 25-49 դեպքերի համար):

		Չգիտի/պատասխան չկա	Սպանալիքներ/հետնանքներ/ավելի շատ բռնության վախճ	Բռնությունը նորմալ է/լուրջ չէ	Շփոթված էր/ամաչում էր/վախենում էր, որ չեն հավատա կամ իրեն կմեղադրեն	Հավատում էր, որ չեն օգնի/գիտեր մեկ այլ կնոջ, որին չէին օգնել	Վախենում էր, որ հարավերությանը վերջ կդնի	Վախենում էր կորցնել երեխաներին	Վատ համբավ կբերեր ընտանիքին	Այլ	Ընդամենը %	Կանանց թիվը
Տարիք	15-24		3
	15-19		1
	20-24		2
	25-34		24
	35-44	63.1	7.6	8.0	0.7	0.0	1.4	6.9	9.0	12.6	100.0	64
	45-59	53.6	5.0	17.1	6.2	1.0	4.2	8.0	16.7	3.5	100.0	113
Բնակության վայր	Քաղաքային	57.9	8.2	6.3	5.8	0.8	4.4	8.6	17.1	7.4	100.0	136
	Երևան	[52.4]	[7.1]	[9.4]	[4.7]	[0.0]	[2.6]	[12.1]	[25.5]	[8.1]	[100.0]	41
	Այլ քաղաքային	60.2	8.7	5.0	6.3	1.2	5.3	7.1	13.5	7.2	100.0	95
	Գյուղական	51.1	3.2	24.3	1.1	0.0	4.0	6.0	15.2	4.7	100.0	68
Անունական կարգավիճակ	Երբևէ չամուսնացած											
	Ներկայումս ամուսնացած	57.7	4.2	14.9	1.3	0.0	3.1	5.1	15.6	8.1	100.0	159
	Նախկինում ամուսնացած	[48.3]	[14.8]	[3.3]	[14.7]	[2.6]	[8.4]	[17.3]	[19.4]	[0.9]	[100.0]	45
Երեխաների թիվը	0		8
	1-2	53.1	6.0	13.5	5.2	0.9	6.1	3.7	14.7	8.4	100.0	126
	3+	55.3	8.3	11.4	3.0	0.0	1.4	5.2	21.4	3.9	100.0	70
Կրթություն	Կրթություն չի ստացել											
	Ընդհանուր տարրական		17
	Ընդհանուր միջնակարգ	60.6	4.2	13.7	5.5	1.1	6.1	6.3	13.7	4.0	100.0	105
	Միջին մասնագիտական	55.5	7.6	15.5	4.0	0.0	2.8	4.6	16.7	3.5	100.0	56
	Բարձրագույն	[51.2]	[5.8]	[2.1]	[2.4]	[0.0]	[0.0]	[22.0]	[18.0]	[27.6]	[100.0]	26
Զբաղվածություն	Չաշխատող	66.4	7.5	9.7	3.2	0.0	3.8	5.3	15.6	2.9	100.0	109
	Աշխատող	36.4	3.4	19.2	9.3	2.1	6.9	14.1	12.5	16.6	100.0	55
	Սեզոնային աշխատանք	[51.5]	[8.3]	[10.1]	[0.2]	[0.0]	[2.1]	[6.0]	[24.7]	[2.9]	[100.0]	39
	Այլ		1
Ընդամենը		55.6	6.5	12.3	4.3	0.6	4.3	7.8	16.5	6.5	100.0%	204

Հետաքրքիր է, որ «հաստատությունը (հաստատությունները) չի (չեն) օգնի, կամ գիտեր մեկ այլ կնոջ, որին չէին օգնել» նկատառումը որպես պատճառ չի ընկալվել (այն կազմում է պատասխանների հազիվ 06.%-ը): Չնայած որ մյուս պատճառները, որոնք ըստ հարցվողների համարվել են լուրջ, կարող են սովորել գցել այս պատճառի վրա, այնուամենայնիվ վերջինիս նման ծայրահեղ ցածր ցուցանիշը հիմք է ստեղծում առնվազն երկու եզրահանգումների համար: Նախ, կարող է թվալ, որ հարցվողները համապատասխան գիտելիքներ և փորձառություն չունեն վերը նշված հաստատությունների հետ կապ հաստատելու առումով: Երկրորդ, ամեն դեպքում չի թվում, թե նրանց մոտ այդ հաստատությունների բացասական պատկեր է ձևավորված: Այսպիսով, նշված հաստատությունների համար նախադրյալներն այնքան էլ վատ չեն, և եթե նրանք գիտակցված ջանքեր գործադրեն արդյունավետ օգնություն ցուցաբերելու ուղղությամբ, ապա արագ կարող են լավ հեղինակություն և հանրային վստահություն ձեռք բերել:

Անհրաժեշտ է նշել, որ որևէ կայուն օրինաչափություն չի դիտարկվում, երբ տվյալները վերլուծվում են ըստ կենսագրական բնութագրիչների: Տվյալները հստակ ցույց են տալիս, որ ոչ մի գործոն չի կարող վստահելի կանխորոշիչ դեր խաղալ այս դեպքում:

Այսպես, օրինակ, «շփոթված էր/ամաչում էր/վախենում էր, որ չեն հավատա կամ իրեն կմեղադրեն» պատճառը բարձրագույն կրթությամբ կանանց ավելի քիչ տոկոսի համար է կարևոր, քան՝ կրթական ցածր մակարդակ ունեցողների (2.4%-ը՝ միջին մասնագիտական կրթության 4.0%-ի և ընդհանուր միջնակարգ կրթության 5.5%-ի դիմաց): Գուցե թվա, որ ավելի կրթված կանայք կարող են ավելի լավ դիմակայել հասարակության ճնշումներին, որոնք բխում են կարծրատիպերից: Սակայն «ընտանիքին վատ համբավ բերելու» առումով պատկերը հայելային է, քանի որ այն որպես պատճառ նշել է բարձրագույն կրթությամբ կանանց 18.0%-ը, մինչդեռ մյուս երկու խմբերի դեպքում այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 16.7% և 13.7%:

Հատուկ պատճառներ նշող ներկայումս ամուսնացած կանանց տոկոսը կայուն ցածր է 1.5-3 անգամ նախկինում ամուսնացած կանանց համեմատությամբ: Սակայն պատկերը լիովին հակառակն է բռնությունը «նորմալ» համարվելու դեպքում, հետևաբար չի համապատասխանում վերոնշյալ օրինաչափությանը:

Գյուղաբնակ կանայք էապես ավելի քիչ են մտահոգված «ավելի շատ բռնության, հետևանքների կամ շփոթված լինելու» պատճառներով՝ քաղաքաբնակ կանանց համեմատությամբ, համապատասխանաբար՝ 3.2%-ը՝ 8.2%-ի դիմաց և 1.1%-ը՝ 5.8%-ի դիմաց, կամ ընտանիքին վատ համբավ բերելու առումով (15.2%-ը՝ 17.1%-ի դիմաց): Միևնույն ժամանակ այն կանանց տոկոսը, ովքեր բռնության մակարդակը «նորմալ» են համարում, գրեթե չորս անգամ բարձր է գյուղաբնակների շրջանում՝ քաղաքաբնակների համեմատությամբ (6.3%):

Թվում է՝ տարբեր պատճառների նկատմամբ շատ անհատական վերաբերմունք է դրսևորվում: Հատկապես պետք է մատնանշել, որ այս ոլորտում քաղաքականություն մշակողները, ծառայություններ մատուցողները և մասնագետները կարող են ներկայացված տվյալներից հասկանալ, որ անհատական մոտեցումը պետք է հատկապես կարևորվի, և վերոնշյալ պատճառներին անդրադարձող ռազմավարությունները պետք է հիմնականում քննարկվեն ըստ առանձին դեպքերի:

ԲՈՆՈՒԹՅԱՄԲ ՈՒՂԵԿՑՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱԳԵՍ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ, ԿԱՄ ԴՐԱՆՔ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ներընտանեկան զոհերին առավել արդյունավետ օգնություն և օժանդակություն տրամադրելու համար կարևոր է իմանալ, թե ինչ պատճառով են նրանք ժամանակավորապես կամ առհավետ հրաժարվել բռնի հարաբերություններից, ինչու են նրանք հետո վերադարձել կամ ինչու են նախընտրել պահպանել այդ հարաբերությունները: Կարևոր է նաև իմանալ, ուր է գնացել բռնության ենթարկված կինը, երբ որոշել է թեկուզ ժամանակավորապես հրաժարվել բռնի հարաբերություններից:

Ինչպես երևում է Աղյուսակ 7.7-1-ում ամփոփված տվյալներից, բռնի հարաբերություններ ունեցող

կանանց ընդամենը 19.9%-ն է (կամ մոտավորապես յուրաքանչյուր հինգից մեկը) ժամանակավորապես կամ առհավետ հեռացել զուգընկերոջից:

Աղյուսակ 7.7 Կանայք, ովքեր հեռացել են կամ չեն հեռացել բռնացող զուգընկերոջից

Բռնի հարաբերություններում սպորող երբևէ զուգընկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունը, ովքեր ժամանակավորապես կամ առհավետ հեռացել են բռնի զուգընկերոջից (“...” 25-ից պակաս դեպքերի համար), (“[]” 25-49 դեպքերի համար):

		Երբեք չի հեռացել	Հեռացել է	Կիրառելի չէ	Չգիտի/չի հիշում	Հրաժարվել է/պատասխան չկա	Ընդամենը %	Կանանց թիվը
Տարիք	15-24		4
	15-19		1
	20-24		2
	25-34	[47.5]	[32.3]	[21.3]	[0.0]	[0.0]	[100.0]	26
	35-44	61.7	30.5	3.0	5.7	0.0	100.0	72
	45-59	82.4	10.6	4.0	2.9	0.7	100.0	105
Բնակության վայր	Քաղաքային	64.4	26.4	5.1	5.1	0.6	100.0	124
	Երևան	64.3	16.4	9.6	6.2	0.0	100.0	62
	Այլ քաղաքային	64.5	31.5	0.5	4.1	1.3	100.0	62
	Գյուղական	84.7	7.3	6.7	1.0	0.0	100.0	83
Ամուսնական կարգավիճակ	Ներկայումս ամուսնացած	81.4	14.0	3.6	1.0	0.0	100.0	152
	Նախկինում ամուսնացած	43.7	36.1	11.5	10.2	1.4	100.0	55
Երեխաների թիվը	0		7
	1-2	67.4	25.9	5.8	2.6	0.0	100.0	121
	3+	76.0	36.1	6.0	5.1	1.0	100.0	79
Կրթություն	Ընդհանուր տարրական		18
	Ընդհանուր միջնակարգ	83.5	11.6	4.1	0.8	0.8	100.0	102
	Միջնակարգ մասնագիտական	64.4	27.3	4.5	3.8	0.0	100.0	61
	Բարձրագույն	[41.7]	[42.2]	[13.4]	[9.6]	[0.0]	[100.0]	26
Զբաղվածություն	Չաշխատող	77.6	17.8	2.2	3.0	0.0	100.0	105
	Աշխատող	52.7	29.8	13.4	5.1	0.0	100.0	63
	Սեզոնային աշխատանք	[85.6]	[8.1]	[3.1]	[2.2]	[2.1]	[100.0]	37
	Այլ		2
Ընդամենը		71.4	19.9	5.7	3.5	0.4	100.0%	207

Բռնի զուգընկերոջից հեռացող կանանց տոկոսը նվազում է տարիքին զուգահեռ: Եթե 25-34 և 35-44 տարիքային խմբերում բռնի զուգընկերոջը լքած կանանց մասնաբաժինները համապատասխանաբար կազմում են [32.3%] և 30.5%, ապա 45-59 տարեկան կանանց դեպքում 10.6% է:

Ինչպես ակնկալվում էր, գոնե ժամանակավորապես իրենց բռնի զուգընկերոջը լքած գոհերի տոկոսը զգալիորեն ավելի բարձր է նախկինում ամուսնացած, քան ներկայումս ամուսնացած կանանց

շրջանում (համապատասխանաբար՝ 36.1% և 14.0%):

Ինչ վերաբերում է բնակության վայրի գործոնին, ապա զարմանալի չէ, որ գյուղական բնակավայրերի կանայք ավելի քիչ են հակված հեռանալու տանից, քան քաղաքում բնակվողները (համապատասխանաբար՝ 7.3% և 26.4%): Սակայն զարմանալի է, որ այլ քաղաքային բնակավայրերի կանայք գրեթե երկու անգամ ավելի են հակված հեռանալու զուգընկերոջից՝ Երևանում բնակվողների համեմատությամբ (համապատասխանաբար՝ 31.5% և 16.4%):

Կրթական մակարդակը նշանակալի ազդեցություն ունի կնոջ՝ տանից հեռանալու որոշման վրա: Կրթական գործոնի ազդեցությունը հատկապես մեծ է, երբ համեմատվում են ընդհանուր միջնակարգ և բարձրագույն կրթությամբ կանանց հարցման տվյալները: Այսպես, առաջինի դեպքում ցուցանիշը 11.6% է, մինչդեռ երկրորդի դեպքում այն կազմում է [42.2%], իսկ միջնակարգ մասնագիտական կրթությամբ կանայք տեղ են զբաղեցնում դրանց երկուսի միջև (27.3%):

Երբ կինը հեռանում է, որոնք են նրան այդ քայլին դրդող պատճառները:

Ինչպես վկայում են Աղյուսակ 7.8-ի տվյալները, բռնությունը «այլևս չէր կարող հանդուրժել» պատճառը հստակ ամենահզոր խթանն է կնոջ համար, որպեսզի նա հեռանա իր բռնի զուգընկերոջից: Այդ պատճառը ցուցակում գրավում է առաջին տեղը՝ 71.6%: Այս խմբում հարցվողների 17.8%-ը հեռացել է, որովհետև տեսել է, որ երեխաները տառապում են: Պատճառ է նաև, երբ կինը լքել է իր զուգընկերոջը, որովհետև վերջինս սպառնացել կամ խփել է երեխաներին (7.4%): Հարցվողների գրեթե միևնույն տոկոսը (7.7%) հեռացել է, որովհետև բռնի զուգընկերը ծանր վնասվածք է հասցրել:

Աղյուսակ 7.8. Կնոջ՝ վերջին անգամ տանից հեռանալու պատճառները

Բռնի հարաբերություններում ապրող երբևէ զուգընկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց փոկոսային բաշխվածությունը, ովքեր ժամանակավորապես կամ առհավելք հեռացել են բռնի զուգընկերոջից (հանրագումարը գերազանցում է հարյուր փոկոսը, քանի որ մի քանի պատասխան ընտրելու հնարավորություն էր տրված):

	Ոչ մի հատուկ պատահար	Այլևս չէր կարող հանդուրժել	Վատ մտավածք է ստացել	Անուսինը սպանացել է կամ փորձել է սպանել իրեն	Անուսինը սպանացել է կամ խփել է երեխաներին	Տեսավ, որ երեխաները տառապում են	Տանից դուրս են շարժել	Վախենում էր, որ անուսինը կսպանի իրեն	Այլ	Կանանց թիվը, 100%
Ընդամենը, %	14.1	71.6	7.7	3.7	7.4	17.8	3.0	4.5	1.9	52

Այն կանանց տոկոսը, ովքեր հեռացել են, որովհետև վախեցել են, որ զուգընկերը կսպանի իրենց (4.5%) կամ որովհետև նա սպառնացել է կամ փորձել է սպանել իրենց (3.7%), կամ տանից դուրս են շարժել (3.0%), տեղ են զբաղեցնում ցուցակի վերջում:


Չնայած որ հարցը կոնկրետ տրվել է տանից վերջին անգամ հեռանալու պատճառը պարզելու նպատակով, այնուամենայնիվ արդյունքում բռնության պատմությունները և ֆիզիկական բռնության կրկնվող գործողություններն են նկարագրվել: Այս փաստն օգնում է բացատրել, թե ինչու հարցվողների 14.1%-ը չի նշել առանձին դիպված, ինչի պատճառով որոշել է հեռանալ: Նրանք ծանոթ են եղել հակասության զարգացմանը, քանի որ բռնության օրինաչափությունը սովորաբար նույնն է, և հավանաբար զգացել են, որ իրավիճակը հանգելու է բռնության: Ուստի նրանք կանխել են այդ բռնությունը՝ հեռանալով ավելի վաղ, քանի դեռ հակասությունը բռնության փուլի չի հասել:

Պարզվում է, որ երբ բռնության ենթարկված կինն իսկապես հեռանում է բռնի զուգընկերոջից, Հայաստանում նա գնալու վայրի շատ տարբերակներ չունի:

Ինչպես վկայում են Գծապատկեր 7.2-ի տվյալները, կանայք հիմնականում (68.0%) ընտրել են ավանդական և հավանաբար միակ հիմնավոր և մատչելի տարբերակը՝ գնալով իրենց բարեկամների մոտ: Հիմնականում սրանք հայրական տներն են:

Գծապատկեր 7.2. Ուր են գնացել ներընտանեկան բռնության զոհերը, երբ վերջին անգամ հեռացել են տանից

Բռնի հարաբերություններում ապրող երբևէ զուգընկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց (52 կին) տոկոսային բաշխվածությունը, ովքեր ժամանակավորապես կամ առհավելք հեռացել են բռնի զուգընկերոջից, և գնացել են:



Այս խմբում յուրաքանչյուր տասը կանանցից միայն մեկն է ապաստան գտել իր ընկերների կամ հարևանների մոտ, ինչն ակնհայտորեն ժամանակավոր լուծում է: Հարցման մասնակիցները ամուսնու բարեկամների մոտ գնալը որպես տարբերակ չեն դիտարկել:

Կանանց 13.3%-ն այլ տեղ է ընտրել: Ամեն դեպքում դա ապաստարան, եկեղեցի, հյուրանոց (կամ վարձով տուն) կամ փողոց չի եղել:

Աղյուսակ 7.9-ի տվյալները ցույց են տալիս, որ այս խմբում կանանց գրեթե կեսից ավելին բռնի զուգընկերոջից հեռանում են ավելի պակաս, քան մեկ ամսով, իսկ 7.0%-ը՝ մեկ ամսից ավելի երկար ժամանակով:

Աղյուսակ 7.9. Ներընտանեկան բռնության զոհերն ինչքան ժամանակով են հեռացել զուգընկերոջից վերջին անգամ

Բռնի հարաբերություններում ապրող երբևէ զուգընկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունը, ովքեր իրենց բռնի զուգընկերոջից հեռացել են հետևյալ ժամանակահատվածով:

	Մեկ ամսից պակաս	Մեկ ամիս կամ ավելի	Չի վերադարձել	Կանանց թիվը, 100%
Ընդամենը, %	55.4	7.0	37.6	52

Այնուամենայնիվ, հետաքրքիր է, որ կանանց մեկ երրորդից ավելին (37.6%) զուգընկերոջ մոտ չի վերադարձել: Սա բավականին բարձր տոկոս է՝ նկատի առնելով այն բազմաթիվ գործոնները, որոնք նման որոշում կայացնելիս կնոջ համար հակախթան են հանդիսանում, այդ թվում նաև տնտեսական անկախության պակասը, բնակարանի հետ կապված երկարաժամկետ վստահելի տարբերակների բացակայությունը, հասարակական ճնշումը և այլն:

Աղյուսակ 7.10-ում ամփոփված տվյալներից հետևում է, որ բռնի զուգընկերոջ մոտ կինը հիմնականում վերադառնում է երեխաների և ընտանիքի պատճառով (44.5% և 33.3%): Մեկ այլ դրդապատճառ է, որ նրանք մտածել են, թե զուգընկերը կփոխվի (21.5%): Սոցիալական և տնտեսական հանգամանքները, որոնք ստիպել են կանանց վերադառնալ, կազմում են 9.7%: «Ներեց նրան» պատճառը նույնքան նշանակալի է (10.7%):

Աղյուսակ 7.10. Կնոջ վերադարձի պատճառները

Բռնի հարաբերություններում ապրող երբևէ զուգրնկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց փոկոսային բաշխվածությունը, ովքեր բռնի զուգրնկերոջից հեռանալուց հետո ի վերջո վերադարձել են (համապատասխան գերազանցում է հարյուր փոկոսը, քանի որ մի քանի պատասխան ընտրելու հնարավորություն էր փրված) (“/” 25-49 դեպքերի համար):

	Չէր ուզում լքել երեխաներին	Ամուսնության սրբությունը	Հանուն ընտանիքի/տանիքի/երեխաների	Միտում էր նրան	Նա խնդրեց իրեն վերադառնալ	Ընտանիքն ասեց վերադառնա	Ներքեց նրան	Մտածեց ամուսինը կփոխվի	Չէր կարող մնալ այնտեղ (որ գնացել էր)	Կանանց թիվը
Ընդամենը	[44.5]	[7.7]	[33.3]	[0.9]	[5.1]	[6.0]	[10.7]	[21.5]	[9.7]	33

Հատկանշական է, որ սերը, ամուսնության սրբությունը և կնոջ տուն վերադառնալու ամուսնու խնդրանքը քիչ կշիռ ունեն (համապատասխանաբար՝ 0.9%, 7.7% և 5.1%), ինչպես նաև ընտանիքի ասելով վերադառնալը (6.0%):

Էապես այլ պատկեր է ի հայտ եկել, երբ ներընտանեկան բռնության զոհերին հարցրել են, թե ինչու են նրանք պահպանել իրենց բռնի հարաբերությունները: Աղյուսակ 7.11-ի տվյալները հստակ ցույց են տալիս, որ հետևյալ երկու պատճառներն են կազմում հիմնական կշիռը, իսկ մյուս երկուսն ունեն փոքր-ինչ պակաս կշիռ:

Աղյուսակ 7.11. Բռնացող զուգրնկերոջ հետ կանանց մնալու պատճառները

Բռնի հարաբերություններում ապրող երբևէ զուգրնկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց փոկոսային բաշխվածությունը, ովքեր չեն հեռացել բռնի զուգրնկերոջից (համապատասխան գերազանցում է հարյուր փոկոսը, քանի որ մի քանի պատասխան ընտրելու հնարավորություն էր փրված):

	Չէր ուզում լքել երեխաներին	Ամուսնության սրբությունը	Չէր ուզում ընտանիքն իսայտառակել	Չէր կարող ապահովել երեխաներին	Միտում էր նրան	Չէր ուզում լինել միայնակ	Ընտանիքն ասեց մնա	Ներքեց նրան	Մտածեց ամուսինը կփոխվի	Տեղ չունեիր գնալու	Բռնությունը նորմալ է/ լուրջ չէ	Այլ	Կանանց թիվը
Ընդամենը, %	25.7	25.9	20.7	3.8	9.8	7.7	1.3	19.1	12.5	3.0	9.9	6.1	180

Այդ պատճառներն են՝ «ամուսնության սրբությունը» (25.9%), երեխաներին լքել չցանկանալը (25.7%), ընտանիքին չիսայտառակելու ցանկությունը (20.7%) և զուգրնկերոջը ներելու որոշումը (19.1%): Բոլոր այս պատճառները հիմնավորված են հարցվողների կողմից ընտանիքի հանդեպ վերապահած մեծ արժեքով:

Ընտանիքին վերաբերող մի շարք այլ պատճառներ նույնպես կարևոր են բավականին մեծ թվով կանանց համար: Դրանք են՝ հավատը (կամ ավելի շուտ հույսը), որ զուգրնկերը կփոխվի (12.5%), սերը զուգրնկերոջ նկատմամբ (9.8%) և միայնակ չմնալու ցանկությունը (7.7%):

Հավանաբար ընտանիքը պահպանելու որոշումը հարցվողներից մի քանիսի համար շարժառիթ է ծառայել համարելու, որ բռնությունը, որին իրենք ենթարկվել են, այնքան էլ լուրջ չի եղել (9.9%):

Այսպիսով, ընտանիքի գործոնն առաջնային է գրեթե այն բոլոր նկատառումներում, որոնք ստիպում են կնոջը դիմանալ բռնի զուգրնկերոջը, քանի որ մնացած պատճառները նշող հարցվողներն աննշան մասնաբաժին են կազմում: Այսպես, պատասխանների մեջ երեխաներին ինքնուրույն ապահովել չկարողանալը կազմում է ընդամենը 3.8%, սպառնալիքները՝ 3.0%, իսկ ընտանիքի կողմից կնոջ նկատմամբ ճնշումը՝ 1.3%:

Կարելի է եզրակացնել, որ ներընտանեկան բռնության զոհերին օգնելու ցանկացած ջանքի գոր-

ծաղրման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ *ընտանիքն ամենամեծ գերակայությունն է բռնության ենթարկված կանանց հիմնական մասի համար*, ովքեր նույնիսկ պահպանում են բռնի հարաբերությունները՝ ի շահ երեխաների և ընտանիքի: Հետևաբար, ցանկացած միջամտություն, ծառայություն և օգնության այլ ձև պետք է փորձի շահառու կանանց օգնել պահպանելու իրենց ընտանիքները և նրանց հնարավորություն տա փոխելու իրավիճակն ու զարգացումը և ճեղքելու բռնության արատավոր շրջանը:

Կանանց ընկալմամբ այժմ այդպես չի արվում, կամ առնվազն այդպես չի արվում: Աղյուսակ 7.12-ի տվյալներն աներկբայորեն ցույց են տալիս, որ կանանց առաջարկված օգնությունը նրանց կողմից համարվում է ոչ համարժեք և ոչ տեղին: Բնական է, որ հիմնականում նրանք չեն ուզում նման օգնություն ստանալ: Կասկածի տակ է դրվում նույնիսկ ընտանիքը, քանի որ կանանց միայն 11.7%-ը (այսինքն մոտավորապես տասից մեկը) կցանկանար նրանից ավելի շատ օգնություն ստանալ:

Աղյուսակ 7.12. Անհատներ կամ հաստատություններ, որոնք ավելի շատ օգնություն կարող էին ցուցաբերել

Բռնի հարաբերություններում ասyrող երբևէ զուգընկեր ունեցած 15-59 տարեկան այն կանանց տոկոսային բաշխվածությունը, ովքեր կուզենային կամ չէին ուզենա դիմել հետևյալ անհատներին կամ հաստատություններին ավելի շատ օգնություն ստանալու համար:

Ավելի շատ օգնություն	Ընտանիքը	Իր մայրը	Ամուսնու մայրը	Առողջապահական կենտրոնը	Ոստիկանությունը	Քահանան/կրոնական առաջնորդը
Կուզենար	11.7	7.3	2.9	2.1	0.8	1.4
Չէր ուզենա	88.3	92.7	97.1	97.9	99.2	98.6
Ընդամենը%	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թիվը	225	225	225	225	225	225

Անհրաժեշտ է նաև նշել, որ հարցվողների 68.6%-ը որևէ օգնություն ստանալ չի ցանկացել:

Տվյալները վկայում են, որ առողջապահական կենտրոնների, ոստիկանության և կրոնական առաջնորդների ու դրանց արդյունավետության նկատմամբ վստահությունը ցածր է՝ տեսականորեն ներընտանեկան զոհերին օգնություն և պաշտպանություն ապահովելու առումով:

Հետազոտության արդյունքները մտածելու տեղիք են տալիս և տեղեկատվություն տրամադրում քաղաքականություն մշակողներին, ոլորտի մասնագետներին և մյուս շահագրգիռ կողմերին խնդրի հիմնական ասպեկտների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս գլխում ամփոփված է հարցման հիմնական արդյունքների գնահատման և համադրման արդյունքը:

ՀԱՐՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԿԱՆԱՆՑ ԴԵՄ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշում են հարցման մասնակիցները, կանանց դեմ բռնությունը *սովորական երևույթ է Հայաստանում* և *ինտիմ զուգընկերոջ կողմից բռնությունն ամենատարածվածն է* ֆիզիկական և հոգեբանական բռնությունների, վերահսկողական վարքի և հավանաբար նաև սեռական բռնությունների մեջ:

Ստորև ներկայացված են որոշ տվյալներ ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության տարբեր դրսևորումների վերաբերյալ, որոնց ենթարկվել են *երբևէ զուգընկեր ունեցած կանայք* իրենց կյանքի ընթացքում որևէ պահի (կյանքի ընթացքում ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության տարածվածություն)

- Կանանց 61.0%-ը ենթարկվել է վերահսկողական վարքի:
- Կանանց 25.0%-ը ենթարկվել է հոգեբանական բռնության/չարաշահման:
- Կանանց 8.9%-ը ենթարկվել է ֆիզիկական բռնության:
- Կանանց 3.3%-ը ենթարկվել է սեռական բռնության:
- Կանանց 9.5%-ը ենթարկվել է ֆիզիկական և/կամ սեռական բռնության:

Ինչ վերաբերում է ամուսին կամ այլ ինտիմ զուգընկեր չհանդիսացող բնաբարների կողմից ֆիզիկական բռնությանը և հարկադիր սեռական հարաբերություններին, որոնց հարցմանը մասնակցած բոլոր կանայք կարող էին ենթարկված լինել 15 տարեկանից հետո, ապա պատկերը հետևյալն է՝

- Կանանց 2.3%-ը ենթարկվել է ֆիզիկական բռնության:
- Կանանց 0.1%-ը հարցազրույցի ընթացքում ընդունել է, որ ենթարկվել է հարկադիր սեռական հարաբերությունների:
- Միևնույն ժամանակ, պատասխանելով միևնույն հարցին անանուն՝ կանանց 9.2%-ը նշել է սեռական շահագործման մասին մանուկ և վաղ չափահասության շրջանում (երբ նրանք 15 տարեկանից փոքր էին):
- Հարցման տվյալները ցույց են տալիս, որ հարցմանը մասնակցած կանանց միայն 0.1%-ն է ենթարկվել ֆիզիկական բռնության ուսուցիչների կողմից: Հայաստանում իրականացված մի շարք ուսումնասիրություններ (չնայած դրանք ներկայացուցչական չեն) ցույց են տալիս, որ Հայաստանի դպրոցներում ֆիզիկական բռնությունը հազվադեպ երևույթ չէ⁶⁸:

Ինչ վերաբերում է տնտեսական բռնության տարածվածությանը, *ներկայումս-զուգընկեր ունեցող կանանց հետք* կապված հարցումը բացահայտել է, որ

- Նրանց 7.4%-ը դադարել է աշխատել կամ հրաժարվել է աշխատելուց, քանի որ նրանց զուգընկերները չեն ուզել, որ իրենք աշխատեն:

⁶⁸ Դպրոցահասակ երեխաների առողջապահական վարքը: Դպրոցում անցկացված առողջապահական հարցման ամփոփիչ զեկույց: Երևան, Արաբկիրի Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ և ՄԱՀՄ/UNICEF, 2007թ.: Հայաստանի Հելսինկյան կոմիտեի անցկացրած մոնիտորինգի զեկույցները տե՛ս «Դիտորդ» պարբերական, 2008թ. հուլիս-օգոստոս, # 1(#39); «Դիտորդ» պարբերական, 2009թ., ապրիլ-հունիս, # 6-7(#44-45): *Մարդու իրավունքները Հայաստանի շրջաններում*, (# 4): Երևան. ՀՀԿ, 2010թ., էջ 41-61: *Գիտելիքն ընդդեմ բռնության*, Երևան. ՀՀԿ, 2010թ.:

- Նրանց 8.7%-ն ասել է, որ իրենց եկամուտը/տնտեսածը վերցրել են իրենց զուգընկերները՝ հակառակ իրենց կամքին:
- *Երբևէ զուգընկեր ունեցած կանանց 60.9%-ը* չէր աշխատում: (Այս հանգամանքը կարող է խնդրի մի մասը լինել, քանի որ բազմաթիվ հետազոտություններից հայտնի է, որ ընտանեկան բռնության զոհ դարձած այն կանայք, ովքեր տնտեսապես կախված են իրենց զուգընկերներից, դժվարանում են վերջ դնել բռնարար փոխհարաբերություններին⁶⁹):
- Տվյալները ցույց են տալիս, որ կանանց դեմ բռնությունն անբարենպաստ ազդեցություն ունի կանանց առողջության և նրանց սոցիալական, հոգեկան, ֆիզիկական և տնտեսական բարեկեցության վրա:
- *Երբևէ զուգընկեր ունեցած կանանց 2.1%-ը* և երբևէ *զուգընկեր ունեցած և ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց 22.1%-ը* առնվազն մեկ անգամ տուժել է (մխասվածք է ստացել) ինտիմ զուգընկերոջ կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության հետևանքով:
- Երբևէ զուգընկեր ունեցած և հղիություն ունեցած կանանց 3.3%-ը ֆիզիկական բռնության է ենթարկվել ինտիմ զուգընկերոջ կողմից հղիության ընթացքում:
- Հարցմանը մասնակցած կանանց տոկոսը, ովքեր ունեն գենդերային բռնության համապատասխան ընկալում, խիստ տարբերվում է՝ ելնելով բռնության ձևից և նրանց կենսագրական տվյալների բնույթից: Այնուհանդերձ, այս տարբերություններից անկախ, կանանց մեծամասնությունը ունի գենդերային բռնության և դրա բոլոր դրսևորումների մասին համարժեք ընկալում:
- Որքան բարձր է կրթվածության մակարդակը, այնքան ավելի մեծ է հարցման մասնակիցների տոկոսը, ովքեր կանանց ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը ճշգրիտ որակում են որպես գենդերային բռնություն:
- Ներկա «ամուսնական կարգավիճակը» ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության բոլոր դրսևորումների լավագույն ցուցանիշն է. իրենց նկատմամբ բռնության մասին նշած կանանց տոկոսն առնվազն 1.3, 3-4 և 1.9 անգամ համապատասխանաբար ցածր է հոգեբանական, ֆիզիկական և սեռական բռնություններից տուժած, ներկայում զուգընկեր ունեցող կանանց մոտ՝ ի տարբերություն նախկինում զուգընկեր ունեցած կանանց:
- Կրթությունը և տարիքը բռնության երեք ձևերը բավականին ճշգրիտ արտացոլող գործոններ են: Դրանք ցույց են տալիս կայուն կապ: Կրթության դեպքում, սեռական բռնության գերակշռության և զոհի *կրթության մակարդակի* միջև հակառակ հարաբերակցությունը գրեթե միանշանակ է: Տարիքի դեպքում՝ առաջին երեք տարիքային խմբերի մոտ նկատվում է բռնության հստակ աճ, իսկ չորրորդ խմբի մոտ՝ թեթև նվազում:
- Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ կանայք խոցելի են բռնության բազմաթիվ դրսևորումների նկատմամբ:
- Հարցումը հաստատում է ինտիմ զուգընկերոջ կողմից ֆիզիկական և սեռական բռնությունների զգալի փոխհատումը: Արդյունքները ցույց են տալիս, որ երբևէ զուգընկեր ունեցած կանանց խմբի մոտ սեռական բռնությունը հաճախ զուգակցվել է ֆիզիկական բռնության հետ:
- Հարցման մասնակիցների 3.3%-ը արձանագրում են սեռական, իսկ 2.9%-ը՝ սեռական և ֆիզիկական բռնության մասին:
- Երբևէ ֆիզիկական և/կամ սեռական բռնության ենթարկված կանանց միայն 4.3%-ն է ենթարկվել բացառապես սեռական բռնության, մինչդեռ 28.9%-ը բախվել է սեռական և ֆիզիկական բռնության հետ:
- Ֆիզիկական բռնության ենթարկված կանանցից յուրաքանչյուր հինգերորդը նաև սեռական բռնության զոհ է:

⁶⁹ St' u Violence against Women in France. Geneva: OMCT, 2003թ., էջ. 12.

- Կանանց ինտիմ զուգընկերների կողմից վերահսկող վարքի կայուն գերակշռումը հստակ ցույց է տալիս, որ հայրիշխանական սոցիալական և մշակութային կարծրատիպերն ու նորմերն արմատացած և տարածված են հասարակության մեջ:

Բ. ԻՆՏԻՄ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԲՈՆԻ ՎԱՐՔԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

- Հարցման մասնակիցների գրեթե կեսը (47.9%) մատնանշել է, որ իրենց նկատմամբ իրենց ինտիմ զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ցուցաբերման որևէ հատուկ պատճառ չի եղել:
- Պատճառները տարբեր են և առանձին պատճառների հարաբերական «կշիռը» կամ կարևորությունը փոփոխվում է շատ մեծ տիրույթում: Ըստ կարևորության դրանք բաժանվում են մի քանի խմբի՝
- *Խիստ անկարևոր* պատճառներ են դիտվում, երբ կինը անհնազանդ է եղել, կամ մերժել է սեռական հարաբերությունը կամ թերացել է կերակուր պատրաստելիս (համապատասխանաբար 2.5%, 3.4% և 3.1%):
- *Հարցման մասնակիցների ավելի մեծ փոկոսը* բռնի վարքի պատճառ է համարում տղամարդկանց աշխատավայրում դժվարությունները և իր ընտանիքում առկա խնդիրները (համապատասխանաբար 5.7% և 6.8%):
- Տղամարդու ագրեսիայի *էսպես բարձր գերակշռությունը* ծագում է անկայուն տնտեսական վիճակից, գործազրկությունից և ֆինանսական խնդիրներից. *հարցման յուրաքանչյուր փասներորդ մասնակիցը* մատնանշել է զուգընկերոջ գործազուրկ կամ խանդոտ լինելը, որպես նրա բռնի վարքի պատճառ (համապատասխանաբար 10.1% և 10.6%): *Դրամական խնդիրները* ևս որպես պատճառ զգալի թիվ են կազմում (18.2%):
- *Տղամարդու ոգելից խմիչք օգտագործելու հետ կապված խնդիրները առանձնանում* են, որպես բռնի վարքի միակ ամենակարևոր պատճառ: Հարցման մասնակիցների մեկ երրորդը (33.0%) բռնի վարքը կապում է հարբածության հետ:

Գ. ՄԻՋՍԵՐՆԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ

- Հարցմանը մասնակցած կանանց 6.0%-ը և 7.9%-ը երեխա ժամանակ ակնատես է եղել իր մոր հանդեպ ֆիզիկական բռնության կամ լսել էր դրա մասին:
- Կանանց զուգընկերներն ավելի բռնաբար են, եթե նրանց մայրերին ծեծել են ամուսինները. երբևէ զուգընկեր ունեցած կանանց շրջանում, ովքեր երբևէ ենթարկվել են ֆիզիկական բռնության իրենց ինտիմ զուգընկերոջ կողմից, ֆիզիկական բռնության ենթարկված մայրեր ունեցող զուգընկերների տոկոսը 8 անգամ ավելի բարձր է (20.9%), քան երբևէ զուգընկեր ունեցած այն կանանց շրջանում, ովքեր ինտիմ զուգընկերոջ կողմից երբևէ չեն ենթարկվել բռնության (2.6%):
- Նմանապես, այն ինտիմ տղամարդ զուգընկերները, ում մայրերին ծեծել են ամուսինները, տասն անգամ ավելի շատ են հակված ֆիզիկական բռնություն գործադրելու իրենց կանանց նկատմամբ (43.6%), քան նրանք, ում մայրերը ծեծի չեն ենթարկվել (4.5%) :
- Զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկված կանանց միայն 20%-ն է հակահարված տվել՝ ինտիմ զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնության ենթարկվելու պահին:

Դ. ԿԱՆԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՐԸ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ԵՎ ԱՄՈՒՄՆՈՒ ՍԵՌԱԿԱՆ «ԻՐԱՎՈՒՆԵՐԸ»

- Կանանց ընդամենը 7.7%-ն է այն կարծիքին, որ ընտանեկան խնդիրները (իսկ ընտանեկան բռնությունը առավել նուրբ հարց է) կարելի է քննարկել ընտանիքի անդամների շրջանակից դուրս այլ մարդկանց հետ:
- Կանանց 54.0%-ը չի համաձայնել, իսկ 31.1%-ը համաձայնել է այն ձևակերպմանը, որ օրենքը չպետք է միջամտի, քանի որ ընտանեկան բռնությունն անձնական խնդիր է:
- Հարցման արդյունքները հստակ մատնանշում են, որ հայ հասարակության տարբեր հատվածների շրջանում աստիճանաբար տարածում է գտնում այն ընկալումը, որ կանանց նկատմամբ բռնու-

թյունը մասնավոր խնդիր չէ, նույնիսկ երբ կատարվում է ընտանիքի ներսում, և որ պետությունը պարտավոր է միջամտել՝ վերացնելու և կանխելու բռնությունը, ու համապատասխան պաշտպանություն ապահովել գենդերային բռնության թիրախ դարձած կանանց համար:

- Կնոջը ծեծելու վերաբերյալ կանանց դիրքորոշումներն էապես կախված են հանգամանքներից և հարցվողի ծագման բնույթից: Գրեթե ոչ մի հանգամանք չի համարվում ընդունելի պատճառ կնոջը ծեծելու համար, բացառությամբ դավաճանության, քանի որ կանանց 34.3%-ը արդարացնում և ներում է այն ամուսնուն, որը ծեծում է իր կնոջը՝ բացահայտելով նրա դավաճանությունը:
- Որքան բարձր է կրթական մակարդակը, այնքան փոքր է հարցման այն մասնակիցների թիվը, ովքեր արդարացնում են ինտիմ զուգընկերոջ բռնությունը:
- Կանանց ճնշող մեծամասնությունը մերժում է ամուսնու սեռական իրավունքի գաղափարը, միայն 14.2%-ն է համաձայն այն ձևակերպման հետ, որ կնոջ պարտականությունն է սեռական հարաբերություն ունենալ իր ամուսնու հետ, նույնիսկ իր կողմից ցանկության բացակայության դեպքում:
- Կանանց 82.2%-ը համաձայնել է, որ կա առնվազն մեկ ծանրակշիռ պատճառ, որպեսզի ամուսնացած կինը մերժի սեռական հարաբերությունն իր ամուսնու հետ:

Ե. ՏՆՏԵՄԱԿԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ, ԻՆՔՆԱՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՊ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

- Կանանց հիմնական մասը *չունի* տնտեսական ապահովության, ինքնավստահության և ուժեղացման համար անհրաժեշտ (բավարար) ֆինանսական միջոցներ և ձեռնարկատիրական, աշխատանքային և սեփականատիրական հնարավորություններ:
- Չնայած արտադրության միջոցների տնօրինումը և վերահսկումը տնտեսական ինքնավստահության և ինքնուրույնության կարևոր ցուցիչներ են, ընդհանուր առմամբ կանայք չունեն այն տնտեսական միջոցները, որոնք բավարար են ձեռնարկատիրական գործունեության համար, հատկապես քաղաքային տարածքներում. գյուղական շրջաններում կանանց 2.8% - 9.0%-ը և քաղաքային շրջաններում կանանց 0.6%-ն է տնօրինում այդպիսի միջոցներ: Ուստի նրանց անկախությունն ու անկախ որոշումներ կայացնելու կարողությունը խիստ սահմանափակ են:
- Չնայած ինքնուրույն գումար վաստակելը կնոջ տնտեսական, մասնավորապես ֆինանսական կարգավիճակի համար կարևոր նշանակություն ունի, հարցմանը մասնակցած կանանց միայն 37.7%-ն է ընդգրկված եկամտաբեր գործունեության մեջ, մասնավորապես *շահութաբեր աշխատանքներում*: Այլ կերպ ասած, երեք կնոջից երկուսը դրամ չեն վաստակում աշխատանքի կամ այլ շահութաբեր գործունեության միջոցով, ուստի իրենց գոյությունը պահպանելու համար կախում ունեն մյուսներից՝ հիմնականում օժանդակություն ստանալով ինտիմ զուգընկերներից:
- Չնայած ավելի արդար և պակաս բռնի փոխհարաբերություններն ավելի հեշտությամբ են ձեռք բերվում և պահպանվում, երբ տղամարդու և կնոջ ստացած եկամուտների միջև տարբերությունը մեծ չէ, ներկայում զուգընկեր ունեցող և ինքնուրույն դրամ վաստակող կանանց միայն 19.4%-ն է արձանագրում, որ իր վաստակած գումարը, համեմատաբար շատ է կամ գրեթե հավասար զուգընկերոջ ստացածին:
- Կանանց տնտեսական ինքնուրույնությունից զրկելը կամ նրանց նկատմամբ տնտեսական բռնությունը բացահայտ է, երբ ինտիմ զուգընկերները վերցնում են նրանց եկամուտը կամ տնտեսած միջոցները նրանց կամքին հակառակ, կամ ստիպում դուրս գալ աշխատանքից կամ մերժել որևէ աշխատանքի առաջարկ: Հարցման տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում սա մեծ խնդիր չէ. ներկայում զուգընկեր ունեցող կանանց մոտավորապես 9.0%-ն է նշել, որ իր զուգընկերը երբևէ վերցրել է իր եկամուտը/տնտեսած միջոցները իր կամքին հակառակ (սովորաբար պատահել է մեկ կամ երկու անգամ) և ընդամենը 7.4%-ը՝ որ երբևէ հրաժարվել է աշխատանքից, որովհետև զուգընկերը չի ցանկացել, որ ինքն աշխատի:

Զ. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՆՈՋ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հարցման արդյունքները միանշանակ հաստատում են աշխարհում կատարված շատ ուսումնասիրությունների և հարցումների եզրահանգումներն այն մասին, որ գենդերային բռնությունը ոչ միայն մարդու իրավունքների և սոցիալական արդարության, այլև հանրային առողջության խնդիր է:

- Հարցման տվյալները հստակ ցույց են տալիս, որ բռնությունը անբարենպաստ ազդեցություն ունի կնոջ ֆիզիկական, հոգեկան և վերարտադրողական առողջության և նրա երեխաների հոգեկան առողջության վրա:
- Թեկուզև այդ ազդեցության աստիճանը խիստ տարբեր է, այնուամենայնիվ բնույթը գրեթե նույնն է բռնության բոլոր երեք ձևերի համար:
- Իրենց ընդհանուր առողջական վիճակը «գերազանց» կամ «լավ» գնահատող կանանց տոկոսը զգալիորեն ցածր է կանանց այն ենթախմբում, ովքեր ենթարկվել են բռնության, ի տարբերություն բռնության չենթարկված կանանց (1.5 անգամ պակաս հոգեբանական և 2 անգամ պակաս՝ ֆիզիկական ու սեռական բռնության դեպքում), մինչդեռ միևնույն խմբում իրենց առողջությունը «վատ» կամ «շատ վատ» որակող կանանց տոկոսը երկու անգամ ավելի մեծ է, քան բռնության չենթարկված կանանց շրջանում:
- Ազատ զբոսնելու հետ կապված խնդիրների մասին մատնանշող հարցման մասնակիցների տոկոսն ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր ենթարկվել են բռնության:
- Հարցման մասնակիցներից քնելու և ցավազրկման նպատակով հաճախ դեղամիջոցներ օգտագործելու մասին մատնանշողների տոկոսը զգալիորեն բարձր է այն կանանց շրջանում, ովքեր բռնության են ենթարկվել:
- Ուղիղ փոխկախվածություն կա անհատի առողջությանն առնչվող ախտանիշների (գլխացավեր, վատ օրվա, վատ քուն, ձեռքերի դող և այլն) և բռնության գործոնի միջև: Այսպիսով, ինչ վերաբերում է բռնության բոլոր երեք տեսակներին, այդ ախտանիշների մասին մատնանշող կանանց տոկոսը միջինը 1.5-2 անգամ ավելի բարձր է նրանց շրջանում, ովքեր ենթարկվել են բռնության, այն կանանց համեմատությամբ, ովքեր բռնության չեն ենթարկվել:
- Հոգեկան առողջությանն առնչվող պաթոլոգիական (ախտաբանական) նշանների հետ կապված, նշված ախտանիշներն ունեցող հարցվողների տոկոսն ավելի բարձր է այն կանանց շրջանում, ովքեր ենթարկվել են բռնության (2-3 անգամ ավելի բարձր է «հեշտությամբ վախեցող» և 3-4 անգամ «դժբախտ զգացող» կանանց շրջանում):
- Հոգեկան առողջության վրա բռնության գործոնի բացասական ազդեցության ամենադաժան նշանները սեփական կյանքին վերջ դնելու մտքերը կամ փորձերն են: Իրենց կյանքին վերջ դնելու մտքեր ունեցող հարցվողների տոկոսը 2.7, 6.4 և 8.9 անգամ ավելի բարձր է համապատասխանաբար այն կանանց մոտ, ովքեր ենթարկվել են հոգեբանական, ֆիզիկական և սեռական բռնության:
- Հոգեբանական բռնության ենթարկված և իրենց կյանքին վերջ դնելու մասին մտքեր ունեցող կանանց գրեթե կեսը, և ֆիզիկական ու սեռական բռնության ենթարկված և իրենց կյանքին վերջ դնելու մասին մտածող կանանց գրեթե երկու երրորդը ինքնասպանության փորձ են կատարել:
- Ինչ վերաբերում է ռիսկային վարքին, հատկապես ծխախոտի օգտագործումը շատ ավելի տարածված է բռնության ենթարկված կանանց շրջանում:
- Բռնության գործոնի և վերարտադրողական առողջության/ վերարտադրողական վարքի միջև հարաբերակցության առումով բացահայտվել է՝
- Բռնության ազդեցությունը հղիության վրա. հղիության արդյունքում մահացած երեխա ծննդաբերած կանանց տոկոսը հինգ անգամ ավելի է ֆիզիկական բռնության ենթարկված կանանց շրջանում: Արհեստական ճանապարհով հղիության ընդհատման պարագայում նման միջոցի դիմած կանանց տոկոսը միջինը 1.5 անգամ ավելի բարձր է բռնության բոլոր երեք տեսակների դեպքում:

- Բռնությունը նաև հզոր ռիսկային գործոն է՝ կապված անցանկալի հղիությունից խուսափելու և այդ նպատակով հակաբեղմնավորիչների օգտագործումը սահմանափակելու հետ. հակաբեղմնավորման որևէ միջոց օգտագործելուց հրաժարված և հղիությունից խուսափելու նպատակով կնոջ կողմից որևէ միջոցի կիրառումը արգելված ինտիմ գույքակերների տոկոսը 1.3-4.6 անգամ բարձր է բռնի գույքակերների շրջանում:
- Պահպանակի օգտագործումից հրաժարված ինտիմ գույքակերների տոկոսը 1.8-3 անգամ ավելի բարձր է այն տղամարդկանց շրջանում, ովքեր բռնության հակում ունեն: Նման դեպքերում բռնությունը գույքակցվում է անապահով և չպաշտպանված սեռական հարաբերությամբ, որը կարող է հանգեցնել ոչ միայն անցանկալի հղիության և դրա արհեստական ընդհատման, այլև սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների:
- Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ախտանիշներ (քոր, հեշտոցային արտադրություն) ունեցող կանանց տոկոսը 2 և ավելի անգամ մեծ է նրանց շրջանում, ովքեր ենթարկվել են բռնության՝ բռնության չենթարկվածների համեմատությամբ:
Բռնությունն անբարենպաստ ազդեցություն ունի այն երեխաների հոգեկան առողջության վրա, ում մայրերը բռնության են ենթարկվել: Հաճախակի մղձավանջներ ունեցող, ագրեսիվ և հաճախ գիշերամիզությամբ տառապող երեխաների տոկոսը համապատասխանաբար գրեթե 2, 3 և 1.5 անգամ ավելի է այն կանանց երեխաների շրջանում, ովքեր ենթարկվել են բռնության, ի տարբերություն բռնության չենթարկված կանանց երեխաների:

Է. ՈՐՈՇ ՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

Միջազգային, հատկապես ԱՀԿ/WHO-ի և ՄԱԲՀ/UNFPA-ի հետազոտությունների և հարցումների մի շարք կարևոր բացահայտումներ ընդունվել են որպես վարկածներ և փորձարկման ենթարկվել սույն հարցման ընթացքում: Արդյունքները խառն են: Հայկական իրականությունն ավելի հաճախ տարբերվում է:

1. ԱՀԿ/WHO-ի մի շարք հետազոտություններում ենթադրություն կա, որ ավելի բարձր կրթական աստիճան ունեցող կանայք ավելի շատ են ենթակա ինտիմ գույքակերների կողմից ֆիզիկական և սեռական բռնության: Հետազոտողները եզրակացնում են, որ ավելի կրթված, ուստիև ավելի ինքնուրույն կանայք հակված են ավելի վճռական դիմադրություն ցույց տալու հայրիշխանական նորմերին և ավանդույթներին: Վերահսկողությունը վերականգնելու փորձ կատարելիս նրանց գույքակերները կարող են դիմել բռնության⁷⁰:

Մեր հարցման տվյալները չեն հաստատում այս ենթադրությունը: Կնոջ կրթական մակարդակի և ֆիզիկական ու սեռական բռնության միջև հարաբերությունը հակադարձ է, այսինքն՝ կրթական ավելի բարձր մակարդակը նվազեցնում է ինտիմ գույքակերոջ կողմից բռնության ենթարկվելու վտանգը և դառնում է պաշտպանական գործոն:

Հնարավոր բացատրություններից մեկը, *այլոց թվում*, այն է, որ կրթությունը՝ առաջնորդելով դեպի հնարավորությունների մեծացում, անմիջապես չի վերածվում ինքնուրույնության: Այլ կերպ ասած՝ առավել կրթված կանայք անպայմանորեն ավելի ինքնուրույն չեն զգում կամ այդպիսին չեն, կամ ավելի հակված չեն պայքարելու հայրիշխանական նորմերի հետ ուղղակիորեն: Մեկ այլ հնարավոր բացատրություն էլ այն է, որ առավել կրթված կանայք կարող են հակված լինել ընտրելու ավելի լավ կրթված և ազատամիտ տղամարդկանց, ովքեր ավելի լայն մտահորիզոն ունեն և առավել բարյացակամ են գենդերային հավասարության գաղափարների նկատմամբ և ովքեր առնվազն հակված են

⁷⁰ «Կրթական մակարդակի և ինտիմ գույքակերոջ կողմից բռնության միջև հարաբերակցությունը բարդ է. որոշ դեպքերում կանայք, ովքեր ավելի կրթված են դառնում և հնարավորություններ են ձեռք բերում, հանդիպում են բռնության ավելի մեծ վտանգի, քանի որ նրանց տղամարդ գույքակերները փորձում են վերադարձնել վերահսկողությունը», *Addressing violence against women and achieving the MDGs*. Geneva: WHO, 2005թ., էջ. 44. «Կանայք ենթարկվում են սեռական բռնության առավել մեծ ռիսկի, երբ նրանք ենթարկվում են ֆիզիկական բռնության ինտիմ գույքակերոջ կողմից, եթե դառնում են ավելի կրթված, ուստիև ավելի ինքնուրույն... Հավանական բացատրությունն այն է, որ ավելի մեծ ինքնուրույնությունը հանգեցնում է կանանց կողմից ավելի մեծ ընդդիմության հայրիշխանական նորմերի նկատմամբ... այնպես որ տղամարդիկ կարող են բռնության դիմել վերահսկողությունը վերականգնելու փորձ կատարելիս»: *World report on violence and health*. Krug, E.G. et al., eds. Geneva: WHO, 2002թ., էջ 158:

ընդունելու ավելի էգալիտար (հավասար) փոխհարաբերություններ:

2. ՄԱԲՀ/UNFPA-ի հետազոտությունը ցույց է տալիս, որ չնայած ինտիմ զուգընկերոջ բռնության են ենթարկվում կանայք բոլոր տարիքային խմբերից, առավել ռիսկային գտնում են 20-35 տարեկան կանայք:

Մեր հարցման արդյունքներն այլ պատկեր են ցույց տալիս: Ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության երեք տեսակներից ցանկացածին ենթարկված կանանց տոկոսը հստակ ավելի ցածր է (և հիմնականում էապես ցածր) 20-24 և 25-34 տարիքային խմբերում, ի տարբերություն 35-44 և 45-59 տարիքային խմբերի (տես 8.1 աղյուսակը): Հարցման տվյալները հստակ ցույց են տալիս, որ առավելագույն ռիսկի են ենթակա կանայք 35-44 և 45-59 տարիքային խմբերից:

Աղյուսակ 8.1. Ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության գերակշռություն

Երբևէ զուգընկեր ունեցած 20-59 տարեկան կանանց՝ ինտիմ զուգընկերոջ կողմից հոգեբանական, ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված լինելու տոկոսային հարաբերությունն ըստ տարիքային խմբերի:

Տարիքային խումբ	Բռնության տեսակ		
	Հոգեբանական	Ֆիզիկական	Սեռական
20-24	7.9	2.3	1.7
25-34	17.0	5.3	2.3
35-44	29.1	10.5	5.7
45-59	27.4	9.9	2.6

3. ՄԱԲՀ/UNFPA-ի հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ չաշխատող կանայք բռնության ենթարկվելու առավել մեծ հավանականություն ունեն՝ ի տարբերություն աշխատողների: Մեր բացահայտումները ցույց են տալիս, որ աշխատանքը տարբերակիչ գործոն չէ, քանի որ բռնության երեք տեսակներին ենթարկված կանանց տոկոսը կոպիտ հաշվարկով նույնն է թե՛ աշխատող և թե՛ չաշխատող հարցվողների շրջանում: Միակ տարբերությունը սեզոնային աշխատանք կատարող կանանց խմբում է: Ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվող կանանց տոկոսն այս խմբում միջին հաշվարկով 1.5 անգամ (հոգեբանական բռնության դեպքում) և 3.6 անգամ (սեռական բռնության դեպքում) ավելի բարձր է, քան կայուն աշխատանք ունեցող կամ չաշխատող կանանց շրջանում:

4. Նկատի ունենալով երևույթի նրբությունը, հետազոտողները մտահոգ էին՝ չցանկանալով լրացուցիչ ցավ և հոգեկան տառապանք պատճառել ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության ենթարկված կանանց, նրանց հետ հարցում անցկացնելու ընթացքում: Այնուամենայնիվ, որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ կնոջը հարցեր ուղղելն ու նրա հետ խոսելը կարող է դրական լինել: Այսպիսով, *Առողջության և գենդերային հավասարության կենտրոնի* իրականացրած ուսումնասիրության արդյունքում հետազոտողները հանգեցին այն եզրակացության, որ «խոչընդոտ հանդիսանալու փոխարեն, բռնության վերաբերյալ հետազոտությանը մասնակցելը շատ կանայք համարում են օգտակար»⁷¹: *Բազմաթիվ երկրներում կանանց առողջության և ընտանեկան բռնության վերաբերյալ ԱՀԿ/WHO ուսումնասիրությանը* մասնակցից որոշ հետազոտողներ եզրակացրել են, որ «[ը] ոլոր երկրներում ուսումնասիրությունից ստացված ընդհանուր տպավորությունն այն է, որ կանայք ոչ միայն պատրաստակամ են խոսել բռնության ենթարկվելու իրենց փորձառության մասին, այլև հաճախ երախտապարտ են, որ կարող են պատմել իրենց պատմությունները համբերատար, կարեկցող անձի»⁷²:

⁷¹ Առողջության և գենդերային հավասարության կենտրոն, Կանանց դեմ բռնության միջազգային հետազոտական ցանցի երկրորդ տարեկան հանդիպում, 8-19-ը դեկտեմբերի 1996թ., չհրատարակված փաստաթուղթ, որին հղում է կատարվել՝ *Putting Women First...* Geneva: WHO, 2001թ., էջ 9:
⁷² Jansen, H. A. F. M. et al. “Interviewer Training in the WHO Multi-Country Study on Women’s Health and Domestic Violence.” *Violence against Women*, Vol. 10 No. 7-ը հուլիսի 2004թ., էջ 845:

Հայաստանում իրականացրած հետազոտությունը հակված չէ հաստատելու այս ընդհանրացումը, որը կատարվել է այլ երկրներում նմանօրինակ հետազոտությունների հենքի վրա: Միևնույն ժամանակ, սակայն, մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ իսկապես շատ կանայք լավ են զգում (կամ նույնիսկ ավելի լավ) (28.2%), քան վատ (կամ ավելի վատ) (10.8%) հարցազրույցից հետո, և նրանցից ոչ շատերն են որպես հարցման ենթարկված կանանց հստակ մեծամասնություն (61.0%), որ տարբերություն չեն զգացել:

5. Ցավոք, պատասխանների տարբերակներն ըստ էության միևնույն հարցերի համար՝ կապված կնոջը ծեծելու և կնոջ կողմից սեռական հարաբերությունը մերժելու վերաբերմունքի հետ, ԱՀԿ/WHO հարցաշարում էապես տարբերվում են ԴԱՀ⁷³-ի հարցաշարից՝ դրանով անհնար դարձնելով տվյալների համեմատությունը:

Ը. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԸ

ԱՀԿ/WHO-ի ստանդարտ հարցաշարը փոփոխվել և հարմարեցվել է, բայց թեթևակի, որպեսզի հնարավոր դառնա տվյալների միջազգային համեմատությունը՝ օգտագործելով միևնույն հարցաթերթիկն ու մեթոդաբանությունը տարբեր երկրներում: Սակայն սա ձեռք բերվեց շատ մեծ գնով: Հարցումը հիմնված էր դեմ առ դեմ հարցազրույցների վրա: Ուստի հնարավոր էր պահպանել անախտությունը:

Բազմաթիվ ուսումնասիրություններն ու հարցումները բացահայտել են, որ գենդերային բռնությունը «թաքնված է լռության և ամոթի մեջ»⁷⁴: Շատ մշակույթներում, ներառյալ Հարավային Կովկասը, բռնությունը, հատկապես ինտիմ զուգընկերոջ կողմից բռնությունը, սեռական բռնությունը կամ հետապնդումը բացահայտվում են շատ հազվադեպ, եթե երբևէ բացահայտվում են, քանի որ դրանց արդյունքում գոհը ստիպված է առնչվել բազմաթիվ բացասական սոցիալական, տնտեսական, հոգեբանական և այլ գործոնների: Շատ փորձագետներ շեշտում են սոցիալապես խարանված և ծայրահեղ դեպքերում արտաքսված լինելը, և ի վերջո տնտեսապես և սոցիալապես խոցելի և անհույս իրավիճակում հայտնվելը շատ հաճախ կանանց խանգարում է ընդդիմանալ, հայտնել բռնության մասին և վերջ դնել բռնի փոխհարաբերություններին:

Այսպիսով, առաջին անհրաժեշտ քայլն է՝ հաշվի առնել սոցիալական համատեքստը և մշակութային զգայունությունը՝ նվազեցնելու համար հարցվողի ամոթի, հուսախաբության և նվաստացածության զգացումները, որոնց պատճառով բռնության դեպքերի մասին չեն բարձրաձայնում:

Թեկուզև գիտակցվում է, որ բնակչության հարցումները պետք է մշակութային առանձնահատկություն ունենան, այնուհանդերձ դրանց մեթոդաբանությունը այս նրբությունն ամբողջովին հաշվի չի առնում: Տվյալ դեպքում ամոթի մշակույթն է (և երբեմն նաև վախի մշակույթը), որ պարփակում է խնդիրը լռության մեջ և աղավաղում արդյունքներն ու ի հայտ բերում կեղծ արդյունքներ, որոնք բացասական ազդեցություն են ունենում ոլորտի քաղաքականությունների մշակման վրա: ԱՀԿ/WHO հրապարակումը, որը բնակչությանն ուղղված՝ ընտանեկան բռնության զգայուն թեմաներով բազմաթիվ հարցումների վստահելի նեցուկ և իրագործող է, ընդունում է, որ «ամոթը, ինքնա-խարազանումը կամ վախը հետագա բռնությունից կարող են խանգարել կանանց քննարկել իրենց փորձառությունը»⁷⁵:

Պետք է խոստովանել, որ չնայած այն կարծիքին, որ որպես այդպիսին բնակչությանն ուղղված հարցումները, ինչպես այս մեկը, իրավամբ տրամադրում են ամենահամոզիչ փաստերը, մշակութային առանձնահատկությունները հաշվի չառնելու արդյունքում ի հայտ եկած թերությունները (հաշվի

⁷³ Տե՛ս *Հայաստանի ժողովրդագրական և սոցիոլոգիական հարցում 2000թ.*, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ սոցիոլոգիական նախարարություն և ORC Macro, Calverton, Maryland, 2001թ., դեկտեմբեր, էջ 43-50. *Հայաստանի ժողովրդագրական և սոցիոլոգիական հարցում 2005թ.*, Ազգային վիճակագրական ծառայություն, Առողջապահության նախարարություն և ORC Macro, Calverton, Maryland, 2006թ., դեկտեմբեր, էջ.217-223:

⁷⁴ Addressing violence against women: piloting and programming. Rome, Italy: UNFPA & AIDOS, 2003թ., սեպտեմբեր, էջ 5:

⁷⁵ Putting Women First: Ethical and Safety Recommendations for Research on Domestic Violence Against Women (Document WHO/FCH/GWH/01.1).Geneva: WHO, 2001թ., էջ 9:

չառնելն անխուսափելի է ստանդարտներն ու համապատասխանությունն ապահովելու անհրաժեշտության պատճառով) հանգեցրել են սպասվածից ավելի հաղորդումների⁷⁶: Մինչ համընդհանուր ընդունվում է, որ հարցումը, ներառյալ հարցաթերթիկի պատրաստումը որպես հարցման միջոց, պետք է առանձնահատուկ լինի՝ տվյալ մշակույթին համապատասխանելու առումով, գործնականում այս սկզբունքը միշտ չէ, որ պահպանվում է: Հայաստանում, օրինակ, սեռական կյանքի, հատկապես բռնաբարության կամ բռնության փորձառության և հաճախ նույնիսկ զուգընկերոջ կամ ոչ զուգընկերոջ կողմից հետապնդման ենթարկվելու մասին հարցեր տալը կարող է լինել ոչ այնքան դժվար կամ վտանգավոր, որքան չափից դուրս անընդունելի հարցազրույցի ժամանակ:

Շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, կանայք լուր են գենդերային բռնության, մասնավորապես բռնաբարությանն առնչվող միջադեպերի մասին, քանի որ դրանց բարձրաձայնումը կարող է հանգեցնել խայտառակման, կասկածանքի և ընտանեկան դավաճանության կամ անբարոյական վարքի մեջ մեղադրվելու (արդարացնելով բռնացողին) կամ նույնիսկ արտաքսվելու: Ջարմանալի չէ, որ շատ գոհեր ցանկություն չունեն հայտնելու նման հանցագործությունների և ոտնձգությունների մասին համապատասխան ծառայողներին՝ սոցիալական հետևանքների չբախվելու նպատակով: Իրավական և առողջապահական ընթացակարգերը, որոնք ներառում են բժշկական և այլ դատափորձագիտական հետազոտություններ, հետաքննությունը և սեռական բռնությունների, մասնավորապես բռնաբարության հետապնդումը, գաղտնիության նվազագույն ապահովումը (կամ ընդհանրապես չապահովումը) սովորաբար միտում ունեն նորից ցնցելու գոհերին՝ դրանով իսկ նրանց հիմնականում առավել դժկամ դարձնելով քայլեր ձեռնարկելու: Սոցիալական հետևանքներից և մշակույթային սահմանափակումներից բացի բռնության մասին չհայտնելու պատճառներից կարող են նաև լինել հանցագործից և, ինչպես մատնանշված է UNODC (ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցագործությունների դեմ պայքարի գրասենյակ) հետազոտությունում, «ոստիկանությունից վախենալը, հատկապես կրկին գոհ դառնալու վտանգը»⁷⁷: Հարկ է չմոռանալ, որ հետապնդումը պետական իշխանության կողմից կատարվող բռնություն և վիրավորանք է: Պարտադիր չէ, որ դա իրականացվի միայն ոստիկանների կողմից: Զոհերը կարող են նման փորձառություն ունենալ՝ հայտնվելով այլ ծառայություններ մատուցողների, օրինակ՝ առողջապահության կամ սոցիալական ապահովման համակարգերի ոլորտում: Ուստի հիմքեր կան կարծելու, որ բռնաբարության կամ այլ սեռական հանցագործությունների և բռնության «մութ թվը» (օրինակ՝ ոստիկանության գրանցած բռնաբարությունների և այլ դեպքերի և դրանց իրական թվի տարբերությունը) կարող է բավականին բարձր լինել:

Հայաստանում մարդիկ, մասնավորապես կանայք, բաց և անկեղծ չեն իրենց կյանքի ինտիմ կողմերի առնչությամբ, հատկապես եթե դրանք լիովին չեն համապատասխանում գերակշռող սոցիալական կարծրատիպերին (սովորաբար հայրիշխանական) և սոցիալական նորմերին ու իգական սեռի առաքինության մասին ավանդական պատկերացումներին և որոնք մոտենում են որոշ (ընկալելի) արգելքների, որոնք կարող են ազդել նրանց հասարակական վարկի վրա, որ իրենք ուզում են ունենալ և կարող են «վարկաբեկել» նրանց այլ անձանց աչքում (նույնիսկ եթե դա իգական սեռի չղա-

⁷⁶ ԱՀԿ/WHO-ն լավատեղյակ է այս փաստին: «Քանի որ կանայք հաճախ խարանվում կամ մեղադրվում են բռնության համար, որին ենթարկվում են, բռնության դեպքերի չափից շատ հաղորդումը հավանական չէ: Գործնականում կողմնակալության հնարավոր ձևը կարող է արտացոլել բռնության մասին իր փորձառությունն ի հայտ բերելու հարցվողի պատրաստակամությունը, որը կարող է տարբեր լինել տարբեր տարիքային խմբերի, տարբեր աշխարհագրական պայմանների և տարբեր մշակույթների ու երկրների համար ...», *WHO Multi-country Study on Women's Health and Domestic Violence against Women*, 2005 թ., էջ 23. Չնայած հետազոտությունն իրականացրած փորձագետների խումբը լավատես է, որ մի շարք միջոցներ (ինչպես ուսումնասիրության գործիքների ստանդարտացումը, հարցաթերթիկի նախափորձարկումն ու հարցում անցկացնողների ինտենսիվ վերապատրաստումը) կարող են օգնել «նվազեցնելու կողմնակալությունը, մեծացնելու բացահայտումը և նվազեցնելու միջտեղանքային փոփոխականության հավանականությունը», նրանք այնուամենայնիվ ընդունում են, որ բացահայտմանն առնչվող մնացած կողմնակալությունը կարող է հանգեցնել բռնության մակարդակի թերի գնահատման և որ տարածվածության տվյալները, որոնք ներառված են գեկույցում, «պետք է համարվեն յուրաքանչյուր տեղանքում բռնության իրական տարածվածության նվազագույն չափումները» *Ibid*, էջ 23:

⁷⁷ *Indicators, crime and violence against women*. UNODC paper, էջ 3: Ներկայացվել է 2007թ. հոկտեմբերի 5-ին կանանց նկատմամբ բռնության չափման ցուցիչներին նվիրված փորձագետների խմբի հանդիպմանը (2007թ., 8-10-ը հոկտեմբերի, Ժնև):

տապարտող և հոգատար հարցազրուցավար է, որը ձգտում է լավ գեկույց պատրաստել): բռնության գոհ լինելու կարգավիճակի բացահայտումն ու ընդունումը նույնպես նվազեցնում է նրանց ինքնագնահատման մակարդակը:

Չնայած որ ոչ բոլոր դեպքերի մասին հայտնելը ինքնին անցանկալի արդյունք է, քանի որ աղավաղում է իրական պատկերը, այն ի հավելումն, ունի բավականին վտանգավոր լրացուցիչ հետևանք: Քողարկելով իրական վիճակը՝ ոչ բոլոր դեպքերի մասին հայտնելը (հատկապես երբ խոսքը վերաբերում է փոքր թվերին) կարող է հանգեցնել ինքնահանգստացման:

Դեմ առ դեմ հարցազրույցների մեթոդաբանությունը, որը մշակութային առումով հարմար չէ աշխարհի այս հատվածում կանանց շրջանում նրանց անձնական կյանքի հետ կապված խիստ զգայուն խնդիրների շուրջ հարցում իրականացնելու համար և հանգեցնում է տեղեկատվության խեղաթյուրման, խիստ անտեղի է նաև մեկ այլ պատճառով: Միանգամայն հնարավոր է, որ հետազոտության արդյունքներն ընկնեն այն անհատների, կազմավորումների և քաղաքական ուժերի ձեռքը, որոնք նախընտրում են ժխտել գենդերային բռնության լայն տարածվածությունը:

Այս տեսակետը շատ լավ է ձևակերպել նաև ԱՀԿ/WHO-ն: Իր կարևորագույն փաստաթղթերից մեկում ԱՀԿ/WHO-ն շեշտում է, որ «բարոյագիտական առումով անընդունելի է իրականացնել վատ նախապատրաստված (նախագծված) ուսումնասիրություն, որը չի համապատասխանում հետազոտության հիմնական նպատակներին: Սա հատկապես ճշմարիտ է կանանց դեմ բռնության ուսումնասիրությունների դեպքում, երբ կանանց խնդրում են բացահայտ ներկայացնել դժվարին և ցավոտ փորձառությունը և երբ խնդրո առարկայի բնույթը կարող է կանանց վտանգի ենթարկել: Գործնականում նույնպես մտահոգիչ է, թե արդյոք հետազոտության փաստաթղթերով իջեցվում է ընտանեկան բռնության մակարդակը այնպիսի միջավայրում, երբ առկա փաստերը վկայում են հակառակը: Միսալ տվյալները կարող են ավելի վատ դեր խաղալ, քան տվյալների բացակայությունը, որովհետև քիչ տարածվածության հաշվարկները կարող են օգտագործվել՝ հարցականի տակ դնելու բռնության՝ մտահոգության արժանի օրինական ոլորտ լինելը»⁷⁸:

Սակայն կանանց դեմ բռնության (VAW) վերաբերյալ հարցումների ամբողջ իմաստը, ինչպես ձևակերպված է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի գեկույցում, «քաղաքական կամքը խթանելը և ...օրենսդրական ու քաղաքական բարեփոխումների հանգեցնելն է»⁷⁹:

Փաստը, որ գենդերային բռնության դրսևորումները և հանգամանքները քիչ են հաղորդվում, հանգեցնում է հակառակ արդյունքների, քանի որ դժվար է համոզել թե՛ հանրությանը և թե՛ իշխանություններին (Կառավարություն, խորհրդարան, տեղական և տարածքային կառավարման մարմիններ), որ գենդերային բռնությունը լուրջ խնդիր է և որ այն ունի լուրջ ֆիզիկական, մտավոր, սեռա-առողջական և այլ հետևանքներ և անդրադարձներ, ուստիև դրա դեմ պայքարն ու դրա կանխարգելումը պետք է դառնա գերակայություն շահագրգիռ բոլոր կողմերի համար: Ընկալումներն ու մտածելակերպը փոխելու և գենդերային կամ ընտանեկան բռնությունը որպես խնդիր մարդկանց շրջանում վեր հանելու, իրագեկության բարձրացման միջոցառումներ և քարոզարշավներ ու քաղաքական և այլ միջոցառումներ նախաձեռնելու և դրանց օժանդակելու համար անհրաժեշտ են արժանահավատ փաստեր:

Սա է պատճառներից մեկը, թե ինչու լրիվ գաղտնի հարցումները նախընտրելի են որպես կանանց դեմ բռնության խոր ուսումնասիրությունների լրացուցիչ գործիքներ, քանի որ դրանք կարող են օգնել խուսափելու էապես քիչ տվյալներ ստանալու ծուղակից և ստանալ վստահելի, ամբողջական տվյալներու գնահատականներ գենդերային բռնության բոլոր դրսևորումների տարածվածության (և

⁷⁸ Putting Women First: ... Geneva: WHO, 2001թ., էջ 15:

⁷⁹ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի գեկույց, էջ 68:

տարածման ոլորտի) մասին մշակութային միանման համատեքստերում⁸⁰: Թեկուզև նման հարցումները կարող են առաջացնել մեծ մեթոդաբանական, տեխնիկական, կազմակերպական, ֆինանսական և այլ խնդիրներ, դրանք իրավամբ կարող են լինել երևույթի մասշտաբների և տարբեր կողմերի համեմատաբար ճշգրիտ սահմանման ոչ միայն ամենա, այլ գուցե միակ արդյունավետ միջոցը:

Մեր ուսումնասիրությունը, թեկուզև մակերեսային ձևով, ներկայացնում է այս տեսակետի նշանակությունը: Կտրուկ հարցին, թե արդյո՞ք նախքան 15 տարեկան դառնալը նրանց որևէ մեկը սեռական ճնշման(գայթակղության) ենթարկել է կամ փորձել է նրանց հարկադրել ինչ-որ սեռական բնույթի բան անել իրենց կամքին հակառակ, հարցման մասնակիցների միայն 0.1%-ն է դրական պատասխան տվել, ընդ որում «բռնացողը» եղել է տղա ընկերը:

Սակայն երբ միևնույն հարցը տրվել է հարցման մասնակիցներին հարցազրույցի վերջում, գաղտնիություն ապահովող ինչ-որ ձևով (քարտի միջոցով, որտեղ նրանք պետք է նշեին ուրախ կամ տխուր դեմք և փակեին ծրարում), ինչն առնվազն տեսականորեն կարող էր պաշտպանել նրանց ինքնությունը, հարցվողների 9.2%-ը, այսինքն 92 անգամ ավելին, դրական պատասխան է տվել:

Հենց այս թերտեղեկացումն է, որ օգնում է բացատրել Հայաստանում և Եվրոպայում համապատասխան հարցումների արդյունքների ակնառու տարբերությունը: Հակառակ դեպքում, կարելի էր եզրակացնել, որ երկրում ֆիզիկական բռնության ենթարկված կանանց տոկոսն առնվազն երկու, իսկ սեռական բռնության ենթարկվածներինը՝ երեք անգամ ավելի ցածր է, քան Եվրոպայում: Նկատի առնելով կանանց հանդեպ բռնության բոլոր ձևերը՝ տոկոսը կարող էր թվալ առնվազն 1.5 անգամ ավելի ցածր, քան Եվրոպայում:

Կանանց նկատմամբ, ներառյալ ներընտանեկան բռնության դեմ պայքարի աշխատանքային խմբի անդամ Ռոզա Լոգարը ասում է. «Համաձայն այս ոլորտում իրականացված հետազոտությունների, Եվրոպայում բոլոր կանանց մոտավորապես 20%-25%-ը տուժել է ֆիզիկական, իսկ ավելի քան 10%-ը՝ սեռական բռնությունից չափահասության շրջանում: Եթե հաշվի առնվեն կանանց դեմ բռնության բոլոր ձևերը, ապա կանանց մոտ 45%-ը ենթարկվել է բռնության»⁸¹: Եվրոպական կանանց լոբբիի 2010թ. զեկույցում նույնպես նշվում է, որ Եվրոպայի բոլոր կանանց 45%-ը ենթարկվել է գենդերային բռնության⁸²:

Համաձայն մեր հետազոտության արդյունքների, ֆիզիկական բռնության, սեռական բռնության, հոգեբանական բռնության և ֆիզիկական և կամ սեռական բռնության տարածվածությունը երբևէ զուգընկեր ունեցած կանանց կյանքի ընթացքում համապատասխանաբար կազմում է 8.9%, 3.3%, 25.0% և 9.5%:

Չափահասության շրջանում (15 տարեկանից հետո) կանանց նկատմամբ բռնության և սեռական կյանքի հարկադրման դեպքերի տարածվածությունը, երբ բռնացողը ամուսինը կամ զուգընկերը չէ, համապատասխանաբար կազմում է 2.3% և 0.1% :

Անհետատեսական կլիներ կարծել, որ Հայաստանում կանանց դեմ բռնության ընդհանուր մակար-

⁸⁰ Սա փաստորեն չի քննարկվում ԱՀԿ/WHO հետազոտության փորձագետների կողմից: Հենց նրանք են նշում, որ իրենց հետազոտության մեջ նկատված տարբերությունները «երեխա տարիքում սեռական բռնության տարածվածության դեմ-առ-դեմ հարցազրույցների միջոցով և այլ գաղտնի ձևերով բացահայտման միջև» համապատասխանում են այլ հետազոտությունների արդյունքներին, որոնք պարզել են, որ հարցվողների համար հաճախ ավելի հեշտ է հայտնել շատ ամոթալի վարքի մասին գաղտնի ձևաչափերում: Այնպիսի նուրբ թեմաների հետազոտությունները, ինչպիսիք են սեռական վարք, արհեստական վիժեցումը, սեռական բռնությունը և բռնի սեռական հարաբերությունը, միշտ ավելի շատ են արձանագրել դիսկալի վարքը, երբ տվյալների հավաքման համար օգտագործվել են անանուն կամ համակարգչային մեթոդներ, քան հարցազրույցներ: *WHO Multi-country Study on Women's Health and Domestic Violence against Women. Initial results on prevalence, health outcomes and women's responses.* Claudia Garcia-Moreno et. al. Geneva: WHO, 2005թ., էջ 53:

⁸¹ Logar, Rosa. *Good Practices and Challenges in Legislation on Violence against Women.* Փորձագիտական աշխատություն, որը պատրաստվել է Փորձագիտական խմբի հանդիպման համար՝ ավիրված կանանց դեմ բռնությանն ուղղված բարենպաստ գործելակերպի և օրենսդրությանը: Վիեննայի ՄԱԿ-ի գրասենյակ, Ավստրիա, 26-28-ը մայիսի 2008թ.: Document EGM/GPLVAW/2008/EP.10, էջ 1:

⁸² *From Beijing to Brussels.* Եվրոպական կանանց լոբբիի Պեկին + 15 զեկույցը ԵՄ գործունեության վերաբերյալ, Բրյուսել, 2010թ., էջ 8:

դակը մի քանի անգամ ավելի ցածր է, քան Եվրոպայում:

Ուստի, կարելի է համարել, որ մեր հարցման արդյունքում ձեռք բերված տվյալներն ընդամենը արտացոլում են սառցաբեկորի գագաթը:

ՀԵՏԱԳԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հիմնականում ուղղված լինելով կանանց նկատմամբ բռնության տարածվածությանն ու դաժանության աստիճանին, ներկա հետազոտությունը միայն ընտրովի է անդրադառնում գենդերային, ներառյալ ընտանեկան բռնության որոշ պատճառների: Կանանց նկատմամբ բռնության արմատական դրդապատճառների խոր ուսումնասիրությունը այն ոլորտներից է, որ առաջիկայում դեռ պետք է իրականացնել:
2. Ի հավելումս, սույն ուսումնասիրության սկզբունքային եզրակացություններից մեկն այն է, որ հետազոտությունը հստակ և համոզիչ կերպով ցույց է տալիս, որ այլ տեսակի հարցումներ (մեթոդաբանություններ) են անհրաժեշտ հասարակության համար առավել կարևոր և մշակութային ու քաղաքական առումով զգայուն հարցերից մեկի՝ գենդերային բռնության ծավալն ու մասշտաբները ճիշտ գնահատելու համար:
3. Իդեալական լուծումը կարող էր լինել հիմնվելով ԱՀԿ/WHO հարցաշարի վրա այն հարցումներն ամբողջապես գաղտնի հարցումներով և միևնույն հարցերին բևեռված քանակական հետազոտություններով համալրելը: Ժամանակի ընթացքում պարբերաբար անցկացվող և հետևողական ուսումնասիրություններն անկասկած դրական նշանակություն կունենան, քանի որ կկարողանան ապահովել լայն ընդգրկվածություն և արտացոլել զարգացումը (դինամիկան) և գնահատել գործադրված ջանքերն ու արձանագրված արդյունքները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գենդերային բռնությունը շարունակում է կայուն խնդիր մնալ Հայաստանում: Պետք է ասել, որ հետևողական ջանքեր են անհրաժեշտ այս երևույթի դեմ պայքարելու և այն արմատախիլ անելու համար: Հաջողության հասնելու համար, ինչպես նշվում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի զեկույցում, «պահանջվում է հստակ քաղաքական կամք, անկեղծ, տեսանելի և վճռական հանձնառություն պետության ղեկավար բարձրագույն մակարդակներում և անհատների ու համայնքների վճռորոշ, քարոզչական և գործնական գործողություններ»⁸³:
- Ավելի եռանդուն և նպատակաուղղված հանրային իրազեկության բարձրացման քարոզարշավներ են անհրաժեշտ՝ ուղերձը տեղ հասցնելու և «կանանց նկատմամբ իրազործվող բռնությունները անտեսող, հանդուրժող, ներող կամ արհամարհող»⁸⁴ և բռնության տարբեր ձևերի դրսևորմանը նպաստող վերաբերմունքի և վարքի դեմ պայքարելու համար: Ուստի էական է նաև վկայակոչել և ամրապնդել այն սոցիալական և մշակութային նորմերն ու արժեքները, որոնք դրական վերաբերմունք են ձևավորում կանանց նկատմամբ և որոնք անընդունելի են համարում բռնությունն ընդհանրապես և գենդերային բռնությունը՝ մասնավորապես:
- Չնայած որ ինտիմ զուգընկերոջ կողմից բռնությունը տեղի է ունենում մասնավոր ոլորտում, այն անձնական, անհատական խնդիր չէ: Ավելին, այն մարդու իրավունքների պաշտպանության

⁸³ Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի խորը ուսումնասիրություն: Report of the Secretary-General. UN doc. A/61/122/Add.1. N.Y., 2006թ., էջ 9:

⁸⁴ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-Մունի ուղերձը Կանանց դեմ բռնության բոլոր ձևերի վերացման միջազգային օրվա կապակցությամբ, 25-ը նոյեմբերի 2008թ.: SG/SM/11942 OBV/748 WOM/1705. www.un.org/News/Press/docs/2008/sgsm11942.doc.htm

խնդիր է⁸⁵: Հետևաբար, հասարակության անունից պետությունը պարտավորություն ունի պայքարելու կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեմ, անկախ նրանից, թե ով է հանցագործը և որտեղ է տեղի ունեցել բռնությունը (այսինքն՝ պայքարել ներընտանեկան/ինտիմ զուգընկերոջ կողմից բռնության դեմ), և սահմանել, պահպանել և վերահսկել գենդերային բռնության բոլոր ձևերի դեմ պայքարի համապարփակ մի համակարգ՝ միևնույն ժամանակ երաշխավորելով հանցագործների դատական կարգով հետապնդման և զոհերի պաշտպանության, վերականգնման ու նրանց օգնության ու օժանդակության ցուցաբերման արդյունավետ գործող մեխանիզմներ:

- Գենդերային բռնության դեմ պայքարի ջանքերն էապես կշահեն, եթե Հայաստանի կառավարությունն ավելի նախահարձակ դիրք գրավի *Պեյրական գենդերային քաղաքականության հայեցակարգի* համապատասխան բաժնի մշակման և գործարկման ուղղությամբ: Բաժինը կարելի է ընդլայնել հայեցակարգի, որը կսահմանի գենդերային բռնության դեմ Կառավարության քաղաքականության հիմնական սկզբունքներն ու մոտեցումները և հայեցակարգային հիմք կստեղծի ապագա օրենսդրական դաշտի համար:
- Կանանց նկատմամբ բռնության հայկական օրենսդրությունը պետք է համապարփակ լինի: Համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2006թ. դեկտեմբերի 19-ի թիվ 61/143 որոշման, որն ընդունվել է ի պատասխան կանանց դեմ բռնության բոլոր ձևերի մասին գլխավոր քարտուղարի խոր ուսումնասիրության և որում «շեշտում է կանանց և աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձևերին որպես օրենքով պատժելի քրեական հանցագործություն վերաբերվելու անհրաժեշտությունը»⁸⁶, պետք է, *այլոց թվում*, Քրեական օրենսգրքում, Ընտանեկան օրենսգրքում և այլն, ներառի այնպիսի հասկացություններ, ինչպիսին են՝ «արյունապղծություն», «ընտանեկան բռնություն», «ամուսնական բռնաբարություն» և «կամքին հակառակ սեռական հարաբերություն» տերմինները և պետք է հստակ քրեականացնի դրանք:
- Գենդերային բռնության զոհերի իրական պաշտպանություն ապահովելու համար օրենքով պետք է սահմանվի «հայցի ապահովման միջոց» զոհերի համար, որոնք ստիպված չեն լինի ապաստան փնտրել այլուր, այլ կմնան տանը, քանի որ դատարաններին իրավունք կտրվի տանից վտարել բռնություն գործադրողին⁸⁷: Այս կանայք չպետք է հայտնվեն անբարենպաստ վիճակում երեխաների խնամակալության հարցերի հետ կապված: Ի հավելումն, ներընտանեկան բռնության զոհերի համար անհրաժեշտ է ստեղծել սոցիալական ապահովության համապարփակ ցանց (այդ թվում՝ կազմակերպել ֆինանսական օժանդակություն):
- Արդյունավետ լինելու համար օրենքը պետք է նաև արտացոլի եվրոպական տարածված մոտեցումները և հիմնվի եվրոպական երկրների և կազմավորումների փորձառության և գործելակերպի վրա: Չափանիշներ և մեխանիզմներ սահմանելիս առաջինն ու ամենակարևորն այն է, որ օրենքը համապատասխանի Կանանց դեմ բռնության, ներառյալ ընտանեկան բռնության կանխարգելման և վերացման կոնվենցիայի հիմքում ընկած փիլիսոփայությունը (Կոնվենցիան վերջնական տեսքի կրելի 2011թ. սկզբին): Այսպիսով, սպասվող օրենքը պետք է ստեղծվի չորս հիմնասյուների վրա (պաշտպանություն, դատական կարգով հետապնդում, կանխարգելում և քաղաքականություն)⁸⁸: Ուստի այն պետք է լինի ավելի համապարփակ և ընդգրկուն օրենք, այլ ոչ թե պարզապես օրենք

⁸⁵ Ավելի շատ ուշադրություն պետք է դարձվի քարոզարշավներին և այլ հանրային կարծիք ձևավորող ջանքերին՝ առաջ մղելու այն գաղափարը, որ մարդու իրավունքները վերահիմաստավորվել են այսօրվա աշխարհում և որ դրանք այլևս չեն սահմանափակվում հանրային ոլորտով, այլ վերաբերում են նաև անձնական ոլորտին:

⁸⁶ *General Assembly Resolution 61/143* adopted on 19 December 2006. UN Document A/RES/61/143, էջ 3:

⁸⁷ Մինչև այժմ գերակշռող մտածելակերպն ու գործելակերպը ոստիկանության և դատական իշխանությունների համար ավելի շուտ զոհին, քան բռնի հանցագործին տանից հեռացնելն է: Ինչպես իրավամբ նշում է Չերիլ Ա. Թոմասը, «Այս գործելակերպը վտանգում է ընտանեկան բռնության իրավական բարեփոխման հիմնական նպատակները՝ զոհի ապահովություն և հանցագործի պատասխանատվություն»: Thomas, Cheryl A. *Legal Reform on Domestic Violence in Central and Eastern Europe and the Former Soviet Union*. Փորձագիտական աշխատություն, որը պատրաստվել է Փորձագիտական խմբի հանդիպման համար՝ նվիրված կանանց դեմ բռնությանն ուղղված բարենպաստ գործելակերպին և օրենսդրությանը: Վիեննայի ՄԱԿ-ի գրասենյակ, Ավստրիա, 26-28-ը մայիսի 2008թ: Document EGM/GPLVAW/2008/EP.01, էջ 3-4:

⁸⁸ Տե՛ս CAHVIO (2009) 4 FIN document (check through www.coe.int/violence)

ընտանեկան բռնության մասին:

- Չնայած որ օրենքները կարևոր են (հատկապես գենդերային հավասարության և ընտանեկան բռնության մասին օրենքները), դրանք ինքնին համադարման միջոց չեն, քանի որ էականը դրանց կիրարկումն է: Բացի այդ, անհրաժեշտ են օրենքի կիրարկման հստակ, լավ մտածված, թափանցիկ և արդյունավետ ընթացակարգեր:
- Ընդհանուր առմամբ, գենդերային բռնության դեմ պայքարի ոլորտում քաղաքականությունը պետք է հիմնված լինի համապարփակ/ամբողջական մոտեցման վրա, որը ներառում, համակարգում և համադրում է կրթությունը, կանխարգելումը, հետաքննումն ու դատական կարգով հետապնդումը, պատիժը և զոհերի վերականգնումն ու նրանց օժանդակության ցուցաբերումը, հատկապես ֆինանսական օգնությունը և այլ ջանքեր, ինչպես՝ բնակարանի տրամադրում, իրավական խորհրդատվություն և այլն:
- Նմանօրինակ մոտեցումը կհանգեցնի համապարփակ, ճկուն և արդյունավետ համակարգի ստեղծման, որն ուղղված կլինի կանանց դեմ բռնության կանխարգելմանը, արագ արձագանքմանը, դատական կարգով հետապնդմանն ու վերականգնմանը: Դրա լրիվ և արդյունավետ կիրառումը պետք է գերակայություն համարվի Կառավարությունում: Այս մոտեցումը կարևոր է նաև ազգային քաղաքականության ամրապնդման և համաձայնեցված ու համապարփակ ռազմավարության (Մասնավոր և հանրային ոլորտներում կանանց նկատմամբ բռնությունների բոլոր ձևերի դեմ պայքարի ազգային գործողությունների ծրագիր) ձևակերպման համար: Սկզբունքորեն, այն հիմքեր կստեղծի ապագայում այս համակարգին աստիճանական անցման համար, ինչը ոչ թե պարզապես կրիսիս կանանց շահերից, այլ կմիավորի կանանց կարողությունները, հեռանկարներն ու փորձառությունը:
- Համարժեք քաղաքականության ձևակերպումն ու կիրառումը և այլ միջոցառումների նախաձեռումը երաշխավորելու և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման (CEDAW) հանձնաժողովի ամփոփիչ դիտարկումներին համապատասխանություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել հատուկ կառավարական մարմին կամ համակարգող հաստատություն, որին կհանձնարարվի միջոցառումներ իրականացնել կանանց նկատմամբ գենդերային բռնության բոլոր ձևերի դեմ պայքարելու նպատակով:
- Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, ծրագրեր իրականացնել բռնության կանխարգելման ուղղությամբ: Քանի որ սա բարդ խնդիր է, ապա ծրագրերը պետք է իրականացվեն տարբեր նախարարությունների և գործակալությունների համատեղ ջանքերով:
- Առկա է առողջապահական ոլորտին և այլ բժշկական ընթացակարգերին վերաբերող օրենսդրություն, մասնավորապես իրավական ակտեր մշակելու անհրաժեշտություն, որոնք կերաշխավորեն բռնության վերլուծությունն ու նույնականացումը:
- Առողջապահական ոլորտում բռնության հայտնաբերմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինչպես օրինակ՝ պարբերական գնության ծրագրերը, կարող են էապես մեղմել բռնության հետ կապված խնդիրը և նվազեցնել առողջապահական «հոգսերը»:
- Բժշկական անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները, գենդերային բռնության զոհերին հայտնաբերելու և նրանց անհրաժեշտ օժանդակություն (այդ թվում՝ սոցիալական, իրավական և հոգեբանական օգնություն) ցուցաբերելու կարողությունը բարելավման կարիք ունեն: Հետևաբար շատ արդյունավետ կարող են լինել այս հարցի լուծմանն ուղղված՝ վերապատրաստման ծրագրերը:
- Առողջապահական և կրթական հաստատություններում, համայնքային կառույցներում և ոչ կառավարական երիտասարդական և մանկական կենտրոններում հոգեբանական, իրավական, խորհրդատվական և սոցիալական ծառայությունների մատուցման հնարավորությունների ստեղծումը կարող է արդյունավետ միջոց լինել գենդերային բռնության զոհերին օժանդակելու գործընթացում:

- Շատ կարևոր է հանրային կարծիք ձևավորել՝ բռնության խնդրին համարժեք վերաբերմունքի առնչությամբ, մշակել և իրականացնել հանրային իրազեկման ծրագիր, որն ուղղված կլինի կարծրատիպերի հաղթահարմանը, և երաշխավորել այս ոլորտում ոչ կառավարական կազմակերպությունների լայնածավալ մասնակցությունը:
- Դժվար իրավիճակում գտնվող անձանց և գենդերային բռնության զոհերին օժանդակելու նպատակ հետապնդող միջոցառումները պետք է իրականացվեն պետության հովանու ներքո, ինչպես նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների, ներառյալ ապաստանների, ժամանակավոր ապաստանների, մասնագիտացված սոցիալական օժանդակության կենտրոնների և այլնի միջոցով: Այս տեսանկյունից, պետության կողմից անվճար ծառայությունների շրջանակում, սոցիալ-հոգեբանական և առողջության վերականգնման ծրագրերի երաշխավորումը նվազ կարևոր չէ:
- Համապատասխան պետական և ոչ կառավարական կազմակերպություններում 24-ժամյա թեժ գծի ստեղծումը կարող է իրավամբ շատ արդյունավետ լինել դժվար իրավիճակում գտնվող անձանց օժանդակելու առումով:
- Գենդերային բռնության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման այլընտրանքային համակարգի ստեղծումը կարևոր է բռնության խնդրի գնահատման և վերլուծության ու արդյունավետ ծրագրերի և միջոցառումների ձևակերպման համար:
- Նկատի առնելով այս խնդրի բազմագործոն բնույթը՝ բռնության հաղթահարմանը կամ նվազեցմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը հիմնվում է միջ-սեկտորային և միջգործակալական համագործակցության վրա:
- Կարիք կա բարելավելու և վերակազմավորելու գենդերային բռնության զոհերին տրամադրվող օժանդակությունն ու ծառայությունները: Հիմնվելով հետազոտության արդյունքների և միջազգային փորձառության վրա, կարելի է առաջարկել, որ ստեղծվեն զոհերին բազմակողմանի աջակցության ցուցաբերման կենտրոններ, որոնք կներառեն գոյություն ունեցող տեղեկատվական և խորհրդատվական կենտրոնները, ապաստանները և բժշկական կամ իրավական ծառայություններ մատուցող կենտրոնները, և կստեղծվի մշտական 24-ժամյա թեժ գծերի և արդյունավետ արձագանքող ու ուղղորդող ծառայությունների մի համակարգ:
- Անհրաժեշտ է հզորացնել ազգային մարմնի տեղեկատվություն և վիճակագրական տվյալներ հավաքելու կարողությունը:
- Դեռևս պետք է տեղի ունենան նորմատիվ անցումներ (օրինակ՝ այն գաղափարի ընդունումը, որ կին զոհը չպետք է հեռանա հայրենի տնից և գնա ապաստան, այլ պետք է հեռանա հանցագործը և այլն, կամ՝ համարժեք փոխհատուցման վճարներ/վսասների փոխհատուցում պետք է տրամադրվի ընտանեկան բռնության զոհերին): Ուստի բոլոր հիմնական շահագրգիռ կողմերը, ինչպիսին են կառավարական կազմավորումները, քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպությունները և միջազգային կազմակերպությունները, պետք է ուշադրությունը բնեռեն թե՛ իրավական բարեփոխման, թե՛ քաղաքականության փոփոխության և թե՛ քարոզարշավների վրա:
- Կրթական բաղադրիչը պետք է ամրապնդվի և առավել նշանակություն ստանա, քանի որ երկարաժամկետ ջանքեր է պահանջում, քան մեկանգամյա քարոզարշավները, հասանելի է զոհերին, հանցագործներին և լայն հասարակությանը և իրականացվում է կանոնավոր հիմքով: Սա պետք է ներառվի թե՛ ֆորմալ և թե՛ ոչ ֆորմալ կրթական համակարգերում: Գենդերային, ներառյալ ընտանեկան բռնությունը զգալիորեն կնվազի և ի վերջո արմատախիլ կարվի միայն այն ժամանակ, երբ մշակութային առումով դառնա անհարկի և երբ լայն հասարակությունն ընդհանրապես չհանդուրժի այդ երևույթը: Թեկուզև ոչ այնքան տարածված (քանի որ որոշ հասարակություններում, որոնք հանդուրժում և նույնիսկ խրախուսում են տղամարդկանց շովինիզմն ու կեղծ առնականությունը) բռնությունը արդարացնող և քողարկող մշակութային տեսակետները դեռ չեն ընկրկում

այսօրվա հայ հասարակությունում, և քանի դեռ լավ համակարգված և հետևողական ջանքեր չեն գործադրվել հանրային ընկալումը և ընդհանուր մտածելակերպը փոխելու ուղղությամբ, միշտ էլ հավանականություն կա, որ մի օր հին, հայրիշխանական նորմերի ու գործելակերպի ակունքները կարող են գերիշխել՝ կանանց ենթարկելով բռնության թաքնված վտանգի: Այս հեռանկարն ամենևին ենթադրական չէ, քանի որ մի շարք սոցիալական խմբեր, որոնք ունեն հայրիշխանական տեսակետներ, իշխող դիրք ունեն հասարակությունում և կարող են ազդել և «ախտահարել» բնակչության մեծ հատվածների:

- Հետևաբար հատուկ շեշտ պետք է դրվի կրթական նյութերի ստեղծման և օգտագործման վրա, որոնք փորձում են ներգործել վարքի և վերաբերմունքի փոփոխությունների, ինչպես և փորձի վրա հիմնված ուսումնառության վրա, երբ մարդիկ ձեռք են բերում գիտելիքներ հակասությունների կանխարգելման և հաղթահարման, արդյունավետ միջանձնային հաղորդակցության և այլնի վերաբերյալ՝ նմանակող (դերային) խաղերի միջոցով:
- Անհրաժեշտ է մեծացնել կանանց նկատմամբ բռնության առողջապահական, տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ հետևանքների ու ազդեցությունների նկատմամբ տղամարդկանց (հատկապես կարծիք ձևավորողների, հանրությանը հայտնի և իշխանական պաշտոններ զբաղեցնողների) դյուրագգաց դարձնելու ջանքերը:
- Առաջընթացը համարժեք գնահատելու և իրավիճակը արդյունավետ վերահսկելու նպատակով անհրաժեշտ է ընդունել և հետևողականորեն օգտագործել կանանց դեմ բռնության համապատասխան ցուցիչների համապարփակ հավաքածու: Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի (OHCHR) առաջարկած մոտեցումը լավ մեկնարկային կետ է: Այդ ցուցիչները պետք է «ներառեն (պարզորոշ հասկանալի դարձնեն) կանանց նկատմամբ բռնության վերացման ոլորտում պետությունների *հանձնառության, ջանքերի և այս ջանքերի արդյունքների* բոլոր կողմերը»: Այսպիսով՝ համապատասխանաբար առաջարկվում է ցուցիչների երեք խումբ՝ **կառուցվածքային ցուցիչներ** (որոնք չափում են հանձնառությունները), **գործընթացի ցուցիչներ** (որոնք չափում են ջանքերը) և **արդյունքի ցուցիչներ** (արդյունքները չափող ցուցիչներ)⁸⁹:

⁸⁹ *Կանանց նկատմամբ բռնության սահմանման ցուցիչները: Օժանդակ հեղինակություն 3: Ներկայացվել է OHCHR-ի կողմից 2007թ. հոկտեմբերի 5-ին՝ Կանանց նկատմամբ բռնության գնահատման ցուցիչների մասին փորձագիտական խմբի քննարկմանը (ԺՆՆ, 8-10-ը հոկտեմբերի 2007թ.), էջ 3:*

**ՀԱՐՑԱՇԱՐ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ՆԱԽԱՆՇՈՒՄ			
ԵՐԿՐԻ ԿՈՂԸ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՄԱՐԶ ԿԼԱՍՏԵՐ ՀԱՄԱՐԸ	[] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] []		
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐԻ ԱՆՈՒՆԸ:			
ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ԱՅՅԵՐԸ			
	1	2	ՎԵՐՁԻՆ ԱՅՅԸ
ԱՄՍԱԹԻՎ	_____	_____	ՕՐ [] [] ԱՄԻՍ [] []
ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ԱՆՈՒՆԸ ԱՐԳՅՈՒՆՔ***	_____	_____	ՏԱՐԻ [] [] [] [] ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ [] [] ԱՐԳՅՈՒՆՔ [] []
ՀԱԶՈՐԴ ԱՅՅԸ, ԱՄՍԱԹԻՎ ԺԱՄ ՎԱՅՐ	_____	_____	ԱՅՅԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ []
ԼՐԱՅՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ [] 1. ԼՐԱՅՎԱԾ ՉԿԱ ⇒	*** ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՂԵՐԸ ՄԵՐԺՎԱԾ (նշել պատճառը).....11 Բնակության հասցեն դատարկ է կամ հասցեն բնակելի չէ12 Բնակության հասցեն ավերված է13 Բնակության հասցեն չի գտնվել, հնարավոր չէ ստնել14 ՏՏ-ի բոլոր անդամները բացակայում են երկար ժամանակով.....15 Այցելության պահին ՏՏ-ի ոչ մի անդամ տանը չէր.....16 ՏՏ-ի հարցվողը հետաձգել է հարցազրույցը 17 ՏՏ-ի բոլոր անդամները խոսում են անձանոթ լեզվով..... 18		ՍՏՈՒԳԵՔ ՏՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ. ԸՆԴԱՍԵՆԸ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Հ1) [] [] [] ԸՆՏՐՎԱԾ ԿՐՈՋ ՏՏ-ՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ ԿԱՆԱՆՑ ԹԻՎԸ (Հ3, ընդամենը ԱՅՈ) [] [] [] ԸՆՏՐՎԱԾ ԻԳԱՎԱՆ ՍԵՈՒ ՀԱՐՑՎՈՂԻ ՀԱՄԱՐԸ (Հ3) [] [] []
[] 2. Միայն ՏՏ հարցաթերթիկ ⇒	Ընտրված կինը մերժեց (նշել պատճառը).21 Տնային տնտեսությունում համապատասխան կին չկա.....22 Ընտրված կինը տանը չէ23 Ընտրված կինը հետաձգեց հարցազրույցը ..24 Ընտրված կինը ի վիճակի չէ.....25		⇒Անհրաժեշտ է վերադառնալ ⇒Անհրաժեշտ է վերադառնալ
[] 3. Կանանց հարցաթերթիկը մասամբ ⇒	Չեն ուզում շարունակել (նշել պատճառը).31 Հարցազրույցի մնացած մասը հետաձգվել է մինչև հարջորդ այցը.....32		⇒Անհրաժեշտ է վերադառնալ
[] 4. Կանանց հարցաթերթիկը ամբողջովին լրացված է ⇒41		
ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԼԵԶՈՒՆ ԱՅՆ ԼԵԶՈՒՆ, ՈՐՈՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՎԱՐՎԵԼ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԱՎԱՐԳԸ ԱՆՑ Է ԿԱՅՎԵԼ (1 = այո, 2 = ոչ)			[] [] [] [] []
ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱՀՍԿՈՂ	ՀԱՐՑԱԹԵՐԹԻՎԸ ՍՏՈՒԳԵԼ Է		ՍՈՒՏԱԳՐԵԼ Է
ԱՆՈՒՆ [] [] ՕՐ [] [] ԱՄԻՍ [] [] ՏԱՐԻ [] [] [] []	ԱՆՈՒՆ [] [] ՕՐ [] [] ԱՄԻՍ [] [] ՏԱՐԻ [] [] [] []		ԱՆՎԱՆՈՒՄ [] [] ՍՈՒՏԱԳՐՈՒՄ 1: _____ ՍՈՒՏԱԳՐՈՒՄ 2: _____

ՀԱՐՑԱՇԱՐ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՆԱԽԱՆՇՈՒՄ				
ԵՐԿՐԻ ԿՈՂԸ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՄԱՐԶ ԿԼԱՍՏԵՐ ՀԱՄԱՐԸ	[] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] [] []			
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐԻ ԱՆՈՒՆԸ:				
ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ԱՅՅԵՐԸ				
	1	2	3	ՎԵՐՁԻՆ ԱՅՅԸ
ԱՄՍԱԹԻՎ	_____	_____	_____	ՕՐ [] [] ԱՄԻՍ [] [] ՏԱՐԻ [] [] [] [] ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ [] [] ԱՐԳՅՈՒՆՔ [] []
ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ԱՆՈՒՆԸ ԱՐԳՅՈՒՆՔ***	_____	_____	_____	
ՀԱՋՈՐԴ ԱՅՅԸ, ԱՄՍԱԹԻՎ ԺԱՄՎԱՅՐ	_____	_____	_____	ԱՅՅԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ []
ԼՐԱՅՎԱԾ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ [] 1. ԼՐԱՅՎԱԾ ՉԿԱ ⇒	*** ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՂԵՐԸ ՄԵՐԺՎԱԾ (նշել պատճառը)..... 11 Բնակության հասցեն դատարկ է կամ հասցեն բնակելի չէ 12 Բնակության հասցեն ավերված է 13 Բնակարանի հասցեն չի գտնվել, հնարավոր չէ մտնել 14 ՏՏ-ի բոլոր անդամները բացակայում են երկար ժամանակով..... 15 Այցելության պահին ՏՏ-ի ոչ մի անդամ տանը չէր..... 16 ՏՏ-ի հարցվողը հետաձգել է հարցազրույցը 17 ՏՏ-ի բոլոր անդամները խոսում են անձանոթ լեզվով..... 18		⇒ Անհրաժեշտ է վերադառնալ ⇒ Անհրաժեշտ է վերադառնալ	ՄՏՈՒԳԵՔ ՏՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ. ԸՆԴԱՄԵՆԸ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Հ1) [] [] ԸՆՏՐՎԱԾ ԿՆՈՋ ՏՏ-ՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՆԱՆՑ ԹԻՎԸ (Հ3, ընդամենը ԱՅՈ) [] [] ԸՆՏՐՎԱԾ ԻԳԱՎԱՆ ՍԵՈՒ ՀԱՐՑՎՈՐԻ ՀԱՄԱՐԸ (Հ3) [] []
[] 2. Միայն ՏՏ հարցաթերթիկ ⇒	Ընտրված կինը մերժեց (նշել պատճառը). 21 Տնային տնտեսությունում համապատասխան կին չկա 22 Ընտրված կինը տանը չէ 23 Ընտրված կինը հետաձգեց հարցազրույցը .. 24 Ընտրված կինը ի վիճակի չէ 25		⇒ Անհրաժեշտ է վերադառնալ ⇒ Անհրաժեշտ է վերադառնալ	
[] 3. Կանանց հարցաթերթիկը մասամբ ⇒	Չեն ուզում շարունակել (նշել պատճառը). 31 Հարցազրույցի մնացած մասը հետաձգվել է մինչև հարջորդ այցը..... 32		⇒ Անհրաժեշտ է վերադառնալ	
[] 4. Կանանց հարցաթերթիկը ամբողջովին լրացված է ⇒ 41			
ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԼԵՋՈՒՆ ԱՅՆ ԼԵՋՈՒՆ, ՈՐՈՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՅԸ ՎԱՐՎԵԼ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԱՆՑ Է ԿԱՅՎԵԼ (1 = այո, 2 = ոչ)				[] [] [] [] []
ԳՎԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱՀՄԿՈՂ	ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԸ ՍՏՈՒԳԵԼ Է		ԽՄԲԱԳԻՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ	ՄՈՒՏՔԱԳՐԵԼ Է
ԱՆՈՒՆ [] [] ՕՐ [] [] ԱՄԻՍ [] [] ՏԱՐԻ [] [] [] []	ԱՆՈՒՆ [] [] ՕՐ [] [] ԱՄԻՍ [] [] ՏԱՐԻ [] [] [] []		ԱՆՎԱՆՈՒՄ [] []	ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄ 1: _____ ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄ 2: _____

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ																											
	ՀԱՐՑԵՐ ԵՎ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ	ԿՈՂԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ																									
